18044

Վ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ՑԱՐԻԶՄԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

325.347
Պ-25

15 JAN 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

ՆՎԻՐՎՈՒՄ Ե ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ XX-ԱՄՅԱԿԻՆ

ПОСВЯЩАЕТСЯ XX ГОДОВЩИНЕ
УСТАНОВЛЕНИЯ СОВЕТСКОЙ
ВЛАСТИ В АРМЕНИИ

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ
ИНСТИТУТ ИСТОРИИ И АРХЕОЛОГИИ

В. ПАРСАМЯН
КАНДИДАТ ИСТОРИЧЕСКИХ НАУК

Колониальная политика царизма в Армении

ЧАСТЬ ПЕРВАЯ

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-а
ЕРЕВАН 1940

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

325.3(47)
П-25

Վ. ՊԱՐՍԱՄՅԱՆ
ՊԱՏՄ. ԳԻՏՈՒԹ. ԹԵԿՆԱԾՈՒ

ՑԱՐԻԶՄԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԱՐՄՖԱՆ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1940

19 JUL 2013

Տպագրվում է ՍՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի
Հայկական Ֆիլիալի Նախագահության վորոշմամբ։

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Համարյա մի ամբողջ դար հայ ժողովուրդը գտնվել է ցարիզմի գաղութային տիրապետության տակ։ Մինչև Հայաստանի նվաճումը, ավելի քան մի դար էլ հայերը քաղաքական կապեր են ունեցել Ռուսաստանի հետ և ցանկացել են նրա օգնությամբ ազատագրվել պարսիկների ու թյուրքերի լծից։

Հայ ժողովրդի XVIII—XIX դ. դ. պատմության այս կարևոր հարցերի մասին մենք չունենք ամբողջական մարքսիստական ուսումնասիրություններ։ Պատմության և Հնագիտության Ինստիտուտի ավագ գիտ. աշխատող ընկ. Վ. Պարսամյանի «Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում» աշխատությունն առաջին փորձն է այս ուղղությամբ։

Հեղինակն իրեն նպատակ է դրել վեր հանել հայերի նկատմամբ ցարիզմի ունեցած գաղութային քաղաքականությունը և, աշխատության առաջին մասում ընդգրկած հարցերի շրջանակում, նա կարողացել է լուծել իր առաջ դրած խնդիրները։

«Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում» աշխատության մեջ արխիվային չհրապարակված փաստաթղթերի ու դոկումենտալ հրատարակությունների հիման վրա առաջ են քաշվել և լուսաբանվել մի շարք նոր հարցեր և նոր, պատմական իրականությանն ավելի հարազատ գնահատություն տրվել պատմական առանձին դեպքերին և հասարակական-քաղաքական գործիչներին։

Ներկա ուսումնասիրությունը կարելի յե առաջին լուրջ փորձերից համարել հայ ժողովրդի նոր պատմությունը գիտականորեն շարադրելու ուղղությամբ։

Աշխատության յերկրորդ մասը տպագրության կհանձնվի այս տարի։

ԱՌԱՋԱԲԱՆ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը, Կոմունիստական Կուսակցության ղեկավարությամբ, վերջ տվեց կալվածատերերի ու կապիտալիստների տիրապետությանը Ռուսաստանում։

Ռուս մեծ ժողովրդի օգնությամբ իրենց ազատությունը ձեռք բերին մի շարք փոքր ժողովուրդներ, վորոնք դարեր շարունակ հեծում եյին ցարիզմի ազգային-գաղութային լծի տակ։

Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության շնորհիվ ցարիզմի և ազգային բուրժուազիայի լծից ազատագրվեց նաև հայ ժողովուրդը։

Հայտնի յե, վոր ցարիզմը՝ ռուս կալվածատերերի ու կապիտալիստների պետական իշխանությունը, ստեղծվել և պահպանվում եր վոչ միայն ռուս ժողովրդի, այլև ցարիզմի կողմից գաղութացված փոքր ժողովուրդների թալանի ու կեղեքման հաշվին։ Ցարական Ռուսաստանը Լենինը և Ստալինը անվանում եյին ժողովուրդների բանտ։ Հոկտեմբերյան հեղափոխությունն ազատագրելով այդ ժողովուրդներին, նոր դարաշրջան բաց արեց նրանց պատմության մեջ։

«ՍՍՀՄ Պատմության» դասագրքի կոնսպեկտի մասին 1934 թ. օգոստոսի 8-ին արած իրենց դիտողությունների մեջ ընկ. ընկ. Ստալինը, Ժդանովը և Կիրովը նշեցին, վոր՝

> «Կոնսպեկտում չեն տրված Ռուսաստանի՝ ցարիզմի կողմից նվաճված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման պայմաններն ու ակունքները, և այդպիսով, Հոկտեմբերյան հեղափոխությունը, վորպես այդ ժողովուրդներին ազգային ճնշումից ազատագրող հեղափոխություն, մնում է չպատճառաբանված, ինչպես վոր չպատճառաբանված է մնում նաև ՍՍՀ Միության ստեղծումը»[1]:

Ընկեր Ստալինի ցուցումներից և մանավանդ նրա անմիջական մասնակցությամբ կերտված ՀամԿ(բ)Կ Պատմության դասագրքի նման պատմագիտության հոյակապ մոնումենտի հրապարակ գալուց հետո, լուրջ տեղաշարժեր նկատվեցին պատմագրության ասպարեզում։

Սակայն, մի բնագավառ, վորը դեռ շատ քիչ է ուսումնասիրված և կարոտ է մոնոգրաֆիկ ուսումնասիրությունների—դա ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության պատմությունն է, այդ քաղաքականության դեմ իր ժամանակին ծառացած փոքր ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների պատմությունը։

Ցեվ այս ամբողջությամբ վերաբերում է նաև մեզ։

---

[1] Տես «Պատմական գիտության ճակատում» ժողովածու, եջ 15, Հայկուսհրատ, 1936 թ.։

Հայ ժողովրդի մի հատվածը, ռուսահայերը, շուրջ հարյուր տարի գտնվել է ցարիզմի գաղութային լծի տակ։

«Մենք հիշում ենք,—ասում է ընկեր Մոլոտովը,—թե որքան չարիքներ ու դժբախտություններ են բաժին ընկել հայ ժողովրդին, որը մի շարք դարերի ընթացքում գտնվում էր օտար լծի տակ։ Երկար տարիներ, համարյա մի ամբողջ դար, ընդհուպ մինչև Խորհուրդների իշխանության հաղթանակը, տաղանդավոր հայ ժողովուրդը գտնվում էր ռուսական ցարիզմի կրնկի տակ։ Ծանր հիշողությունները ցարական ինքնակալության ճնշման մասին, այն ճնշման, որին յենթարկվում էր հայ ժողովուրդը ռուսական կալվածատերերի, կապիտալիստների, գեներալների, տերտերների ու չինովնիկների կողմից, դեռ յերկար ժամանակ կապրեն Հայաստանի աշխատավորների մեջ»[1]։

Հայ ժողովրդի պատմության մեջ նշանակալից այս հարյուրամյակում, ռուսահայ կյանքի յուրաքանչյուր բնագավառը, լինի դա տնտեսական, քաղաքական, թե կուլտուրական, անխտիր, յենթակա յե յեղել ցարիզմի գաղութային քաղաքականության խիստ ռեժիմին։

Հայ ժողովուրդը քիչ հալածանքներ ու զրկանքներ չի կրել ցարական կառավարության, նրա սև-հարյուրակային մեծապետական ջարդարար գեներալների ու չինովնիկների կողմից։

Հայ ժողովուրդն անտիցարական, ազգային-ազատագրական պայքարի քիչ էջեր չի գրել ցարական Ռուսաստանի ճնշված ժողովուրդների հեղափոխական պայքարի պատմության փառապանծ գրքում։ Հայ ժողովրդի ազատագրական պայքարը ցարիզմի, ինչպես և սուլթանիզմի դեմ, լցնում է XIX դարի մեր պատմության էջերը։ Իսկ մենք շատ քիչ բան ենք արել այս հարցերի ուսումնասիրության ուղղությամբ։ Այնինչ, առանց ճիշտ պատկերացում ունենալու ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության, նրա ձևերի ու մեթոդների մասին, առանց ծանոթ լինելու հայ կյանքում նրա ունեցած ազդեցությանը և առաջ բերած կոնկրետ փոփոխություններին, առանց իմանալու ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության դեմ ծառացած հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների պատմությունը, հազիվ թե կարելի լինի ամբողջական և ճիշտ պատկերացում կազմել նշված ժամանակաշրջանի մեր պատմության զարգացման ամբողջական պրոցեսի մասին։

Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Նախագահության հանձնարարությամբ ձեռնարկելով «Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում» թեմայի մշակմանը, մեզ նպատակ ենք դրել, ըստ կարելվույն, այդ պրոբլեմն ուսումնասիրել և լուսաբանել իր ամբողջության մեջ առած, սկզբից մինչև վերջ։

Հարցի այսօրինակ դրվածքն ինքնին դժվարացնում է ուսումնասիրողի գործը, քանի որ անհրաժեշտություն է դառնում քննության առնել, գնահատել և վերագնահատել հիմնական խնդրի հետ առնչվող հարյուրամյակների պատմական անցքերը, դեպքերն ու դեմքերը։ Իսկ առանց դրանց, հասկանալի յե, պատմությունը կկորցներ իր հետաքրքրությունը, կվերածվեր անկենդան, չոր ու ցամաք սխեմաների։ «Գիտությունը դադարում է գոյություն ունենալուց այնտեղ, որտեղ կորցնում է անհրաժեշտ կապերի ուժը»—գրում է Էնգելսը։ Կիրառելով Էնգելսի այս ցուցումը, մենք աշխատել ենք ցարիզմի գաղութային քաղաքականությունը քննել և լուսաբանել նրա հետ անմիջականորեն աղերսվող և օրինաչափորեն զարգացող ներքին ու արտաքին հարաբերությունների կապերի մեջ։

«Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում» աշխատությունը հրատարակվելու յե յերեք մասով։

Ա. մասն ընդգրկում է Հայաստանի նվաճումը ցարիզմի կողմից և ցարական իշխանության հաստատումը Հայաստանում։

Բ. մասն ընդգրկում է ցարիզմի տնտեսական քաղաքականությունը Հայաստանում և կուլտուրայի մարզում վարած քաղաքականությունը։ Այս մասում տրվելու յե նաև մի գլուխ՝ XIX դարի առաջին կեսում ցարիզմի գաղութային քաղաքականության դեմ ուղղված հայ ազատագրական շարժումների մասին։

Գ. մասն ընդգրկելու յե կապիտալիզմի և իմպերիալիզմի շրջանում ցարիզմի վարած գաղութային քաղաքականությունը՝ մինչև նրա անկումը։

Այս աշխատության առաջին մասը շարադրելիս, որտեղ հարկ էր լինում մի շարք ընդհանուր սկզբունքային, և մեծ մասամբ չմշակված, հարցեր քննարկել ու գնահատել, մենք հանդիպում էինք լուրջ դժվարությունների։ Այսպես օրինակ, Հայաստանի նկատմամբ ցարիզմի ունեցած նվաճողական քաղաքականության գենեզիսի և նրա հետագա էվոլյուցիայի հարցը, կապված ցարիզմի արտաքին ու գաղութային ընդհանուր քաղաքականության հետ։ Հայ-ռուս քաղաքական հարաբերությունների ծագման և հայ հասարակական տարբեր հոսանքների դեպի ցարիզմն ունեցած վերաբերմունքի հարցերը։ Ցարական Ռուսաստանի կողմից Հայաստանի գրավումը նոր տեսանկյունով քննելու և գնահատելու հարցը և այլն և այլն։

Ցարիզմի արտաքին և գաղութային քաղաքականությունը շարադրելիս մենք հենվել ենք մարքսիզմի կլասիկների վրա։

Ցարական պաշտոնական պատմագրությունը, մասնավորապես այս բնագավառում, հասկանալի պատճառներով, քիչ ջանք չի գործադրել խեղաթյուրելու պատմական փաստերը։ Պոկրովսկու և նրա «շկոլայի» սոցիոլոգիական սխեմաները ևս քիչ բացասական դեր չեն խաղացել այս բնագավառում։ Եվ չնայած նրան, որ մարքսիզմ-լենինիզմի թաղված թշնամիները (Միֆ, Մադյար, Սաֆարով) Պոկրովսկուն հռչակել էին որպես նովատոր՝ ցարիզմի արտաքին և գաղութային քաղաքականության ուսումնասիրության մեջ, Պոկրովսկին և նրա «շկոլան» պակաս վնասակար, հակամարքսիստական ու հակագիտական գործ չեն կատարել նաև այս ասպարեզում։ Մասնավորապես «Արևելյան հարցի», նեղուցների (Բոսֆոր, Դարդանել) և Անդրկովկասի մասին նրանց հայտնած կարծիքները անընդունելի լինելն ակներև է ամեն քայլափոխին։

[1] Տես «Խորհրդային Հայաստան», 1936 թ. հունվարի 6. Խորհրդային Հայաստանի աշխատավորության պատվիրակների ընդունելության ժամանակ, 1935 թ. դեկտեմբերի 30-ին, Կրեմլում ընկ. Մոլոտովի արտասանած ճառից։

Մարքսն ու Էնգելսը անգնահատելի գործ են կատարել յեվրոպական պետությունների և Ռուսաստանի արտաքին ու գաղութային քաղաքականության ուսումնասիրության ասպարեզում։ Առանց նրանց գործերի ուսումնասիրության չի կարելի վորևէ լուրջ աշխատանք գրել նշված հարցերի մասին։

Մարքսն ու Էնգելսը քաջ ծանոթ եյին «Արևելյան հարցի» պատմությանը։ Նրանք լավ գիտեյին և Ռուսաստանը։ Էնգելսն ասում է, թե «Մ ա ր ք ս ն ա վ ե լ ի լ ա վ գ ի տ ե ր Ռ ո ւ ս ա ս տ ա ն ը, ք ա ն թ ե մ ի ո ւ ր ի շ ը»։ Էնգելսի մասին, նրա չգերազանցված գործը՝ «Ռուսական ցարիզմի արտաքին քաղաքականությունը» (Die auswändige Politik der russischen Zarentums) և մյուս աշխատությունները նկատի ունենալով, կարելի յե ասել, վոր նա ևս հիանալի գիտեր Ռուսաստանը և մանավորապես ցարիզմի արտաքին ու գաղութային քաղաքականությունը։

Կոնկրետ գիտելիքների այդ պաշարը հնարավորություն է տվել Մարքսին ու Էնգելսին իր ժամանակին ցույց տալ ինչպես ցարական Ռուսաստանի՝ նույնպես և Անգլիայի ու Ֆրանսիայի նվաճողական ձգտումները «Արևելյան հարցում» և մերկացնել Թյուրքիայի, Իրանի ու Անդրկովկասի նկատմամբ ունեցած նրանց գաղութարար պլանները։

Անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի այսօրվա գաղութարար ձգտումները՝ Թյուրքիան, Իրանը և Աֆղանստանն ստրկացնելու ուղղությամբ, մի ավելորդ անգամ հաստատում են իր ժամանակին Մարքսի ու Էնգելսի արտահայտած մտքերի ճշտությունը։

Մարքսն ու Էնգելսը նշել են, վոր ցարիզմը, ինչպես բոնապարտիզմը, իր քաղաքական նպատակների համար ոգտագործում եր փոքր ժողովուրդներին։

XVIII դարի և XIX դարի սկզբի հայ-ռուս հարաբերությունների և հայերի ազատագրական շարժման պատմությունից վերցրած մի շարք ցայտուն փաստերով մենք ցույց ենք տվել, թե ինչպես, իրոք, ցարիզմն իր քաղաքական նպատակների համար ոգտագործում եր նաև հայերի հակաթյուրքական և հակիրանական ազատագրական շարժումները[1]։

Այս աշխատության մեջ նոր լուսաբանություն և գնահատական ենք տվել հայ ժողովրդի՝ ցարական Ռուսաստանի իշխանության տակ անցնելու ակտին։

[1] Մեր աշխատությունը պատրաստ եր և վորպես դիսերտացիա վաղուց հրապարակված, յերբ լույս տեսավ Խաչատուր Աբովյանի ընտիր յերկերի առաջին հատորը, ընկ. Ռուբեն Զարյանի խմբագրությամբ։ Հատորին կցված «Աբովյանի կյանքը» հետաքրքրական ակնարկի մեջ հեղինակը, ի թիվս պատմական այլ անճշտությունների, նաև այն սխալ տեսակետն է հայտնում, վոր «Աղասու ըմբոստացումը պարսկական տիրապետության դեմ ա զ գ ա յ ի ն ա զ ա տ ա գ ր ա կ ա ն կ ռ վ ի ա ռ ա ջ ի ն գ ո տ ե մ ա ր տ ն է» (եջ XXX, ընդգծումն իմն է—Վ. Պ.)։ Մենք այստեղ մի կողմ ենք թողնում ազգային-ազատագրական կռվի ըմբռնման խնդիրը, բայց չենք կարող չնշել, վոր հարգելի հեղինակը, թերևս ճիշտ լիներ, յեթե ասեր, վոր Աղասու ըմբոստացումը հայերի ազատագրական վերջին գոտեմարտերից եր պարսկական տիրապետության դեմ, քանի վոր, ինչպես մենք ցույց ենք տվել ներկա աշխատության մեջ, հայերը մինչ այդ էլ բազմիցս գոտեմարտել եյին պարսկական լծից ազատագրվելու համար։

Յեթե մինչև հեղափոխությունը ցարական Ռուսաստանի կողմից Հայաստանի նվաճումը գլխավորապես դիտվում եր վորպես բացարձակ բարիք և դիֆերամբներ եյին կարդացվում վոչ միայն «ամենավողորմած» կայսրների, այլև այդ գործում քիչ թե շատ աչքի ընկած ցարական գեներալների համար, ապա, հեղափոխությունից հետո, մանավորապես Պոկրովսկու «շկոլայի» առանձին ներկայացուցիչների մոտ, յերևան յեկավ Հայաստանի գրավման ակտը վորպես բացարձակ չարիք դիտելու տեսակետը։

Այս տեսակետներից թե մեկը և թե մյուսը հեռու յեն պատմական ճշմարտությունն արտահայտելու կարողությունից, ուստի անընդունելի յեն մեզ համար։

Վրաստանի մասին, որինակ, ԽՍՀՄ Պատմության լավագույն դասագրքի կոնկուրսի կառավարական հանձնաժողովի ժյուրիի վորոշման մեջ ասվում է.

> «Վրաստանի, որինակ, XVIII դարի վերջերին Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու փաստը, այնպես, ինչպես Ուկրաինայի՝ Ռուսաստանի իշխանության տակ անցնելու փաստը, հեղինակների կողմից դիտվում է վորպես բացարձակ չարիք, այն ժամանակվա պատմական կոնկրետ պայմանների հետ նրա ունեցած կապից դուրս։ Հեղինակները չեն տեսնում, վոր Վրաստանի առջև այն ժամանակ կանգնած եր յերկընտրանք—կամ կլանված լինել շահական Պարսկաստանի և սուլթանական Թյուրքիայի կողմից, կամ թե անցնել Ռուսաստանի հովանավորության տակ, այնպես, ինչպես Ուկրաինայի առջև այն ժամանակ կանգնած եր յերկընտրանք—կամ կլանված լինել պանական Լեհաստանի ու սուլթանական Թյուրքիայի կողմից, կամ թե անցնել Ռուսաստանի իշխանության տակ։ Նրանք չեն տեսնում, վոր յերկրորդ հեռանկարը, այնուամենայնիվ, փոքրագույն չարիքն եր»[1]։

Ճիշտ կլիներ արդյոք ժյուրիի այս գնահատականը նաև հայերի միացման մասին, թե վոչ։ Մենք հակված ենք այս հարցին դրական պատասխան տալու և ահա թե ինչու։

Ամենից առաջ. Հայաստանը ևս, մինչև ցարիզմի իշխանության տակ անցնելը, Վրաստանի նման, գտնվում եր պարսիկ խաների ու թյուրք փաշաների լծի տակ։ Յեթե Վրաստանը, նույնիսկ պահպանել եր իր կիսանկախ թագավորական իշխանությունը և յերբեմն, ինչպես ընկեր Ստալինն է ասում, մի վորևէ հաջողակ-թագավոր կարողանում եր ֆեոդալ իշխաններին միավորելով ժամանակավոր ինքնուրույնություն ձեռք բերել, ապա, հայ ժողովուրդը, վաղուց կորցրած իր անկախությունը, ամբողջապես ընկել եր թյուրքերի ու պարսիկների լծի տակ։ Յեթե վրացիները, նրանց հետ միասին նաև վրացահայերը, ձգտում եյին Ռուսաստանի ոգնությամբ ազատվել խաների ու փաշաների լծից, կարո՞ղ եր արդյոք Հայաստանի ժողովուրդն այդ չցանկանալ յերբ ինքն ամենից ավելի յեր կրում այդ լծի ծանրությունը։

Յերկրորդ՝ ինչպես մեր աշխատության մեջ էլ ասել ենք, ցարական Ռուսաստանը, չնայած իր գաղութարար քաղաքականությանը, Պարսկաստանի ու

[1] «Խորհրդային Հայաստան», 24 ոգոստոսի, 1937 թ.։

Թյուրքիայի համեմատությամբ ավելի պրոգրեսիվ էր։ Ռուսաստանն իր սոցիալական հարաբերություններով, վարչաձևով և մանավանդ գիտությամբ ու կուլտուրայով անհամեմատ ավելի բարձր էր կանգնած հետամնաց Պարսկաստանից ու Թյուրքիայից, վորը, ինչպես Մարքսն է ասում, գտնվում էր «ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոսական ստադիայում»։ Ռուսաստանում ուժեղ էր և կազմակերպված ազնվական-զինվորական բյուրոկրատիան. Պարսկաստանում և Թյուրքիայում, ըստ մեծի մասին, թագավորում էր ֆեոդալական անարխիան։ Իսկ կենտրոնացած իշխանությունը, թեկուզ թագավորական (das Königtum), ինչպես Էնգելսն է ասում, ավելի պրոգրեսիվ է ֆեոդալական բաժան-բաժան իշխանությունից։

Ռուսաստանը XVI դարից սկսած միշտ ավելի ու ավելի առաջադիմում էր։ XVIII դարում, յերբ Պետրոս I-ը «Ռուսական բարբարոսությունը վերացնում էր բարբարոսաբար» (Մարքս), Ռուսաստանն ավելի ամուր կապեր էր հաստատում յեվրոպական քաղաքակրթության հետ և հետզհետե աճում տնտեսապես, քաղաքականապես ու կուլտուրապես։ Նույն այդ ժամանակաշրջանում Պարսկաստանն ու Թյուրքիան իրենց յերբեմնի հզոր դիրքերից թավալգլոր գնում էին դեպի անկում։

Հայ ժողովուրդը, վրաց ժողովրդի նման, կանգնած էր յերկընտրանքի առաջ՝ կամ կուլ գնալ պարսկական ու թյուրքական հետամնաց կարգերին, կամ մտնել ցարական իշխանության տակ։ Վերջին ճանապարհը հայ ժողովրդի համար չարիքներից փոքրագույնն էր։ Յեվ ինչպես ցույց ենք տալու այս աշխատության մեջ, հայ ժողովրդի ազատագրական պայքարի առաջին դրոշակակիրները, հայրենասեր գործիչները, XVIII դարի սկզբներից բռնել էին այդ ուղին՝ հայ ժողովրդի բախտը կապելով ռուս մեծ ժողովրդի օգնության հետ։

Մի քանի խոսք այն մասին, թե ինչու մենք գործ ենք ածում, և պետք է գործածել, Հայաստանի նվաճում և վոչ թե Հայաստանի միացում։

Վերջին ժամանակներս, Վրաստանի միացման փաստը նկատի ունենալով, վորոշ հեղինակներ մեխանիկորեն միացում բառը կիրառում են նաև Հայաստանի նկատմամբ, մոռանալով, վոր Հայաստանը չի միացվել Ռուսաստանին։ Նրանք ուղղակի անտեսում են պատմական հանրահայտնի այն փաստը, վոր Հայաստանը պարսիկների ձեռքից ցարական Ռուսաստանի կողմից նվաճվել է և այն էլ վոչ թե մեկ, այլ մի քանի ռազմական արշավանքներից ու կատաղի մարտերից հետո։

Տեղին է նկատել, վոր Մարքսի և Լենինի մոտ էլ մենք հանդիպում ենք Կովկասի նվաճում, Հայաստանի գրավում արտահայտություններին։

Ի վերջո, պետք է ասենք, վոր մեր աշխատանքն իր նպատակին հասած կլինի, յեթե դեթ նվազագույն չափով օժանդակի ՍՍՀՄ ժողովուրդների պատմությունն ստեղծելու գործին, մի գործ, վորին վոչ միայն վոգեշնչում, այլև գրիչը ձեռքին մասնակցում է ժողովուրդների մեծ առաջնորդ Ստալինը։

ԳԼՈՒԽ I

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Հայաստանի նոր պատմության դուռը բացվում է նրա՝ ցարական Ռուսաստանի կողմից նվաճումով։

1827 թ. հոկտեմբերի 1-ին ռուսական զորամասերը հաղթական յերթով մտնում են Անդրկովկասի իրանական տիրապետության վերջին կարևոր ամրությունը՝ Յերևանի բերդը։ Յերբեմնի հզոր Իրանը, վորը դարեր շարունակ իր դեսպոտիզմի լծի տակ ճնշում էր Արևելքի մի շարք ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդին, իրերի պատմական բերումով բախվելով տնտեսապես, քաղաքականապես և ռազմապես ավելի զորեղ ու առաջադեմ ռուսական կայսրության հետ, ծանր հարվածներ է ստանում, միանգամ ընդմիշտ կորցնելով Անդրկովկասի իր հարուստ յերկրամասերը։

Հայաստանի նվաճումով ցարական Ռուսաստանն իր վիթխարի կայսրության սահմանները տարածում է մինչև Արաքս, իսկ մի տարի հետո՝ մինչև Ասիական Թյուրքիա, իր գաղութային տիրապետության ցանցի մեջ մտցնելով կարևորագույն նոր տերիտորիաներ և ժողովուրդներ։

Ի՞նչ նպատակներ էր հետապնդում ցարական Ռուսաստանն Անդրկովկասում և Հայաստանում։ Ինչո՞ւ յեր նա ամրանում Արաքսի ափերում։

Ահա մի հարց, վորը սերտորեն կապված է ցարիզմի վարած արտաքին քաղաքականության, մասնավորաբար նրա արևելյան քաղաքականության հետ, և բղխում է այդ քաղաքականության գաղութարար, նվաճողական վոգուց։

Ցարական պաշտոնական պատմագիրները և ցարիզմի կամակատար հայ բուրժուական ու կղերական հեղինակներն ստեղծել են մեծածավալ գրականություն, վորտեղ կեղծելով պատմությունը, ցարիզմի նվաճողական ձգտումները ներկայացրել են

վորպես կրոնական և մարդասիրական մոտիվներից թելադրված մի ակտ։ Պաշտոնական այս տեսակետն ամբողջությամբ հակասում է պատմական ճշմարտությանը։ Իրականում, ինչպես Էնգելսն է ասում, ցարիզմը քրիստոնյա ժողովուրդներին, այդ թվում և հայերին, Թյուրքիայի ու Իրանի լծից ազատագրողի պոզա ընդունելով, այդ քողի տակ հող էր պատրաստում իր նվաճումների համար[1]։

Անդրկովկասի միացման հարցը ցարական Ռուսաստանին զբաղեցնում էր դեռևս XVI դարից, բայց այդ հարցի իրագործման համար բանուկ ճանապարհներ են հարթվում XVIII դարում միայն, Պետրոս I-ի օրով։

Հետևելով արևմտյան քաղաքակրթությանը, օգտագործելով Արևմտյան Յեվրոպայի փորձը, Պետրոս I-ը, ի հաշիվ ռուս ճորտ գյուղացիների և այլ ժողովուրդների թալանի ու կեղեքման, վճռական քայլերի յե դիմում կալվածատերերի ու առևտրականների ազգային պետություն ստեղծելու և ամրացնելու համար։ Ռուսաստանի հետամնացությունը հաղթահարելու և յեվրոպական քաղաքակրթությունը Ռուսաստան մտցնելու նպատակով, նա «բարբարոսության դեմ կռվում էր, կանգ չառնելով բարբարոսական միջոցների առաջ»[2]։

Պետրոս I-ը հաստատուն հիմքերի վրա դրեց նաև ցարիզմի գաղութային քաղաքականությունը, գործնական ուղիներ նշելով այդ քաղաքականության իրականացման համար։

Նա իր ժամանակին շոշափեց և ըմբռնեց Յեվրոպայի մեծ պետությունների գաղութային թալանի ու առևտրի զարգացման կարևորությունը բուրժուա-կալվածատիրական դասակարգերի տիրապետությունն ամրապնդելու գործում և շատ բան արեց Ռուսաստանում կալվածատերերի դասակարգը բարձրացնելու և ծնունդ առնող առևտրական դասակարգը զարգացնելու համար, կալվածատերերի ու առևտրականների ազգային պետություն ստեղծելու և ամրացնելու համար[3]։ Հայրենի առևտրի և արդյունաբերության ժամանակակից ու հետագա զարգացման, համաշխարհային շուկայի հետ կապվելու և վերջինիս մրցության գիշատիչ օրենքներին դիմանալու հարցերը Պետրոս I-ը կապում էր ռուսական կայսրության տերիտորիալ նվաճումների, ցամաքային ու ջրային առևտրական ճանապարհների գրավման հետ։ Այն ժամանակվա հետամնաց ֆեոդալական Ռուսաստանի համար յեվրոպական զարգացած առևտրի և արդյունաբերության հետ մրցելն անհնարին էր։ Պետրոս I-ն իր հայացքը դարձնում է դեպի Հարավ և Արևելք։ Սիբիրի վերջնական նվաճումը, Միջին Ասիայի և Անդրկովկասի գաղութացումը դրվում են ցարական նվաճողականության օրակարգում, իբրև աստիճանաբար, բայց անպայման կենսագործելի հարցեր։

Սև ու Կասպից ծովերի ջրային ճանապարհներին ու նեղուցներին տիրելու, դեպի Թյուրքիա, Իրան և նույնիսկ Հնդկաստան թափանցելու ձգտումը միանգամից առաջին պլանի վրա յե քաշում Անդրկովկասի գրավման հարցը։ Առանց Անդրկովկասի գրավման, անհնարին կլիներ իրականացնել Ռուսաստանի համար կենսական այդ հարցի լուծումը։ Յեվ այդ է պատճառը, վոր Պետրոս I-ը հաջողությամբ ավարտելով Հյուսիսային պատերազմը (1700—1721), լուսամուտ բանալով դեպի Յեվրոպա, անմիջապես սկսում է իր արշավանքը Պարսկաստանի դեմ։

Պետրոս I-ի կազմակերպած յերիտասարդ բանակը, Յեվրոպայում հռչակված շվեդական բանակի դեմ մղած մարտերում, արդեն իսկ ցույց էր տվել իր մարտունակությունը և «Ռուսաստանի անխոցելիությունը» (Էնգելս)։

Պարսկական սարբազների և թյուրքական անկազմակերպ ու վատ զինված յենիչերիների դեմ կռվելն անհամեմատ ավելի դյուրին գործ էր այդ բանակի համար։ Ռուսական բանակը թե իր կազմակերպվածությամբ և թե զինվածությամբ առհասարակ բարձր է յեղել արևելքից ու հարավից իրեն սահմանակից յերկրների բանակներից, ուստի, գրեթե միշտ, հաջողությամբ են վերջացել այդ յերկրների դեմ նրա մղած պատերազմները։ Բայց այս բնավ չէր խանգարում, վորպեսզի Պետրոս I-ը քաղաքագիտորեն հաշվի առներ Թյուրքիայի և Իրանի լծի տակ ճնշվող քրիստոնյա ժողովուրդների ձգտումները և օգտագործեր նրանց իր նվաճողական նպատակների համար։

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XVI, ч. II, стр. 9, 1936 г.

[2] Ленин, Сочинения, т. XXII, стр. 517, 1929 г.

[3] Ի. Ստալին — Զրույց գերմանացի գրող Էմիլ Լյուդվիգի հետ, էջ 3, Յերևան, 1932 թ.։

Այդպես էր վարվում նա, օրինակ, հայերի նկատմամբ, վորոնք Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի տնտեսական կյանքում առաջատար դեր եյին կատարում։

1715 թ. Պարսկաստան ուղարկած իր ներկայացուցիչ Վոլինսկուն, Պետրոս I-ը, ի թիվս այլ գաղտնի հանձնարարությունների, առաջարկում է «...հետախուզություն կատարել հայ ժողովրդի մասին. շա՞տ է նա, ի՞նչ տեղերում է ապրում, կա՞ն նրանց մեջ նշանավոր մարդիկ ազնվականներից կամ առևտրականներից, ինչպե՞ս են նրանք վերաբերվում դեպի ցարական մեծությունը։ Նրանց հետ վարվել փաղաքշորեն և մտերմություն հաստատել»[1]։

Պետրոս I-ն արտոնություններ է շնորհում հայ առևտրականներին՝ նրանց Ռուսաստանի հետ կապելու նպատակով։ Իր մի շարք պաշտոնական թղթերում նա խոստումներ է անում՝ հովանավոր և պաշտպան լինել հայ ժողովրդին։ Պետրոս I-ի ժամանակ հաստատուն հիմքերի վրա յեն դրվում հայ-ռուս քաղաքական հարաբերությունները։

Հայերի քաղաքական շարժումը, վորն առանձին աշխույժ էր ստացել XVII դարի յերկրորդ կեսից, իրերի պատմական ընթացքով իր հաղթանակի հույսերը XVIII դարի սկզբներից վորոշակիորեն կապում է Ռուսաստանի ոգնության հետ։ Ռուսաստանն այն միակ յերկիրն էր, վորը վոչ միայն ի վիճակի յեր ոգնելու Անդրկովկասի ժողովուրդներին, այլև խստորեն շահագրգռված էր Անդրկովկասի միացման խնդրով։ Ահա թե ինչու իրանական ու թյուրքական բռնակալության լծի տակ հեծող հայ ժողովրդի առաջավոր մարդիկ, հայրենասեր քաղաքական գործիչներն իրենց հայացքը դարձնում են դեպի Ռուսաստան, հայ ժողովրդի ազատագրական պայքարի բախտը կապում Ռուսաստանից սպասվող ոգնության հետ։

Հայ-ռուս քաղաքական հարաբերությունները կապվում են հայ ազատագրական շարժման ժամանակակից ամենաաչքի ընկնող գործիչներից մեկի՝ Իսրայել Որու (մեռել է 1711 թ. Աստրախանում) անվան հետ։

Հայաստանի ազատագրության համար Արևմտյան Յեվրո-

[1] С. Соловьев, История России, т. XVIII, стр. 28. 1884 г., Москва.

329-49

պայում մի շարք տարիներ համարյա ապարդյուն գործադրած ջանքերից հետո, Որին 1701 թ. հունիսին անցնում է Ռուսաստան, իր հետ Ռուսաստան փոխադրելով նաև հայերի ազատագրության հարցը։ Հայերի ազատագրության հարցը Ռուսաստանի հետ կապելն Որու կողմից մի խոշոր քայլ էր այդ հարցի լուծումն ավելի ռեալ և հուսալի ուղիների վրա դնելու տեսակետից։ Չպետք է մոռանալ նաև այն, վոր վրացիների ազատագրական նման փորձերը և հայ-վրացական միացյալ ուժերով պարսկական ու թյուրքական բռնակալության լծից ազատագրվելու ձգտումն ևս մեծապես խթանում էր հայ-ռուս հարաբերությունների զարգացումը։

Ռուսաստանի հետ քաղաքական կապերն ամրապնդելու գործում առանձին շահագրգռվածություն եյին հանդես բերում նաև հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները, վորոնք մոնոպոլ դեր եյին խաղում Անդրկովկասի, Իրանի և Թյուրքիայի մի զգալի մասի առևտրի մեջ ու ավելի քան տուժում եյին խան-փաշայական կարգերից։

Այս և նմանորինակ կոնկրետ իրադրությունները նոր հեռանկարներ ու նոր հորիզոններ եյին բաց անում հայ-ռուս հարաբերությունների հետագա զարգացման համար։ Իսկ ցարիզմի նվաճողական ծրագրերի իրագործման կապակցությամբ, նրանք դառնում եյին սիստեմատիկ և ավելի ու ավելի գործնական հունի մեջ եյին դրվում։

Հայերի ազատագրության հարցը, ինչպես ասացինք, Որին կապում էր Ռուսաստանի զինված ոգնության հետ։ Այդ նպատակով էլ Պֆալցի Կուրֆյուրստի մոտից Ռուսաստան գալով, Որին դիմումներ է ներկայացնում Պետրոս I-ին և նրանից ոգնություն է խնդրում։ Նա ջանում է համոզել ցարական արքունիքին, վոր 25 հազար զինվոր ստանալով՝ հայերը, վրացիների հետ, կկարողանան իրենց յերկրից դուրս քշել պարսիկներին։ 1701 թ. հուլիսի 25-ին Գոլովինի հետ ունեցած աուդիենցիայի ժամանակ Որին հայտնում է, վոր Հայաստանը 150 մղոն յերկարություն և 120 մղոն լայնություն ունի, 17 պրովինցիա, վորոնցից կհավաքվի 116 հազար մարդ։ Վրաստանից կհավաքվի 30 հազար մարդ։ Թյուրքիայի հայերը ևս ոգնության կգան, իսկ պարս-

կական շահը հաշիվ 38 հազար մարդ հավաքի։ Այժմ ամենահարմար ժամանակն է պարսիկների դեմ կռվելու[1]։

Որին առաջարկում է ռուս զորքերը կենտրոնացնել Շամախի քաղաքում, իսկ այնտեղից առանձին գնդերով ուղարկել Գանձակի, Լոռու, Ղափանի, Նախիջևանի ու Յերևանի վրա։ «Շամախի քաղաքը ամրացված չէ,—գրում է Որին,—իսկ բնակիչները հայ առևտրականներ են և յերկու ժամում կարելի յե վերցնել այդ քաղաքը... Շամախին Հայաստանի հողը մտնելու առաջին բանալին է»[2]։

Խոսելով Հայաստանի ամենակարևոր ամրության՝ Յերևանի բերդի գրավման մասին, Որին ասում է. «Յերբ հայ գլխավորներն ու զորքերը կհավաքվեն Նախիջևան, այնտեղից ցարական դրոշակով կշարժվեն Յերևանի վրա... Յերևանն առանց գրոհի կվերցվի, վորովհետև վառոդի պահեստները և այլ ռազմամթերքները բոլորը հայերի ձեռքին են»[3]։

Իսրայել Որու դիմումներն անմիջական արդյունքի չհասան։ Պետրոս I-ի ամբողջ ուշադրությունը Հյուսիսային պատերազմի վրա բևեռված լինելով, նա չկարողացավ զինական օգնություն ցույց տալ հայերին։ Պետրոս I-ը, սակայն, վարպետորեն օգտագործեց Որուն և նրա ընկեր Մինաս վարդապետին՝ հայ քաղաքական շրջանների հետ իր կապերն ամրացնելու, նրանց իր քաղաքական նպատակներին ծառայեցնելու համար։

Ի դեմս Իսրայել Որու, Պետրոս I-ը տեսնում եր մի հմուտ և յեռանդուն անձնավորություն, վորը կարող եր մեծապես օգտակար լինել իր քաղաքական նպատակներին։ 1707 թ. Որին, վորպես դեսպան, գործուղվում է Պարսկաստան։ Նա գալիս է նախ Անդրկովկաս և ապա անցնում է Պարսկաստան։

Որու այցը Անդրկովկաս, նրա տեսակցությունները և Պետրոս I-ից բերած տեղեկությունները նոր մղում են տալիս վոչ միայն հայերի, այլև վրացիների ռուսական որիենտացիային։

[1] Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, стр. 90—91. СПБ, 1898 г.

[2] Նույն տեղ, եջ 86—87.

[3] Նույն տեղ, եջ 88. հմմտ. С. Соловьев, Истории России, т. XVIII, стр. 56—57.

Եջմիածնի կաթողիկոս Աղեքսանդր Ջուղայեցին 1707 թ. հունիսի 7-ին Պետրոս I-ին գրում է.

«...Մեր սիրելի որդի Իսրայէլ անուն դեսպանս հանդիպեսաւ ի սուրբ և քրիստոսաէջ Աթոռս, զոր և մեք սիրով և մեծաւ ուրախութեամբ ընկալաք. քան զչափն աւելի սէր և ընդունելութիւն արարաք, և քո հրամանոցդ որպիսութիւնն, և կատարեալ սէրն որ ունիս առ յազգս մեր՝ ամէնն մի ըստ միոջէ պատմեաց մեզ՝ և մեք ուրախացեալ ցնծացաք և քո հրամանքդ օրհնելով օրհնեցաք զոր տէր աստուած զքեզ հաստատ և պայծառ պահեսցէ ի պարծանս ազգիս քրիստոնէից»[1]։

Որու և Մինաս վարդապետի գործունեյությունն առանձնապես բեղմնավոր արդյունքներ է ունենում Ղարաբաղի հայության մեջ։ Այստեղ նրանց գործը հովանավորում և պաշտպանում է Գանձասարի Յեսայի կաթողիկոսը, ռուսական որիենտացիայի ջերմ կողմնակից, ազդեցիկ մի մարդ, վորը և հետագայում մեծ դեր է խաղում հայ-վրացական միացյալ բանակ կազմակերպելու գործում։ Պետրոս I-ին ուղղած 1716 թ. օգոստոսի 10-ի նրա մի գրության մեջ մենք կարդում ենք.

«...Եւ ընդ այս յուշ լիցի մեծ ի տէրութեանդ, զի յառաջ քան զայս առաքեալ, ի քումմէ թագաւորութիւնէդ Իսրայէլ Օրի դեսպանն եկն երկիրս Հայոց և զհամբաւ բարեյաղթութեանդ սփռեալ տարածեաց ի լսելիս մեր ամենեցուն և այնքան յորդորեցանք ի սէր քո մինչ ես իմովք միաբանիւք ելեալ ընդ նմա հանդերձ սուղ ինչ ընծայիւք եկինք մինչև ի Յաշթարխան քաղաք, առ ի տեսութիւն մեծ և բարձր թագաւորութեանդ. ապա մեր մեղացն չեղև կատարումն խնդրուածոց մերոց, վասն զի դեսպանն անդ մեռաւ և զամենայն ինչս նորա և մերն ցիր ու ցան արարին, և ոչ ոք չունէաք ասպնջական և ծանօթ, դարձեալ դարձաք յետս և եկաք յերկիրս մեր։ Իսկ այժմ կրկին առաքեալ ի մեծէ թագաւորութենէդ եղբայրս մեր զՄինաս վարդապետս որ ի յազգէ մերմէ եկն եհաս երկիրս մեր առ մեզ, և զբարի և աստուածահաճոյ կամք և խորհուրդ քաջազոր թագաւորու-

[1] ГАФКЭ, МИД, Ф. Армянские дела, 1707—1711, № 11.

թեանդ ծանոյց մեզ և մեր լսելով զուարճացաք և ցնծացաք ի հոգի և ի մարմին. և յօժար սրտիւ կամիմք ընդ հովանեաւ թևոց քոց լինիլ. եթէ հաճեսցի տէրութիւն քո ի մեզ, և գթասցիս ի վերայ թշուառութեան մերում, մեք պատրաստ եմք ընդ առաջ քո ըստ իմում կարողութեանս, և մեր նահանգիս մելիքովք մեծամեծովք և փոքումբք և ցորժամ կամեսցի հզօր և մեծ թագաւորութիւնդ յաջապարել այսր կամօքն աստուծոյ, յայնժամ զնշան գործոյն խնդրեմք ցուցանել մեզ, զի առաւել հաստատ լիցուք ի վերայ խորհրդեանս, և ապա զամենայն հանգամանս երկրիս ծանուսցուք առաջի քոյ, բայց այժմ ես փոքր ի շատէ առ բերան ասացեալ եմք Մինաս վարդապետիդ և ինքն ես ականատես եղև ամենայն որպիսութեանց տեղեացս, զոր յայտնիլոց է առաջի մեծի թագաւորութեանդ, և տէրութիւն քոյ լիցի ողջ ընդ երկայն աւուրս և հաստատուն ի փառս Քրիստոսի և ի պարծանս մեր. ամէն»[1]:

Նշված փաստերը ցույց են տալիս, թե ինչպես XVIII դարի առաջին քառորդում Պետրոս I-ն իր գործակալների և հայ, վրացի քաղաքական գործիչների միջոցով զգալի աշխատանք էր ծավալել Անդրկովկասի ժողովուրդների մեջ և հող նախապատրաստել իր ծրագրած նվաճումների համար: Մասնավորապես Ղարաբաղում, զինված ուժեր կազմակերպելու և հայ մելիքներին այդ գործի շուրջը համախմբելու համար, յեռանդուն աշխատանք էր սկսել Պետրոս I-ի կողմից ուղարկված հայ Իվան Կարապետը:

1722 թ. ռուսական բանակը մտնում է պարսկական սահմանը: Պատրվակը Դաղստանի Դաուդ բեգին պատժելն էր, վորը միլիոնների վնաս էր հասցրել Շամախիի ռուս առևտրականներին: Բայց ռուս զորքերը 1722—23 թ. թ. գրավում են Դերբենդը, Բագուն, Գիլանը, Մազանդարան և Աստրաբադը: Ռուս զորքերի յերևալը Անդրկովկասի սահմաններում ազդանշան է ծառայում հայ-վրացական ապստամբությունների համար: Վախթանգի ղեկավարությամբ նրանք վոտքի յեն կանգնում, ռուս բանակի ոգնությամբ, ազատագրվելու Պարսկաստանի լծից: Բայց ավաղ, շատ կարճ են տևում նրանց հույսերը: Պետրոս I-ի զորքերը Կասպիական ափե-

[1] Эзов, стр. 316.

րից հեռու չեն գնում և չեն կարողանում ոգնության ձեռք մեկնել ապստամբ հայերին ու վրացիներին: Ցարական Ռուսաստանը, ինչպես միշտ, գերադասում է իր տնտեսական-քաղաքական շահերը և Անդրկովկասի ժողովուրդների շահերի զոհաբերության գնով, 1723 թվի սեպտեմբերի 12-ին Պարսկաստանի հետ, իսկ 1724 թ. հունիսի 12-ին Թյուրքիայի հետ հաշտության պայմանագրեր է կնքում, ապահովելով իր համար Կասպիական ափերը, իսկ Հայաստանն ու Վրաստանը թողնելով Թյուրքիայի և Պարսկաստանի լծի տակ[1]: Հայերի և վրացիների դիմումներին Պետրոս I-ն այս անգամ պատասխանում է՝ հրավիրելով նրանց գաղթել իր գրաված յերկրները: Մոտ 1400 վրացիներ՝ Վախթանգի ղեկավարությամբ և վորոշ թվով հայեր գաղթում են Գիլան, Դերբենդ, Աստրախան և այլուր ու մեծ մասամբ մտնում են զինվորական ծառայության մեջ: Որինակ՝ Գիլանում Լեվաշևի գլխավորությամբ գործող ռուսական զորամասի շարքերն են մտնում մոտ 700 հայեր և վրացիներ, վորոնք, ինչպես Պետրոս դի Սարգիս Գիլանենցի հայկական հետախույզ խմբակը Ռեշտում, թարգմանի, ուղեցույցի և հետախույզի աշխատանք եյին կատարում[2]:

Ավելի ծանր վիճակ էր ստեղծվում, սակայն, յերկրում մնացածների համար: Յեվ իրոք. ոսմանյան զորքերը, ոգտվելով Իրանի խառը դրությունից, 1724 թ. գրավում են Վրաստանը, Հայաստանի մեծ մասը և շարժվում են Ղարաբաղի վրա:

Ղարաբաղի, Զանգեզուրի և Ղափանի հայերը վոտքի յեն կանգնում սեփական ուժերով պաշտպանելու իրենց հայրենիքը: Սկսվում են հայկական փոքրաթիվ ուժերի հերոսամարտերն ոսմանյան թվով գերազանց զորքերի դեմ: Հայերը Դավիթ Բեկի ղեկավարությամբ մեծ կորուստներ են պատճառում ոսմանյան զորքերին և մի քանի տարի շարունակ հերոսաբար պաշտպանում են իրենց հայրենիքը:

1730-ական թվականների սկզբին ոսմանյան զորքերը գրավում են նաև Ղարաբաղն ու Ղափանը: Անդրկովկասի ժողովուրդներն ընկնում են ոսմանյան կայսրության ծանր լծի տակ: Նրանց

[1] Տես Полное собрание законов Российской Империи, т. VII, стр. 110—112 и 303—307, СПБ, 1830 г.

[2] П. Г. Бутков, Материалы для новой истории Кавказа, ч. I, стр. 57. СПБ, 1869 г.

ազատագրական շարժումներին հաջորդում է պարսկա-ոսմանյան պատերազմների մղձավանջը:

Այսպիսով, Պետրոս I-ի սկսած պարսկական կամպանիան, ինչպես և նրա օգնության հույսերով վոտքի յելած՝ Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարը, քաղաքական իրադարձությունների աննպաստ դասավորման հետևանքով, չեն ունենում նախատեսված արդյունքները: Սակայն, ինչպես ցարական Ռուսաստանը, այնպես էլ հայերն ու վրացիները յերես չեն դարձնում իրենց վորդեգրած քաղաքականությունից: Գործի սկիզբն արդեն իսկ դրված եր և նրա լուծման ուղիները նշված: Պետրոսի հաջորդներն սպասում եյին քաղաքական հարմար մոմենտի, վերստին բարձրացնելու Անդրկովկասի գրավման հարցը:

* * *

Ռուսական ցարիզմի համար այդպիսի մի շատ հարմար մոմենտ եր Յեկատերինա II-ի շրջանը:

«Յոթամյա պատերազմը (1756—1763 թ. թ.—Վ. Պ.) ամբողջ Յեվրոպան բաժանել եր յերկու բանակի» (Ենգելս): Անգլիան ջարդել եր Ֆրանսիայի ուժերը ծովի վրա և գաղութներում (Կանադա, Հնդկաստան), նրա դաշնակիցները՝ Պրուսիան, Փորթուգալիան, ինչպես և Ավստրիան ու Ֆրանսիան իրենց դաշնակիցներով, յերկարամյա պատերազմներից մեծապես թուլացել-քայքայվել եյին: Իրանում, Թահմազ-Ղուլի խանի (Նադիր-շահի) սպանությունից (1747 թ.) հետո ծայր առած ներքին յերկպառակությունները, վորոնք տևեցին ավելի քան կես դար, կազմալուծել եյին իրանական պետությունը: Խանություններում ամենուրեք գլուխ եյին բարձրացրել կենտրոնախույս ուժերը: Անդրկովկասի խանությունները փաստորեն կիսանկախ եյին դարձել: Հայերի և վրացիների մեջ վերստին սկսել եր խմորվել ազատագրական շարժումը:

Ենգելսի խոսքերով արտահայտած՝ «Համաշխարհային դրությունը ցարիզմի նվաճողական պլանների համար վոչ մի ժամանակ այնքան նպաստավոր չեր յեղել, վորքան 1762 թվականին, յերբ իր ամուսնու սպանությունից հետո գահ է բարձրանում մեծ պոռնիկ Յեկատերինա II-ը»[1]:

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XVI, ч. II, стр. 14, 1936 г.

Օգտվելով միջազգային նպաստավոր դրությունից, Յեկատերինա II-ը վճռական քայլերի յե դիմում ցարիզմի գաղութային քաղաքականության կենսագործման համար: Այդ քաքաքականության կենտրոնում, այս անգամ, ավելի լայն ծավալով եր դրված այսպես կոչված արևելյան հարցը: Յեկատերինա II-ը կատարելով ռուս կալվածատեր-ազնվականների ու առևտրական կապիտալի հրամայական պահանջը՝ իր ամբողջ սրությամբ առաջ է քաշում Սև ծովի և նեղուցների գրավման հարցը: «Սև ծովի ջրերի ազատ օգտագործման հարցը Յեկատերինա մեծի թագավորության ժամանակ Ռուսաստանի համար այնքան կենսական նշանակություն է ստանում, վոր դառնում է ռուսական արտաքին քաղաքականության գլխավոր հարցերից մեկը, պահանջելով, ըստ հնարավորին, արագ լուծելու մեր հարավային ծայրամասերի բախտը»[1]:

1763—1774 և 1787—1791 թվականներին Սև ծովի և նեղուցների տիրապետման համար Յեկատերինա II-ը յերկու անգամ պատերազմ է մղում Թյուրքիայի դեմ: Կուչուկ-Կայնարջիի դաշնագրով (1774 թ.) Ռուսաստանին են անցնում Ազովը և Կերչը՝ Յենիկալե և Կինբուր ամրություններով: Ցարիզմն ամրանում է Սև ծովի ափերում, իսկ նրա առևտրական նավերն իրավունք են ստանում ազատ լողալու Սևծովյան ջրերում: Ղրիմի խանությունը ճանաչվում է Թյուրքիայից անկախ (իսկ 1783 թ. միացվում է Ռուսաստանին): 1791 թ. Յասսիում կնքված դաշնագրով վերականգնվում են Կուչուկ-Կայնարջիի խախտված պայմանները և Թյուրքիան պարտավորվում է ճշտությամբ կատարել այն: Ճանաչվում է Ղրիմի, Թամանի միացումը Ռուսաստանին: Ռուսաստանի սահմանները ձգվում են հարավ-արևմուտքում մինչև Կուբան գետը: Թյուրքիան հանձն է առնում չհարձակվել Վրաստանի վրա և այլն[2]:

Յեկատերինա II-ն իրեն հռչակում է վորպես Պետրոս I-ի արևելյան քաղաքականության շարունակող և նրա ապոկրիֆ

[1] С. Жигарев, Русская политика в Восточном вопросе, т. II, стр. 355—356. 1896 г., Москва.

[2] Договоры России с Востоком, собрал и издал Т. Юзефовичъ, стр. 24—49. С ПБ., 1869 г.

կտակն իրականացնող.—«Բոլոր ուժերով ձգտել դեպի Կոստանդնուպոլիս և Հնդկաստան, վորովհետև նա՛, ով իշխում է այդ քաղաքին, նա կլինի աշխարհի տիրակալը»:—Իր արևելյան քաղաքականության վոգին արտահայտող այս խոսքերը նա ձգտում եր իրականացնել Պետրոս I-ի կտակի անվան տակ:

Յեկատերինա II-ը, վորը, ինչպես Էնգելսն է ասում, յուրացրել եր ճիզվիտական որդենի սկզբունքները, իր համաշխարհային տիրակալության ստեղծումը կապում եր Սև ու Կասպից ծովերի, Հնդկաստանի և հատկապես Բոսֆորի, Դարդանելի ու Կոստանդնուպոլսի նվաճման հետ: Ազովը և Ղրիմը ցարիզմի համար միայն ճանապարհ եյին դեպի Կոստանդնուպոլիս: Ռուսական նվաճողականության ամբողջ ձգտումը, վորը, Ռենե Պինոնի ասելով, լցնում եր XVIII դարի վողջ պատմությունը,—դա Սև ծովը Ռուսաստանի «ներքին ծով» (mare clausum) դարձնելու, Կոստանդնուպոլիսը նվաճելու ձգտումն եր[1]:

Նվաճելով Կոստանդնուպոլիսը՝ աշխարհի ուժեղագույն բնական այդ ամրությունը, «Արևելքի Հռոմը», Արևելքի ու Արևմուտքի միջև յեղած «վոսկյա կամուրջը»[2], ցարիզմը կարող եր ազատ գործողություններ սկսել վոչ միայն Միջերկրական ծովում, Հնդկաստանի ջրային ճանապարհի վրա, այլև Փոքր Ասիայի տիրապետող բարձունքներում, Յեգիպտոսի ցամաքային ճանապարհի վրա և նույնիսկ Հնդկական ովկիանոսում:

> «Ցարգրադը, վորպես ռուսական յերրորդ մայրաքաղաք, Մոսկվայի և Պետերբուրգի հետ մեկտեղ—այդ կնշանակեր վոչ միայն բարոյական գերիշխանություն արևելյան—քրիստոնեյական աշխարհի վրա, այդ կլիներ նաև վճռական քայլ գերիշխելու Յեվրոպայի վրա: Այդ կլիներ միահեծան գերիշխանություն Սև ծովի վրա, Փոքր Ասիայում, Բալկանյան թերակղզում»[3]:

[1] René Pinon—L'Europe et l'empire ottoman, p. 71, 1908, Paris տես նաև Сборник „Проливы", стр. 35, Москва, 1923 г.

[2] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, стр. 440—441, 1933 г. ընդգծումներն իմն են. Վ. Պ.:

[3] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XVI, ч. II, стр. 10, 1936 г.

Սև ծովի և նեղուցների հարցի այսորինակ լուծումը, վոր ցարական աբսոլյուտիզմին գերակշռող դիրք կտար յեվրոպական կոնտինենտում, Մարքսը և Էնգելսը դիտում եյին վորպես մեծագույն աղետ յեվրոպական դեմոկրատիայի համար, վորպես պատվար համաշխարհային քաղաքակրթության առաջ: Նրանց կարծիքով, Պոլիսը ցարական գարիսոնի ներքո կլիներ ավելի զորեղ ու ավելի ազդեցիկ, քան սուլթանի իշխանության ներքո: Այդ Նոր Հռոմն ավելի անբարոյականացնող ազդեցություն կունենար, քան հին Հռոմը[1]:

Ցարական Ռուսաստանի նվաճողական քաղաքականության այս ահռելի պլանի իրականացման գործում կարևոր տեղ եր տրըվում Անդրկովկասի նվաճմանը: Իսկ յեթե նկատի ունենանք, վոր հարավ-արևմուտքից, Բալկանների վրայով նեղուցները գրավելու ցարիզմի անցյալի բոլոր փորձերը հանդիպել եյին յեվրոպական թշնամի և նույնիսկ դաշնակից պետությունների ուժեղ դիմադրության, ապա պարզ կլինի, թե ինչու Յեկատերինա II-ը և առանձնապես նրա հաջորդները պետք է առաջին պլանի վրա քաշեյին Անդրկովկասի գրավման հարցը, վորպես իր աշխարհագրական դիրքով և ժամանակակից սոցիալ-քաղաքական կացությամբ ավելի նպաստավոր ու համեմատաբար դյուրին նվաճելի ճանապարհ՝ ընկած Թյուրքիայի և Իրանի միջև ու անմիջականորեն նրանց լծի տակ:

Իհարկե, միայն սրանով չեր սահմանափակվում Անդրկովկասի նվաճման անհրաժեշտությունը:

Անդրկովկասի գաղութացումը ցարիզմին ամենից առաջ անհրաժեշտ եր՝ նրա բացառիկ կարևորություն ներկայացնող ռազմա-ստրատեգիական նշանակության, ջրային (Սև ու Կասպից ծովեր) և ցամաքային ճանապարհով դեպի Թյուրքիա, Իրան և ապա Հնդկաստան առաջխաղալու համար:

Անդրկովկասի գաղութացումը ցարիզմին անհրաժեշտ եր՝ լեռնականների հարձակումից և ներքին վտանգից մշտապես անապահով իր հարավային յերկրամասերը միանգամ ընդմիշտ ապահովելու համար:

Անդրկովկասի գաղութացումը ցարիզմին անհրաժեշտ եր՝ այն վորպես շուկա և հումքի առատ բազա ոգտագործելու համար:

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, ст. 440.

Վերջապես, Անդրկովկասի գաղութացումը ցարիզմին անհրաժեշտ էր՝ իր ամենազորեղ մրցակիցների՝ Անգլիայի ու Ֆրանսիայի քաղաքական-տնտեսական աճող ազդեցությունն Արևելքի երկրներում թուլացնելու, այդ ազդեցությունից զերծ, թույլ պետությունների հետ հարևան լինելու և իր ազդեցությունն այդ երկրներում տարածելու համար:

Հիմնականում սրանք են ահա այն խնդիրները, որոնք Անդրկովկասի նվաճման կապակցությամբ դրված էին ցարական նվաճողականության առաջ և որոնց իրագործումն սկսվում է Եկատերինա II-ի ու նրա հաջորդների ժամանակ, քայլ առ քայլ, հրի ու սրի, դիվանագիտական խարդավանանքների միջոցով:

Իր տեղում մենք արդեն նշել ենք, որ Պետրոս I-ը համառ ու սիստեմատիկ պայքար սկսելով Կովկասի գաղութացման համար, միաժամանակ մոտիկ հարաբերություններ էր սկսել հայ-վրացական քաղաքական շրջանների և մասնավորապես հայ առևտրականների հետ, ցանկանալով նրանց օգտագործել իր քաղաքական-տնտեսական նպատակների համար:

XVIII դարի երկրորդ կեսում, երբ ավելի քան ուժեղանում է ցարիզմի առաջխաղացումը դեպի հարավ, Եկատերինա II-ը նոր թափ է հաղորդում այդ հարաբերություններին: Նրա ծրագրած թյուրքական և պարսկական կամպանիաների մեջ հայերի ու վրացիների ունենալիք գործողություններին նշանակալից տեղ էր տրվում: Իրանի և ապա Հնդկաստանի հափշտակման գործում, որ ծրագրվում էր իրագործել առաջին ռուս-թյուրքական պատերազմից հետո, առանձնապես մեծ տեղ էր տրվում հայերի գործողություններին: Ցարական դիվանագիտությունը դրա համար արդեն իսկ նախապատրաստական մեծ աշխատանք էր կատարել: Եկատերինա II-ը, ի տարբերություն իր նախորդների, իրեն հռչակել էր ոչ միայն Ռուսաստանում, այլև աշխարհի բոլոր կողմերում ապրող հայերի պաշտպան և հովանավոր: Խոշոր առևտրական Լազարյաններին ընդունել էր ռուս ազնվականության շարքերը և դարձրել իր նվաճողական քաղաքականության ակտիվ գործակալներ: Նրանցից մեկը՝ Հովհաննես Լազարյանը Պետերբուրգից ոչ հեռու ձեռք էր բերել 70 հազար դեսյատին կալվածք և մոտ 20 հազար ճորտ: Ուրալում նրան պատկանող չորս գործարաններում տարեկան ձուլում էին մոտ 500 հազար փութ չուգուն, ստանում

էր ավելի քան 230 հազար փութ երկաթ և 70 հազարից մինչև 100 հազար փութ աղ[1]:

Լազարյանն ինտիմ հարաբերություններ էր հաստատել Եկատերինա II-ի և նրա պալատական իշխող վերնախավի հետ: Լազարյանների միջոցով ցարիզմն անց էր կացնում Հայաստանի գաղութացման իր քաղաքականությունը: Այդ նույն նկատառումներով 1815 թ. Մոսկվայում բացվում է հայտնի Լազարյան ճեմարանը:

* * *

Ցարական կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում հայ հոգևորականության կենտրոն՝ Էջմիածնի վանքի վրա և այն օգտագործում է իր ազդեցությունը տարածելու համար:

Այն ժամանակվա պայմաններում, երբ իրենց պետականությունը վաղուց կորցրած հայերն ապրում էին ֆեոդալական հետամնաց Իրանի և Թյուրքիայի լծի տակ, գերակշռող մահմեդական բնակչության միջավայրում, Էջմիածնի աթոռը ոչ միայն կրոնական, այլև քաղաքական խոշոր ազդեցություն ուներ հայ բնակչության վրա: Ժամանակակից կաթողիկոս Սիմեոն Երևանցին (1763—1780), որը բավականաչափ ազդեցիկ և քաղաքագետ անձնավորություն էր, ավելի է ընդարձակում Էջմիածնի կրոնական, տնտեսական, քաղաքական իրավունքներն ու ազդեցությունը: Նա վանքի համար ձեռք է բերում նոր կալվածներ, Էջմիածնում հիմնում է տպարան (1765 թ.) և 1777 թվականից սկսում է հրատարակել կրոնական, պատմական, փիլիսոփայական գրականություն: Սիմեոնի օրով կառուցվում է թղթի գործարան, դպրոց, մոմի գործարան, ձիթհանք, բաղնիք և այլն[2]:

Սիմեոն կաթողիկոսը, 1766 թ. սկսած, հարաբերությունների մեջ մտնելով ցարական արքունիքի հետ, խնդրում է իր իրավունքները տարածել նաև Ռուսաստանում ապրող հայերի վրա:

Եկատերինա II-ի համար, քաղաքական տվյալ մոմենտում,

---

1 Տես Յիշատակարան կենաց և գործոց մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի. շարադրեալ ի Մսերայ Մագիստրոսէ եւ ազատէ Գրիգորեան Մսերեանց. ի Մոսկուա, 1856 թ., էջ 9:

2 «Դիվան հայոց պատմության», գիրք Գ., էջ ՉՉ, 1894 թ., Թիֆլիս:

Սիմեոն կաթողիկոսի նման ուժեղ մի անձնավորություն, վորը մեծ կապեր և ազդեցություն ուներ պարսկահայերի, հնդկահայերի և թյուրքահայերի (1756 թ. Պոլսում նա յեղել եր նվիրակ) վրա, ուղղակի գյուտ եր. նրան սիրաշահելու ու իր կողմը գրավելու նպատակով, Յեկատերինա II-ը վոչ միայն բավարարում ե նրա խնդիրը, Եջմիածնի իրավասությանը յենթարկելով ռուսահայերի թեմը, այլև նրան վերցնում ե իր հովանավորության տակ: 1768 թվ. հունիսի 30-ին Յեկատերինա II-ը հատուկ հրովարտակ ե ուղարկում Սիմեոն կաթողիկոսին. այդ հրովարտակում ասված ե.

> «Ազնվագույն Սիմեոն կաթողիկոսին և ազնիվ յուզբաշիներին և ամբողջ հայ ժողովրդի կառավարիչներին, հատկապես ռուսական կայսրության մեջ ապրողներին, հուսադրում ենք պահել մեր բարձրագույն կայսերական վողորմածության ու հովանավորության ներքո» [1]:

Յեկատերինա II-ի փորձերը՝ Եջմիածնի աթոռը դարձնել իր գաղութային քաղաքականության գործիք՝ դրական հետևանքներ են ունենում: 1771 թվականին Սիմեոն կաթողիկոսն առանձին յեկեղեցական ծնկաչոք մաղթանք ե կազմում, վորտեղ ցարիզմի թշնամի պետության հպատակների առջև յեկեղեցիներում գովերգում են ռուս ցարին «...Ամենաողորմած կայսր ամենայն ռուսաց, շնորհ, ողորմութիւն և օգնութիւն քո անպակաս արասցես ի սմանէ»—ասված ե այդ մաղթանքի մեջ: Մաղթանքի ժամանակ փառաբանվում ե ցարիզմի ուժը և աղոթք ե արվում, վորպեսզի ռուսաց թագավորությունը «միշտ զօրաւոր և անպարտելի լինի ի վերայ ամենայն թագաւորութեանց»: Այդ մաղթանքը ռուսահայ յեկեղեցիներում (կատարում եյին կայսերական տոներին) պահպանվեց մինչև վերջ:

Այսպիսով, Սիմեոն կաթողիկոսի ժամանակ ցարական կառավարության և Եջմիածնի միջև հաստատվում են մոտիկ հարաբերություններ: Հայտնի յե, վոր Սիմեոնի նախորդներից և վոչ մեկը չեր հասել այդպիսի արդյունքների: Մեզ հայտնի առաջին դիմումը, վոր տակավին Եջմիածնի գաղտնի ժողովի վորոշմամբ

[1] Собрание Актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. I, стр. 173—175, Москва, 1833 г. (Հետագայում այս աղբյուրը բերում ենք „Собрание Актов" կրճատ ձևով)

Յեվրոպա ուղարկված պատվիրակության կազմվելուց (1678 թ.) առաջ, Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը (1655—1682) գրել եր ռուսաց կայսրին և խնդրել, վոր նա իր դեսպանների միջոցով ազդե պարսիկների վրա, վորպեսզի վերջիններս չտանջեն իրենց, չեր ունեցել շոշափելի արդյունքներ [1]: Ցարական կառավարու-

[1] Հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող հնագույն այս փաստաթղթի մասին ընթերցողներին ամբողջական գաղափար տալու համար այն մեջբերում ենք ամբողջությամբ:

Անհաղթ կայսր

Խոնարհվելով առ վոտս ձերդ ոգոստափառ մեծության, ուղղելով դեպի ամենաբարձրյալն անթիվ մաղթանքներ ձեր թագավորական անձի վողջության համար և հայ յեկեղեցու աղերսանքները բովանդակ թագավորությանդ անդորր յերջանկության և ներկայիս անսպառ հաղթությունների, խաչի թշնամիների տապալման, խորտակման և բնաջնջման համար, վստահ լինելով կայսերական ոգոստափառությանդ թե դեպի ոտարները և թե դեպի տնայիններն ունեցած հաստատ վողորմածության վրա՝ (ձեզ) եմ մոտենում ծնկաչոք: Յեվ ինչպես Մոսկովյան Ռուսաստանի բոլոր ամենազոր կայսրները միշտ հանդիսացել են պաշտպան և զորավիգ հավատի այլև թշնամիների բռնության հանդեպ՝ հովանի ճնշվածների, նույնպես և վայել ե նորին մեծությանը, այդ իսկ հերոսների հաջորդին՝ թե կյանքում և թե գահի վրա, ոգնության հասնել մեզ՝ խեղճերիս:

Պարսկաստանում մեզ և մեր յեկեղեցու վրա պարսից պաշտոնյաների կողմից դրվում են ահա ոտարոտի հարկեր և մեզ, վոր չենք կարողանում մեր չքավորության և աղքատության շնորհիվ հատուցանել այդ հարկերը, քշում են դեպի բանտ, չարչարում են, տանջում և վերջապես վոր հետինն ե ու գլխավորը մահմեդականների նպատակների՝ իրանց դավանանքն են հարկադրում ընդունել: Յեթե այդչափ հալածանքները զրկեյին մեզ միայն հարստությունից և աշխարհային ստացվածքներից, չարիքը փոքր կլիներ, և ես լռության կտայի այդ. բայց յերբ տեսնում եմ որ որի վրա մեր ի քրիստոս սնվող զավակները հեռացած (մայրական) ստինքներից, խաբված պատանիները նավով հեռանալիս, չափահասներին և գիտակցության յեկածներին ուժով մղված դեպի հավիտենական փրկության հակառակ դավանանքը, չկարողանալով տանել այդքան մեծ կորուստը, ահա, արցունքներ թափելով առ աստված՝ նրա պատկերի առաջ, մոտենում եմ նաև յուր թագավորության մեջ նրա տեղապահ կայսեր, ձերդ մեծությանը, վորպեսզի բարեհաճե ոգնել մեզ, խեղճությունից ճնշվածներիս, և յերբ նորին ամենազոր մեծությունը պարսիկների մոտ դեսպաններ ուղարկելու լինի մի քանի խոսք (ասել) ի պաշտպանություն մեր ստացվածքի այլ և... յուր թագավորական

թյան համար անշահախնդիր այդպիսի միջամտությունը բնավ էլ ձեռնտու լինել չէր կարող, քանի դեռ գործնական հունի մեջ չէր դրվել Անդրկովկասի նվաճման հարցը։ Հայտնի է նաև Հակոբ Շամախեցի կաթողիկոսի (1759—1763) ցարական արքունիքին 1760 թ. հուլիսի 20-ին գրած դիմումը, որով խնդրել էր «զազգս մեր ողորմելի և զազգն Վրաց հոգալ», որը նույնպես մնացել էր անհետևանք[1]։

Սիրաշահելով և հովանավորելով Էջմիածնի կղերին, ցարիզմը նրան լծում է իր գաղութային քաղաքականության կառքին և հետզհետե դարձնում իր ամենահուսալի հենակետերից մեկը՝ հայ ժողովրդի վրա իշխելու համար։

դիվանագետներին հրամայե ազդել։ Ռուս իշխանությունը մեծ նշանակություն ունի պարսիկների աչքում և դույզն առաջիկայում հավակնություն չունենան այնքան տանջել նրանց, որ ի քրիստոս աստվածն ունեցած ընդհանուր հավատի շնորհիվ, կարող կլինեն ձեզ ուղղել իրանց հայացքը։ Որպես իր այան զարդի՝ բովանդակ հայ յեկեղեցին, ինչպես նաև յես՝ այդ յեկեղեցու սպասավորն ի քրիստոս, այս ամենախոնարհ խնդիրն արկանում ենք առ վոտս ձերդ կայսերական մեծության։

Կայսերական մեծության ամենահավատարիմ, ամենահնազանդ և ամենախոնարհ ծառա։ (Տ. Կ.)

(Հասցե)

Առ ամենազոր և անհաղթ մոսկովյան ռուսաց և այլ ժողովրդոց ողոստափառ կայսր։ (Տես «Արարատ», 1915 թ., էջ 780—781)։

[1] Շամախեցու այս դիմումը—«Թուղթ առ Աստուածազօր Կայսրն Ռուսաց վասն պէսպէս նեղութեանց երկրեացս մերոց»—հրատարակում է դ-ր Ս. Տեր-Ավետիսյանը «Նադիրշահի արշավանքները» իր աշխատության մեջ։ Ստորև տալիս ենք մի քանի քաղվածներ այդ թղթի բնագրից։

... Այս են միտք բանիցս մերոց զի յայտնի է մեծագոյն Աստուածասիրութեանդ ձերում, որ ողորմելի և խղճալի ազգս մեր Հայոց, նոյնպէս և ազգն Վրաց յամաց բազմաց հետէ անտի մինչև ցայժմ կան ընկեալք ի ներքոյ ծառայութեան այլազգեաց վասն մեղաց մերոց բազմաց, որք բազմօք տառապելութեամբք և պէս պէս նեղակրութեամբք անցուցեալք եմք և անցուցանեմք զկեանս մեր։ Եւ մանաւանդ յայսքան ամս, յորս Թագաւորութիւն կարմրագլխից բարձեալ է՝ առաւել եղեն և բազմացան վիշտք և նեղութիւնք մեր, յամենայն իրաց և իրականութեանց, այսինքն հաւատոյ ուրացութիւնք, բարեգործութեանց խափանմունք, վանօրէից, անապատաց և եկեղեցեաց աւերմունք։ Աստուածային

1773 թ. Սիմեոն Երևանցին ռուսահայերի նոր թեմի առաջնորդ է նշանակում իր մտերիմ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին։

Արղությանը ռուսական օրիենտացիայի ջերմ կողմնակիցներից էր։ Հաստատվելով Աստրախանում, նա մի տեսակ միջնորդ կենտրոն է ստեղծում ոչ միայն Հայաստանի ու Անդրկովկասի, այլև Թյուրքիայի ու Հնդկաստանի հայ քաղաքական շրջանների և ցարական արքունիքի միջև։ Քաղաքական իրադարձությունները միանգամից այնքան են բարձրացնում Արղությանի դիրքը, որ Եկատերինա II-ն անձամբ ընդունում է նրան, խորհրդակցում նրա հետ և կարևոր հանձնարարություններ անում։

Ցարական նվաճողականությունը վարպետորեն ծածկվելով Արղությանի և Էջմիածնի այսպես կոչված «հոգևոր» գործունեության քողի տակ, սիստեմատիկորեն անց էր կացնում իր գաղութային քաղաքականությունը։

պաշտամանց լռութիւնք, մանկանց եկեղեցւոյ և ի Քրիստոս հաւատացելոց գերեվարութիւնք, քաղաքաց և գաւառաց և գեօղօրէից ամայութիւնք, ընչից և ստացուածոց կապտութիւնք։

Վասն այսորիկ անպատմելի աղէտից ու անճառելի դառնութեանցս անճար և անօգնական մնացեալ օծեցեալ արքայդ այդ Վրաց, Թէմուրազ, եկեալ յերկրէ յիւրմէ՝ զճանապարհացն վիշտս և զզանազան աշխատակրութիւնս յանձն առեալ սակս Քրիստոսեան հաւատոյս եկն առ բազմազօր բարեպաշտութիւնդ ձեր, յուսալով յամենակարօղն Աստուած և ապաւինելով յողորմածութիւն գերափառութեանդ ձերոց վասն օգնականութեան ի ձէնջ խնդրելոյ և զհնարս փրկութեան մնացեալ քրիստոնէից աստ եղելոց, որք ապաւինելով մեծաւ յուսով սպասեն ակնադէտ։ Աստանօր այսր յաղագաւ և մեք աղաչելով աղաչեմք և խնդրելով խընդրեմք, որպէսզի վասն ամենազօր անուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և վասն պատուականի խաչին նորա, և սակս, սրբոյ Հաւատոյ՝ որ առ նա, զհայցուածս զորս և զմերս կատարել հոգայցէք և զհնարս գտանիցէք եթէ կարելի լիցի՝ և որպէս Աստուածատուր հանճարեղութիւնդ ձեր վկայէ և կամի, մի՛ անտես և անյոյս առնիցէք զմեծահաւատ Արքայդ այդ եկեալդ առ ոտս ձեր և զմեզ աստի աղաչօղս. այլ որպէս հոգայք զձեր օրհնեալ և բարգաւաճեալ ազգդ, խնդրեմ նոյնպէս զազգս մեր ողորմելի և զազգն Վրաց հոգալ։ Վասն զի մեք ևս եմք հանապազ աղօթողք սակս հաստատութեան Թագաւորութեանդ ձերոյ և սակս բարեյաջողութեան և մշտայաղթութեան գործոց ձերոց ի փառս Քրիստոսի Աստուծոյ և ի պարծանս մեր։ (Տես ՀՍՍՀ Մատենադարան, № 2911 (747), էջ 143—144, Օրինակք Կոնդակաց Յակոբայ Շամախեցւոյ և այլն)։

Հայ-ռուսական հարաբերությունների մեջ Արղությանը բոլոր դեպքերում հանդես է գալիս իբրև ցարական քաղաքականության ակտիվ կիրառող։ Այսպես օրինակ՝ Ղրիմի խանության գրավելու կապակցությամբ ցարական կառավարությունն Արղության օգնությամբ 1778 թ. Ղրիմի հայերին, վորոնց թիվը հասնում էր մոտ 20 հազարի, իրենց շուրջ 400 տարվա բնակավայրերից գաղթեցնում է Նովորոսիյսկի, Ազովի ու Դոնի ավազանները։ Այդ տեղահանման հետևանքով գաղթվածների կեսից ավելին վոչնչանում է։ 1779 թ. գաղթականների կողմից Սուվորովին ուղղված մի դիմումի մեջ կարդում ենք.

«Յերբ մեզ Ղրիմից դուրս հանեցին, խոստացել էյին, թե մեր թողած տների փոխարեն տներ կտրվեն, թոշակն ու պարենը կհայթայթվեն։ Սակայն մեր գալուց հետո այնպիսի տեղեր հատկացրին մեզ, ուր վոչ ջուր կա, վոչ անտառ։ Այդ վայրերն անպետք են բնակության համար։ Առաջվա բարեկեցիկ մարդիկն անգամ այժմ մուրալով են հաց ճարում, իսկ մյուսները, սովից ստիպված, մի պատառ հացի փոխարեն իրենց զավակներին են ծախում»[1]։

Յերկրորդ ռուս-թյուրքական պատերազմից հետո, իշխան Պատյոմկինի հանձնարարությամբ, Արղությանը կազմակերպում է նաև Մոլդավիայի, Վալախիայի ու Բուկովինայի հայերի դժնդակ գաղթը դեպի ռուսական տերիտորիան, Դուբոսարի մոտերքը, վորի համար և Յեկատերինա կայսրուհին 1793 թ. նրան պարգևատրում է։

Արղությանը, Լազարյանի հետ միասին, գործոն մասնակցություն է ունենում իշխան Պատյոմկինին և հռչակավոր ռուս զորավար Սուվորովին հանձնարարված թյուրքական և իրանական կամպանիաների պլանների մշակմանը և բուն պատերազմական գործողություններին։ Ահա թե ինչ է պատմում այդ մասին Արղությանն իր հիշատակարանում։

«Թուին 1780 Յունվարի մտան Իւան Պետրովիչ Գորիչն եկն առ մեզ և յայտնեաց զզնալն իւրեանց ի վերայ

[1] Կ. Յեզյան, Էջմիածնի մ. աթոռի և ռուսաց կառավարության հարաբերությունների ծագումը, էջ 17—18, Թիֆլիս, 1904 թ.։

Պարսից առ ի տիրել զծովեզերեայ տեղիսն, հարցումն արար վասն Պարսից երկրացն և որք հնաւորութեանց քաղաքացն ի միմեանց և կարողութեանց նոցին և որքանութիւն զօրացն Հայոց և Տաճկաց, սկսեալ ի Դարբանդու և ի Գիլանու մինչև զԹավրէզ և ի յԵրևան և անտի մինչև ցՂարաբաղ և ի Շրուան։ Եւ մեք որքան գիտէաք, ասացաք. և ինքն գրեաց ռուսերէն և տարաւ»։

«Յունվարի 2 եներալ Պօռոճիկ Ալէքսանդր Վասիլիչ Սուվօրօֆն եկն առ մեզ ի տեսութիւն. և մեր ազնիւ Աղայ Յովհաննէսն ընդ նմա ի վերայ նոյն նիւթոյն և ի վերայ երկրացն մերոց բազում հարցմունս արար մինչև ցերկու ժամս։ Եհարց և մանրամասնաբար զկացութենէ սրբոյ Աթոռոյն մերոյ Էջմիածնայ և յուսադրութիւն արար յոյժ որպէս թէ նորոգելոց իցեն ի մեզ իշխանութիւն...։

Ի սոյն ամսոյ 3, պայծառափայլ քնեազն խնդրեալ էր զմեզ ընդ ազնիւ Աղայ Յովհաննիսին Եղիազարեան, ի միասին գնացաք առ նա և բազում ինչ խօսեցաք վասն այցելութեան ազգիս մերոյ և աշխարհին... և մեր թախանձելն նորոգել ի մեզ զմասնաւոր տէրութիւն ի մեծն Հայաստան, ի քաղաքն Երևան. պատասխանեաց թէ կարելի է, բայց պիտոյ է պատրիարգին ձեր քանեօք իշխանօք խնդիր ի գործ ածիցեն վասն փրկութեան ձերոյ, որ մեք այնու ի յօգնութիւն ձեզ եկեսցուք։ Եհարց և զարքայէն Վրաց և զայլ ինչ բազում... Հրամայեաց և Աղայ Յովհաննէսին գրել ի Ջուղայ Էմին Աղային որ եկեսցէ, որ և գրեաց և զայն գիրն առաքեաց Հաշտարխանու գուբեռնաթին՝ որ նա յղեսցէ ի Ջուղայ առ նա որ շուտով եկեսցէ»։

«Ի սոյն ամսոյ 13, նոյն եներալ Պօռոճիկ Սուվօրօֆն զմեզ Աղայ Յովհաննեսիւն կոչեալ էր առ ինքն վասն տեղեկութեան կացութեանց և վարուց, նաև որպիսութեանց մէլիքանցն մերոց որք ի յԱրցախ աշխարհի են, որ այժմ կոչի Ղարաբաղ և կամ Սղնախ»[1]։

[1] «Կռունկ Հայոց Աշխարհին», 1863 թ., № 7, էջ 510—511, Թիֆլիս։

Արղությանի հիշատակարանից (ինչպես և մեզ հասած այլ վավերագրերից) յերևում է, որ Պոտյոմկինն ու Սուվորովը ձգտում էին հայերի ու վրացիների միացյալ ճակատ կազմակերպել Իրանի և Թյուրքիայի դեմ, մի հանգամանք, որը մեծապես կհեշտացներ ցարական կառավարության գործը։ Հենց այդ նպատակով էլ ցարական կառավարությունը տարիներ առաջ գաղտնի բանակցություններ էր սկսել Վրաստանի Հերակլ II թագավորի, Էջմիածնի կաթողիկոսի, Ղարաբաղի հայ մելիքների և հնդկահայ առևտրական կապիտալի ներկայացուցիչների հետ։ Այդ նույն նպատակներով իշխան Պոտյոմկինը քաղաքական-լրտեսական աշխատանքի յե գրավում 1770-ական թվականներին Հայաստանում և Վրաստանում ճանապարհորդած բժիշկ Յակոբ Ռայնեգսին[1]։

Դժբախտաբար մեզ քիչ բան է հասել այս անձնավորության և, հատկապես, Կովկասում նրա ունեցած գործունեության մասին։ Սակայն, յեղած հատուկ տեղեկությունները էլ, ըստ իս, բավական են ասելու, որ Ռայնեգսը քաղաքական-հետախուզական նպատակներով Անդրկովկաս ուղարկված ցարական գործակալ էր։

1776 թ. Ռայնեգսը գնում է Վենետիկ և Պոլիս։ «Մեծ ցանկություն ունենալով Էջմիածինը տեսնելու», Պոլսի հայ պատրիարքի հանձնարարական թղթով, Երզրումի և Ղարսի վրայով 1778 թ. նա գալիս է Էջմիածին։ Ռայնեգսը ինն օր մնում է Սիմեոն կաթողիկոսի մոտ, նրա ամառանոցում և, ինչպես ինքն է գրում, յերկար կմնար իրեն հաճելի այդ վայրում, յեթե Հերակլի ուղարկած մարդիկ չգային նրան Թիֆլիս տանելու համար[2]։

---

[1] Ռայնեգսը (իսկական անունը Christian Rudolph Ehlich) ծնվել է 1744 թ. Էյսլեբենում (Սաքսոնիա), մեռել է 1793 թ. Պետերբուրգում։ Լայպցիգի համալսարանն ավարտելուց հետո 1773 թ. դիսերտացիա յե պաշտպանում բժշկական գիտությունների դոկտորի աստիճան ստանալու համար։ Կենսագրի ասելով, նա գիտեր յեվրոպական և արևելյան մի շարք լեզուներ, խոսում էր արաբերեն, պարսկերեն և ռուսերեն։

[2] Ռայնեգսի կենսագրական եսքիզի հեղինակ Գերստեմբերգն այս մասին գրում է. «Neun Tage hatte sich Reineggs in diesem Sommer-Lager des Chalifen aufgehalten, und noch länger würde er daselbst zu bleiben sichs gefallen lassen haben, wenn nicht eine Bedeckung vom König Herakleus daselbst angelangt wäre, die ihn in Empfang nehmen, und sicher bis nach

Թիֆլիսում Ռայնեգսը, Յակուբ-խան անունով ընդունվում է Հերակլ թագավորի պալատը և այնտեղ մեկ ու կես տարի աշխատում որպես պալատական բժիշկ։

Ռայնեգսը մոտիկից ծանոթանում է Անդրկովկասի տնտեսական-քաղաքական դրությանը[1], ակտիվ մասնակցություն է ունենում Վրաստանում դրամահատման գործը կազմակերպելու, յեվրոպական ձևով վառոդի աղաց կառուցելու, տպարան հիմնելու աշխատանքներին և այլն։

Հարավային Ռուսաստանի զորքերի ընդհանուր հրամանատար իշխան Պոտյոմկինի հրավերով 1781 թվականին Ռայնեգսը գնում է Պետերբուրգ, որտեղ Անդրկովկասի և մասնավորապես Վրաստանի դրության մասին մի ընդարձակ տեղեկագիր է ներկայացնում ցարական արքունիքին։ 1782 թ. Պոտյոմկինը Ռայնեգսին կրկին ուղարկում է Վրաստան՝ Հերակլ II-ի հետ գաղտնի բանակցություններ վարելու և առհասարակ Անդրկովկասի ուժերը համախմբելու ու վոտքի հանելու նպատակով։ Ռայնեգսն ակտիվ մասնակցություն է ունենում 1783 թ. հուլիսի 24-ին Գեորգիևսկ ամրոցում կնքված ռուս-վրացական դաշնագրին, որով Վրաստանը մտնում էր Ռուսաստանի պրոտեկտորատի տակ, և նշանակվում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Վրաստանում[2]։

Ռայնեգսին հանձնարարվում է նաև բանակցություններ վարել Ղուկաս կաթողիկոսի հետ։ 1783 թ. հունվարին նա գալիս է Էջմիածին, իշխան Պոտյոմկինի, Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի, Լազարյանի և Մանուչարյանի համապատասխան նամակներով ու թանգարժեք ընծաներով։

Tiflis begleiten sollte» (Տես Ռայնեգսի ներքոհիշյալ աշխատությանը կցված Գերստեմբերգի «Biographische Skitze des Russisch-Kaiserlich-Collegien-Raths, Dr. Jacob Reineggs», եջ 334).

[1] Ռայնեգսի մահից հետո, 1797 թվականին, Ֆրիդրիխ Շրոդերը հրատարակում է նրա մի աշխատությունը՝ «Allgemeine historisch-topographische Ceschreibung des Kaukasus». Ռայնեգսի այս աշխատությունը կարևոր աղբյուր է Անդրկովկասի և մասնավորապես Վրաստանի XVIII դարի պատմության ուսումնասիրության համար։

[2] Dr. Jacob Reineggs, Allgemeine historisch-topographische Beschreibung des Kaukasus. Zweiter Theil. s. 382—383, 1797.

«...Եկն էհաս ի սուրբ Աթոռս սիրելին մեր Տօքտօր պարոն Յակոբն և մատոյց մեզ զգիր պայծառափայլ իշխանին մեծի. և զնշանն սիրաձիր զականակուռ ադնիւ խաչ. նաեւ զթուղթս սիրելեացն մերոց՝ Ազնիւ Յովհաննէս Աղային, և Մանուչարենց Մարգարին և Փիլիպպոսին և զքոյդ եւ ի սեպտ. ԻԴ գրեալ գիրդ հասոյց մեզ: էհաս նաեւ՝ ի նոյ. ԻՁ ի Ղզլարու գրեալդ ընդ Մանուչարին. զոր քանի աւուրբ յառաջ աստ յղեալ Տօքտօրն, ինքն եւս յետոյ եկն: Եւ զոր ինչ ի բերան անելին էր՝ զամենայն ծանոյց եւ իմացաւ: Մեք եւս գրեցաք շնորհակալութեամբ զպատասխանի մեծի իշխանին և զմերոցն. եւ զոր ինչ վայել էր ընդ իւրն խօսեցեալ և ըստ արժանոյն շահեալ ուղեւորեցաք աստի, տուեալ նման և զայս թուղթ: Որում թէ դէպ լիցի զքեզ տեսանել, գիտելոց ես զի՞նչ խօսիլն մեր ըստ հարկի և ըստ ձեռնտուութեան ներկայիս: Եւ գրեցաք եւս մեծի իշխանին, զի վասն հարկաւորութեանց եւ օգտից մերոց զոր ինչ դու և պարոն Յովհաննէս Աղայն և պարոն Տօքտօրն ծանուցանիցէք, լուիցէ քաղցրութեամբ և հոգ տարցի: Ուրեմն՝ շրջահայեաց նոքօք լիջիր՝ զըստ պատշաճին ընտրել, և զգիարդն՝ յորէ յոր մեզ ազդել, հանդերձ այլովք հարկաւորօք: Այժմ զայսքանս հազիւ գրեալ ի պատասխանի աստէն յիշեալ թղթոցդ ամենից, յետոյ ի դիպօղ ժամու՝ եթէ այլ եւս իցէ ինչ հարկաւոր գրել քեզ առ մնացեալ բանսդ որի թուղթդ վերոյ յիշեալ, գրելոց եմք: Քանզի այժմ շատ էաք զբաղեցեալ, մանաւանդ և Տօքտօրն (ըստ որում և հարկն պահանջէր)՝ փութով ել աստի, որպէս և պատմելոց է իսկ քեզ՝ եթէ պատահիցի»[1]:

Ցարական կառավարության պահանջներն այս անգամ ավելի քան վորոշակի էյին: Հերակլ II-ի հետ համաձայնության գալուց և Վրաստանի մասնակցությունն Իրանի ու Թյուրքիայի դեմ ծրագրվող արշավանքներում ապահովելուց հետո, հերթը Հայաստանինն եր: Պետք է գործնական հունի մեջ դրվեր հայերի կազմակերպման ու մասնակցության հարցը: Յեթե Վրաստանում

[1] Դիվան հայոց պատմության, գիրք Դ., 1899 թ., էջ 289—290: Ընդգծումը մերն է. Վ. Պ.:

այդ անելու յեր Հերակլ II թագավորը, ապա հայերի մոտ, պետական իշխանություն չլինելու հետեվանքով, կազմակերպչական ղեկավար կենտրոնի ֆունկցիաները ցարական դիվանագիտությունը նպատակահարմար եր գտել դնելու Եջմիածնի կաթողիկոսի վրա, ամբողջ հայության նկատմամբ նրա ունեցած ազդեցությունն ոգտագործելու նպատակով: Բայց յեթե այնպիսի աչքի ընկնող մի ռազմագետ և զորեղ թագավոր, ինչպիսին եր Հերակլը, կարող եր իր վրա վերցնել և այս ու այն չափով իրագործել այդպիսի պատասխանատու մի դեր, ապա Եջմիածնի կաթողիկոսի նման անզեն ու անզոր, ռազմական-կազմակերպչական շնորհքից զուրկ մի անձնավորություն, վորքան էլ այդ «քաղցր» լիներ նրա համար և ձգտեր «հոգ տանել», ռուսական զինական ոգնությունից տակավին շատ հեռու, Յերևանի խանի քթի տակ, սահմանի վրա, իհարկե, չեր կարող նման շատ պատասխանատու դեր կատարել:

***

Բայց յեթե Եջմիածնի կաթողիկոսն ի վիճակի չեր կատարելու ցարական հրամանատարության ռազմական-կազմակերպչական այդ առաջադրանքը, նրա փոխարեն կային ավելի համապատասխան ուժեր՝ Ղարաբաղի հայ մելիքները, վորոնց հետ բանակցելու գործը նույնպես հանձնարարված եր Ռայնեգսին:

Տակավին Ղարաբաղ չգնացած, Ռայնեգսը Թիֆլիսից կենդանի և գրավոր կապեր է հաստատում Ղարաբաղի մելիքների հետ: Մեր ձեռքի տակ են մելիք Աբովի, մելիք Հաթամի և Գյուլիստանի տանուտեր Ստեփանի նամակները, վոր նրանք 1783 թվին գրել են Ռայնեգսին: Դրանք պատասխաններ են Ռայնեգսի կողմից 1783 թ. ապրիլի 25-ին մելիք Ստեփանին ուղղված մի նամակի: Դատելով մելիքների կողմից Ռայնեգսին ուղղված պատասխան-նամակներից, կարելի յե ասել, վոր Ռայնեգսը կապվելով մելիքների հետ, կամեցել է համախմբել նրանց ուժերը, ապստամբություններ կազմակերպել պարսիկների թիկունքում և զորավիգ կանգնել ռուս զորքերին նրանց հարձակման ժամանակ:

Մելիքներն ամենայն սիրով հանձն են առնում կատարելու Ռայնեգսի առաջադրանքները: Գյուլիստանի տանուտեր Ստեփանը 1783 թ. մայիսի 1-ին Ռայնեգսին գրում է.

«Զամենայն զօրութիւն թղթոյն իմացայ, յոյժ և յոյժ խրախացաւ ի հոգի և ի մարմին մեր»։

Ավելի հետաքրքրական է մելիք Աբովի պատասխանը.

«... Գաբրիէլ անուն երկրացին մեր եկեալ հասանելն և որպիսութիւնն մեր իմանալն առեալ ի ձեռս մեր համբուրեցաք, բացաք և զամենայն գրեցեալ զօրութիւնն մի ըստ միոջէ իմացաք... Մեք փառանկեալքս աղերսանօք աղաղակեմք և խնդրեմք վաղվաղակի օգնութիւն որ լիցի տարակուսելոյս փրկութիւն. միշտ և յանապազ ցայգ և ցերեկ ի աչս մեր ճանապարհի է և ականջս մեր ի լրոյս և համբաւոյ. թէ զի արդ լինի, որ փութանակի և յանկարծակի հասանէ օգնութիւն փրկութեան տարակուսեալ ազգիս հայոց զերայ եթէ վաղվաղակի չհասանէ փրկութիւն մեր օր աւուր նուազութիւն մեր ի ձեռն անօրէն թշնամեացն հասանէ կամին ոչնչացուցանել զմեզ. խնդրեմ ի հաւատարիմ սահաբ աղայեդ ջանաս որ առաջ ձգես զի թուղթ մի զօր ծրաբեալ կայիր ի վերայ քօվխային իբր տանուտէր Ստեփանին զայն ևս տեսաք, իմացաք թէ զինչ արգեօք է գծագրեալն, զայն ևս ծանուցմամբ հաւատարիմ սահաբ աղայիդ մեծապատիւ եղբայր մեր միրզայ Գեօրգին ևս տեսաք զամենայն բան մի ըստ միոջէ ասացմամբ քոյին հաւատարմութեանդ պատմեաց մեզ և մեք իմացաք և պատասխան նորին պատմելոց է առաջի սահակ աղայիդ և ի բանս առանձնականս խօսեցեալ կամ յետ բարօն Յեսայուն որ ի լեզուէ ազգելոցէ ի սպասոյ հաւատարմութիւն մեծիդ. խնդրեմ մի զանց արասցես մինչ ի հասանել օգնութիւն, թուղթ որպիսութեան մի պակաս արասցես որ իմանամք յաւաստի և հասանել օգնութեան ժամն. որ լինիմք ուրախ զոր ինչ հրաման լինի յաճոյական հրամայես ջանով գլխով ծառայութիւն մատուցանեմք որ և գրէ նուաստութիւնս Աբաւ մելիք յուէփ մելիքեան յերկրին թալիշու ՌՄԼԲ մայիսի ամսոյ ԻԲ ամրոցն Գիւլստան»[1]։

[1] Տես Музей Грузии, ф. 650, д. №№ 1394 и 1395.
Այս վավերագիրը մեզ տրամադրեց պրոֆ. Ս. Տեր-Ավետիսյանը, որին և հայտնում ենք մեր շնորհակալությունը։

Նախապատրաստական այս քայլերից հետո, Ռայնեգսն անձամբ անցնում է Ղարաբաղ, տեղում ծանոթանում մելիքների ռազմական ուժերին և կազմում պատերազմելու ընդունակ հայերի ցուցակը՝ ցարական հրամանատարությանը ներկայացնելու համար։

Այդ ժամանակաշրջանում, ճիշտ է, մելիքները պահել էյին իրենց ֆեոդալական կիսանկախ դրությունը, ունեյին իրենց գյուղերը, կալվածները, վարչական-դատական վորոշ ֆունկցիաներ, զինված ուժ և այլն, բայց ներքին յերկպառակտումների և անվերջ պատերազմների հետևանքով զգալի չափով կորցրել էյին իրենց յերբեմնի տնտեսական, ռազմական կարողությունը։ Այդ, իհարկե, չէր խանգարում, վոր Ղարաբաղը մնար վորպես ռազմական ուժ մատակարարող և առաջինն ապստամբող կենտրոն։ Ղարաբաղի և առհասարակ Անդրկովկասի տեղական ուժերի կազմակերպումը ցարական կառավարությունն շտապեցնում էր, ցանկանալով օգտվել Անգլիայի ու Ֆրանսիայի միջև յեղած պատերազմից՝ Պարսկաստանի դեմ նոր կամպանիա սկսելու համար։ Յեկատերինա II-ը հենց այդ նպատակով էլ Սուվորովին ուղարկել էր Աստրախան, տալով նրան «գաղտնի և կարևոր հանձնարարություն»[1]։

Հարցն այն աստիճան հասունացած էր, վոր հռչակավոր ռուս զորավարն Աստրախանից կապվելով մելիքների հետ, իր հերթին գործնական ցուցումներ էր անում նրանց զինված ուժերը կազմակերպելու և մարտական վիճակում պահելու համար։ Արղությանը, Լազարյանը և Ընկ., ինչպես գիտենք Արղությանի հիշատակարանից, տարիներ շարունակ սերտ հարաբերությունների մեջ էյին մելիքների և Գանձասարի կաթողիկոսի հետ, տենդենցիոզ ինֆորմացիաներ էյին տալիս ցարական «փրկարար» օգնության մասին և այլն։

1783 թ. մարտին այդ բոլոր բանակցությունները հանգում են իրենց վախճանին։ Մելիքների, հոգևորականության և ժողովրդի գլխավորների ներկայությամբ Գանձասարի վանքում գումարված գաղտնի ժողովը հատուկ թղթով իր հպատակությունն է հայտնում ցարական կառավարությանը և խնդրում շտապեցնել խոստացած օգնությունը։

[1] К. Осипов, Суворов, стр. 89, 1939 г., ընդգծումն իմն է. Վ. Պ.։

Ցարական դիվանագիտության համար սա մի նոր հաղթանակ էր Վրաստանից և Եջմիածնից հետո։ Դոկտոր Ռայնեգսի ջանքերը զուր չէյին անցնում։

Գանձասարի ժողովի վորոշումն ստանալուց անմիջապես հետո, իշխան Պոտյոմկինը կարգադրում է կովկասյան բանակի գլխավոր հրամանատար գեներալ Պոտյոմկինին (իր բարեկամը) պաշտոնանկ անել Շուշու Իբրահիմ խանին, քանի վոր Ղարաբաղը բացի Ռուսաստանից այլևս վոչ վոքի չպիտի յենթարկվեր։ Ղարաբաղի ջոջերին մի պահ թվում էր, թե ամեն ինչ վերջացած էր, «մեծ» կայսրուհու հովանու տակ, վերջապես, պետք է աճեյին ու փթթեյին, հասնելով իրենց փառքի գագաթին։ Սակայն, ցարական դիվանագիտության ճարպիկ մի մանյովրն իսկ բավական էր, վորպեսզի ջարդ ու փշուր լիներ նրանց բոլոր հույսերը...։ Յեվ մինչ ռուս զորքերը կմտնեյին Ղարաբաղ, ու տեղացիները կապստամբեյին և կտապալեյին Իբրահիմ խանին, վերջինս համաձայնելով ցարական կառավարության առաջարկին և հպատակություն հայտնելով նրան, վերջ է դնում այդ ամենին։

Այսպես էր ահա ցարական կառավարությունը «ազատագրում» հայ ժողովրդին։

Առհասարակ բոլոր նվաճողների նենգ ու խարդախ քաղաքականությունն է՝ նոր յերկրներ նվաճել նաև տեղացիների ձեռքով։ Օրինակ՝ անգլիական իմպերիալիզմը, Հայլբորնի ասելով, Հնդկաստանը գաղութացնելիս լայն չափերով գործադրում էր այդ մեթոդը, կաշառելով, իր հովանավորության տակ վերցնելով կամ վասալ դարձնելով հնդիկ ֆեոդալ-իշխաններին[1]։

Ռուսական ցարիզմն այդ նույն սկզբունքը յուրացրել էր շատ վաղուց և գործադրում էր Անդրկովկասի գաղութացման ընթացքում։ Ղարաբաղի ժողովուրդն առաջին անգամ չէր, վոր թպրտում էր ցարական դիվանագիտության ցանցում։ Բայց այս անգամ շատ դառն վախճան ունեցան նրա ազատագրական փորձերը։ Իբրահիմ խանը, օգտագործելով ցարիզմի յերկդիմի քաղաքականությունը և իր համար ստեղծված բարենպաստ կացությունը, անողոքաբար հաշիվ մաքրեց առաջին հերթին հայ մելիքների և Գանձասարի կաթողիկոսի հետ։ 1787 թ. նա իր մոտ

[1] Heilborn, Das völkerrechtliche Protektorat, էջ 5։

է հրավիրում Գյուլիստանի մելիք Աբովին, Ջրաբերդի մելիք Մեժլումին, Դիզակի մելիք Բախտամին և բանտարկում Շուշու բերդում։ Նույն ձևով վարվում է Հովհաննես կաթողիկոսի հետ և ավերում է Գանձասարի վանքը։ Ցարական կառավարության և հատկապես Ղարաբաղի «լիազոր ներկայացուցիչ» Հովսեփ արքեպիսկոպոս Արղության ոգնությունն արտահայտվում է նրանով միայն, վոր ազատ մնացած հայերին, ինչպես Պետրոս I-ի օրով, խորհուրդ են տալիս գաղթել Ռուսաստան։

Ցարական դիվանագիտության թակարդում և իրանական խաների գիշատիչ ճանկերում տառապող Ղարաբաղը, հատկապես վոտքի տակ մաշվող աշխատավորությունը, դարի վերջում արդեն սկսում է գալարվել նաև համաճարակի, սովի ու մահվան ճիրաններում։

* * *

Ի՞նչ էր կատարվում հնդկահայերի քաղաքական օջախում. ինչպես եյին նրանք դիրքորոշվում պատմական այս իրադարձությունների հանդեպ։

Հնդկահայ առևտրականները, վորոնք անգլիացիներից ավելի քան կես դար առաջ, Գանգեսի գետաբերանում և Հնդկական թերակղզու այլ վաճառաշահ վայրերում հիմնել եյին առաջին առևտրական գաղութները և մեծ կապիտալներ կուտակել, XVIII դարի սկզբից շփման մեջ եյին մտել յեվրոպական (գլխավորապես անգլիական) առևտրի ու կուլտուրայի հետ։

XVIII դարի 50—60-ական թվականներին Ֆրանսիայի դեմ Անգլիայի տարած վճռական հաղթանակից և Հնդկաստանում մոնոպոլ դիրք ձեռք բերելուց հետո, սկսում է քայլ առ քայլ փլվել նաև հայ առևտրականների վոտքի տակի հողը։ Չդիմանալով անգլիական առևտրի մրցմանը, հայ վաճառականներն իրենց հայացքը դարձնում են դեպի մայր յերկիր, տակավին ուժեղ մրցությունից զերծ Անդրկովկասի, Իրանի և Թյուրքիայի շուկաներում գործադրելու իրենց կապիտալները։ Բայց չէր կարելի կապիտալը ռիսկի յենթարկել։ Իրանական և թյուրքական կարգերը միանգամայն աննպաստ եյին առևտրի զարգացման համար։ Առևտուր անելու յեղանակը, օրինակ՝ Թյուրքիայում, ինչպես Էնգելսն է ասում, «քարվան» կտրելն էր, այնինչ առևտրի անար-

դել զարգացումը պահանջում է ապահով պայմաններ։ Այս և նման հարցերն արդեն իսկ սկսում էին մաշել հնդկահայ վաճառականների ուղեղները և հասարակական-քաղաքական խորհրդածությունների դուռ բանալ նրանց առաջ։ «Շուկան առաջին դպրոցն է, վորտեղ բուրժուազիան ազգասիրություն է սովորում»—ասում է ընկեր Ստալինը։ Հայ առևտրական բուրժուազիան նույնպես հետ չի մնում ազգասիրական գաղափարներ յուրացնելուց։ Կար արտաքին կարգի մի ուրիշ կարևոր ազդակ ևս—դա Յեվրոպայի հետ ունեցած կապերի, այնտեղի բուրժուական-սահմանադրական կարգերի ազդեցությունն էր, վոր հնդկահայ առևտրականներից վոմանց, առանձնապես նրա ինտելիգենտական խավին, մղում էր դեպի հասարակական-քաղաքական, ազգային գործունեության ասպարեզ։

XVIII դարի 60-ական թվականներից հնդկահայերի մեջ սկսում է խմորվել հայ ազատագրական շարժման գաղափարը։ Այդ գաղափարի առաջին դրոշակակիրը Հովսեփ Եմինն էր, Կալկաթայի հայ առևտրականի վորդի, վորը մեծ դժվարություններով Լոնդոնում զինվորական կրթություն էր ստացել (սպա) և վերադառնալով Թյուրքահայաստան ու Պարսկահայաստան՝ պրոպագանդ էր անում հայերի ազատագրության համար։

Անգլերեն լեզվով հրատարակած իր «Կյանքը և արկածները» աշխատության մեջ Եմինն ասում է, վոր իր նպատակն էր՝ հայ յերիտասարդությանը սովորեցնել, թե մարդկությանը հատկացված բոլոր բարիքներից մեծագույնն ազատությունն է և վոր ասիական բռնակալությունն այդ ազատության ամենամեծ թշնամին է։ Նա կոչ էր անում հայերին ապստամբել և զենքի միջոցով թոթափել ստրկության լուծը։ Սակայն, Եմինը ևս չէր անգիտանում այն պարզ իրողության առաջ, վոր հայերի ազատագրումն իրանական և ոսմանյան դեսպոտիզմի լծից անհնարին էր առանց դրսի ոգնության։ Այդ պատճառով էլ 1760 թ. նա գնում է Թիֆլիս, բանակցում Հերակլ II թագավորի հետ, իսկ 1762 թ. գնում է Պետերբուրգ և դիմում ցարական արքունիքին։

Չստանալով ռեալ ոգնություն, բացի խոստումներից, միաժամանակ ուժեղ հալածանքի յենթարկվելով Էջմիածնի կաթողիկոսի կողմից, Եմինն անցնում է Ղարաբաղի մելիքների մոտ, իսկ 1771 թ. վերադառնում է Հնդկաստան։

Անհաջողության հանդիպելով իր ծրագիրն իրականացնելու առաջին փորձերի մեջ, Եմինը, նրա հետ և Մադրասի հայ քաղաքական անդրանիկ խմբակը, գալիս են այն յեզրակացության, վոր ամենից առաջ անհրաժեշտ է լայն պրոպագանդա ծավալել մասսայականացնելու Հայաստանի ազատագրության գաղափարը, առանձնապես հայ յերիտասարդությանը սթափեցնել խոր քնից և վոտքի հանել մարտնչելու այդ գաղափարի համար։

XVIII դարի 70-ական թվականներից Մադրասի հայ գաղութում դրվում է քաղաքական-ազատագրական, կուլտուր-լուսավորական այդպիսի նշանակալից մի գործի սկիզբը, հայ ազատագրական շարժման ժամանակակից ամենաաչքի ընկնող դեմքերի՝ Հովսեփ Եմինի, Մովսես Բաղրամյանի և Շահամիր Շահամիրյանի ղեկավարությամբ։

Մադրասում հիմնված քաղաքական այդ խմբակի տպարանից 1772 թ. լույս է տեսնում հայ առաջին քաղաքական-հրապարակախոսական յերկը՝ «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ» վերնագրով։ Նրա հենց առաջին էջում ազդարարվում է. «Շարադրեցեալ սակս սթափելոյ երիտասարդացն և մանկանցն Հայկազանց ի վեհերոտեալ և ի հեղգացեալ թմրութիւնէ քնոյ ծուլութեան»։

Այս ուշագրավ աշխատության մեջ կոչ է արվում հայ յերիտասարդությանը՝ հետևել յեվրոպական ազգերի որինակին, ուսում և քաղաքակրթություն ձեռք բերել։ Հեղինակը հայրենասիրական առանձին շնչով է խոսում ապագա ազատ ու անկախ Հայաստանի, նրա ժողովրդական հանրապետական կարգերի մասին։ Նա առաջարկում է հայ յերիտասարդությանը զենք վերցնել, նրա գործածությունը սովորել։ Մի ազգ, վոր իր ազատությունը պահպանում է պատերազմի մեջ, յերբեք չի պակասում, ասված է այդ տետրակի մեջ։ Իբրև որինակ նա հիշում է ռուս ժողովրդին[1]։

Հեղինակն իր ընթերցողների ուշադրությունը բևեռում է հայ ժողովրդի անցյալի պատմության, նրա դասերն ոգտագործելու վրա։ Հարձակվում է հայ հոգևորականների վրա, մեղադրում է նրանց յերկրի կործանման մեջ մեղսակից լինելու համար։ Բնորոշ է, վոր հակառակ հայ հոգևորականության ունեցած ժա-

[1] Մ. Բաղրամյան—Նոր տետրակ որ կոչի Յորդորակ, Մադրաս, 1772 թ., «Յորդորումն մանկանց» գլուխը։

մանկակից տիրապետող դիրքին, հնդկահայերի ծրագրում նրանց ղեկավար դեր չի տրվում: Հայ կղերը հոգի ի բուն հալածում է նոր, հեղափոխական այդ միտքը: Օրինակ՝ Սիմեոն կաթողիկոսը, վորը Եմինին սպառնալիքներով քշեց Էջմիածնից և հալածեց անգամ Վրաստանում, Հնդկաստան ուղարկած իր նամակներից մեկում Մադրասի քաղաքական խմբի ղեկավար գործիչ, հիշված աշխատության հեղինակ Մովսես Բաղրամյանին անվանում է «խելացնոր», «մոտաթափ և պակաս ի խելաց»: Առաջարկում է նրա շարադրած գիրքը (խոսքը «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ»-ի մասին է. Վ. Պ.) հավաքել և այրել, իսկ տպարանը փակել: Հակառակ պարագայում սպառնում է «հասարակածանոյց կոնդակաւ գրել յամենայն յերկիր»[1]:

XVIII դարի 70—80-ական թվականներին Մադրասի քաղաքական խմբակը հրապարակ է հանում յերկու ուրիշ նշանավոր գործեր՝ «Գիրք անուանեալ Որոգայթ փառաց» և «Նշաւակ»:

Այս աշխատությունները գրված են Ամերիկայի ազատագրական շարժումների ազդեցության տակ: «Գիրք անուանեալ Որոգայթ փառաց»-ի առաջաբանի մեջ հեղինակը գրում է.

«Եւ այժմոյս լսեմք բորբոքում նոր այսինքն ումն իմաստուն Վաշինկթան անուամբ... հակառակել տէրանց և ժողովեալ հասարակութենէ ժողովրդոց ամէրիկու զօրք բազում, ջանայ և աշխատի գտանիլ ազատութիւն և լինիլ անհնազանդ ումեքէ, թէպէտ կատարածն բանին դեռ ևս ոչ երևեցաւ թէ զինչ լինելոց, այլ ցանկութիւն սրտի ամէրիկացուց բնական է ի բնութեանս մարդոյ, քան զի ոչ գոյ ի յերեսս երկրի ոչ ոք առաւել քաղցրութիւն ի թոշակս մարդոյ քան թէ ազատութիւն»[2]:

Ամերիկայի ազատագրական կռիվների հաջողությունները վոգեշնչում են հնդկահայ ազատագրական շարժման գործիչներին: Հակառակ Էջմիածնի կղերի դիմադրության, նրանք նոր յեռանդով շարունակում են պրոպագանդա մղել «համազգային» ապստամբական շարժում առաջ բերելու համար:

[1] Դիվան հայոց պատմության, գիրք Ը, էջ 573—579, 1908 թ.:

[2] Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան: Շարադրեցեալ Յակոբայ Շահամիրեանց՝ Նոր Ջուղայեցոյ առ ի օգուտ յազգին հայոց: 1773 թ., Մադրաս, Առաջաբանը:

Ղուկաս կաթողիկոսի ստորև բերվող պատասխան-նամակը, գրված Շահամիրյանին, վորոշ պատկերացում է տալիս այդ մասին:

«... Գրեալ էիր մեզ վասն ազատութեան աշխարհիս մերոյ և ազգիս հօգ տանիլ... բայց ահա ըստ մեծի մասին մատնեցեալք կան ի խստութիւնս թշնամեաց անողորմից որ հաւատարմապէս ծառայելով ևս չկարեն զողորմութիւն գտանել, ուր մնայ թէ զապստամբութիւն ցուցանիցեն, որ բնաւ ոչ իսկ կարեն... լինէր թէ՝ օրհնեալդ այժմ յայս կողմունքս գայիր և շրջագայէիր ի Ջուղայու մինչև ցաստ և յայլ կողմունս՝ յոր գոն ազգ մեր. և ականատես վերահասութեամբ իմանայիր զկացութիւնս մերազնէից և զանօգնականութիւն և զրկութիւն իշխողացն. և ինքնին կնքէիր թէ՝ այս դիտմանցս յառաջանալ ոչ լինի... Զկունք որսացեալք ի ցանցս, և թռչունք ըմբռնեալք ի վարմս ջանան զերծանիլ, ապա որքան ևս առաւել բանականքս բաղձամք ազատութեան. սակայն զի այժմոյս կարի դժուարին է առ մեզ և վտանգաւոր յոյժ, վասնորոյ երկուց չարեաց զփոքր ընտրել պիտոյ է:

... Եւ հաւաստապէս իմա՝ որ ոչ ի հիւսիսական տէրութենէն և ոչ յայլոց մեզ այցելութիւն կարէ լինել այժմ, բաց յԱստուծոյ: Եւ ի շրջապատեցեալ գոլս մեր ի թշնամեաց՝ եթէ նշան երևիցի յարելոյ և հայելոյ առ կարծեցեալ օգնիչսն, առաջի կայ նեղութիւն խոշտանկումն, յափշտակութիւն և սուր... տեղեկացիր թէ յանցեալ ամսն մինչ Արցախեցիք ձգտեցան առ ապաւինութիւն նոցա, ի բռնաւորէն իւրեանց զինչ անցք անցին ընդ նոսա. զիարդ մահացաւ խղճալի Յովհաննէս կաթուղիկոսն և որպէս ապաւաղեցաւ ս. աթոռն Գանձասարու. և այժմ ուր են մելիքազունքն, և զինչ կրեցին»[1]:

«Նշաւակ»-ը և «Որոգայթ փառաց»-ն այն հիմնական աղբյուրներից են, վորոնց հիման վրա պետք է քննել ու գնահատել Մադրասի խմբակի քաղաքական ծրագրերի, նրանց հասարակա-

[1] Դիվան հայոց պատմության, գիրք Ա—Բ, էջ 17—19. 1893 թ., Թիֆլիս. ընդգծումն իմն է. Վ. Պ.:

կան իդեաների և կուլտուր-լուսավորական գործունեության պատմական արժեքը։

Այդ ծրագրերում, վորտեղ շարադրված են ինչպես Մադրասի հայ համայնքի, նույնպես և ապագա ազատ Հայաստանի կառավարման կանոնները, արտահայտված են Մադրասի քաղաքական խմբակի բուրժուա-դեմոկրատական, սահմանադրական հայացքները։

Մեր բանասերներից վոմանք իզուր ջանացել են նշանավոր այս հուշարձանները կապել միայն Շահամիր Շահամիրյանի անվան հետ, համարելով դրանք նրա անհատական ստեղծագործությունը, անտես առնելով այդ կանոնադրությունների կոլեկտիվ մտքի ծնունդ լինելու մասին յեղած ավելի հիմնավոր վկայությունները, վորոնք, ի դեպ, բնավ չեն բացասում իր գաղափարակից ուսուցիչների և ընկերների հետ Շահամիրյանի համահեղինակ (соавтор) լինելու հանգամանքը։

«Որոգայթ փառաց»-ը և «Նշաւակ»-ը մեզ հարուստ նյութ են տալիս ծանոթանալու նաև գործնական այն միջոցառումներին, վորոնցով նրանց հեղինակները ցանկանում եյին իրականացնել Հայաստանի ազատագրության մասին ունեցած իրենց ծրագրերը։

Հայտնի յե, վոր Եմինը, Բաղրամյանը, Շահամիրյանը և ընկերները, Իսրայել Որու հետևությամբ, Հայաստանի ազատության հարցը կապում եյին ռուսաց կայսրի և Վրաստանի Հերակլ II թագավորի ոգնության հետ։ Նրանք բանավոր և գրավոր բանակցություններ եյին վարում ցարական արքունիքի և Հերակլի հետ, դաշնագրերի նախագծեր կազմում Ռուսաստանի հետ կնքելու համար[1], ապագա ազատ Հայաստանի կառավարման կանոններ մշակում և այլն։ Ռուսաստանը և Վրաստանն այն հուսալի յերկըրներն եյին, վորոնց ոգնությամբ Հայաստանը պետք է ազատագրվեր խաների ու փաշաների լծից։ Շատ հատկանշական է, վոր Մադրասի քաղաքական գործիչները հայ մելիքների, Հովսեփ

[1] Տես «Օրինակ դաշնաւորելոյ առ կայսրն Ռուսաց» (Տետրակ որ կոչի Նշաւակ վասն կառաւարելոյ ինչս որբոց և արանց կանանց ննջեցելոց», եջ 57—58, 1783 թ., Մադրաս. նաև՝ Տեղեկագիր Գիտության և Արվեստի Ինստիտուտի, № 4, եջ 54—55, Յերևան, 1930 թ.), «Դերպ դաշնադրութեան ի մէջ երկու ազգաց հայոց և ռուսաց» (Դիվան, գիրք Դ., եջ 731—738)։

Արղության ու ուրիշների նման ընդունելով հանդերձ ցարական Ռուսաստանի և Հերակլի իշխանության տակ մտնելու անհրաժեշտությունը, մերժում եյին ճորտատիրական իրավունքը հայերի նկատմամբ և պահանջում եյին, ինչպես դաշնագրի նախագծի Զ. կետում է ասված՝ «ի յազգէ մերմէ մի լինիցի ծառայ, այլ միաբան ազատ»։ Իսկ Հերակլ II-ին 1787 թ. հոկտեմբերի 15-ին գրած նամակում, Շահամիրյանը հայտնելով «Որոգայթ փառաց»-ի մասին, վորն, ինչպես նա յե ասում, «շարադրեալ վասն ազատութեան ազգին հայոց», գիտում է նրան, վոր «ազգն հայոց և վրաց ի ծառայութենէ բռնաւորաց» փրկի, «ազատեա նոցա ի ծառայութենէ» (ճորտությունից. Վ. Պ.) և այլն[1]։

Մեր նպատակից դուրս է այստեղ շարադրել Մադրասի քաղաքական խմբակի պատմությունը։ Այդ առանձին ուսումնասիրության խնդիր է։ Այստեղ պետք է նշենք միայն, վոր այդ խմբակն իր քաղաքական-հրապարակախոսական գործունեությամբ, Մադրասի «ազգային ժողովի» իր խորհրդակցություններով, անպայմանորեն բարձրանում եր յեվրոպական ժամանակակից պրոգրեսիվ հոսանքների շարքը և այդ բարձունքից թարմ շունչ, նոր շարժում մտցնում հետամնաց Իրանի ու Թյուրքիայի ճահճուտներում նեխող հայ կյանքի մեջ։ Ազգային-դեմոկրատական հանրապետության իրենց հեղհեղուկ ծրագրերով, ֆեոդալիզմի պայմաններում հրապարակ հանած իրենց «ազգահավաքման» լոզունգներով և հայ ժողովրդին դեպի զենք, ապստամբություն կոչելով, նրանք լույսի ճառագայթ եյին գցում մթնած հայ աշխարհի վրա, լուսավորում եյին հայ ժողովրդի ազատագրության խավարկոտած ուղին։ Նրանք, Իսրայել Օրիից հետո, կրկին հրապարակ եյին հանում հայերի ազատագրության խնդիրը և, վոր կարևորն է, միանգամայն տարբեր Հայաստանի ազատագրման կղերական, կալվածատիրական ծրագրից։ Յեթե Եջմիածնի կղերը, հայ կալվածատեր-մելիքները Հայաստանը Իրանի ու Թյուրքիայի լծից ազատագրելու համար դիմում եյին ցարիզմի ոգնության, հայկական թագավորությունը վերականգնելու նախագծեր եյին կազմում և թագավորական գահի վրա բազմեցնում ցարական իշխան Պոտյոմկինին,

[1] «Փորձ», 1881 թ., № 2, եջ 3—32, Ս. Յերիցյան—«Շահամիրյանի մատենագրական գործունեությունը» հոդվածը։

յելնելով գերազանցորեն իրենց դասային շահերից[1], ապա Մադրասի քաղաքական գործիչները «համազգային» շահերից յելնելով, պատմական դառն իրողությունների ճնշման տակ, դիմում էին ցարական Ռուսաստանի օգնության և միաժամանակ իրականությունից հեռու, ծայրահեղորեն նայիվ նախագծեր կազմում՝ միապետական Ռուսաստանի զորքերի օգնությամբ պարսիկների ու օսմանցիների լծից Հայաստանն ազատագրելու և այնտեղ դեմոկրատական-հանրապետական կարգեր հաստատելու մասին։ Իրենց ուտոպիկ ծրագրերով, Հայաստանի ֆեոդալական տնտեսական-քաղաքական-իրավական հարաբերությունների վրա, նրանք ուզում էին միանգամից հագցնել բուրժուական-սահմանադրական կարգերի մի կաղապար, այն էլ այնպիսի հակասահմանադրական ուժի օգնությամբ, ինչպիսին ցարիզմն էր։

Ընդհանուր գծերով, այսպես էին ահա իրար հանդիպում ցարիզմի գաղութային քաղաքականության նկատմամբ իրենց ունեցած վերաբերմունքով, իրանական և օսմանյան դեսպոտիզմի լծից հայերին ազատագրելու իրենց ծրագրերով, XVIII դարի հայ հասարակական մտքի այդ յերկու հոսանքները։ Նրանցից մեկը—դա ցարիզմի գաղութային քաղաքականության հետ սերտորեն կապված, նրան լծակցող հայ իշխող դասերի՝ կալվածա-

1 Նախագծի նրանց վարիանտի «Ե» կետում ասված է. «Լինիցին ի Հայաստան չափաւոր զօրք ռուսաց երանալու միով յազգին պահպանութիւն և երկիւղի այլ թագաւորաց՝ Պարսից և Օսմանցւոց և ի ժառանգաց թագաւորութեան մինն դնիցի ի գլուխ Կայսեր։

«Ը» կետում ասված է. «Որ ոք թագաւոր կացուսցի լինիցի հայոց օրինօք և ի Վաղարշապատ թագաւորական քաղաքն, ի սուրբ Էջմիածին օծանիցի որպէս նախնի թագաւորքն մեր»։

«ԺԵ» կետում ասված է. «Ի նորոգել իշխանութեան մերոյ մի լին իցին ծառայք իշխանաց (սորուկք) որք կարիցեն զմի մի վաճառել ի նոցանէ, այլ լինիցին այնպէս որպէս յառաջ եղեալ են ի ժամանակս թագաւորաց մերոց և Օսմանցւոց և Պարսից, որք թագաւորին միայն են ծառայք, և երբ թագաւորն կամիցի ուրուք իշխանի շնորհ ինչ առնել գիւղ ինչ, բնակչաւն շնորհեսցէ նմա, բայց շնորհընկալ իշխանն կարող է գիւղն ընդ բնակչաց ի միասին ծախել, և ոչ թէ բնակիչսն, այլ գիւղն ընդ մլքոյն այսինքն ընդ հողոյն և ջրոյն, զոր գործեն մարդիկք». (տես Դիվան հայոց պատմության, գիրք Դ., էջ 731—734, 1899 թ., Թիֆլիս)։

տեր-ազնվականների, մելիքների, բարձր հոգևորականության գլխավորած հոսանքն էր[1]։

Այդ հոսանքի ներկայացուցիչները, ինչպես տեսանք, կառչած ցարական Ռուսաստանի օգնության, կռվում էին իրանական և թյուրքական լծի դեմ գերազանցորեն իրենց ազատության և անկախության համար։ Հայ ժողովրդի ազատագրությունը հայ շահագործող դասերի ծրագրերում հանդես էր գալիս այն չափով միայն, ինչ չափով նա կարող էր նպաստել իրենց դասակարգային նպատակների իրականացմանը։ Յելակետն այստեղ հայ մեծատան, շահագործող դասի շահն էր և վոչ թե հայ աշխատավորի։ Հայ մելիքի, հոգևորականի և հայ աշխատավորի միջև չկար և չէր կարող լինել «հոր և վորդու», «հովվի և հոտի» հարաբերություն, ինչպես այդ ներկայացրել են հայ բուրժուական ու կղերական պատմաբանները։ Ընդհանուր ֆրոնտ կազմելով պարսկական և օսմանյան բռնակալության լծից Հայաստանը Ռուսաստանի աջակցությամբ ազատագրելու գործում, նրանք, այնուամենայնիվ, իրենց ներքին հարաբերությունների մեջ մնում էին վորպես հակամարտ ուժեր։ Հայ իշխող դասերը ցարիզմի հաղթանակի հետ կապում էին իրենց տնտեսական-քաղաքական զարգացման հեռանկարը։ Ավելին. նրանք ձգտում էին նոր տերերի օգնությամբ ավելի ընդարձակել իրենց տնտեսական-քաղաքական իրավունքները, ավելի ինտենսիվ ծծել հայ աշխատավորի քրտնաջան աշխատանքի հյութերը։

Մյուս հոսանքը, վորն ամբողջությամբ մի նորություն էր հայ իրականության մեջ—դա Մադրասի քաղաքական խմբակի գլխավորած հոսանքն էր։ Այս ուղղության ներկայացուցիչները, ինչպես ցարիզմի գաղութային քաղաքականության, նույնպես էլ հայերի ազատության ու անկախության հարցերում խստորեն սահմանազծվում էին առաջինից։ Սրանց համար Հայաստանի ազատության և անկախության հարցն ավելի լայն բովանդակու-

1 Նշված ժամանակաշրջանում, ինչպես և հետագայում, հայ կալվածատեր-ազնվականների և հոգևորականության շարքերում յեղել են առանձին անհատներ ու խմբակցություններ, վորոնք ըստ մեծի մասին վարձվելով պարսկական ու օսմանյան կառավարությունների կողմից, գործել են հօգուտ նրանց։ Սակայն, դրանց գործն ու գաղափարները յերբեք ընդունելություն չեն գտել հայ ժողովրդի մեջ։

թյուն ուներ։ Ավելի, քան իր ժամանակին մեկ ուրիշը, մոտ կանգնելով հայ դեմոկրատիային, այս հոսանքի ծրագրերում ավելի հարազատորեն եյին արտահայտվում այդ դեմոկրատիայի շահերն ու ձգտումները։ Ամբողջ դժբախտությունն այն եր, վոր մի կողմից՝ այդ ծրագրերի հեղինակների կտրված լինելը մասսայից, իսկ մյուս կողմից՝ այդ իսկ մասսայի քաղաքական պասսիվությունը, ըստ արժանվույն չեյին բեղմնավորում նրան։ Բարի ցանկություններն ու գեղեցիկ գաղափարները մնում եյին անիրագործելի։

Ցարիզմի գաղութային քաղաքականության նկատմամբ բռնած իր դիրքով ու առաջադրած պահանջներով ևս այս հոսանքն ավելի քան մոտ եր կանգնած հայ ժողովրդի շահերին։

Ժամանակի այրող հարցը—հայ ժողովրդի գոյության հարցն եր։ Լինելով Արևելքի հնագույն և մեծ կուլտուրա ունեցող ժողովուրդներից, Իրանի և Թյուրքիայի լծի տակ ընկնելով՝ հայերը զրկվել եյին լիաթոք շնչելու բոլոր հնարավորություններից։ «Տաղանդավոր հայ ժողովուրդը» (Մոլոտով), վորն ստեղծել եր գիտության, գրականության և արվեստի համաշխարհային արժեք ներկայացնող կոթողներ, XVIII դարի 2-րդ կեսում Իրանում և Թյուրքիայում ֆեոդալիզմի կրիզիսի պայմաններում ծայր առած ներքին յերկպառակությունների ու խժդժությունների հետևանքով կանգնել եր կործանման դռանը։ Պատմական այս ծանր օրերին ահա, Մադրասի քաղաքական խմբակը բռնելով այսպես կոչված ռուսական օրիենտացիայի կողմը, ձգտում եր փրկել հայ ժողովրդին ֆիզիկական վոչնչացումից։ Նրանք պարզապես ընտրություն եյին կատարում մեռնող իրանական և թյուրքական բռնակալության ու բարձրացող Ռուսաստանի միջև։ Յեվ ինչպիսի դառնությունների հետ էլ կապված լիներ Հայաստանի գաղութացումը ցարական Ռուսաստանի կողմից, այնուհանդերձ, ինչպես այդ ցույց տվեց հետագա դարերի փորձը, դա հայ ժողովրդի համար նախընտրելի, անհամեմատ ավելի պակաս կորուստների հետ կապված ուղի յեր։

* * *

XIX դարի առաջին կեսում ավելի լայն ծավալ են ստանում ցարական Ռուսաստանի գաղութային նվաճումները։ Յեկատերինա II-ի գաղութարար պլանները, վորտեղ, Ենգելսի խոսքերով արտահայտած՝ վորոշակի նշված եյին ցարիզմի հետագա տարիների գաղութային քաղաքականության հիմնական գծերը, մեկը մյուսի հետևից սկսում են իրականանալ նրա հաջորդների որով։ Ընդհանուր առմամբ XVIII դարի յերկրորդ կեսը և XIX դարի առաջին կեսը ռուսական ցարիզմի գաղութային նվաճումների վերելքի շրջան կարելի յե համարել։ Յեվրոպական և վոչ մի գաղութարար պետություն չեր կարողացել այնպիսի արագությամբ իրագործել իր տերիտորիալ նվաճումները, ինչպես այդ շրջանում Ռուսաստանը։ Բավական ե հետևել այդ ժամանակաշրջանի ռուսական կայսրության քարտեզի գոյացման պատմությանը, Սիբիրի, Լեհաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Ֆինլանդիայի և այլ յերկրների ու ժողովուրդների գաղութացման պատմությանը, համոզվելու համար, վոր իրոք ցարիզմի այդ շրջանի պատմությունը անընդհատ նոր տերիտորիաներ նվաճելու, գաղութային թալանի ու ճնշման պատմություն ե։ «Վերջին հարյուր հիսուն տարվա ընթացքում,—ասում ե Ենգելսը,—ցարիզմն իր մղած յուրաքանչյուր պատերազմով վոչ միայն չի կորցրել, այլ միշտ ընդարձակել ե իր տերիտորիան»[1]։

Ցարական Ռուսաստանը մտնելով գաղութարար պետությունների համաշխարհային սիստեմի մեջ, վճռական դեր եր ձեռք բերել նաև քաղաքական կյանքում ու իր ինտրիգներով խառնվում եր վոչ միայն Արևելքի, այլև Արևմուտքի յերկրների ներքին գործերին։ Յերկրի կառավարման սանձն իր ձեռքն առած ֆեոդալական արիստոկրատիան, ինչպես յերկրի ներսում, այնպես էլ յերկրից դուրս, կատարում եր բացահայտ ռեակցիոն դեր։ Յեվ յեթե նշված ժամանակաշրջանում ցարիզմն իր վարած աննեքսիոնիստական-գաղութարար քաղաքականությամբ Ռուսաստանի ժողովուրդների համար կատարյալ բանտ եր դարձել, ապա, իր ռեակցիոն, հակահեղափոխական արտաքին քաղաքականությամբ նա կատարում եր միջազգային ժանդարմի դեր։

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, том VI, стр. 61, 1930 г.

Մարքսն ու Ենգելսը, վորոնք իր ժամանակին լարված ուշադրությամբ հետևում եյին ցարիզմի արտաքին քաղաքականությանը և խորը կերպով ուսումնասիրում այն, հենց այդպես ել գնահատում են։ Ըստ նրանց, 1789 թվականից սկսած՝ յեվրոպական կոնտինենտում փաստորեն յերկու ուժ գոյություն ուներ—Ռուսաստանը՝ իր աբսոլյուտիզմով և հեղափոխությունը՝ դեմոկրատիայով։ Իսկ ռուսական աբսոլյուտիզմը՝ ցարիզմը հանդիսանում եր յեվրոպական ռեակցիայի գլխավոր ամրությունը, նրա ռեզերվը։

Ոգտվելով միջազգային քաղաքականության մեջ ձեռք բերած իր խոշոր ազդեցությունից, ինչպես և վարպետորեն ոգտագործելով XIX դարի սկզբում յեվրոպական պետությունների մեջ առաջ յեկած սուր հակասությունները, ցարիզմն ամենավճռական քայլերի յե դիմում իր գաղութային տիրապետությունն ընդարձակելու համար։ Տիլզիտի հաշտության շրջանում (1807 թ.) մենք նրան տեսնում ենք միացած Նապոլեոնի հետ, ի հաշիվ իրենց յերեկվա դաշնակիցների, բաժանում են աշխարհը՝ Նապոլեոնին՝ Արևմուտքը, Ալեքսանդրին՝ Արևելքը[1]։

1807 թվականին Ալեքսանդր I-ը միանում ե Նապոլեոնի կազմակերպած հայտնի Կոնտինենտալ Բլոկադային, վորի նպատակն եր փակել յեվրոպական կոնտինենտի բոլոր տեսակի հարաբերությունները նրա ուժեղ մրցակցի՝ Անգլիայի հետ։ Իսկ 1808 թվականին Ալեքսանդր I-ին գրած նամակում Նապոլեոնն առաջարկում ե 50 հազարանոց միացյալ բանակ կազմել Կոստանդնուպոլսի վրայով Սիրիան և Հնդկաստանը նվաճելու, Անգլիային ծնկաչոք անելու համար։ Պատմության մեջ իր պրեցեդենտը չունեցող այս պլանները, սակայն, չեն իրագործվում։ Մի կողմից Կոստանդնուպոլսի, Դարդանելի և Բոսֆորի շուրջն ստեղծված անհամաձայնությունը (Ալեքսանդր I-ը ձգտում եր ինքը գրավել նեղուցները, իսկ Նապոլեոնը չեր համաձայնում), մյուս կողմից՝ ռուս կալվածատեր ազնվականների տնտեսական սերտ կապերն Անգլիայի հետ, հարկադրում են Ալեքսանդր I-ին փոխել իր դիրքերը։

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XVI, ч. II, стр. 19, 1936 г.

Վիեննայի կոնգրեսում (1814—1815 թ. թ.) ցարիզմը հեղափոխության և Նապոլեոնական Ֆրանսիայի դեմ կազմված «Սրբազան Միության» սյունն ե, Յեվրոպայի բոլոր ռեակցիոն ուժերի գլխավոր ամրությունը, իսկ Ալեքսանդր I-ը՝ կոնգրեսի կոլոսը։ Նա, միացած Մետերնիխի և մեծ ու փոքր այլ դեսպոտների հետ, գիշատիչ բաժանման են յենթարկում Յեվրոպայի քարտեզը, իրենց շահերին համապատասխան բաժանում և միացնում, տանում ու ծախում ժողովուրդներին[1]։

Ահա, ցարիզմի այսորինակ արտաքին քաղաքականության շրջանում ե տեղի ունենում Անդրկովկասի նվաճումը։

Գործն սկսվում ե Վրաստանից։ Հերակլ II-ի մահվանից հետո (1798 թ.) Վրաստանում քաղաքական ճգնաժամն ավելի քան սրվել եր։ Գահի շուրջը մղվող պայքարի հետևանքով, հոր գահը ժառանգած Գեորգի XII-ը հարկադրված դիմում ե ցարական արքունիքի ոգնությանը։ Պավել I-ը, ոգտվելով Վրաստանի ծանր կացությունից, ուղարկում ե հատուկ զորաբաժին՝ գեներալ Լազարևի գլխավորությամբ՝ և չինովնիկ Կովալենսկուն։ Վերջինս, ցարական պատմաբան Դուբրովինի իսկ վկայությամբ, «Թիֆլիս ե գալիս վո՛չ թե վորպես ներկայացուցիչ, այլ վորպես նահանգապետ»[2]։

Գեներալ Լազարևը 1799 թ. հայտնում ե գեն.-լեյտենանտ Կնորինգին, վոր «Վրաստանը փաստորեն կառավարում ե Կովալենսկին»։

Այս ամենից հետո Ալեքսանդր I-ին քիչ բան եր մնում անելու։ 1801 թվականին Վրաստանը միացվում ե Ռուսաստանին։

Վրաստանի միացմանը պետք ե հետևեր Հայաստանի միացումը, վորն այն ժամանակ բաժանված եր մի քանի խանությունների և կառավարվում եր իրանական խաների կողմից։

Անդրկովկասը, առանց Հայաստանի միացման, միշտ ել վտանգի յենթակա կլիներ գերակշռող պարսկական և թյուրքական միջավայրում։ Նրա թիկունքն անապահով եր, թյուրքերի և լեռնականների հարձակմանը յենթակա։ Իր անկախությունը

[1] К. Маркс и Ф. Энгельс—Сочинения, т. V, стр. 13, 1929 г.

[2] Н. Дубровин—Георгий XII, последний царь Грузии и присоединение ее к России, стр. 89, СПБ, 1897 г. ընդգծումն իմն ե. Վ. Պ.։

կորցրած վրացական ազնվականության վորոշ շերտերը Թյուրքիայի, Իրանի, ինչպես և անգլիական ու ֆրանսիական լրտեսների դրդումով, դիմադրություն եյին ցույց տալիս նոր տերերին, դիմելով անգամ ապստամբության:

Իրանի Ֆաթ-Ալի շահը Հայաստանին ու Ադրբեջանին սպասող վտանգը նկատի ունենալով, ինչպես նաև Նապոլեոնի գործակալների դրդումով, արդեն իսկ կապեր եր հաստատել Գեորգի XII-ի հակառակորդների հետ, նրանց ոգնության գնալու համար:

Այսպիսի պայմաններում Իրանի իշխանության տակ գտնվող Հայաստանի, մասնավորապես Գյոքչա-Արաքս ստրատեգիական կարևորություն ունեցող գծի գրավումը, վորը, ցարական բանակի գլխավոր շտաբի կապիտան Արցիշևսկու ասելով, հարավից պաշտպանում եր վոչ միայն Թիֆլիսը, այլև Կուր գետի մի զգալի մասը[1], ստանում եր առաջնահերթ նշանակություն: Յեվ այդ է պատճառը, վոր Վրաստանի միացումից հետո ցարական հրամանատարությունն անմիջապես ձեռնարկում է արշավելու Հայաստանի վրա:

Վրաստանի գրավման փորձն այս տեսակետից շատ ուսանելի յեր: Ցարական դիվանագիտությունն իր գործակալների միջոցով գաղտնի բանակցությունների մեջ է մտնում Յերևանի սարդարի հետ, առաջարկում է նրան առանց դիմադրության հանձնվել, խոստանալով ապահովել նրա իրավունքներն ու գույքը: Սա տերիտորիաներ գրավելու, գաղութացնելու մի շատ նպաստավոր մեթոդ եր, վորով ցարական կառավարությունը, Վրաստանից հետո, ձգտում եր գրավել նաև Հայաստանն ու Ադրբեջանը: Սակայն այս անգամ, ի տարբերություն Վրաստանի, դեպքերն այլ ընթացք են ստանում: Ֆրանսիայի ու Անգլիայի միջամտությամբ Պարսկաստանը և Թյուրքիան համառ դիմադրություն են ցույց տալիս ցարիզմի առաջխաղացմանը: Անդրկովկասը մոտ մի քառորդ դար վեր է ածվում ռուս-պարսկական և ռուս-թյուրքական պատերազմական գործողությունների թատերաբեմի, վորը և իր խորը կնիքն է դնում տեղական ժողովուրդների վրա, ավերածության ու ամայության մատնելով Անդրկով-

[1] А. Арцишевский, Условия нашей борьбы с соседями на Кавказе раньше и теперь, стр. 9, Москва, 1908 г.

կասի գյուղերն ու քաղաքները, ֆիզիկական բնաջնջման յենթարկելով հազարավոր մարդկանց: Յերևանի բերդը հանձնելու մասին սարդարի հետ նախապես վարած գաղտնի բանակցությունների մեջ դրական արդյունքի չհասնելով, ցարական կառավարությունն սկսում է գործել հանուն «մարդասիրության» և «քրիստոնեյական կրոնի»: Իրավացի յե Ենգելսը, յերբ ասում է, վոր յուրաքանչյուր տերիտորիալ կողոպուտ, յուրաքանչյուր բռնություն ու ճնշում ցարիզմն անց է կացնում վոչ այլ կերպ, քան «լուսավորության», «ժողովուրդների ազատագրության» պատրվակով[1]: Յեվ իրոք, Հայաստանի գրավման համար պատերազմ սկսելու պատրվակը, վորքան էլ այդ տարորինակ թվա, այս անգամ լինում է Եջմիածնի կաթողիկոսական աթոռի յերկու թեկնածուների (Դավիթ և Դանիել արքեպիսկոպոսներ) միջև հրահրված պայքարը: Ցարական կառավարությունը մեծ նշանակություն տալով Եջմիածնի կաթողիկոսի դիրքն իր գաղութային քաղաքականության համար ոգտագործելուն, իր հավատարիմ թեկնածուի՝ Արղության[2] մահից հետո ձգտում եր կաթողիկոսական աթոռի վրա ունենալ իրեն հավատարիմ մարդ: Պակաս շահագրգռվածություն չեր ցուցաբերում նաև Իրանի կառավարությունը:

1803 թվին Ցիցիանովը վերջնագիր է ներկայացնում Յերևանի սարդարին և պահանջում բանտից ազատել Դանիել արքեպիսկոպոսին և նստեցնել կաթողիկոսական աթոռին, իսկ Դավիթին ուղարկել Թիֆլիս՝ իր մոտ: Սարդարը մերժում է նրա պահանջը: Առիթը պատրաստ եր: 1804 թ. Ցիցիանովն իր զորամասերը մտցնում է Յերևանի խանության սահմանները, գրավում Գյումրին, Եջմիածինը և ապա պաշարում Յերևանի բերդը: Այստեղ նրան ուժեղ դիմադրություն են ցույց տալիս Ֆաթ-Ալի շահի և Յերևանի սարդարի զորքերը: Դրան ավելանում են Արարատյան դաշտի ամառային վատառողջ կլիմայի հետևանքով զորքի մեջ տարածված հիվանդությունը և Կախեթիայում (Վրաս-

[1] Տես К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XVI, ч. II, стр. 14—15.

[2] 1801 թ. Արղությանը, դեռ Եջմիածին չհասած և կաթողիկոսական գահը չստանձնած, հանկարծամահ է լինում Թիֆլիսում:

տան) բռնկած ապստամբության վտանգը։ Ցիցիանովը, հարկադրված, հետ է քաշվում Վրաստան։

Ալեքսանդր I-ը տեղեկանալով «Յերեվանյան դժբախտ արշավանքի» մասին, հանձնարարում է Ցիցիանովին նոր արշավանք կազմակերպել Յերևանի վրա։ 1804 թ. նոյեմբերի 8-ի ռեսկրիպտի մեջ նա գրում է. «Յերևանն՝ անհրաժեշտ է այժմ իսկ գրավել, նկատի ունենալով, վոր ինչքան շուտ կարելի լինի այդ նպատակին հասնել, նա այնքան ավելի տպավորություն կգործի պարսիկների և տեղական մյուս ժողովուրդների վրա»[1]։ Նախատեսված եր նոր արշավանքն սկսել նույն տարվա ձմռանը։ Սակայն 1804 թ. դեկտեմբերի 30-ին Ալեքսանդր I-ին գրած ռապորտում Ցիցիանովը հայտնում է, թե՝ «Այս ձմռանը մտածել անգամ չի կարելի Յերևանի գրավման մասին»։ Ցիցիանովն առաջարկում է ռազմական գործողությունների նոր պլան՝ գրավել Ղարաբաղի, Շիրվանի, Բաքվի, Նախիջևանի խանությունները և հետո արշավել Յերևանի վրա։ Այն ժամանակ, գրում է նա, «Յեթե Յերևանի խանն ինքը չհանձնի (ընդգծ. Վ. Պ.), Յերևանի ավագները (старшины) կհանձնեն»[2]։

Ալեքսանդր I-ը հիմնավոր գտնելով Ցիցիանովի պատճառաբանությունները, համաձայնում է նրա հետ։ Յեվ այն ուժերը, վորոնք միանգամայն անբավարար եյին համարվում Յերևանը նվաճելու համար, այդ ուժերով 1805—1806 թ.թ. Ռուսաստանին են միացվում Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի և Բաքվի խանությունները։ Բնորոշ է, վոր Ղարաբաղի Իբրահիմ-խանը ռուսական հպատակություն ընդունելով, 1805 թ. Քյուրակ-չայում Ցիցիանովի հետ կնքած դաշնագրով պահում եր իր ժառանգական խանական իրավունքները։

Այսպիսով, ռուսական կայսրության սահմաններն Անդրկովկասում Սև ծովի ափերից ձգվում եր մինչև Կասպիական ափերը։ Հայաստանի գրավումով, վորն արդեն իսկ դիտվում եր անխուսափելի, ցարական զորքերն ընդհուպ մոտենալու եյին

[1] Акты, собранные Кавказскою Археографическою Комиссиею. Архив Главного управления наместника Кавказского, том II, стр. 620. (Հետագայում այս աղբյուրը մեջ ենք բերում Акты կրճատ վերնագրով)։

[2] Акты, т. II, стр. 621, 624.

Իրանի ու Թյուրքիայի սահմաններին և հարկ յեղած դեպքում կարող եյին արագորեն առաջ խաղալ դեպի այդ յերկրների խորքերը, նույնիսկ վտանգ սպառնալ Հնդկաստանին։ Հասկանալի յե, վոր վոչ Անգլիան և վոչ էլ Ֆրանսիան Ռուսաստանի այսորինակ առաջխաղացման հանդեպ անտարբեր մնալ չեյին կարող։ Առանձնապես Նապոլեոնը, վորն ստեղծել եր իր հսկա տիրակալությունը և նույն այդ ժամանակամիջոցում պատրաստվում եր հարձակվել Հնդկաստանի վրա ու ծնկաչոք անել Անգլիային, աճապարում է ամեն կերպ խանգարել Ռուսաստանի առաջխաղացումը դեպի Իրան և Թյուրքիա։ Ռուսական զորքերի ներկայությունն Իրանի և Թյուրքիայի սահմաններում հավասարազոր եր Հնդկաստանը հափշտակելու վերաբերյալ Նապոլեոնի ունեցած պլանի խափանմանը։ 1805 թ. Նապոլեոնն Իրան է ուղարկում իր գործակալներ Ժոբերին և Ռոմեոյին, իսկ ինքը Վարշավայից 1807 թ. շտապում է հայտնել Ֆաթ-Ալի շահին, վոր նա դիմադրի ռուսներին մինչև ինքը կմտնի Վրաստան։ Նույն տարվա մայիսին Ֆինկենշտեյն ամրոցում Ֆաթ-Ալի շահի հետ կնքած դաշնագրով Նապոլեոնը պարտավորվում է հարկադրել Ռուսաստանին Իրանին վերադարձնելու Վրաստանը և խանությունները, զենք, դաշտային թնդանոթներ և սպաներ ուղարկել, վերակազմել իրանական բանակը և այլն։ Դրա դիմաց շահը հանձն է առնում իր քաղաքական և առևտրական կապերը խզել Անգլիայի հետ, բռնագրավել Իրանում անգլիական առևտրականների ունեցած ապրանքները, ազդել աղվանների վրա, վոր նրանք դաշինք կնքեն Անգլիայի դեմ, ֆրանսիական զորքերին իրավունք տալ Իրանի տերիտորիայով Հնդկաստան արշավելու և այլն։

1807 թ. դեկտեմբերին Թեհրան է գալիս Նապոլեոնի ներկայացուցիչ գեներալ Գարդանը։ Նրա միսիան կազմված եր տասներկու քաղաքացիական անձերից, վորոնց թվում չորս հոգևորական, մի բժիշկ, մի թարգման, արևելագետ Ժուաննեն, և տասնեհինգ հոգի զինվորական սպաներ, վորոնց թվում կապիտան Լամին, պարուչիկ (հետագայում մարշալ) Տրեզելը, Ֆավիեն և այլն։ Իսկ մինչ այդ շահի բանակում կային յերկու սպա, յերեք ռազմական ինժեներ և յերկու ինժեներ-աշխարհագրագետներ։ Գարդանի միսիային հանձնարարված եր Իրանում հակառուսական և հակաանգլիական պրոպագանդա մղել, դիվերսիաներ կազմակերպել Անդրկովկասում և այլն։

Ցարական հետախուզությունը, իհարկե, անտեղյակ չէր նապոլեոնական էմիսարների և սպաների գործունեությանը:

Դեռ 1805 թվականին Ցիցիանովը Իտալինսկուն տեղեկացնում էր այն մասին, թե ինչպես Բոնապարտի էմիսար գեներալ Ռոմեոն ուղևորվել է Պարսկաստան և թե ինքն ինչ միջոցներ է ձեռք առել նրա գործունեությունը լրտեսելու համար[1]:

1807 թ. գեներալ Նեսվետայևը Գուդովիչին հայտնում է Աբբաս-Միրզայի բանակում գործող ֆրանսիական յերեք սպաների մասին[2]: Գնդապետ Ասեյևը 1808 թ. Ղարաբաղից Գուդովիչին հայտնելով իր կողմից Թավրիզ ուղարկած լրտեսի հավաքած տեղեկությունները, գրում է, վոր նա Թավրիզում տեսել է մի քանի ֆրանսիացիների, վորոնք յեվրոպական ձևով սովորեցնում են Շահ-զադեյի հավաքած սարբազներին: Բացի այդ թնդանոթային լաֆետների և արկղների վրա գծագրումներ են կատարում և այլն[3]: Յերբ 1808 թ. Գուդովիչը պաշարում է Յերևանի բերդը, տեսնում է, վոր այն ամրացված է յեվրոպական ռազմական կանոնների համաձայն:

«Յերևանի բերդն ամրացված է յեվրոպական ռազմական բոլոր կանոններով. ունի յերկու պարիսպ, առջևից փոս և գլասիս: Փոսում դրված եյին թնդանոթներ և գործում եյին կարտեչով, ինչ վոր առաջ պարսիկները յերբեք չեյին անում: Կային նաև փուգասներ և ռումբեր՝ տարբերկրյա շտապելներով, ահա թե ինչու այլևս չի կարելի կասկածել դիտավորյալ կերպով Յերևան և Եջմիածնի վանքն ուղարկված ֆրանսիական ինժեներ կապիտանի վրա (հավանորեն խոսքը Վերդյեյի մասին է. Վ. Պ.), վորը յեղել է այս տեղերում մինչև իմ զորքերով Յերևանի մարզը գալը»[4]:

Գուդովիչը միաժամանակ հայտնում է, վոր Յերևանի տակ իրեն է ներկայացել գեն. Գարդանի քարտուղար Լեժարը և հանձնել Գարդանի նամակը, վորտեղ, ֆրանս-պարսկական պայմանագրի համաձայն, առաջարկվում է իրեն հեռանալ Յերևանի

[1] Акты, т. II, стр. 1034.
[2] Акты, т. III, стр. 442.
[3] Акты, т. III, стр. 455.
[4] Акты, т. III. стр. 254.

խանության տերիտորիայից[1]: Նույն տարում ցարական հետախուզությունը ձեռք է բերում այն կոչերից, վորոնք Գարդանի կողմից ուղղված եյին Յերևանի խանության բնակիչներին: Գարդանը Նապոլեոնի անունից խոստանում է պաշտպանել Իրանի ամբողջականությունը և կոչ է անում դուրս գալ ռուսների դեմ:

Բերված մի քանի որինակները պարզ ցույց են տալիս, վոր Հայաստանի հողի վրա ցարական Ռուսաստանի դեմ գործում եր վոչ միայն Իրանը, այլև նապոլեոնական Ֆրանսիան, և այդ այն պահին, յերբ նրանց միջև դաշինք գոյություն ուներ: Այս հանգամանքը նոր դժվարություններ եր հարուցում ցարիզմի առաջխաղացման առաջ և ձգձգում Հայաստանի նվաճումը:

Գուդովիչը հարկադրված եր, իր նախորդի որինակով, այս անգամ ևս հետաձգել Հայաստանի գրավումը: Յերևանի բերդը յերկու ամիս պաշարված պահելուց և բռնցքամարտերի հասնող մի քանի անհաջող գրոհներից հետո, նա կորցնում է իր հաղթանակի հույսերը: Զինվորների մեջ մասնակի բարոյալքում և դասալքում է առաջ գալիս, փախուստի դեպքեր են տեղի ունենում դեպի հակառակորդի բանակը[2]:

Իսկ բերդում պաշարված Հասան-խանի կայազորը, դրա հակառակ, բռնում է համառ ու անձնազոհ դիմադրության ճանապարհը:

«Թող հայտնի լինի ձեզ,—ասված է հանձնվելու առթիվ Գուդովիչի արած առաջարկի կապակցությամբ Հասանխանի տված պատասխանի մեջ,—վոր մենք մտնելով այս բերդը, փակել ենք աչքներս մեր բանակից ոգնություն ստանալու հույսերի առաջ... ինչ էլ վոր լինի, մենք պատրաստ ենք նույնիսկ բերդի ներսում գործել ձեր դեմ: Համենայն դեպս, թող հայտնի լինի ձեզ, վոր այս բերդի կայազորն արդեն վճռել է անձնվիրության դիմել և սպասում է Ալլահի նախորոշմանը»[3]:

[1] Акты, т. III, стр. 252—253.
[2] Դեպի պարսկական բանակը փախած և գերի ընկած ռուս սպաների ու զինվորների թիվը 1808 թ. հասնում եր մոտ 200 մարդու (տես Акты, т. III, № 463).
[3] Акты, т. II, стр. 250.

Ալեքսանդր I-ին գրած իր ռապորտներից մեկում, Գուդովիչը, Յերևանի պաշարումից հետո, հարկադրված էր խոստովանել, վոր «պարսիկներն ինչքան թույլ են դաշտում, նույնքան խիզախորեն պաշտպանվում են բերդում»[1]:

1808 թ. նոյեմբերի վերջերին Գուդովիչը թողնում է Յերևանի խանության սահմանները: Հայաստանի գրավման հարցը նորից հանվում էր ցարական նվաճողականության որակարգից: Զբաղված լինելով Լեհաստանի, Ֆինլանդիայի և Շվեդիայի հարցերով, ինչպես և Թյուրքիայի ու Նապոլեոնի դեմ մղվող պատերազմներով, ցարական կառավարությունը չէր կարողանում նոր ուժեր տեղափոխել Հայաստանի ճակատը: Սակայն, յեթե առաջին ռուս-պարսկական պատերազմով ցարիզմը չկարողացավ իր ձեռքը գցել Կուր—Արաքս գիծը, ապա Ռուսաստանի համար այդ նույն դժվարին տարիներին, Անդրկովկասում ունեցած իր փոքրաքանակ զորքերի և տեղացիներից (գլխավորապես հայերից) կազմված ոպոլչենիաների միջոցով, նա վոչ միայն պաշտպանեց Անդրկովկասի իր նվաճած յերկրներն Անգլիայի ու Ֆրանսիայի գործոն մասնակցությամբ Իրանի ու Թյուրքիայի քանիցս կազմակերպված հարձակումներից, լեռնականներից և Անդրկովկասում (գլխավորապես Վրաստանում) հաճախակի կրկնվող ապստամբական շարժումներից, այլև Նապոլեոնական զորքերին Ռուսաստանի սահմաններից դուրս վռնդելուց և Ասլանդուզում (1812 թ. 19/X) ու Լենքորանում (1812 թ. 31/XII) Աբբաս-Միրզայի 30 հազարանոց բանակի դեմ գեն. Կոտլյարևսկու 2 հազար զինվորների տարած վճռական հաղթանակներից հետո, հարկադրեց Իրանի կառավարությանը, Գյուլիստանում 1813 թ. ստորագրել մի դաշնագիր, վորով միանգամ ընդմիշտ Ռուսաստանի սեփականություն էին ճանաչվում Ղարաբաղի, Գանձակի, Շաքիի, Շիրվանի, Բագվի, Դերբենդի, Թալիշի և Ղուբայի խանությունները[2]:

Առաջին ռուս-պարսկական պատերազմից հետո, ինչպես ցարական Ռուսաստանի, այնպես էլ Իրանի վողջ ուշադրությունը կենտրոնանում է Հայաստանի վրա: Յերկու կողմերի համար էլ նա դառնում է վճռական մարտերի թատերաբեմ:

[1] Акты, т. III, стр. 255.

[2] Տես Договоры России с Востоком, стр. 208—214.

Իրանի կառավարությունը Հայաստանի և հատկապես Արևելքում հռչակված անդրկովկասյան իր գլխավոր հենարան՝ Յերևանի բերդի հետ էր կապում Ադրբեջանն ու Վրաստանը վերստին գրավելու հույսերը: Ճիշտ է, նա հարկադրված ստորագրել էր Գյուլիստանի դաշնագիրը, բայց սպասում էր քաղաքական հարմար մոմենտի, վորպեսզի զենքի ուժով չեղյալ հայտարարի այն: Գյուլիստանի դաշնագրից առանձնապես դժգոհ էր թագաժառանգ Աբբաս-Միրզան: Լինելով հեռատես և քաղաքագետ անձնավորություն, նա, ավելի քան մեկ ուրիշը, գիտակցում էր ցարիզմի առաջխաղացման վտանգը և մեծ ջանք էր գործադրում Իրանի ամբողջականությունը պահպանելու համար: Սկզբում, ինչպես ասել ենք, նա դաշինք էր կնքել Նապոլեոնի հետ և ջանում էր նրա ոգնությամբ հետ վերցնել Վրաստանն ու Ադրբեջանը: Սակայն, Տիլզիտում Ռուսաստանի հետ կնքած իր դաշնագրով, Նապոլեոնը լքեց Իրանին, միաժամանակ հուսախաբ անելով և՛ Ֆաթ-Ալի շահին, և՛ Աբբաս-Միրզային: Իրանի կառավարությունը դրանից հետո շրջադարձ կատարեց դեպի Անգլիան, վորն իրազեկ լինելով Նապոլեոնի հնդկական արշավանքի պլանին, համառ կերպով պայքարում էր նրա ազդեցությունն Իրանում թուլացնելու համար: Տակավին 1808 թ. անգլիական ներկայացուցիչ Մալկոլմն առաջարկում է Իրանի կառավարությանը 10 միլիոն ֆունտ ստեռլինգ, ձրի զենքեր, թնդանոթներ, խոստանում է ոգնել՝ յետ գրավելու Վրաստանը, փոխարենը պահանջելով միայն ֆրանսիացիներին հեռացնել Պարսկաստանից:

Գեներալ Գարդանի միսսիայի հեռանալուց հետո Իրանում միանգամից աճում է անգլիական ազդեցությունը: Ռուս-ֆրանսիական հակամարտությունները տեղի յեն տալիս ռուս-անգլիական հակամարտություններին, հակառակ այն բանի, վոր նրանց միջև այդ ժամանակ դաշինք գոյություն ուներ:

1812 թ. Ռտիշչևը Ռումյանցևին հայտնում է, թե՝ «Անգլիայի ազդեցությունը չափազանց շատ է ներգործում Թեհրանի կաբինետի վրա»: Աբբաս-Միրզան իրեն շրջապատում է անգլիական սպաներով: Վերջիններս վոչ միայն սովորեցնում էին նրա զինվորներին, այլև, նրանց գլուխ անցած՝ մասնակցում էին Հայաստանում ու Ադրբեջանում ռուսների դեմ մղվող կռիվներին: Անգլիայից ստացած զենքերով ու թնդանոթներով Աբբաս-Միր-

ղան զինում էր իր սարբազներին, կազմակերպում իր հրետանին և այլն: Անգլիայից յեկած թնդանոթ ձուլող վարպետների միջոցով նա զարկ է տալիս թնդանոթների և այլ ռազմամթերքների արտադրությանը:

«Պարսկաստանն այժմ բաժանված է զանազան մասերի, վորոնք կառավարվում են շահի տղաների և գահաժառանգ հայտարարված յերկրորդ տղա՝ Աբբաս-Միրզայի կողմից, վորը ոգնություն ստանալով անգլիացիներից, հաջողությամբ նշանակալից բարեփոխումներ է մտցնում: Կանոնավոր զորքերը կազմվում են լավ հիմունքներով: Հրետանին գերազանց վիճակում է և ակնհայտորեն բազմապատկվում է: Կա լավ ձուլարան և զինագործարան, վորտեղ զինանոցների համար պաշար են պատրաստում: Հիմնվում են յեվրոպական տիպի ամրոցներ... Այժմ Պարսկաստանն ունի 30 գումարտակից ավելի զորք, յուրաքանչյուրը հազար մարդուց կազմված, և մոտ հարյուր դաշտային թնդանոթ... Կարճ ժամանակամիջոցում Պարսկաստանը կարող է ունենալ այնպիսի հետևակ, վորը կդրվի յեվրոպական լավագույն զորքերի շարքում»[1]:

Թավրիզում,—գրում է Յերմոլովը Նեսելռոդեյին,—մեզ դիմավորելու համար բերած հետևակ և հրետանային զորքերին, բոլոր դեպքերում հրաման եյին տալիս անգլիական սպաները և յենթասպաները[2]: «Փարիզում, տեսնելով անգլիական բանակը, յես այնտեղ չտեսա մի գունդ, վորն այդքան լավ վարժեցված լիներ: Հրետանին իր ձևով և կանոնադրությամբ միանգամայն անգլիական է: Առանց անգլիացիների գրեթե վոչինչ չի կատարվում թագաժառանգի պալատում»[3]:

Անգլիական գործակալների ուշադրությունից չեն վրիպում նաև Թյուրքիան և Իրանում ապաստան գտած վրաց թագաժառանգ Ալեքսանդրը: Նրանք փորձեր են կատարում Իրանի և Թյուրքիայի միացյալ ճակատ ստեղծել Ռուսաստանի դեմ, Ալեքսանդրին և նրա շուրջը համախմբված մեծ թվով փախստական-

[1] Акты, т. VI, ч. 2, стр. 178. (Յերմոլովի զեկուցագրից):

[2] Акты, т. VI, ч. 2, стр. 180.

[3] Տես Записки Ермолова о посольстве в Персии в 1817 г., ч. II, стр. 20, Москва, 1868 г.

ներին, ինչպես նաև Վրաստանում ու խանություններում յեղած հակառուսական ուժերին ոգտագործել՝ թիկունքում ապստամբություններ ու դիվերսիաներ կազմակերպելու համար:

Անգլիայի և Ռուսաստանի հարաբերությունների անորինակ սրումն առաջին ռուս-պարսկական (1804—1813) և առաջին ռուս-թյուրքական (1806—1812) պատերազմներից հետո ընկած ժամանակաշրջանում, պայմանավորված էր վոչ միայն Ռուսաստանի հաղթական առաջխաղացմամբ Անգլիայի գաղութներին սպառնացող վտանգով, այլև Անդրկովկասի ու Մերձավոր Արևելքի շուկաներում ռուսական և անգլիական առևտրական շահերի հակամարտությամբ: Անգլո-ռուսական հակամարտությունների արմատները շատ ավելի խորն եյին ռուս-ֆրանսիականից: Ընդհարումն այս յերկու խոշոր գաղութարար պետությունների միջև դառնում էր անխուսափելի:

Առևտրական, ֆինանսական և ռազմական ամուր կապեր հաստատելով Պարսկաստանի հետ, Անգլիան սկսում է տոն տալ մանավորապես Աբբաս-Միրզայի գործունեյությանը, խառնվել Պարսկաստանի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության մեջ: Նապոլեոնի պարտությունից հետո Անգլիայի գլխավոր ուշադրությունը բևեռվում է Ռուսաստանի վրա: Ամեն կերպ, ընդհուպ մինչև Պարսկաստանը Ռուսաստանի դեմ նոր պատերազմի հանելը, նա աշխատում էր պատվար կանգնեցնել ցարիզմի առաջխաղացման դեմ:

Նոր պատերազմի համար տենդորեն պատրաստվում էր նաև Ռուսաստանը: Առաջիկա մարտերի թատերաբեմը լինելու յեր Հայաստանը: Ցիցիանովի և Գուդովիչի կրկնակի ձախողված արշավանքները Յերևանի վրա՝ մեծապես բարձրացրել եյին նրա հմայքը ռուսական բանակի աչքում և, ընդհակառակը, թուլացրել ռուսական զենքի անպարտելիության հմայքը Իրանում և Անդրկովկասում: Ցարիզմն իր կազմակերպած լրտեսական լայն ցանցի շնորհիվ լիովին իրազեկ լինելով անգլո-իրանական գաղտնի դաշնագրին և դրանից բխող նրանց պատերազմական պատրաստություններին, իր հերթին մեծ նախապատրաստություններ է տեսնում անցյալի անհաջողություններից խուսափելու, Հայաստանը վերջնականորեն նվաճելու համար: Սակայն, հարցը բնավ Հայաստանի նվաճումով չէր սահմանափակվում: Ցարիզմը ձգտում

էր կտրել Պարսկաստանն Անգլիայից, դուրս քշել անգլիացիներին և իր սահմաններն ապահովել անգլիական իմպերիալիզմի ինտրիգներից: Ցարիզմի քաղաքական այս միտումները պարզ արտահայտված են Յերմոլովի միսսիային Ալեքսանդր I-ի կողմից 1816 թ. հուլիսի 29-ին տրված հրահանգի մեջ:

«Յեվրոպական բոլոր պետություններից ամենից ավելի Անգլիան է աշխատել ըստ կարելվույն մոտենալ Պարսկաստանի կառավարությանը և իր բազմաթիվ գործակալների ու անընդհատ հովանավորելու միջոցով նրան հաջողվել է այն աստիճան ազդեցություն ձեռք բերել, վոր նա տարածվում է ներքին կառավարման բոլոր բնագավառների վրա: Ինչքան էլ իմ հարաբերությունները սերտ լինեն մեծ բրիտանական կառավարության հետ, այնուամենայնիվ յես չեմ կարող սառնասիրտ դիտել, թե ինչպես ինձ հարևան պետության մեջ ուժեղանում է նրա իշխանությունը: Ուստի անհրաժեշտաբար յես պիտի աշխատեմ, վորպեսզի Պարսկաստանը չենթարկվի յեվրոպական ոտար պետության ազդեցությանը... Յես անվիճելի իրավունք ունեմ բոլոր ջանքերս գործադրելու, վորպեսզի կանգնեցնեմ այնպիսի սիստեմի գործողությունները, վորը ժամանակի ընթացքում հեշտությամբ կհետապնդի վնասելու Անդրկովկասի իմ տիրապետություններին: Պետք է կանգնեցնել անգլիական ազդեցության գերակշռությունը Պարսկաստանում, թուլացնել այն աննկատելի կերպով և վերջապես իսպառ վոչնչացնել այն»[1]:

Յերկու հարյուր հոգուց կազմված իր միսսիայով մոտ վեց ամիս Իրանում մնալուց և անգլո-իրանական հարաբերությունների ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրելուց հետո (աչքի ընկնող գործ է կատարում նույնպես Մազարյեվիչի լրտեսական խմբակը), Յերմոլովը գալիս է այն յեզրակացության, վոր անգլիական ազդեցությունն Իրանում վոչնչացնելու լավագույն միջոցն է՝ «փոխարինել նրանց (անգլիացիներին. Վ. Պ.)

[1] Акты, т. VI, ч. 2, № 267. Высочайшая инструкция, данная ген. Ермолову от 29/VII, 1816 г. Ընդգծումն իմն է. Վ. Պ.:

այն ամենով, ինչում Աբբաս-Միրզան նրանց անհրաժեշտությունն զգում է»:

Սակայն, բանն այն էր, վոր ցարական Ռուսաստանն իր ֆինանսների, առևտրի ու ֆեոդալական մանուֆակտուրայի ժամանակակից դրությամբ ի վիճակի չէր փոխարինել Յեվրոպայի այդ ամենազարգացած յերկրին: Յերմոլովն ինքն էլ չէր անտեսում այդ հանգամանքը: Դա անհերքելի ճշմարտություն էր: Բայց այն, ինչ ցարական Ռուսաստանը չէր կարողանում անել միմիայն տնտեսական պայքարի միջոցով, նա ձգտում էր այդ իրականացնել զենքի ուժով: Ռուսաստանում Նապոլեոնական բանակների կրած պարտությունը միանգամից խափանեց Նապոլեոնի հնդկական արշավանքի ծրագիրը և, դրա հետ կապված, Իրանում ու Անդրկովկասում Ռուսաստանին հարվածելու ձեռնարկումները: Ցարիզմի գաղութային քաղաքականության իրականացումն Անդրկովկասում, ինչպես և Իրանում ու Թյուրքիայում, այնուհետև գերազանցապես կապվում էր Անգլիայի գաղութային ծրագրերի խափանման հետ: Յեվ յեթե Հայաստանի նվաճումն իր նշանակությամբ նսեմանում էր ցարիզմի այդ վիթխարի նվաճողական քաղաքականության առջև, ապա նրա դերը յերբեք չէր անտեսվում այդ քաղաքականության իրականացման գործում:

Մ. Ն. Պոկրովսկին և նրա «պատմական շկոլան», Հայաստանի նվաճումը կտրելով ցարիզմի այս ընդհանուր քաղաքականությունից, այն սխալ կարծիքն են ստեղծել, վոր իբր թե Գյուլիստանի դաշնագրից հետո ցարիզմը նպատակ չի ունեցել նվաճելու Հայաստանը և դա Յերմոլովի անձնական ինտրիգայի արդյունքն էր:

«Ալեքսեյ Պավլովիչը,—գրում է Պոկրովսկին,—խստիվ արգելեց, մի ամբողջ յերկրի քայքայման գնով, Ռուսաստանի համար ըստ էության անհարկավոր մի կտոր հող (խոսքը Հայաստանի մասին է. Վ. Պ) ձեռք բերելու ավանտյուրան: Բայց Յերմոլովը դրանից խելքի չեկավ (не пронялся) և ինտրիգան առաջ էր տանում իր մասնավոր հաշվին»[1]:

[1] М. Н. Покровский—Дипломатия и войны царской России в XIX столетии, стр. 185, Москва, 1923 г.

Վոչնչով չհիմնավորված այդօրինակ պնդումով Պոկրովսկին իր կատարյալ անիրազեկությունն է ցուցաբերում Հայաստանի նվաճման հարցում։

Նախ, ինչպես արդեն ասել ենք, Հայաստանի նվաճումը ցարիզմի համար մի կտոր հողի հարց չեր և ցարական նվաճողականությունը Հայաստանը դիտում եր վոչ վորպես ավելորդ, անպետք մի հողակտոր, ինչպես այդ թվում է Պոկրովսկուն։

Յերկրորդ, ճիշտ չե Հայաստանի գրավումը ցարական այս կամ այն գեներալի անձնական կամ ինտրիգային քաղաքականության վերագրելը։ Գաղտնիք չե, վոր Յերմոլովը առաջին կարգի գաղութարար լինելով հանդերձ՝ իր ինտրիգային քաղաքականության համար հրահանգներ ստանում եր հենց Ալեքսանդր Պավլովիչից։ Կրկնելով չինովնիկ պատմաբաններին, Պոկրովսկին աչքաթող է անում, վոր Ալեքսանդր I-ը Յերմոլովից պակաս չեր շահագրգռված Հայաստանի նվաճման խնդրով։ Հիշենք թեկուզ 1804 թ. Ցիցիանովին արած նրա կարգադրությունը՝ Յերևանի վրա յերկրորդ արշավանք կազմակերպելու մասին և այլն։ Ալեքսանդր I-ի և Յերմոլովի միջև Հայաստանի նվաճման հարցում սկզբունքային վոչ մի տարաձայնություն չկար և չեր էլ կարող լինել։ Պոկրովսկու, Դուբրովինի և ուրիշների այդօրինակ յեզրակացության համար հիմք հանդիսացող իր փարիսեցիական հրահանգում իսկ, Ալեքսանդր I-ը չեր թաքցնում Հայաստանի նվաճման կարևորությունը։

> «Վրաստանում յեղած ձեր նախորդներին տրված հրամաններից դուք կտեսնեք, վոր Պարսկաստանի դեմ մղվող պատերազմի նպատակը Կուր — Արաքս — Արփաչայ սահմանագիծ հաստատելն էր... Այդ տեղերին ծանոթ մարդկանց մեծ մասը վոչ միայն պնդում, այլև նշված սահմանագիծը համարում են միանգամայն անհրաժեշտ և կասկածում են անգամ, վոր առանց դրան կարելի յե դիմանալ Վրաստանում։ Համաձայն լինելով նրանց հետ, որ այս սահմանն իրոք ոգտակար և ավելի քան շահավետ է ներկա սահմանից, յես չեմ կարող, սակայն հավաստի լինել, վոր այս վերջինս իր մեջ չպարունակի Անդրկովկասի մեր տիրություններն ապահովելու և պաշտպանելու միջոցը, վոր այդ տիրություններն իրոք այդպիսի վտանգի յենթակա լինեն, յեթե Արաքսի ամբողջ հոսանքը ապահով չլինի»[1]։

Հայտնի յե, վոր հայրենական պատերազմից, Յեվրոպայում ու Ասիայում մղած յերկարատև կռիվներից ու նվաճումներից հետո Ալեքսանդր I-ն ուժգին թափով սկսել եր Յեվրոպային «խաղաղասիրություն» քարոզել, իրեն ներկայացնել վորպես նապոլեոնական սիստեմի կործանիչ ազդեցությունից ու մոլեգնությունից Յեվրոպան փրկող, նրան հանգստություն և խաղաղություն պարգևող։ Այդ միջոցին նա խուսափում է իր «խաղաղասիրությունը» կասկածի յենթարկելու վորևե առիթ տալուց։ Մյուս կողմից՝ Կովկասում անհամեմատ փոքրաքանակ զորքերով պարտության մատնելով իրանական և ոսմանյան բանակներին և խոշոր տերիտորիաներ ձեռք բերելով, նա ցանկանում եր առաջին հերթին ամրապնդել այդ նվաճումները և դրանով իսկ ամուր բազա ստեղծել հետագա առաջխաղացման համար։ Իսկ մենք գիտենք, վոր Կովկասի գործերի վիճակը Ալեքսանդրի որով այնքան էլ մխիթարական չեր։ Ցարիզմը դեռևս չեր կարողացել ամուր վոտքերի վրա կանգնել Անդրկովկասում։ Վրաստանն ալեկոծվում եր ապստամբական շարժումների մեջ, լեռնական ժողովուրդները թիկունքում մնացել եյին անդրդվելի, Ադրբեջանում փաստորեն շարունակում եյին իշխել խաները, արտաքուստ՝ հոգուտ Ռուսաստանի, իսկ ներքուստ՝ հոգուտ Իրանի։

Վողջ Անդրկովկասում վխտում եյին անգլիական լրտեսները՝ ապստամբություններ ու դիվերսիաներ կազմակերպելու նպատակով։

Չպետք է մոռանալ նաև այն, վոր նշված ժամանակաշրջանում Իրանի քաղաքականությանը փաստորեն տոն եր տալիս Անգլիան, Ալեքսանդր I-ի դաշնակիցը, վորի ազդեցությունն Իրանում թուլացնելը և վերջնականորեն վոչնչացնելը նա համարում եր իր ամենակարևոր խնդիրը և Յերմոլովի միսիայի ուշադրությունն առանձին սրությամբ դարձնում դրա վրա։ Իսկ այդպիսի մոմենտում Իրանի հետ պատերազմի բռնկելը կնշանակեր նրան ավելի մոտեցնել Անգլիային և վերջինիս ազդեցությունն Իրանում ավելի քան ուժեղացնելու պայմաններ ստեղծել, վոր,

[1] Акты, т. VI, ч. 2, стр. 123—124.

իհարկե, ամենևին ձեռնտու չէր ցարիզմին: Պատահական չէ, վոր Ալեքսանդր I-ը Յերմոլովին հրահանգելով հանդերձ պայքար կազմակերպելու Անգլիայի, իբրև գլխավոր վտանգի դեմ, միաժամանակ զգուշացնում էր վորևէ առիթ չտալ Անգլիայի հետ ընդհարվելու[1]:

Ահա, այսօրինակ միջազգային քաղաքական հարաբերությունների ու Անդրկովկասի կոնկրետ իրադրությունից յելնելով էր, վոր Ալեքսանդր I-ը Յերմոլովին չէր հանձնարարում Յերևանի արշավանքը, և վոչ թե ներքին անհամաձայնությունների, կամ այդ մի կտոր հողը նվաճել չուզենալու պատճառով, ինչպես այդ սխալ կերպով մեկնաբանում է Պոկրովսկին: Դժվար չէ նկատել, վոր Ալեքսանդր I-ի և Յերմոլովի կարծիքները վոչ թե առհասարակ Հայաստանը նվաճելուն թեր և դեմ լինելու, այլ պատմական կոնկրետ պայմաններում նրա համար պատերազմ սկսելու և չսկսելու մասին էր: Յեվ վորքան էլ Յերմոլովն շտապում էր Հայաստանի նվաճումը կապել իր անվան հետ, Բորոդինոյի հերոսամարտերում ձեռք բերած իր շքանշանին Արարատի ստորոտներում ավելացնել մի նոր, իր կարծիքով՝ ավելի բարձր շքանշան, Ալեքսանդր I-ը վախենալով կորցնել իր ունեցած հաջողությունները և գահավիժել ձեռք բերած փառքի բարձունքից, զգուշավոր քաղաքականություն էր տանում նաև Անդրկովկասում:

Հայաստանի գրավումը ձգձգվում էր, բայց չէր անտեսվում: Ալեքսանդր I-ի իսկ օրով հետևողականորեն նախապատրաստվում էր այդ «մի կտոր հողի» գրավումը:

Ինչպես տեսնում ենք, Ալեքսանդր I-ը Հայաստանի նվաճումը կապում էր միջազգային քաղաքականության և մասնավորապես Անդրկովկասի նվաճած յերկրներում ամրանալու հետ: Առաջնահերթ նշանակություն ունեցող խնդիրը, տվյալ մոմենտում, ըստ նրա՝ ռազմականապես միայն նվաճված յերկրներում գաղութային տիրապետություն հաստատելն էր, ցարական վարչական սիստեմ ու օրենքներ մտցնելը:

Վրաստանի ու Ադրբեջանի փորձը ցույց էր տվել, վոր միայն զենքի ուժով կովկասյան ըմբոստ ժողովուրդներին յերկար ժամանակ գաղութային լծի տակ պահել չէր կարելի: Ալեքսանդր I-ը դիմում է ավելի լայն միջոցառումների, առաջին հերթին՝ ցարական վարչական սիստեմի և օրենքների ուժի ներգործության: Հենց այդպիսի հանձնարարություններով էլ նա Կովկաս է ուղարկում Ալեքսեյ Պետրովիչ Յերմոլովին:

---

[1] Акты, т. VI, ч. 2, стр. 125.

Ի դեմս Յերմոլովի՝ Ալեքսանդր I-ը Կովկասում ուներ մի ուժեղ բռունցք, վորն ավելի հաջող, քան նրա նախորդներից վորևէ մեկը, անց էր կացնում ցարիզմի գաղութային քաղաքականությունը: Այդ շրջանից էլ սկսվում է հաստատուն հիմքերի վրա դրվել Անդրկովկասի գաղութացումը:

Յերմոլովը հաջողությամբ անց է կացնում Դաղստանի ու Չեչնիայի դեմ կազմակերպած իր արշավանքները: Անգթորեն ճնշում է Իմերեթիայի, Մինգրելիայի, Գուրիայի և Աբխազիայի ապստամբական շարժումները: Իր գործ դրած մախինացիաներով Յերմոլովն իշխանությունից զրկում, փախուստի յե մատնում Ադրբեջանի խաներից մի քանիսին և փոխարենը մտցնում ռուսական վարչություններ:

Յերմոլովի օրով վորոշ փորձեր են կատարվում յերկրի տնտեսական նվաճման ուղղությամբ, դասային իրավունքները կարգավորելու գծով: Յերմոլովը մեծ ճիգ է գործադրում իրավական հարաբերությունների ասպարեզում տիրող քաոսը վերացնելու և յերկրում գաղութային ուժեղ ադմինիստրացիա ստեղծելու ուղղությամբ:

> «Ինձ համար ցավալի յե ընդունել,—գրում է նա գրաֆ Արակչեյեվին 1817 թ.,—վոր իշխան Ցիցիանովից հետո, իմ միքանի նախորդները, իրենց թուլությամբ, սովորեցրել են (տեղացիներին. Վ. Պ.) անհնազանդության և հաստատել խռովարար վոգի: Վոչ բոլոր դեպքերում նրանց արարքների համար դրոշակ է յեղել խիստ արդարությունը... Զարտուղի անցքերը դուռ են բաց արել խարդախության և ստորության համար: Վստահություն դեպի կառավարությունը չի արմատացել, անհրաժեշտ հարգանք իշխանության նկատմամբ գոյություն չունի... Իմ վարքագիծը միանգամայն այլ է լինելու: Յես չունեմ այլ իշխանություն, այլ

կամք, քան օրենքներ է ուժը[1], բայց ասում եմ, որ այդ ուժը կլինի փակատար, առանց մարդկանց խնայելու»[2]:

Երմոլովը առաջիններից էր, որ ցարական զինվորների սվինների հետ միասին Անդրկովկասի ժողովուրդներին «խաղաղացնելու» համար ամբողջ դաժանությամբ գործի դրեց ցարական բյուրոկրատիկ կարգերն ու օրենքները: Զուր չէ, որ ռուս ժողովրդի մեծ բանաստեղծը ցարական ցենզուրայի պայմաններում այլ հնարավորություն չգտնելով արտահայտելու նրա դաժանությունները, գրում էր՝

«Խոնարհվիր Կովկաս,
Երմոլովն է գալիս...»[3]:

Եվ իրոք, ցարական գեներալների շարքում Երմոլովն առաջին կարգի «խոնարհեցնող» էր:

Այսպես էր դրությունը Վրաստանում և Ադրբեջանում:

---

1 Երմոլովը կեղծում է. սենատորներ Մեչնիկովը և Կուտայիսովը Անդրկովկասը ռևիզիայի յենթարկելուց հետո բազմաթիվ փաստեր են հաղորդում Երմոլովի և նրա ստորադաս պաշտոնյաների ապօրինությունների մասին: Սենատորների տվյալներով, 1826 թ. միայն Երմոլովի հրամանով առանց դատի գազանաբար սպանել և ծովում խեղդել էին 88 մարդ:

2 Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. VI, стр. 222. СПБ, 1888 г.

3 Պրոֆ. Լեոն չըմբռնելով Պուշկինի այս բանաստեղծության իմաստը, իր մի աշխատության մեջ (Հայոց պատմություն, մ. 2-րդ, էջ 26. Երևան, 1927 թ.) ռուս ժողովրդի մեծ բանաստեղծին հայտարարում է ցարական նվաճողականության գաղափարախոս, այնինչ Պուշկինի համար խորթ էր ցարիզմի գաղութային քաղաքականությունը: Կովկասի ժողովուրդների գաղութացմանը Պուշկինը ոչ միայն համամիտ չի յեղել, այլև իր ժամանակին բողոքի վորոշ նշաններ է արտահայտել նրա դեմ: Օրինակ՝ իր «Կովկաս» վոտանավորի մեջ ցենզուրայի կողմից արգելված մի քառյակում նա գրում է.

Так буйную вольность Законы теснят,
Так дикое племя под Властью тоскует,
Так ныне безмолвный Кавказ негодует,
Так чуждые силы его тяготят...

(Տես А. С. Пушкин, Сочинения, стр. 885. Ленинград, 1936 г.). «Պուշկինի համար թանգ էյին բոլոր ազգությունների աշխատավորները» («Պրավդա», 1935 թ. դեկտեմբերի 17):

Ալեքսանդր I-ն աշխարհին «հանգստություն և խաղաղություն» էր քարոզում, նրա դիվանագետներն Իրանի կառավարության հետ «խաղաղություն» էյին փոխանակում, իսկ Երմոլովի զորքերը Կովկասի «անհնազանդ» ժողովուրդներին էյին «խոնարհեցնում»:

* * *

Ի՞նչ էր կատարվում հայ կյանքում:

Ցարիզմի գաղութային քաղաքականության կենտրոնն այդ ժամանակ, Պետերբուրգից հետո, դարձել էր Թիֆլիսը: Վրաստանի մայրաքաղաքը լինելով հանդերձ՝ Թիֆլիսը, շնորհիվ իր գերակշռող հայ ազգաբնակության[1] բազմաթիվ թելերով կապված էր Հայաստանի հետ: Թիֆլիսի, ինչպես և ամբողջ Անդրկովկասի հայ առևտրա-արդյունաբերողների ձեռքում էյին կենտրոնացած Անդրկովկասի գրեթե վողջ առևտուրն ու արդյունաբերությունը: Ազատվելով խաների ու փաշաների կամայականություններից, ռուսական կարգերում նրանք գործունեյության լայն ասպարեզ էյին ստացել և արագորեն աճեցնում էյին իրենց կապիտալները: Հիշենք, օրինակ, Թառումյանցին, վորը Երևանի սարդարի բռնություններից փախչելով Շուշի և ցարական կառավարությունից Կասպից ծովի ձկնորսության ու Բագվի նավթահանքերի շահագործման կապալը վերցնելով, կարճ ժամանակամիջոցում միլիոնի հասնող հարստություն էր կուտակել: Շուշի քաղաքի մի այլ բնակիչ՝ Հախումյանը, վորը, ինչպես Թաղիադյանն է ասում, առևտուր էր անում Յեվրոպայի հետ, Պարսկաստանից սկսած մինչև Սիբիրիա, ռուսական բանկում ուներ մոտ մեկ միլիոն ռուբլի[2]:

---

1 1834 թ. վիճակագրության տվյալներով՝ Թիֆլիսն ուներ 4936 ընտանիք կամ 11581 մարդ արական սեռի, վորից հայեր՝ 9447 մ., վրացիներ՝ 1947 մ. և թաթարներ՝ 187 մ.: Այս թվի մեջ չեն մտնում 280 իշխանները, 225 ազնվականները, 196 հոգևորականները, Վիրտենբերգի գերմանացի 88 գաղթականները և մոտ 12 հազար զինվորական և քաղաքացիական պաշտոնյաները. բոլորը միասին հաշվում են մոտ 25682 մ. արական սեռի: (Տես Обозрение Российских владений за Кавказом, ч. I, стр. 195—196, СПБ, 1836 г.).

2 Մ. Թաղիադեանց — Ճանապարհորդութիւն ի Հայս, էջ 289, 291, Կալկաթա, 1847 թ.:

Ցարական կառավարության հովանավորող քաղաքականությունը հայ առևտրականների նկատմամբ, Հայաստանի նվաճման նախօրյակին վոչ միայն չէր թուլացել, այլև ավելի քան ուժեղացել էր։ Ցարիզմի այդօրինակ քաղաքականության շնորհիվ Անդրկովկասի առևտրա-արդյունաբերողները կապվում էին նրա հետ և մի զգալի մասով լծակցում նրան։

Ալեքսանդր I-ը, իր նախորդների նման, շարունակում էր սիրաշահել նաև Էջմիածնի աթոռը։ Պետրոս I-ից փոխ առած խոսքերով նա թղթեր էր ուղարկում «ազնվազույն Յեփրեմ պատրիարքին», «ազնիվ մելիքներին, յուզբաշիներին և ամբողջ հայ ժողովրդին», իր կայսերական վողջույնը և հովանավորությունը հայտնելով[1]։ Պարգևատրում էր նրանցից ավելի յեռանդուն և ցարիզմին նվիրված գործիչներին։ Օրինակ՝ 1816 թ. հուլիսի 15-ին ս. Աննայի առաջին կարգի որդեն է տրվում Վրաստանի հայոց հոգևոր առաջնորդ Ներսես Աշտարակեցուն, Հովսեփ Արղությանից հետո, ցարիզմի քաղաքականության ամենայեռանդուն կենսագործողներից մեկին[2]։

Հայաստանի գրավման համար, սակայն, ավելի մեծ աշխատանք կատարվում էր Թիֆլիսում։ Յերմոլովը, Անդրկովկաս մտնելու առաջին իսկ օրից, սերտ կապեր հաստատելով հայ ազդեցիկ շրջանների հետ, վարպետորեն նախապատրաստում էր նրանց՝ օգտագործելու իր ցանկացած նպատակի համար։ Այսպես, նա ամենակոպիտ ձևով միջամտում է Վրաստանի հայոց առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսի և վրաց թագավորության ժամանակներից Թիֆլիսի մելիքի ու մամասախլիսի պաշտոնները կատարող, վրացական արքունիքի մնացորդների հետ տակավին կապված Բեհբությանների միջև ծագած պայքարին։ Յերկու կողմերն էլ Թիֆլիսում մեծ ազդեցություն ունենալով, ինչպես Յերիցյանն է ասում, իրարանցման ու հուզման մեջ էին դրել վողջ քաղաքը[3]։

Հակառակորդների արարքները (ի դեպ, նրանց թվում կային մի քանի վրացի իշխաններ) Ներսես արքեպիսկոպոսը վորակում է վորպես ռուսական օրենքին հակառակ բռնաբարություն և Հովակիմ Լազարյանի ու Հարություն Արարատսկու միջոցով դիմում է լուսավորության ու հոգևոր գործերի նախարար Գոլիցինի օգնությանը։ Յերմոլովի համար այս շատ հարմար առիթ էր իր ձեռքը հավաքելու յերկու կողմերին էլ։ 1817 թ. փետրվարի 23-ին նրա նշանակած հատուկ կոմիսիան իր իսկ բնակարանում սկսում է այդ գործի քննությունը։ Հարյուրավոր մարդիկ (իշխաններ, ազնվականներ, հոգևորականներ, առևտրականներ, արհեստավորներ և այլն) վոստիկանության միջոցով բերվում, քննության են յենթարկվում։

«Թիֆլիսը դղրդում էր. ամենքին սարսափ էր տիրում, յերբ լուր էր տարածվում, թե այսօր էլ սրան և նրան տարան հարց ու փորձի։ Թե ինչ հետևանք կունենար այդ քննությունը, վոչ վոքի հայտնի չէր։ Բայց և ժողովուրդը լավ հիշելով, վոր դույն տեսակ կոմիսիայի քննությունը 1811 թ. Կախեթի ապստամբության պատճառով վերջացավ շատերի Սիբիր քշելովը և յերկարատև բանտարկություններով, հիմա էլ տեսակ-տեսակ անմխիթար յենթադրություններ էր անում»[1]։

Միամիտ և սարսափահար ժողովուրդը կարող էր, իհարկե, այդպիսի սպասումներ ունենալ, վերհիշելով Կախեթիայի ապստամբների նկատմամբ ցարիզմի գործադրած բռնությունները։ Բայց նա մոռանում էր, վոր ցարական խորամանկ դիվանագիտության համար գործի այդպիսի յելքը բոլորովին ձեռնտու չէր։ Յերմոլովի նպատակն էր՝ հայ հասարակական բոլոր խավերի և առհասարակ տեղացիների միացյալ ճակատ ստեղծել արտաքին թշնամու՝ Իրանի և Թյուրքիայի դեմ։ Կողմերից թե մեկը և թե մյուսը Յերմոլովի համար անհրաժեշտ էին։ Մեծ աղմուկով սկսած այդ գործը վերջանում է անպատիժ։ Նախազգուշացում է արվում միայն, վոր նման արարքները կրկնվելու դեպքում օրենքով խիստ կպատժվեն։

Ահա, այսպիսի մեթոդներով Յերմոլովն իր ուռկանի մեջ էր

---

[1] Собрание Актов, ч. I, стр. 254.

[2] Նույն տեղ, էջ 261։

[3] Ա. Յերիցյան—Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում. մ. Ա., էջ 97, 104, 106 և այլն, 1894 թ., Թիֆլիս։

[1] Ա. Յերիցյան—Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում. մ. Ա., էջ 131, 1894 թ., Թիֆլիս։

գցում հայերին և նրանց օգտագործում ցարիզմի նվաճողական նպատակների համար։

Բնորոշ է, վոր կոմիսիայի աշխատանքներից հետո նա իր մոտ է կանչում Ներսես արքեպիսկոպոսին և ասում. «Վարեցեք ձեր պաշտոնը, իսկ ըմբոստներին ճնշելը իմ պարտքս լինի»։ Իրողություն է, վոր Վրաստանի միացումից հետո Ներսես արքեպիսկոպոսի պաշտոնը Յերմոլովի մոտ՝ վոչնչով հետ չէր մնում իշխան Պոտյոմկինի մոտ Հովսեփ արքեպիսկոպոսի վարած պաշտոնից։

Յերմոլովը մի ուրիշ կարևոր արդյունքի ել է հասնում այս գործի առիթով։ Կոմիսիայի վորոշմամբ աշխարհականներին արգելվում է խառնվելու հոգևոր առաջնորդի գործերում, քանի վոր «իր պաշտոնի մեջ հաստատված լինելով նորին կայսերական մեծությունից, նա պատասխանատու յեր միայն բարձրագույն իշխանության առաջ». յերկրորդ՝ հասարակությանն արգելվում է հանրագրեր կազմելը, իբրև օրենքին հակառակ բան[1]։

Հայաստանի գրավման խնդրով Յերմոլովն առանձնապես զբաղվում է 1817 թ. վորպես ներկայացուցիչ Ֆաթ-Ալի շահի մոտ գնալու ժամանակ։ Թիֆլիսում Ներսես արքեպիսկոպոսի հետ նա կազմում է Հայաստանում տարվելիք աշխատանքների ծրագիրը։ Ներսես արքեպիսկոպոսը Յերմոլովի միսիայի մասին նախորոք գրում է Եջմիածնի կաթողիկոսին և համապատասխան ցուցումներ անում։

1817 թ. ապրիլի 17-ին Յերմոլովը 200 հոգուց բաղկացած իր միսիայով (այդ թվում՝ իր անձնական քարտուղար Ալեքսանդր Խուդաբաշյանը, իշխան Վասիլ Բեհբությանը, իշխան Նազարյանը, Մելիք-Բեգլարյանը և այլն) Թիֆլիսից ճանապարհ է ընկնում դեպի Թեհրան։ Բնորոշ է, վոր «խաղաղության» բանակցություններ վարելու համար ուղարկվող դեսպանը, դեռ Հայաստան չմտած, սկսում է գաղտնի կապեր հաստատել տեղացիների հետ։ Ապրիլի 25-ին Ղարաքիլիսայից նա հայտնում է Ալեքսանդր I-ին, թե իրեն է ներկայացել մի պատգամավորություն, վորը Յերևանի մարզի բնակչության և զորքի կողմից իրեն հրավիրում է գրավելու Յերևանը և պատրաստ է հանձնելու Յերևանի բերդը։ Դեսպանը միաժամանակ ավելացնում է, վոր յեթե

[1] Տես Акты, т. VI, ч. 1, стр. 444—447.

պարսից կառավարության նկատմամբ յեղած այդ տրամադրությունը մինչև իր վերադարձը շարունակվի, ապա ինքն ստիպված կլինի նրանց իր հովանավորության տակ վերցնել, վորովհետև ժողովուրդը, հուսահատված՝ կարող է դիմել Թյուրքիային և նրանից փրկություն ակնկալել։ «Յերբեք նման առիթ չի լինի, կայսր,—գրում է Յերմոլովը,—առանց գնդակ արձակելու տիրել մի մարզի, վորը մեզնից կպահանջեր մեծ միջոցներ, զորքերի կորուստ և վորի գրավումը մեզ այնքան անհրաժեշտ է»[1]։ Ղարաքիլիսայից Յերմոլովն իր միսիայով Գյումրու և Թալինի վրայով մայիսի 1-ին գալիս է Եջմիածին։ Իր շքախմբով նրան ընդառաջ է գնում կաթողիկոսը՝ վոսկեզօծ թամբ ունեցող ձիու վրա նստած։ Յերմոլովի մուտքն Եջմիածնում դիմավորում են յերկար ժամանակ չլռող զանգակների ղողանջների և վանքի ունեցած մի քանի թնդանոթների կրակոցների տակ։ Եջմիածնում մի քանի օր մնալով՝ Յերմոլովը մանրամասն ծանոթանում է վանքի և Արարատյան աշխարհի պայմաններին։ Թե Եջմիածնում ինչպիսի գործունեություն է ունենում Յերմոլովի միսիան, այդ մասին մեր աղբյուրները, հասկանալի պատճառներով, լռում են, բայց անհավանական չէ, վոր այստեղ ևս նրանք գործնական քայլերի դիմած լինեն պարսկական կառավարության դեմ, և թերևս այդ լինի պատճառը, վոր նրա դեսպանության վերադարձից անմիջապես հետո, սարդարի հրամանով Եջմիածնի հոգևորականներից ու Վաղարշապատ գյուղի ղեկավարներից մի շարք մարդիկ բանտարկվում և տանջալի մահից ազատվում են հազար վոսկուց ավելի վճարելուց հետո միայն։ Հայտնի յե, վոր այս դեպքերից մի քանի տարի հետո, պատերազմի առիթ ստեղծելու նպատակով, Յերմոլովն ու Ներսես արքեպիսկոպոսը կազմակերպեցին Յեփրեմ կաթողիկոսի փախուստը Եջմիածնից դեպի ռուսական տերիտորիան (Ղարաբաղ, ապա Հաղպատ)։ Յեվ այսպես, լրտեսելով, տեղացիներին պարսկական կառավարության դեմ կազմակերպելով՝ Յերմոլովի դեսպանությունն անցնում է Յերևան, Նախիջևան, Մարանդա, իսկ մայիսի 19-ին մտնում է Թավրիզ։ Լրտեսությամբ ու ինտրիգներով հագեցած իր գործունեությունը

[1] Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. VI, стр. 246, СПБ, 1888 г. Ընդգծումն իմն է. Վ. Գ.։

Յերմոլովը շարունակում ե նաև Իրանում: Նա գաղտնի կապեր ե հաստատում Աբբաս-Միրզայի մեծ յեղբոր հետ, ցանկանալով ոգտագործել նրանց միջև գահի շուրջը յեղած պայքարը:

Իրանի կառավարության լրտեսներն իրենց հերթին քայլ առ քայլ հետամտում եյին Յերմոլովի դեսպանության գործունեությունը: Յերկու կողմերի ել «խաղաղ» բանակցությունների հետևում թաքնված եյին նոր պատերազմի պատրաստվելու ձեռնարկումները: Իրանի կառավարությունն իր թիկունքում ունենալով Անգլիային, պահանջում ե վերադարձնել Անդրկովկասի վորոշ յերկրամասերը, իսկ Յերմոլովը «ճշտությամբ կատարելով» Ալեքսանդր I-ի կամքը, վոչ միայն մերժում ե նրանց պահանջը, այլև հայտնում ե Ալեքսանդր I-ին, վոր «...Առաջիկա պատերազմը, դեպի վորը կոչում ե մեզ անհրաժեշտությունը, պետք ե մեզ տա Արաքսի սահմանագիծը: Այս միակ միջոցն ե հետագայում մեծագույն անպատեհություններից խուսափելու համար»[1]:

Հասկանալի յե, վոր այսպիսի տրամադրությամբ վոչ ցարական կառավարությունը և վոչ ել պարսկականը հաշտության հանգել չեյին կարող: Հարցը վճռելու յեր պատերազմը, վորի համար յերկու կողմերն ել պատրաստվում և հարմար ժամանակի եյին սպասում: Նոր պատերազմի առիթն այս անգամ դեկաբրիստների ապստամբությունը յեղավ, վորը ծագեց Անդրկովկասի սահմաններից դուրս, հեռու հյուսիսում, 1825 թվականին: Անգլիական լրտեսները Պարսկաստանում և Մերձավոր Արևելքում տարածել եյին, թե Ռուսաստանում, գահի շուրջը ծագած կռիվների հետևանքով, մեծ շփոթ ու իրարանցում ե սկսվել և Անդրկովկասը նրանից հետ խլելու ամենահարմար ժամանակն ե: Աբբաս-Միրզան շտապում ե ձեռքից բաց չթողնել այդ առիթը: 1826 թ. հուլիսի 2-ին Իրանի ռուսական դիվանագիտական ներկայացուցիչ Մենշիկովը տեղեկացնում ե, վոր «Պարսկական զորքերը պատրաստվում են արշավանքի, ամբողջ ժողովուրդը տոգորված ե պատերազմով»[2]: Հուլիսի կեսերին, առանց պատերազմ հայտարարելու, մոտ 60 հազարանոց բանակով Աբբաս-Միրզան հար-

[1] Акты, т. VI, ч. 2, стр. 178. Ընդգծումն իմն ե. Վ. Պ.:
[2] Акты, т. VI, ч. 2, № 633. Ընդգծումն իմն ե. Վ. Պ.:

ձակվում ե Ղարաբաղի վրա: Հուսեյին խանի զորքերը հուլիսի 16-ին մտնում են Փամբակ և Շորագյալ: Ադրբեջանում և մուսուլմանական դիստանցիաներում բռնկվում են ապստամբական շարժումներ[1]:

Իրանական բանակի առաջին հաջողությունները մի պահ Աբբաս-Միրզայի հայացքը դարձնում են դեպի Թիֆլիս, վորի գրավումով նա պետք ե վերահաստատեր Իրանի լուծը Անդրկովկասի վրա, վորպես մի նոր Նադիր-շահ, կամ Աղա-Մահմեդ խան: Ռուսական փոքրաթիվ զորքերի համար սահմանամերձ շրջաններում ստեղծվում ե ծանր դրություն: Նրանց պաշտպանության համար ամենուրեք վոտքի յեն կանգնում տեղական հայ բնակիչները: Յերմոլովի ասելով, որինակ՝ Ղարաբաղում կառավարությունը հույսը դրել եր միայն հայերի վրա: Հետագայում այդ նույնը խոստովանում եյին Նիկոլայ I-ը, Պասկևիչը և ուրիշները:

Այս պատերազմը, վորը յերկրորդն եր Անդրկովկասի հողի վրա, հենց սկզբից մեծ չափեր ընդունեց: Պատերազմի յերկարատև նախապատրաստումը, հետամնաց ու տակավին սնոտիապաշտ ժողովուրդների կրոնական ֆանատիզմի հրահրումը և նրան «սրբազան պատերազմի» բնույթ տալը թե պարսիկ մոլլաների և թե ցարական կառավարության ու հայ կղերականության կողմից՝ պատերազմի մեջ քաշեցին նաև խաղաղ բնակչության վորոշ մասին և նրա ֆիզիկական բնաջնջման պատճառ դարձան: Ղարաբաղի հայերն այս անգամ ել առաջին զոհերն եյին[2]: Բայց այս

[1] Աբբաս-Միրզայի բանակի ներխուժման ազդեցության տակ, մեծ մասամբ խաների ու բեկերի գլխավորությամբ բռնկված այս ապստամբությունները և մանավորապես Յելիսավետպոլի դեպքերը նկատի ունենալով, Պոկրովսկին այս անցքերը վորակում ե վորպես «իսկական հեղափոխություն» (տես М. Н. Покровский, Дипломатия и войны царской России в XIX столетии», стр. 190—191). Միթե պարզ չե, վոր հեղափոխության Պոկրովսկու այս ըմբռնումը վոչ մի առնչություն չունի հեղափոխության մարքս-լենինյան ըմբռնման հետ:

[2] Դեռևս Քյուրակ-չայի դաշնագրի որերին (1805 թ.) Ալեքսանդր I-ին գրած իր մի զեկուցման մեջ, Ցիցիանովը հայտնում եր, վոր Ղարաբաղի 60 հազար տուն բնակիչներից փոքր մասն ե մնացել: Յերբ 1816 թ. Յերմոլովն այցելում ե Ղարաբաղ,—գրում ե Դուբրովինը,—յերբեմնի հարուստ և Անդրկովկասի ամենալավ այդ անկյուններից մեկը, նա տեսնում ե ավերված ու ամա-

անգամ հայերի հետ ոչ միայն Ղարաբաղում, այլև Շորագյալում, Փամբակում ու սահմանամերձ ուրիշ վայրերում, հանկարծակի հարձակման յենթարկվելով, զոհվում եյին նաև բազմաթիվ ռուս զինվորներ։

Այսպես օրինակ՝ 1826 թ. հուլիսի 21-ին Գորիսի մոտ պարսիկները հանկարծակի հարձակվելով փոխ-գնդապետ Նազիմկայի հազար հոգուց կազմված զորամասի վրա, կեսից ավելին կոտորում են, իսկ մնացածներին գերի վերցնում։ Աբբաս-Միրզայի զորքերը թալանի ու կողոպուտի մատնելով Ղարաբաղի հայ գյուղացիներին, մասսայորեն նրանց քշում են Պարսկաստան, վորպեսզի նրանք այլևս չկարողանան օգնել ռուս զորքերին։ Գնդապետ Ռեուտին հազիվ է հաջողվում զինել մոտ 1500 հայ գյուղացիների, վորոնք և, նրա փոքրաթիվ զորքերի հետ միասին, քաջաբար պաշտպանում են Շուշու բերդը Աբբաս-Միրզայի պաշարումից։ Հետագայում, այս գյուղացիներին խրախուսելու և պարսիկների դեմ օգտագործելու նպատակով, Յերմոլովի կարգադրությամբ ազատում են իրենց կալվածատերերի իշխանությունից և դարձնում պետական գյուղացիներ։

Պարսիկների հանկարծակի հարձակման հետևանքով զգալի թվով զոհեր են տալիս նաև Շորագյալն ու Փամբակը։ Հուլիսի կեսերին Հյուսեյին-Ղուլի խանի զորքերը հարձակվելով սահմանամերձ պահակատեղերի վրա, անգթաբար կոտորում են փոքրաթիվ և ցրված ռուսական զինվորներին։ Տեղի հայ գյուղացիները, վորոնց մոտ մեծ մասամբ գտնվում եյին այդ պահակակետերը, վոչ միայն պատսպարում ու խնամում են ռուս զինվորներին, այլև զենքը ձեռքներին դուրս են գալիս պարսիկների ներխուժման դեմ։ Այս տեսակետից շատ հետաքրքրական են Գյումրու մոտ գտնվող Ալի-Ղարաքիլիսայի դեպքերը, վորոնք իրենց գեղարվեստական վառ պատկերումն են գտել Խաչատուր Աբովյանի տաղանդավոր գրչի տակ։

յացած։ «Ամբողջ Ղարաբաղում մոտ 24 հազար ընտանիք կար, մնացածները կամ գերի եյին վերցվել, կամ պարսիկների անընդհատ ներխուժումներից ու խանի ճնշումներից ցրիվ յեկել զանազան տեղեր»։ (Տես Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, том. VI, стр. 230, СПБ. 1888 г.).

«Ալիղարաքիլիսեն՝ են խավարն էր բռնել, են շամանդաղն էր պատել, վոր աչքը իր առաջը բռանց էր տեսնում։ Թվանքի ձենը, թշնամու գոռոցը, ձիանոց խրխինջը, տավարի բառանչը, գետնի թոզը ու տումանը Շորագյալու դաշտը բռնել՝ կապել եյին... Հարյուր անգամ պարսից սևագունդ զորքը զոռ արին, երիշ քաշեցին, ամեն անգամ էլ հարյուրով կոտորվեցան. իրանք իրանց լաշերի վրովը էլի հետ փախան. շունչ առան՝ էլի կրկին եկան. էլ կրկին մեկ բուռը խալխի թվանքի համն առան, էլի ամոթով հետ դարձան։ Վո՜չ Նաղի խանն էր կարում իր հունարը ցույց տալ, վո՜չ Ոքյուզ աղեն, վո՜չ Սվանղուլի խանը։ Ղազախ, քուրդ, սարվազ՝ ինչ տղամարդություն ունեյին՝ թափեցին. վո՜չ նիզամով կարացին, վո՜չ երշով մեկ քանի հողագործի տուն առնին։ Վորտեղ մոտենում եյին՝ տան դռներիցը, սելի արանքներիցը թվանքները ենպես եյին ճռռում, վոր շատ Պարսիկ իր ընկերին էր վոտնատակ տալիս։ Տավար, վոչխար գնացին. արտերի կրակի բոցը և ծուխն յերկինքն էր հասել»[1]։

Ալի-Ղարաքիլիսան կռվում է մինչև իր վերջին շունչը։ Նա բարրիկադային մարտեր է մղում Հասան խանի ու պարսիկ սարբազների դեմ, բայց թշնամին իր գերազանց ուժի շնորհիվ հաղթում է։ Բնակիչների մեծ մասը հրի ու սրի յե մատնվում. ավելի քան հազար մարդ գերի յե տարվում։ Պարսիկներն ավերում են Շորագյալն ու Փամբակը։ Կենդանի մնացածները ռուս զորքերի հետ քաշվում են Լոռի և մեծ մասամբ սովի ու համաճարակի բաժին դառնում։

Հասան խանն իր գազանություններով սարսափի մեջ էր գցել նաև Յերևանի ու շրջակայքի բնակիչներին։ Ամեն անգամ, յերբ լուր էր ստացվում ռուսների հարձակման մասին, պարսիկներն սկսում եյին մաքրել խանության սահմանները հայ բնակիչներից։ Այդպես վարվեցին, օրինակ՝ 1804 թ., Ցիցիանովի արշավանքի ժամանակ, Յերևանի, Կոտայքի և Եջմիածնի շրջաններից մոտ 20 հազար հայերի քշելով դեպի օսմանյան սահմանը։

[1] Խ. Աբովյան—Վերք Հայաստանի, վողբ հայրենասերի, պատմական վեպ, էջ 152—153, 1908 թ., Թիֆլիս։

Ճանապարհին հայերն ըմբոստանում են խանի մարդկանց դեմ և փոխելով ուղղությունը, մտնում են Լոռի, ռուսական տերիտորիան:

Այժմ Հասան-խանը լրացնում էր պակասը: Զենքի ու մտրակի ուժով նա տեղահան էր անում խաղաղ բնակիչներին, նրանց քշում Արաքսի մյուս ափը, կամ հավաքում լցնում Երևանի բերդը: Նկարագրելով Հասան խանի վայրագությունները, Աբովյանը գրում է.

«Ով ես սհաթը Երևան է մտել՝ հենց կիմանար՝ թե ջհեղեղը նոր ա յեկել, աշխարհս քանդել: Ապարան դառել էր ղասաբխանա: Որ չէր ըլում՝ վոր սարից, չոլից մարդ չի բռնեն ու Հասան-խանի առաջը չբերեն... Առանց մարդ սպանելու մեկ որ աչք չէր կպցնում:

Ինչ վոր գեղցոնց հալն էր, ասաված հեռու տանի: Շատի տավարը հանդումը մնաց, մալը չոլումը, վոչխարը սարումը: Ում ձեռը հասավ էնքան արեց, վոր արաբեն լծեց, երեխեքը մեջն ածեց, մեկ քանի փալաս-փուլուս էլ վրեն գցեց ու լալով, ազի արտասունքով ճամբա ընկավ»[1]:

Այսպես ահա, ռուս-պարսկական պատերազմն իր հետ նոր արհավիրքներ էր բերում հայ ժողովրդի համար: Վերջինս իր փրկության հույսը կապելով Ռուսաստանի հետ, առաջին անգամ չէր, որ վտանգի յեր յենթարկում իր գոյությունը: Իրանական դեսպոտները, խաներն ու բեկերը նրա համար, Աբովյանի խոսքերով ասած, կամ կրակ եյին խոստանում, կամ սուր, կամ կոտրած, կամ թալան[2]:

Աբովյանն իր հոգու ամբողջ դառնությամբ բացականչում է.

Վա՜յ էն ազգին՝ վոր աշխարքումս անտեր ա,
Վա՜յ էն յերկրին՝ վոր թշնամու գերի ա,
Վա՜յ էն խալխին՝ վոր ինքն իր կյանքն, աշխարքը
Չի պահպանիլ, ու հարամու ձեռ կտա[3]:

1 Խ. Աբովյան — Վերք Հայաստանի, էջ 134 և 138: Ընդգծումն իմն է. Վ. Պ.:
2 Նույն տեղ, էջ 185:
3 Նույն տեղ, էջ 80:

Պարսիկ խաների լծի տակ հայ աշխատավորության հետ միասին անապահով ու դաժան պայմաններում եյին դատապարտված նաև թուրք (ադրբեջանցի) աշխատավորները: Երևանի հայ և թուրք բնակիչների միացյալ մի դիմումի մեջ, վորտեղ նրանք դեռևս 1805 թ. խնդրում եյին Վրաստանում գտնվող մելիք Աբրահամին և յուզբաշի Գաբրիելին շտապեցնել ռուսական օգնությունը, մենք կարդում ենք. «Յեթե թղթի վրա գրելու լինենք այն ճնշումները, վոր մենք տանում ենք, ապա վոչ թուղթ կմնա և վոչ էլ թանաք»:

Յերկրորդ ռուս-պարսկական պատերազմի շրջանում, յերբ խանական կառավարությունն իր վերջին ճիգերն էր գործադրում Հայաստանն իր ձեռքում պահելու համար, յերկրի աշխատավորության դրությունն անհամեմատ ավելի յեր ծանրացել և ֆիզիկական բնաջնջումից, թալանից ու մարդկային իրավունքների վոտնահարումից բացի, այլ հեռանկար չկար: Գերագույն վտանգի այդ ժամին, ահա, հայ ազատատենչ ժողովուրդը, իր ազատության, իր լավ ապագայի հույսերով, արհամարհելով թշնամիների սուրն ու կրակը, նետվում էր կռվի դաշտ, զորավիգ կանգնում ռուս զինվորներին: Աբովյանը, վորն իր «Վերք Հայաստանի» անմահ գործով տվել է վոչ միայն հայ ժողովրդի ժամանակակից ծանր վիճակի ռեալիստական նկարագրությունը, այլև արտահայտել է նրա այդ կարգի քաղաքական տրամադրությունների ու ձգտումները, հայերի կատարած դերի մասին հետևյալն է ասում.

«Ինչ վոր Պարսից կռվի ժամանակ Հայք արին, աստուծո յե հայտնի... Թե մարդ չիմանա, քարերը վկայություն կտան: Հալբաթ վոր մեկ որ մեկ արդար, անաչառ մարդ Վրաստանու պատմությունը կգրի, էն ժամանակը կերևի թե Հայք ինչ արին, ինչ հավատարմություն էն ցույց տվել տերությանը, ինչ արին էն վեր ածել»[1]:

Սակայն, ինչպես արդեն ասել ենք, իրենց բախտը, իրենց քաղաքական-տնտեսական վիճակի բարելավումը Ռուսաստանի հաղթանակի հետ էր կապում նաև հայ շահագործող դասակարգերի ու հայ հոգևորականության գերակշռող մեծամասնությունը: Մենք ցույց ենք տվել, վոր տարիներ շարունակ նրանք գործ

1 Խ. Աբովյան — Վերք Հայաստանի, էջ 186

ճանապարհին հայերն ըմբոստանում են խանի մարդկանց դեմ և փոխելով ուղղությունը, մտնում են Լոռի, ռուսական տերիտորիան։

Այժմ Հասան-խանը լրացնում էր պակասը։ Զենքի ու մորակի ուժով նա տեղահան էր անում խաղաղ բնակիչներին, նրանց քշում Արաքսի մյուս ափը, կամ հավաքում լցնում Յերևանի բերդը։ Նկարագրելով Հասան խանի վայրագությունները, Աբովյանը գրում է.

«Ով ես սհաթը Յերևան է մտել՝ հենց կիմանար՝ թե ջհընդըմը նոր ա յեկել, աշխարհս քանդել։ Ապարան դառել էր ղասաբխանա: Որ չէր ըլում՝ վոր սարից, չոլից մարդ չի բռնեն ու Հասան-խանի առաջը չբերեն... Առանց մարդ սպանելու մեկ որ աչք չեր կպցնում:

Ինչ վոր գեղցոնց հալն էր, աստված հեռու տանի։ Շատի տավարը հանդումը մնաց, մալը չոլումը, վոչխարը սարումը։ Ում ձեռը հասավ էնքան արեց, վոր արաբէն լծեց, երեխեքը մեջն ածեց, մեկ քանի փալաս-փուլուս էլ վրեն գցեց ու լալով, աղի արտասունքով ճամբա ընկավ»[1]։

Այսպես ահա, ռուս-պարսկական պատերազմն իր հետ նոր արհավիրքներ էր բերում հայ ժողովրդի համար։ Վերջինս իր փրկության հույսը կապելով Ռուսաստանի հետ, առաջին անգամ չէր, վոր վտանգի յեր յենթարկում իր գոյությունը։ Իրանական դեսպոտները, խաներն ու բեկերը նրա համար, Աբովյանի խոսքերով ասած, կամ կրակ էյին խոստանում, կամ սուր, կամ կոտրած, կամ թալան[2]։

Աբովյանն իր հոգու ամբողջ դառնությամբ բացականչում է.

Վա՜յ էն ազգին՝ վոր աշխարքումս անտեր ա,
Վա՜յ էն յերկրին՝ վոր թշնամու գերի ա,
Վա՜յ էն խալխին՝ վոր ինքն իր կյանքն, աշխարքը
Չի պահպանիլ, ու հարամու ձեռ կտա[3]։

---

1 Խ. Աբովյան — Վերք Հայաստանի, էջ 134 և 138։ Ընդգծումն իմն է. Վ. Գ.։

2 Նույն տեղ, էջ 185։

3 Նույն տեղ, էջ 80։

Պարսիկ խաների լծի տակ հայ աշխատավորության հետ միասին անապահով ու դառն պայմանների էյին դատապարտված նաև թուրք (ադրբեջանցի) աշխատավորները։ Յերևանի հայ և թուրք բնակիչների միացյալ մի դիմումի մեջ, վորտեղ նրանք դեռևս 1805 թ. խնդրում էյին Վրաստանում գտնվող մելիք Աբրահամին և յուզբաշի Գաբրիելին շտապեցնել ռուսական օգնությունը, մենք կարդում ենք. «Յեթե թղթի վրա գրելու լինենք այն ճնշումները, վոր մենք տանում ենք, ապա վոչ թուղթ կմնա և վոչ էլ թանաք»:

Յերկրորդ ռուս-պարսկական պատերազմի շրջանում, յերբ խանական կառավարությունն իր վերջին ճիգերն էր գործադրում Հայաստանն իր ձեռքում պահելու համար, յերկրի աշխատավորության դրությունն անհամեմատ ավելի յեր ծանրացել և ֆիզիկական բնաջնջումից, թալանից ու մարդկային իրավունքների վոտնահարումից բացի, այլ հեռանկար չկար։ Գերագույն վտանգի այդ ժամին, ահա, հայ ազատատենչ ժողովուրդը, իր ազատության, իր լավ ապագայի հույսերով, արհամարհելով թշնամիների սուրն ու կրակը, նետվում էր կռվի դաշտ, զորավիգ կանգնում ռուս զինվորներին։ Աբովյանը, վորն իր «Վերք Հայաստանի» անմահ գործով տվել է վոչ միայն հայ ժողովրդի ժամանակակից ծանր վիճակի ռեալիստական նկարագրությունը, այլև արտահայտել է նրա այդ կարգի քաղաքական տրամադրությունններն ու ձգտումները, հայերի կատարած դերի մասին հետևյալն է ասում.

«Ինչ վոր Պարսից կռվի ժամանակ Հայք արին, աստուծո յե հայտնի... Թե մարդ չիմանա, քարերը վկայություն կտան։ Հալբաթ վոր մեկ որ մեկ արդար, անաչառ մարդ Վրաստանու պատմությունը կգրի, էն ժամանակը կերևի թե Հայք ի՞նչ արին, ի՞նչ հավատարմություն էն ցույց տվել տերությանը, ի՞նչ արին էն վեր ածել»[1]։

Սակայն, ինչպես արդեն ասել ենք, իրենց բախտը, իրենց քաղաքական-տնտեսական վիճակի բարելավումը Ռուսաստանի հաղթանակի հետ էր կապում նաև հայ շահագործող դասակարգերի ու հայ հոգևորականության գերակշռող մեծամասնությունը։ Մենք ցույց ենք տվել, վոր տարիներ շարունակ նրանք գործ

---

1 Խ. Աբովյան — Վերք Հայաստանի, էջ 186

էյին գնում իրենց ռազմական, տնտեսական, քաղաքական, կրոնական ուժն ու ազդեցությունը՝ Պարսկաստանի ու Թյուրքիայի լծից ազատվելու և Ռուսաստանի իշխանության տակ անցնելու համար։

Յերկրորդ ռուս-պարսկական պատերազմի շրջանում այդ նույնը կատարվում եր ավելի մեծ չափերով։ Եջմիածինը և նրա հոգևոր առաջնորդներն այս անգամ ևս իրենց ակտիվ դերի մեջ էյին, իսկ Թիֆլիսի հոգևոր առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսը՝ բոլորի ղեկավարը և ուղղություն տվողը։

1826 թ. հուլիսի վերջերին Յերմոլովի մոտ գումարված զինվորական խորհուրդը, վորին մասնակցում եր նաև Ներսես արքեպիսկոպոսը, հայերին կազմակերպելու գործը հանձնարարում ե վերջինիս։ Հուլիսի 29-ին Ներսես արքեպիսկոպոսը հանդես ե գալիս Անդրկովկասի վողջ հայությանն ուղղված մի կոչով, վորտեղ նրանց հրավեր ե կարդում զենք վերցնել պարսիկների դեմ, ոգնել ռուս զինվորներին։

«Աստծուց ինձ վրա դրած սրբազան պարտավորությամբս,—ասված ե այդ կոչի մեջ,—հայտարարում եմ ահա, վոր ինչպես դուք էլ տեղյակ եք մեր ազգային պատմությունից, գիտենք, թե ինչ պատճառներով վերացան մեր ազգի գերազանցությունը, թագավորությունը, իշխանությունը, մեծությունը, հարգանքները, հարստությունը և կամ թե, վերջապես, ընչից հառաջացավ մեր սիրելի հայրենյաց վերջնական անկումը և ո՞վքեր էյին ընդհանուրիս այդ դժբախտության պատճառները... Հայտնի յե ձեզ նաև Ռուսիո ոգոստափառ պետության նպատակը։ Նա յուր հզոր բազուկը տարածեց մեր հայրենյաց վրա, վոչ այնքան յուր սեփական ոգտի համար (sic! Վ. Պ.), վորքան մեր անդորրության և բարորության համար...

Դուք արժանացել եք մանավանդ Ռուսիո կայսրության վողորմած ուշադրությանը... Նման ձեր հարց և նախնյաց՝ հավատարմությունը առ աստված, առ քրիստոնեյությունն և առ բարերարն մեր աստվածապսակ կայսրն Ռուսիո,—գերազանց պասեցեք քան զգույքն ձեր և նույնիսկ կյանքն...

Մի՛ վախեք պարսից ձայնից և աղաղակներից։ Նոցա բոլոր ուժը ճչի և սպառնալիքների մեջ ե և վոչ թե ճշմարիտ զորության և խելացիության...

Արիացե՛ք, մի՛ վախի՛ք։ Նոցա հանկարծակի հարձակումը անզենք և խաղաղ շինացվոց վրա՝ չե կարող սասանացնել Ռուսիո ոգոստափառ կայսեր անհաղթելի զորաց։ Հաստատ մնացեք ձեր հավատարմության մեջ...

Դիմադրեցեք թշնամուն և սորա արբանյակներին, ռուսաց զորքերի հետ միասին... Թե հարկ լինի՝ մի խնայեք ձեր արյան վերջին կաթիլը։ Հավատացած յեղեք, վոր աստվածային շնորհը և Ռուսիո ոգոստափառ ինքնակալի վողորմած ուշադրությունը պսակներ կհյուսեն թե ձեզ և թե բոլոր ձեր համազգյաց»[1]։

Այսպիսով, Ներսես արքեպիսկոպոսը բացահայտորեն պատերազմ եր հայտարարում պարսիկներին, յերբ դեռ Ռուսաստանը պաշտոնապես չեր մտել պատերազմի մեջ։ Նրա նախաձեռնությամբ կազմակերպվում են հայկական զինված խմբեր՝ ոգնելու ռուս զորքերին։ Այս գործում առանձնապես աչքի յե ընկնում նրա մտերիմներից՝ Գրիգոր յեպիսկոպոս Մանուչարյանը։ Դեռևս Ցիցիանովի ու Գուդովիչի յերևանյան արշավանքների ժամանակ, Մանուչարյանն իր հեծյալ խմբի գործողություններով և դեպի ցարիզմն ունեցած հավատարմությամբ աչքի յեր ընկել ու կառավարության կողմից պարգևատրվել դրամով և կրկնակի շքանշաններով։ Այժմ էլ, Ներսեսի հանձնարարությամբ, նա հավաքում ե իր հեծյալ խումբը, մոտ 500 հոգի, և մի կողմ դրած հոգևորական տարազը, սուրը մեջքին կախած, զենքն ուսին, ձի նստած, Յերմոլովի կարգադրությամբ կռվի յե դուրս գալիս Շամշադիլի ապստամբ թուրք աղալարների ու բեգերի դեմ, հալածում ե Շամշադիլում և Ղազախում խռովարար ֆիրմաններ տարածող Աբբաս-Միրզայի լրտեսներին, կանխում ե բնակչության մասսայական գաղթը դեպի Պարսկաստան, վոր կազմակերպել էյին այդ լրտեսները և այլն։

1826 թ. ոգոստոսի 11-ի ռեսկրիպտով Նիկոլայ I-ը Յերմոլովին հրամայում ե անցնել հարձակողական գործողությունների,

[1] Տես Ա. Յ ե ր ի ց յ ա ն — Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մ. Ա., եջ 237—243, Թիֆլիս, 1894 թ.։

պարսիկներին պատժել իրենց սեփական հողում։ Նա Անդրկովկասի գործող բանակների հրամանատար է նշանակում Պասկևիչին[1] և ուժանդակ զորամասեր ուղարկում Անդրկովկաս։

Սեպտեմբերի սկզբներին ռուսական զորամասերն անցնում են հարձակման։ 1826 թ. սեպտեմբերի 2-ին Շամխորի մոտ գեն. Մադաթովի 2000 զինվորները հարձակվում են շահի գվարդիայի 10.000 զինվորների վրա և լավ ջարդում նրանց։ Սեպտեմբերի 13-ին Յելիսավետպոլի մոտ ռուսական զորամասերը Պասկևիչի ղեկավարությամբ ջարդում և փախուստի յեն մատնում Աբբաս-Միրզայի բանակը։

Չնայելով Յերմոլովի ու Պասկևիչի միջև յեղած ներհակության, վորը խիստ բացասաբար եր անդրադառնում նաև ռազմաճակատի գործողությունների վրա, կովկասյան բանակի հրամանատարությունը, վորի մեծ մասն անցել եր Բորոդինոյի և մի քանի այլ մարտերի բովից, սիստեմատիկ ու պլանաչափ հաջող ոպերացիաներ կազմակերպելով պարսկական բանակի դեմ (վորտեղ, ի դեպ, քիչ չեյին անգլիական, ֆրանսիական, իտալական սպաները և Անգլիայից ու Ֆրանսիայից տարբեր ժամանակներում ստացված թնդանոթներն ու այլ ռազմամթերքը) և հարված-հարվածի հետևից հասցնելով, մի քանի ամսվա ընթացքում նրան դուրս է շպրտում Վրաստանի ու Ադրբեջանի սահմաններից։

Հայաստանի գրավման համար ստեղծվել եյին և՛ հարմար առիթ, և՛ նպաստավոր պայմաններ, ուստի այլևս հապաղել չեր կարելի։ Նիկոլայ I-ը Յերմոլովին հետ է կանչում, իսկ Պասկևիչին հանձնարարում է սկսել յերևանյան արշավանքը։ Նա միաժամանակ առանձին հրովարտակ է ուղարկում Թիֆլիսի հայոց հոգևոր առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսին, վորտեղ իր գոհունակությունը հայտնելով պարսիկների հարձակման ժամանակ հայերի ցույց տված հավատարմության համար, հանձնարարում է հայտնել հայ ժողովրդին և հավատացնել իր կայսերական խոսքով,

[1] Նիկոլայ I-ի այս քայլը կապված եր դեկաբրիստների ապստամբության առնչությամբ Յերմոլովի շուրջն ստեղծված կասկածների հետ։ Յերմոլովի անձնական թշնամիները Նիկոլային չարախոսել եյին Կովկասում գործող գաղտնի խմբակների, դեկաբրիստների հետ նրա կապված լինելու մասին։ Յերմոլովի մասին Նիկոլայը գրում է Դիբիչին, թե՝ «Նրան ամենից քիչ եմ հավատում»։ Յերմոլովի կապերը դեկաբրիստների հետ առայժմ չեն հաստատված։

վոր՝ «քանի դեռ ձեր ժողովրդի հավատարմությունը կմնա անխախտ հուսալի ապաստարան գտած ռուսական գահի հովանու տակ, մենք պարտավոր կլինենք անխոնջ կերպով հոգալ նրա յերջանկության և հանգստության մասին»[1]։ Ցարական այս հրովարտակն իր հետ բերում և անձամբ Ներսեսին է հանձնում ռուսական բանակի գլխավոր շտաբի պետ բարոն Դիբիչը, վորը Թիֆլիս եր յեկել պարսկական ու թյուրքական կամպանիան կազմակերպելու նպատակով։

Ներսես արքեպիսկոպոսը հայերեն և ռուսերեն լեզուներով, հազարավոր որինակներով, անմիջապես տպագրել է տալիս այդ հրովարտակը և ձրի բաժանում։ Հայոց յեկեղեցում, հասարակության առաջ, նա կարդալ է տալիս այդ հրովարտակը, իսկ ինքը հանդես է գալիս առանձին ճառով և փառաբանում «աստուածանման ինքնակալի մարդասիրութիւնն ու բարեացակամութիւնն առ ազգս հայոց»։ Դիմելով ժողովրդին, նա ասում է.

> «Բաջալերացարո՛ւք միաբան առ հասարակ հարք և որդիք, ծերք և տղայք, և զձայն ցնծութեան ուրախութեան ձեր տարածեցէք յազգս ձեր՝ զի ձեր է յաղթանակն և զաւար կայսերական մշտնջենաւոր ողորմութեանց հարուստ վայելչութեամբ ժառանգեսջիք յայսմհետէ դուք և որդիք որդւոց ձերոց յազգս յաւիտենից... Պտուղք հաւատարմութեանց քաղցրացուսցեն ձեզ յաւիտեան զկեանս ձեր և ազգատոհմի ձերոյ՝ առաւել քան որքան զօրեսցեն այժմ հասանել միտք ձեր և խորհուրդք»[2]։

Ներսես արքեպիսկոպոսը միայն իր քարոզներով ու ագիտացիայով չե, վոր արձագանքում եր Նիկոլայ I-ի կոչին։ Դիբիչի և Պասկևիչի հանձնարարությամբ նա ձեռնարկում է հայ կամավորական խմբի կազմակերպման։ Նրա գործադրած ջանքերի շնորհիվ 1827 թ. մարտին Թիֆլիսում արդեն իսկ կազմակերպվել եր 200 հոգուց բաղկացած մի խումբ։ Հետագայում Նիկոլայ I-ի հանձնարարությամբ նոր թափ է հաղորդվում այդ գործին։ Թիֆլիսի գեներալ-նահանգապետ Սիպյագինի ղեկավարությամբ գործող հանձնաժողովը հայկական գնդերի համար հավաքագրում է

[1] Собрание Актов, часть I, стр. 263.

[2] Տես «Հռչակ ողորմութեան աստուածազօր մեծափառութեան ինքնակալի եւ կայսեր ամենայն ռուսաց Նիկողայոսի առաջնոյ առ ազգս Հայոց որ ի Վրաստան», եջ 9 և 15, 1827 թ., Տփխիս։

մոտ 600 մարդ։ Հայոց զորքերի համար մշակված կանոնների համաձայն՝ այնտեղ կարող էին ընդունվել 18-ից մինչև 30 տարեկան մարդիկ, վորոնք զինվում, կերակրվում և հագցվում էին կառավարության հաշվին։ Ծառայության մեջ յեղած ժամանակամիջոցում նրանք ազատվում էին հարկերից։ Զորքը պետք է ունենար 800 հոգուց կազմված գումարտակներ։ Գումարտակի պետերը լինելու էին հայ սպաներից, զինավարժությունը տարվելու յեր հայերեն լեզվով։ Զինվորները յերդվում էին հավատարիմ ծառայել և պարտավորվում էին յենթարկվել ցարական կառավարության սահմանած զինվորական ծառայության կարգին։ Մոռացված չեր նաև ցարական բանակի հիմնական պահանջներից մեկը՝ «ամենու վրա ավելի պահանջվում է կատարյալ և մունջ հնազանդություն մեծավորաց»[1]։

Հայկական զորագնդի կազմակերպման վրա մենք այսքան մանրամասն կանգ առանք այն նկատառումով, վոր իր ժամանակին այդ զորամասերի կազմակերպման հետ կապել են Նիկոլայ I-ի ձեռքով Հայաստանի անկախության վերականգնման առասպելը, այդ ներկայացրել են վորպես ցարական գայիսոնի տակ ծնվելիք հայկական անկախ իշխանության զինված բռունցք։ Իրականում հայ կամավորական զորագունդը ցարական բանակի մի մասնիկն եր, յուրատեսակ հայկական աշխարհազոր (ոպոլչենիե), վորն ոգտագործվում եր ցարիզմի գաղութային քաղաքականության իրագործման համար։ Հայկական անկախության գաղափարը և նույնիսկ հայ կամավորական զորագնդին ինքնուրույն դրոշակ ունենալու իրավունք տալը, ցարիզմի համար սոսկ միջոց էին հայերին գրգռելու, վոտքի հանելու և նրանց իսկ ձեռքով Հայաստանը նվաճելու համար։ Սակայն, չնայած բարձրացված աղմուկին ու մեծադղորդ խոստումներին, Թիֆլիսի և վրացական շրջանների հայությունը չի կարողանում լրացնել անգամ մեկ գումարտակի կազմը։ Ադրբեջանի հայերը նման մի գործ էլ իրենք էին սկսել Ղարաբաղում։ Ներսես արքեպիսկոպոսին մնում եր կամավորներ հավաքագրել Հայաստանում, հենց պատերազմական գործողությունների տեղում։

[1] Ա. Յերիցյան — Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մ. Ա., եջ 276—279։

* * *

1827 թ. ապրիլին սկսվում է յերևանյան արշավանքը։ Ներսես արքեպիսկոպոսը Պասկեվիչի հանձնարարությամբ, ձի նստած, գեներալ Բենկենդորֆի զորամասերին առաջնորդում է դեպի Հայաստան, դեպի կռվի գիծը։ Բենկենդորֆի զորամասերը Փամբակից մտնում են Արարատյան դաշտը և ապրիլի 13-ին գրավում Եջմիածինը։ Այնուհետև Բենկենդորֆը պաշարում է Յերևանի բերդը։ Մայիսի կեսերին Հայաստան է մտնում կովկասյան գլխավոր բանակը՝ Պասկեվիչի ղեկավարությամբ։ Նրան ուղեկցում էին մոտ 500 հայ ու վրացի իշխաններ, ազնվականներ, հոգևորականներ և զինվորականներ։ Մի քանի որ հետո Եջմիածին է հասնում հայ կամավորական զորքը, վորը ճանապարհին լրացնելով իր շարքերը՝ հասել եր մոտ հազար հոգու[1]։

Եջմիածնի վանքը դառնում է ցարական բանակների հավաքատեղի և ռազմական գործողությունների ղեկավարման կենտրոն։ Սիմեոն կաթողիկոսի որով կառուցված ամուր պարիսպները և բուրգերի վրա դրված թնդանոթները պաշտպանական մեծ հնարավորություն էին տալիս այնտեղ կենտրոնացված զորքերին։ Վանքն իր ունեցած պաշարներից, ինչպես միշտ, հոգում եր զորքի կարիքները[2]։ Այդտեղ եր նաև զինվորական հիվանդանոցը (լազարեթը) և բոլոր տեսակի լրտեսական գործողությունների կծիկը։

Յերևանը թողնելով պաշարված դրության մեջ, Պասկեվիչը հետապնդում է Աբբաս-Միրզայի բանակին և արշավում դեպի Թավրիզ։ 1827 թ. հունիսի 27-ին նա գրավում է Նախիջևանը, պաշարում է Աբբաս-Աբադ բերդը, վորը ֆրանսիական ինժեներների նախագծով կառուցվել եր Աբբաս-Միրզայի կողմից։ Հուլիսի

[1] Տես պրոֆ. Լեո — «Հայոց պատմություն», նոր շրջան, մասն Բ, եջ 88։

[2] Վերջին պատերազմների ընթացքում Եջմիածնի վանքը մի քանի անգամ թալանի յենթարկվելով, կորցրել եր իր յերբեմնի տնտեսական հզորությունը։ Այդ պատճառով էլ նրա օգնությունը ցարական բանակներին այս անգամ ավելի շուտ քաղաքական և այլ բնույթ եր կրում, քան տնտեսական։ Օրինակ՝ Ցիցիանովի ժամանակ Եջմիածինն իր ունեցած պաշարներից ռուս զորքերին տվել եր մոտ 12 հազար փութ հացահատիկ, 25 փութ վառոդ և այլն։ (Տես Акты, том V, стр. 440—441).

7-ին, ուժեղ ռմբակոծումից հետո, Աբբաս-Աբադը հանձնվում ե, իսկ Աբբաս-Միրզայի 16.000 հոգուց բաղկացած հեծելազորը, վոր ոգնության եր յեկել, Արաքսի մյուս ափին մեծ ջարդ կրելով, փախչում ե դեպի Թավրիզ։ Վրա յեն հասնում ամառային շոգերը։ Պասկևիչն իր զորքերով քաշվում ե Ղարաբաբա լեռան լանջերը։ Գեներալ Կրասովսկին, վորը Բենկենդորֆից հետո շարունակում եր պաշարված դրության մեջ պահել Յերևանի բերդը, շոգերի պատճառով և զորքի մեջ սկսված հիվանդության հետևանքով, քաշվում ե դեպի Բաշապարան, Յերևանի գրավումը հետաձգելով աշնանը։ Ոգտվելով այս դրությունից, Աբբաս-Միրզան մոտ 30 հազար զորքով անցնում ե Արաքսը և Յերևանի սարդարի հետ միասին պաշարում Եջմիածինը։ Կրասովսկին լուր ստանալով՝ շտապում ե ոգնության։ Եջմիածնի և Օշականի միջև ոգոստոսի 17-ին ռուսական զորքերն անհավասար կռվի բռնվելով Աբբաս-Միրզայի բանակի հետ, մարտի դաշտում թողնում են մոտ 1200 սպանված։ Մի քանի աղբյուրների տվյալներով, Կրասովսկու բանակը գլխովին կվոչնչանար, յեթե ճակատամարտի ժամանակ Յերևանի սարդարի զորքի շարքերում անգլիական թնդանոթ կրակող մեկը կրակը չուղղեր պարսկական բանակի վրա և շփոթ չառաջացներ նրա շարքերում։ Այդ թնդանոթաձիգը մի հայ եր (Հակոբ Հարությունյան), վորին սարդարը բռնում և պատժում ե իր սովորական յեղանակով՝ կտրել ե տալիս նրա քիթը, ականջները, շրթունքները, վոտքերի կրունկները և կուրացնում աչքերը։

Ստանալով Կրասովսկու պարտության լուրը, Պասկևիչը թողնում ե Թավրիզի վրա արշավելու իր մտադրությունը և վերադառնում ե Եջմիածին։ Այժմ արդեն, Կրասովսկու կրած պարտությունից հետո, նա հարկադրված եր փոխել ռազմական գործողությունների պլանը։ Պաշարված դրության մեջ թողնելով Յերևանը, Պասկևիչը հավատացած եր, վոր Թավրիզը գրավելուց հետո Յերևանը կհանձնվի առանց դիմադրության։ Սակայն, նրա համար միանգամայն անսպասելի դեպքերը գալիս եյին ասելու, վոր անկարելի յե Թավրիզ մտնել, թիկունքում թշնամու ձեռքին թողնելով Յերևանը։ Նկատի ունենալով մանավանդ այն, վոր այդ ժամանակ ռուսական ոժանդակ զորամասերն արդեն հասել եյին Եջմիածին և իրենց հետ բերել եյին բերդեր ռմբակոծելու համար ծանր թնդանոթներ, Պասկևիչը վորոշում ե Թավրիզից առաջ իր հաշիվները մաքրել Յերևանի հետ։ Բայց նախքան Յերևանի հետ հաշիվ տեսնելը, պետք եր գրավել Սարդարաբադ բերդը, վորը ֆրանսիական ինժեներների ձեռքով և տեղական բնակիչների ձրի աշխատանքով կառուցել եր Յերևանի վերջին սարդարը և վորտեղ մի քանի հազար զինվորներով ամրացել եր սարդարի յեղբայր Հասան-խանը։ Խաղաղ կերպով հանձնվելու առթիվ Հասան-խանին արված առաջարկը մերժվում ե։ 1827 թ. սեպտեմբերի 13-ին Պասկևիչը պաշարում ե Սարդարաբադը։ Պասկևիչի հանձնարարությամբ Ներսես արքեպիսկոպոսը առանձին թռուցիկով (պրոկլամացիայով) դիմում ե բերդում յեղած հայերին, հորդորում ե նրանց հանձնել բերդը և որինակ դառնալ մնացածներին։

«Հայոց բնակելոց ի Սարտարապատ ի մէջ բերդին։ Ծանուցանել ձեզ հարկաւոր համարիմ, զի նորին բարձր գերազանցութիւն գլխաւոր կառավարիչն զօրաց ռուսաց որ յԵրեւան՝ Իւան Ֆէտրիչ Պասկեւիչն այնպէս զանօրէնութիւն իւր կարգադրեալ յայտնէ վասն ամենայն եղելոցն ի մէջ բերդիցն Սարտարապատու և Երևանու՝ զօրաց բերդապահաց, և ժողովրդոց բնակչաց, զի թէ յօժարեսցին նոքա յառաջ քան զթօփաձգութիւն զօրաց ռուսաց, և յառաջ քան զկործանումն պարսպաց բերդիցն ելանել յայտնի կամ անյայտ կերպիւ, և թողուլ զհակառակութիւնն և զպատերազմն անօգտակար անձանց իւրեանց և սերնդոց և ժառանգաւորաց իւրեանց (sic! Վ. Պ.), այնպիսեացն տուեալ լինիցի ազատ կամք՝ գնալ ապահովութեամբ, ուր և կամք իւրեանց եղիցին և որ ի նոցունց մնացելոց իցէ ի հպատակութեան կայսեր ռուսաց, ունիցի զյոյս կատարեալ՝ զի վայելել ունի զմեծ ողորմութիւն նորա լիագոյն ապահովութեամբ, իսկ՝ որ ոք կամիցի համառիլ յուսով քաջամարտութեան իւրեանց և ոչ յօժարեսցի յառաջ քան զփորձս պատերազմութեանց հոգ ունիլ վասն ի բաց հեռացուցանելոյ զինքն ի հակառակութեանց և ի թշնամութեանց ընդդէմ ահաւոր զօրաց տիեզերասասան կայսերութեան ամենայն ռուսաց, այնպիսիքն ունին մատնիլ ի սուր աններելի վրէժխնդրութեամբ։ Ապաքէն պարտաւորութիւն ինձ համարեալ՝ փութամ յայտնել

ձեզ այժմ, զի ամենայն կարելի եղանակաւ հնարս հնարեսջիք ծանուցանել եղելոցն ի բերդի ընտանեաց ձերոց և ամենայն ծանօթից վասն սոյնպիսի կարգադրութեանց կամաց գլխաւոր կառավարչին զօրաց ռուսաց, զի որք կարողքն լինիցին, հոգ կալցին հեռացուցանել զանձինս և հանել ի պարսպաց բերդիցն զինքեանս և ապրեցուցանել զկեանս իւրեանց:

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս:
1827 թ. սեպտեմբերի 12, ի գիւղն Քեալակարխ»[1]:

Սեպտեմբերի 20-ին, յերկու օրվա ռմբակոծությունից հետո, Պասկևիչը գրավում է Սարդարաբադը: Նրա ձեռքն են անցնում ամբարված հացի մեծ պաշարները, որի խիստ կարիքն զգում էր ռուսական բանակը, հաց չգտնելով ավերված գյուղերում, 13 թնդանոթ, ռազմամթերք և այլն: Ի դեպ՝ Պասկևիչն ազատում է վաճառքի նպատակով այդտեղ բերված հայ, վրացի և գերմանացի (Կատարինֆելդ գաղութից բերված) գերիներին: Նման քայլեր նա կատարում է նաև ուրիշ տեղերում, և այդ քայլերը նրա համար միանգամայն բարենպաստ տպավորություն էին գործում տեղական բնակիչների վրա:

1827 թ. սեպտեմբերի 25-ին ռուսական զորքերը պաշարում են Յերևանի բերդը, որը պաշտպանվում էր Հասան-խանի կողմից: Յերևանի բերդը մի քանի անգամ հաջող պաշտպանելով՝ Հասան-խանն արդեն հռչակ էր ձեռք բերել: Այս անգամ էլ նա մեծ հույսեր էր կապում Անդրկովկասի լավագույն այդ ամրության հետ և մի պահ ուշադրություն չէր դարձնում ոչ Պասկևիչի ուլտիմատիվ պահանջների, ոչ ռուսական պաշարողական թնդանոթներից արձակվող արկերի և ոչ էլ Ներսես արքեպիսկոպոսի թռուցիկների վրա, որոնք Էջմիածնի տպարանում բազմացվում և ցարական արկերից առաջ մուտք էին գործում պարսպի ներսը: Ավելին. պատմում են, որ թռուցիկ բաժանող ոմն Աստվածատրյանին մի անգամ բռնում և Հասան-խանի հրամանով թնդանոթով կրակում են ռուսների վրա: Բայց դրանք Հասան-խանի և առհասարակ Իրանի տիրապետության վերջին ճիգերն էին Հայաստանում: Յերևան հասցված ռուսական ծանր թնդանոթները, որոնց զարկերից, ինչպես Ռադոժիցկին է պատմում[1], մեկը մյուսի հետևից ընկնում էին Ասիայի ամրությունները, վեց օր անընդհատ ռմբակոծելով՝ քանդում, խարխլում են Յերևանի բերդի պարիսպները, ցուցադրելով ցարական Ռուսաստանի հզորությունն Իրանի թուլության հանդեպ:

[1] Տես Ա. Յ ե ր ի ց յ ա ն — Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում. մ. Ա., էջ 300—301: Ընդգծումն իմն է. Վ. Պ.:

«Ամսի 25-ն էր, որ Յերևանու բերդը ծխումը կորավ,—գրում է Խ. Աբովյանը: Հինգ օր, հինգ գիշեր սար ու ձոր դրմբում, դմդմբում էր: Հենց գիտես Սոդոմ-Գոմորի քուքուրթն ու կրակը ես որ ա վեր գալիս: Յերևանու բերդը ձեթը հատած պատրուքի պես, թե մեկ ճրճրթում էլ էր մեկ սհաթ քիմի, էլ եդ հանգչում, խավարում էր. էնքան թոփի գյուլլա էր գլխին ու սրտին դիպել, հոգին բերանը հասցրել»[2]:

Սեպտեմբերի 30-ի ամբողջ գիշերը քառասուն թնդանոթներ ռմբակոծում են բերդը, նրա փլատակների տակ թաղում պաշարվածներին: Հոկտեմբերի 1-ի առավոտյան ռուսական բանակը հաղթականորեն մտնում է Յերևանի բերդը:

Յերևանից Նիկոլայ I-ին ուղարկած իր առաջին ռապորտում Պասկևիչը գրում է.

«Նշանավոր Յերևանը, որի նվաճումը, ինչպես յենթադրում էին, պետք է արյան հեղեղի գնով ձեռք բերվեր, ընկավ ռուսական հաղթական զենքից, առանց մեծ զոհերի: Այժմ լեզգիները, դաղստանցիները և Կովկասյան լեռների բոլոր խռովարարները կսարսափեն այս քաղաքի—նրանց միակ ապաստարանի — նվաճումից, որտեղից նրանք դրամով, զենքով և պարսկական քաղաքականության ամբողջ խարդախությամբ օգնություն էին ստանում: Նրա փառքը Թյուրքիայում և Պարսկաստանում անհավատալի յե, բայց էլ ավելի անհավատալի կթվա նրա նվաճումը 6 օրվա պաշարումից հետո»[3]:

Նույն օրը, հոկտեմբերի 3-ին, մեծ իշխան Միխայիլ Պավլովիչին գրած նամակում, Պասկևիչը հետևյալ կերպ է նկարագրում Յերևանի առումն ու նրա նշանակությունը:

[1] Р а д о ж и ц к и й, Записки, ч. III.
[2] Խ. Ա բ ո վ յ ա ն — Վերք Հայաստանի, էջ 270—271:
[3] Акты, т. VII, стр. 566—567.

«...Ավերածությանը չափ չկար. տները մեկը մյուսի հետևից կործանվում էին. փլվածքներից բարձրացած փոշու և ռումբերի պայթյունից առաջացած ծխի թանձր ամպերը պատել էին Յերևանի ամբողջ շրջակայքը... Բայց տների կորուստը կարևոր չէ...։

Յերևանի նվաճումը, այնտեղ յեղած պարսկական ու թյուրքական առևտրի նշանակությամբ, յերբեք պետությունների սահմանում ունեցած նրա դիրքով, աներևակայելի ոգուտներ կտա մեզ»[1]։

Նիկոլայ I-ը մեծ գոհունակությամբ է ընդունում Յերևանի այնքան հռչակված բերդի գրավման և ռազմական տրոֆեյի[2] մասին ուղարկած տեղեկությունները։ Նա Պասկևիչին շնորհում է գրաֆի տիտղոս և նրան կոչում Պասկևիչ-Յերևանսկի։

Հոկտեմբերի 6-ին Պասկևիչի զորքերը շարժվում են դեպի Թավրիզ։ Նրա առաջավոր զորամասերը իշխ. Երիստովի և գնդապետ Մուրավյովի գլխավորությամբ հալածելով Աբբաս-Միրզային, նրան շպրտում են Խոյի կողմերը։ Հոկտեմբերի 13-ին ռուսական զորամասերը մտնում են Թավրիզ, իսկ հոկտեմբերի 19-ին մեծ շուքով Թավրիզ է մտնում նաև Պասկևիչը։ Յերևանի և Թավրիզի գրավումը լուրջ վտանգ էր ստեղծում Ֆաթ-Ալի շահի թագավորության համար, ուստի նա շտապում էր կանգնեցնել ռուսական բանակի առաջխաղացումը։ Մեծ իրարանցում և անհանգստություն էր տիրում նաև անգլիական միսսայում։ Ցարիզմից սպասվող վտանգը յերբեք այնքան մեծ չէր յեղել նրանց համար, ինչպես այդ պահին։ Նրանց յերկարատև պայքարը, տնտեսական և ռազմական խոշոր միջոցառումները ցարիզմի առաջխաղացման դեմ, վերջանում էին կատարյալ անհաջողությամբ։ 1827 թ. հոկտեմբերի 29-ին Պասկևիչը Թավրիզից Նիկոլայ I-ին գրում է.

«Անգլիացիք պարսիկներից շատ ավելի յեն ցավում Աբբաս-Միրզայի ճակատագրի համար։ Նրանք չեն թաքցնում իրենց վախը, որ Ադրբեջանը [Ատրպատականը], ամենայն իրավամբ կարող է մեզ մնալ և այն ժամանակ Պարսկաստանում նրանց հավատարիմ դաշնակցի հզորությունը կխորտակվի։ Այստեղ, Թավրիզում է նրանց իսկական ազդեցության արմատը։ Չնայած նրանց դիվանագետների շռայլումներին, բացի Աբբաս-Միրզայից, նրանց վոչ վոք վոչ միայն չի հովանավորի, այլև տանել չի կարող։ Կորցնելով Ադրբեջանը, անգլիական չինովնիկները կարող են նավ նստել Բենդեր-Բուշիրում և վերադառնալ Հնդկաստան»[1]։

Անգլիացիք շտապում են ի հաշիվ Իրանի ապահովել իրենց շահերը, հեռացնելով Հնդկաստանից ցարական Ռուսաստանից սպասվող վտանգը։ Նրանք Ֆաթ-Ալի շահին և Աբբաս-Միրզային շտապեցնում են հաշտություն կնքել Ռուսաստանի հետ։

Հետաքրքրական է, որ շտապ հաշտություն էին ձգտում վոչ միայն պարտված կողմերը, այլև հաղթող կողմը՝ ցարական կառավարությունը։ 1828 թ. փետրվարին արտաքին գործերի մինիստր գրաֆ Նեսելրոդեն Պասկևիչին ուղղած իր մի գաղտնի գրության մեջ ասում է.

«Վորքան էլ քայքայիչ լինի ներկա պատերազմը Պարսկաստանի համար, այն բավական ծանր է նաև մեզ համար. այս մասին դուք կարող եք դատել, իմանալով մեր ունեցած մարդկային կորուստները և դրամական ծախքերը։ Դրա համար էլ չի կարելի չցանկանալ պատերազմը դադարեցնելը, առանձնապես Թյուրքիայի հետ ունեցած մեր գործերի խառը դրության ժամանակ»[2]։

Սկսվում են հաշտության բանակցությունները։ Պասկևիչը և Աբբաս-Միրզան Դեյկարխան գյուղում անձամբ տեսակցություն են ունենում, բայց համաձայնության չեն գալիս հաշտության պայմանների շուրջը։ Պասկևիչը իր զորքերն առաջ է շարժում դեպի Թեհրան և գրավում Խոյը, Սալմաստը, Ուրմիան, Մարաղան և Արդաբիլը[3]։ Ֆաթ-Ալի շահի դրությունն ավելի

---

[1] Акты, т. VII, стр. 565. ընդգծումն իմն է. Վ. Պ.։

[2] Զորս դրոշակ, 49 մեծ և 50 փոքր թնդանոթներ, 4000 սարբազներ, 3 խաներ (նույն թվում Հասան-խանը) և այլն։

[1] Акты, т. VII, стр. 571.

[2] Акты, т. VII, стр. 590.

[3] Արդաբիլից ու այլ վայրերից պրոֆ. Սենկովսկու նախաձեռնությամբ և Գրիբոյեդովի գործոն աջակցությամբ ձեռք են բերվում ու Պետերբուրգ

քան ծանրանում է։ Նրա դեմ գլուխ են բարձրացնում ներքին ընդդիմադիր տարրերը։ Անգլիացիք մյուս կողմից հարկադրում են արագ հաշտություն կնքել և խոստանում են կոնտրիբուցիան վճարելու համար ֆինանսական միջոցներով օգնել (իրենց համար անցանկալի այդ հանգամանքն անգլիացիք օգտագործում են Իրանի գաղութացման նպատակներով)։

Այսօրինակ անելանելի կացության մեջ ահա, 1828 թ. փետրվարի 10-ին, Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա գտնվող Թուրքմենչայ գյուղում, Ֆաթ-Ալի շահը, հարկադրված, կնքում է չափազանց ծանր ու աննպաստ պայմանագիր, որով և երկար ժամանակ վերջ է տրվում պատերազմական գործողություններին Ռուսաստանի ու Պարսկաստանի միջև։

Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանին են անցնում Երևանի ու Նախիջևանի խանությունները և Օրդուբադի շրջանը, Պարսկահայերին թույլ է տրվում գաղթել Ռուսահայաստան, պարսկական կառավարությունը պարտավորվում է վճարել տասը կուրուր թուման, կամ քսան միլիոն արծաթ ռուբլի (որից մեկ միլիոնը Նիկոլայ I-ը նվիրում է Պասկևիչին), արգելվում է ուրիշ պետություններին ռազմանավեր պահել Կասպից ծովում և այլն[1]։

* * *

Նոր էր միայն վերջացել ռուս-պարսկական պատերազմը, երբ բռնկվեց ռուս-թյուրքականը։ 1828 թ. գարնանը ռուսական բանակները հարձակման են անցնում միաժամանակ երկու ճակատով՝ Եվրոպական և Ասիական Թյուրքիայի վրա։

Պասկևիչին նախապես հայտնի էր, որ Նիկոլայ I-ը թյուրքական կամպանիան սկսելու համար սպասում էր Իրանի դեմ մղվող պատերազմի վերջանալուն։ Այդ նկատառումով էլ նա, դեռևս պարսկական կամպանիայի շրջանում, որոշ նախապատրաստական աշխատանք էր կատարել Ասիական Թյուրքիայում պատերազմական գործողություններ սկսելու համար։ Իր գործակալների միջոցով, որոնց թվում քիչ չէին հայ աշխարհիկ և

փոխադրվում արևելյան հին մանուսկրիպտների արժեքավոր ժողովածուներ։ (Տե՛ս Акты, том VII, № 536).

[1] Տե՛ս Договоры России с Востоком, стр. 214—227.

հոգևոր անձերը, Պասկևիչը բանակցությունների մեջ էր մտել սահմանամերձ փաշայությունների կառավարիչների ու քուրդ ցեղապետների հետ և խոստումների, կաշառքի միջոցով նրանց որոշ մասին իր կողմը գրավել։ Ելնելով պարսկական կամպանիայի փորձից, Պասկևիչը մեծ աշխատանք էր կազմակերպել թյուրքահայերի մեջ (Կարս, Բայազետ, Մուշ և այլն), նրանց նախապատրաստել պատերազմի մոմենտին թշնամուն թիկունքից հարվածելու համար։

Թյուրքահայերի ծանր դրությունը փաշաների ու քրդական բարբարոս ցեղերի լծի տակ, նրանց ազատագրական ձգտումն ու փորձերն օսմանյան կայսրության դեմ, պարարտ հող էին հանդիսանում Պասկևիչի այդ կարգի գործողությունների համար։ Նա ձգտում էր պարսկահայերի օրինակով վոտքի հանել նաև թյուրքահայերին և նրանց օգտագործել ցարիզմի նվաճողական նպատակների համար։ Հենց այդպիսի նկատառումներով էլ՝ ռուս-պարսկական պատերազմը վերջանալուց հետո, Պասկևիչը չհամաձայնեց արձակել հայկական գունդը, ինչպես այդ նախատեսված էր նրա համար մշակված կանոնների մեջ։ Ականատեսներից մեկի (գնդապետ Մուրավյով) պատմելով, հայ կամավորները պատերազմի դաշտում ցույց էին տվել, որ իրենք կատարյալ զինվորներ են և պարսիկների դեմ կռվում են զարմանալի քաջությամբ։ Հայկական սեփական դրոշակ ունեցող այդ զորագնդի հռչակը տարածվել էր — ոչ միայն Պարսկահայաստանում, այլև Թյուրքահայաստանում։ Պասկևիչը ցանկանում էր օգտվել դրանից և հայկական զորագունդը մասնակից դարձնել թյուրքական կամպանիային, հույս ունենալով, որ, ինչպես Վրաստանից Պարսկահայաստան մտնելիս, այնպես էլ Թյուրքահայաստանում, կխտանան հայ կամավորների շարքերը և այդ մեծապես կնպաստի ցարիզմի հաղթանակին։ Սակայն մեզ հասած հատ ու կտոր տեղեկությունների համաձայն, Թուրքմենչայի հաշտությունից հետո, հայ կամավորները տեսնելով, որ իրենց չեն ազատում, հակառակ զինվորական իշխանության կամքի, մի մասը թողնում հեռանում է։ Հայ կամավորների այդօրինակ վարմունքը որակելով որպես ապստամբություն, նրանց բռնում և ուղարկում են գվարդիայի գնդի մեջ հսկողության տակ աշխատելու, իսկ մնացած մասը Հայկական մարզի բնակիչներից և

պարսկահայ գաղթականներից հավաքագրված կամավորների հետ միասին ուղարկվում է թյուրքական ճակատը: Ցերիցյանի տվյալներով, Պասկևիչին հաջողվել էր հայերից կազմել մոտ 2000 մարդուց բաղկացած հետևակ զորք և մոտ 800 հոգուց կազմված հեծելազոր, վորոնք Թյուրքահայաստանի կռիվներում աչքի ընկնող դեր եյին խաղում: Պասկևիչն առհասարակ մեծ նշանակություն եր տալիս տեղական բնակիչներին իր կողմը գրավելուն և նա առաջիններից եր, վոր սկսեց լայն չափերով հայկական զինված խմբեր կազմակերպել ու գործի դնել ցարիզմի նվաճումների համար: Հետագայում Նիկոլայ I-ին գրած իր մի զեկուցագրի մեջ Պասկևիչն ասում է. «Մեր կողմը հակված բնակիչներին ձեռք բերելն ամենահուսալի միջոցն է Ասիական Թյուրքիայում հաջողությամբ պատերազմ մղելու և դրանով սուլթանին սարսափեցնելու համար»[1]: Ինչպես պարսկական, այնպես էլ թյուրքական կամպանիաների ժամանակ նա գաղտնի բանակցությունների մեջ է մտնում քուրդ ցեղապետների հետ, փորձեր է կատարում կազմակերպելու տաս հազարանոց քրդական հեծելագունդ և նրանց ոգտագործել Թյուրքիայի դեմ: «Նախատեսված առաջիկա կամպանիայի հաջողությունն ապահովելու համար,—գրում է Պասկևիչը,—անհրաժեշտ է մեր կողմն ունենալ քրդերին»[2]: Նիկոլայ I-ը համաձայնում է Պասկևիչի հետ և թույլատրում է այդպիսի նպատակների համար նրա տրամադրության տակ դրված հարյուր հազար ռուբլուց ծախսել քրդական հեծելագնդի կազմակերպման վրա:

Այդպիսի նախապատրաստական աշխատանքներից հետո, 1828 թ. հունիսի 14-ին[3], Պասկևիչը 12 հազար զորքով և 70 թնդանոթով Գյումրու մոտով անցնում է Արփաչայը և շարժվում Կարսի բերդի վրա: Հունիսի 23-ին բերդի ներսում յեղած հայերի ոժանդակությամբ ռուսական զորքերը մտնելով անառիկ համարված այդ բերդը, վերցնում են 150 թնդանոթ, 1350 գերի (այդ թվում Կարսի փաշային) և այլն: Կարսից հետո Պասկևիչը մեկը մյուսի հետևից գրավում է Ախալքալակի (հունիսի 24),

1 Акты, т. VII, стр. 775. Ընդգծումն իմն է. Վ. Պ.:

2 Նույն տեղ:

3 Թյուրքիայի դեմ պատերազմ հայտարարված եր 1828 թ. ապրիլի 14-ին:

Խերթվիսի (հունիսի 26) և Ախալցխայի (հուլիսի 15) բերդերը: Նա առանձնապես ուժեղ դիմադրության է հանդիպում Ախալցխայում, վորտեղ թշնամին մոտ հինգ անգամ ավելի զորք ուներ և, ինչպես վկայում են, կանայք անգամ զենք վերցրած՝ կռվում եյին: Հանձնվելու մասին Պասկևիչի արած առաջարկին նրանք պատասխանում են՝ «Մենք վոչ յերևանցիներ ենք և վոչ էլ կարսեցիներ, մենք ախալցխացիներ ենք... Մենք վորոշել ենք մեռնել մեր քաղաքի պատերի տակ»[1]: Դրությունն այնքան է սրվում, վոր Պասկևիչը հրամայում է հրդեհել քաղաքը: Մոտ 4000 մարդ տների հետ այրվում են կրակի բոցերի մեջ. փողոցները լցվում են դիակներով:

> «Բնակիչները, վորոնցից յուրաքանչյուրը մի ռազմիկ եր, համառությամբ նետվում եյին բոցերի մեջ: Մի շարք կանայք կամովին իրենց նետում եյին կրակի մեջ... մի մզկիթում այրվեցին մոտ 400 մարդ: Վերջապես քամին ուժեղացավ և հրդեհը տարածեց դեպի հարավային ու արևմտյան արվարձանները և պաշտպանվողներին հարկադրեց նահանջել... Բերդը և միջնաբերդը բավական քանդվել եյին. դիակների կույտերը փակել եյին փողոցները: Թշնամին գրոհի ժամանակ կորցրեց մինչև 5000 մարդ: 400 հրետանավորներից միայն 50 հոգի մնացին կենդանի, 100 հոգի յենիչերիներ ընկան իրենց տեղերում, 1800 լազերից սպանվեցին 1300-ը, բնակիչներից սպանվեցին ավելի քան 3000 հոգի»[2]:

Քաղաքի հայերն ու վրացիները մեծ ոգնություն են ցույց տալիս ռուս զինվորներին: Տաճիկ փաշաները տեսնելով հայերի հավատարմությունը, սկսում են թալանել և բռնի կերպով դեպի Թյուրքիայի խորքերը գաղթեցնել Կարսի, Արդահանի և մոտակա շրջանների հայ բնակիչներին, վորոնց թիվը հասնում եր մի քանի հազարի: Սակայն վրա հասնող ռուս զորքերի ոգնությամբ նրանք ազատվում են թյուրքերի ձեռքից և գալիս բնակություն են հաստատում Կարսում:

1 Акты, т. VII, стр. 755.

2 История военных действий в Азиатской Турции в 1828 и 1829 годах, ч. I, стр. 331—337. Варшава, 1843 г.

Ախալցխան գրավելուց հետո, Պասկևիչն օգոստոսի 22-ին մտնում է Արդահան և, առանց գնդակ արձակելու, տիրանում նրա անառիկ համարված բերդին։ Այդ նույն օրերին նրա հանձնարարությամբ Յերևանի Մարզային Վարչության պետ և զորքերի հրամանատար գեներալ Չավչավաձեն 1400 հետևակ, 200 կազակ և 400 հայ-թյուրք հեծյալ զորքով ու վեց թնդանոթով պաշարում է Բայազետը։ Բայազետի փաշայությունն օսմանյան կառավարությունից փաստորեն կիսանկախ ավատական մի իշխանություն էր, որի տերն ու տնօրենը տեղական քուրդերն էին։ Նրա չորս սանջակներում (Բայազետ, Դիադին, Խամուր և Ալաշկերտ) յեղած մոտ 21—22 հազար բնակիչների 80%-ից ավելին հայեր էին, իսկ մնացածը՝ քուրդեր և թյուրքեր։ Պատերազմի հենց սկզբից Բայազետի հայերը գաղտնի հարաբերություններ էին հաստատել ռուսների ու Էջմիածնի հետ և պատրաստվել էին բերդը հանձնելու ռուս զորքերի հարձակման ժամանակ։ Յեվ յերբ Չավչավաձեն մտնում է Բայազետի փաշայության սահմանը, Արծափի հայ գյուղացիները, զենք վերցրած, միանում են նրանց, իրենց տների դռները և շտեմարանները բաց են անում ռուս զինվորների առաջ։ Քուրդ ցեղապետների մի մասը կաշառված էր։ Այսպիսի պայմաններում ահա, առանց մեծ դժվարության, ռուս զորքերն օգոստոսի 27-ին մտնում են այնքան հռչակված Բայազետի բերդը և այնուհետև գրավում ամբողջ փաշալիքը։ Այսպիսով, մի քանի ամսվա ընթացքում ռուսական զորաբանակները վճռական հարված են հասցնում օսմանյան կայսրությանը և մեծ կորուստներ պատճառում նրան[1]։

1828 թ. աշնան և ձմռան ամիսներին պատերազմական գործողություններն առժամանակ դադարում են։ Օսմանյան կառավարությունն օգտվելով այդ հանգամանքից, նոր պատրաստություններ է տեսնում իր կորցրած յերկրները վերստին գրավելու

[1] Պրոֆեսորներ Լավիսի և Ռամբոյի խմբագրությամբ հրատարակված «История XIX века» աշխատության III հատորի մեջ ասված է՝ «1828 թ. կամպանիան վոչինչ չվճռեց» (էջ 199, 1938 թ.)։ Այսպիսի գնահատականն անպայման սխալ է. ռուսական բանակը մի քանի ամսվա ընթացքում գրավեց Կարսի, Ախալքալակի, Ախալցխայի, Բայազետի, Արդահանի շրջանները, վերցրեց 9 բերդ, 313 թնդանոթ, մոտ 8000 գերի և այլն, և դրանով իսկ խոշոր հարված հասցրեց օսմանյան բանակին։

համար։ Պասկևիչը տեղյակ լինելով հակառակորդի այս պատրաստություններին և հույս չունենալով, որ Ռուսաստանից օժանդակ զորամասեր կստանա (նրանք մեծ մասամբ կենտրոնացված էին Յեվրոպական Թյուրքիայի ճակատում), դիմում է Անդրկովկասի տեղական բնակիչների օգնությանը։ Նա փորձում է նոր կամպանիայի համար օգտագործել վրացական և հայկական ոպոլչենիեն։ Բայց միջին դարերի ֆեոդալ իշխանների հիմնական ռազմական այդ ուժը, նոր ժամանակներում, յերկարատև ու մեծ կամպանիաների համար չէր կարող ցանկալի արդյունք տալ։ Դրա համար էլ Պասկևիչը փորձում է վրացական և հայկական ոպոլչենիեն հավաքել ոչ թե վեց ամսով, ինչպես սովորաբար կատարվում էր, այլ յերկարատև ժամանակով, կամպանիայի ամբողջ տևողության ընթացքում, որը շատ անսովոր էր տեղացիների համար, խախտում էր ոպոլչենիեյի դարավոր սկզբունքը և փաստորեն հավասարեցնում զինվորական ծառայության։ Այդ է պատճառը, որ յերբ 1829 թ. սկզբներին զորահավաք է հայտարարվում, վրացական ու հայկական շրջաններում ամենուրեք սկսվում են ուժեղ դժգոհություններ ու դիմադրություններ, իսկ առանձին տեղերում մինչև իսկ զինված ապստամբական յելույթներ։ 1829 թ. մարտի 9-ին Թիֆլիսի Ղարախ կոչված հրապարակում (այժմյան կոմունարների այգին) հավաքված քաղաքացիների և մոտակա գյուղերից յեկած գյուղացիների հոծ բազմությունը զորահավաքի մասին վոստիկանապետի արած հայտարարությանը պատասխանում է, որ իրենք սալդաթ չեն տա և չեն գնա արտասահման կռվելու։ Վոստիկանությունը և ցույցի վայրը յեկած զորքն սկսում են «հանգստացնել» ժողովրդին. բանտարկում են ցույցի ղեկավարներից մի քանի հոգու։ Վրդովված ժողովուրդը հարձակվում է վոստիկանատան վրա և պահանջում անմիջապես ազատել բանտարկյալներին։ Զինվորական նահանգապետի գլխավորությամբ յեկած մի քանի վաշտ զինվորներ հազիվ են կարողանում ուշ յերեկոյան ցրել ժողովրդին։ Մարտի 10-ի առավոտյան Թիֆլիսի շրջակա գյուղերից քաղաք են գալիս մեծ թվով գյուղացիներ՝ միացյալ ուժերով բողոքելու զինվորագրության դեմ։ Շարժումը տարածվում է Գորու, Թելավի և Յելիզավետպոլի գավառներում։ Ապստամբություններ են ծագում Կախեթում, Քարթալինայում, Ղազախ-Բորչալվում և այլուր։ Ամե-

նուրեք նրանք յերդվում են՝ «մեռնել, բայց սալդաթ չգնալ»: Կողի կողմի 14 գյուղերի բնակիչներ միացած, զենք վերցրած՝ շտապում են Թիֆլիս՝ բողոքելու զինվորագրության դեմ: Նույն օրը Դիղոմի կողմից ևս մի քանի հազար գյուղացիներ փորձում են մտնել Թիֆլիս: Զինված ու անզեն գյուղացիներին իրենց տեղերն են վերադարձնում միմիայն զորքի ու թնդանոթների օգնությամբ[1]:

Պասկևիչը, այս անցքերից վախեցած, շտապում է փոխել իր հրամանը և հայտարարում է, որ այլևս զինվորագրություն չի լինելու: Սակայն Թիֆլիսի հայ ազնվականների, առևտրականների ու հոգևորականության ջանքերով, այնուամենայնիվ, կազմակերպվում է մոտ 2000 հոգուց բաղկացած հայկական մի զորագունդ, ըստ վաղեմի սովորության՝ յերկրի սահմանները և ներքին կարգ ու կանոնը պահպանելու համար[2]: Չնայած դրան, 1829 թ. ապրիլի 6-ին զինվորական մինիստր Չերնիշևին գրած իր գաղտնի զեկուցագրում Պասկևիչը զինվորագրության դեմ դուրս գալու համար վրացիների հետ մեկտեղ մեղադրում է նաև հայերին: «Առհասարակ նկատվեց,—գրում է նա,—որ Վրաստանում ցույց տված դիմադրությունն ամենից առաջ սկսվեց հայերի կողմից»[3]: Թիֆլիսի այս դեպքերին, Յերիցյանի ասելով, «Հայոց ապստամբություն (բունտ)» անունն էին տալիս:

1829 թ. մայիսին վերսկսվում է ռուս-տաճկական պատերազմը: Թյուրքիան մեծաքանակ զորքերով և մի քանի ճակատով առաջ է շարժվում, իսկ Պասկևիչը դեռ չէր կարողացել համալրել իր բանակը: Ինչպես տեսանք, հայերից ու վրացիներից զինվոր վերցնելու նրա փորձերն ուժեղ դիմադրության հանդիպելով՝ խանգարվեցին: Իրանում թողնված զորքերից թյուրքական ճակատ փոխադրել չէր կարելի, վորովհետև կոնտրիբուցիան դեռ չէր ստացվել և յերկրորդ՝ դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ս. Գրիբոյեդովի 1829 թ. հունվարի 30-ին պարսիկների ձեռքով Թեհրանում սպանվելուց հետո, որ որի վրա սպասվում էին նոր բարդություններ:

1 Տես Ա. Յերիցյան — Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մ. Ա., եջ 451—460:

2 Նույն տեղ:

3 Նույն տեղ. ընդգծումներն իմն են. Վ. Պ.:

1829 թ. փետրվարի 23-ին Պասկևիչն Ամբուրգերին (Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչը Թեհրանում) նախազգուշացնում է՝ ամեն կերպ խուսափել պարսիկների հետ նոր պատերազմ սկսելուց, «գործել մեծագույն զգուշությամբ»: Վոչ մի կերպ չի կարելի յերաշխավորել,—գրում է Պասկևիչը,—վոր պարսիկների հետ պատերազմի բռնկվելուց չեն վերսկսվի նույն խռովությունները (բունտերը), ինչ տեղի ունեցան 1826 թ. մեր գրեթե բոլոր մարզերում: Պարսիկները խռովություն առաջ բերելու համար վոչ ուժ կխնայեն և վոչ էլ փող: Մի խոսքով՝ այս յերկրում միաժամանակ պատերազմ մղել և՛ Թյուրքիայի, և՛ Պարսկաստանի դեմ անհնարին է»[1]:

Անգլիացիք իրենց հերթին մեծ իրարանցման մեջ էին և պարսիկներին ու թյուրքերին հրահրում էին միացյալ ուժերով դուրս գալ Ռուսաստանի դեմ:

Այսպիսի պայմաններում ահա, Պասկևիչը կենտրոնացնում է իր ուժերը Կարսում՝ հարձակվելու Երզրումի վրա: Հունիսի 2-ին Փոցխով-չայի մոտ և հունիսի 19—20-ին Սողանլուղում ռուսական զորքերը հանդիպում են սերասքյարի գլխավորությամբ Կարսի վրա արշավող օսմանյան մոտ 30 հազարանոց բանակին և կռվի բռնվելով՝ պարտության են մատնում նրան ու առաջ շարժվում դեպի Հասան-Ղալա: Հասան-Ղալայի նշանավոր ամրությունը՝ «Արզրումի բանալին»[2] գրավելուց հետո, հունիսի 27-ին Պասկևիչի զորքերը մտնում են Արզրում:

Արզրումից հետո Պասկևիչը մտադրվում է գրավել Թյուրքիայի նշանավոր առևտրական կենտրոն Տրապիզոնը: Սակայն, Խնուսը և Բաբերդը (Բայբուրթ) գրավելուց հետո, դեռ Տրապիզոն չհասած, նա ստանում է Ադրիանապոլսի հաշտության լուրը:

Յեվրոպական Թյուրքիայում Դիբիչի գլխավորությամբ գործող ռուսական բանակի յերևալը Կոստանդնուպոլսի դռների մոտ, հարկադրել էր Անգլիային, Ֆրանսիային և Պրուսիային միջամտելու ռուս-թյուրքական հարաբերություններին: Ամենայն սրությամբ, մինչև զինված միջամտության սպառնալիքը, նրանք

1 Акты, т. VII, стр. 690.

2 Ա. Ս. Պուշկին — Ճանապարհորդություն դեպի Արզրում, եջ 47, Յերևան, 1937 թ.:

նախազգուշացնում են Նիկոլայ I-ին չխախտել Թյուրքիայի անբաժանելիության սկզբունքը, Էնգելսի խոսքերով ասած՝ «հնամաշ դիպլոմատիական լաթը — յեվրոպական հավասարակշռության սիստեմը»[1]:

Նիկոլայ I-ի համար էլ պարզ եր, վոր Կոստանդնուպոլսի ու նեղուցների հարցի լուծումն այդ ձևով վերջանալ չեր կարող, վոր այդ անխուսափելիորեն կտաներ դեպի համայեվրոպական պատերազմ: Նիկոլային քաջ հայտնի յեր նաև այն, վոր Դիբիչը Պոլսի դռներին եր հասել փոքրաթիվ զորքերով, վորոնք յեվրոպական պետությունների դեմ պատերազմել անկարող եյին:

1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում կնքվում է ռուս-թյուրքական հաշտությունը, վորի համաձայն Թյուրքիային է վերադարձվում նրա յեվրոպական մասից գրաված գրեթե բոլոր յերկրները (Մոլդավիա, Վալախիա, Ռումելիա և այլն), իսկ ասիական մասից՝ Կարսը, Բայազետը, Արզրումը, Արդահանը և այլն: Դաշնագրով ռուսական կայսրության սեփականություն է ճանաչվում Սև ծովի ամբողջ ափը՝ Կուբանի գետաբերանից մինչև Փոթի ներառյալ, Ախալցխան և Ախալքալակը: Յերկու կողմերի բնակիչներին իրավունք է վերապահվում մեկ և կես տարվա ընթացքում մի տերիտորիայից գաղթել մյուսը: Թյուրքիան պարտավորվում է ռազմատուգանք վճարել 11 միլիոն 500 հազար դուկատ, ռուսահպատակներն ազատ իրավունք եյին ստանում առևտուր անելու Թյուրքիայում, իսկ ռուսական առևտրական նավերը՝ լողալու Սև ծովի ջրերում, անցնելու Կոստանդնուպոլսի ու Դարդանելի վրայով և այլն[2]:

Ինչպես տեսնում ենք, ցարական Ռուսաստանն իր նվաճած յերկրներից Ադրիանապոլսի դաշնագրով ավելի շատ վերադարձնում է Թյուրքիային, քան պահում է իր ձեռքում. բայց այն, ինչ նա ձեռք եր բերում, այդ էլ բավական եր Թյուրքիայի վրա ընդմիշտ գերիշխող ազդեցություն ունենալու համար:

«Հաշտության այս դաշնագիրը Ռուսաստանի համար մեծագույն հաղթանակներից եր, վորին նա կարող եր այդ ժամանակ հասնել Արևելքում... Այդպիսով, ռուսական ցարը Թյուրքիայի վրա գերիշխում եր փոքր ծախքերով և փոքր ռիսկով, քան յեթե նա տիրանար Կոստանդնուպոլսին: Նա արտահայտվեց իր չափավոր պահանջներով, բայց գործնականում դարձավ Արևելքի իշխողը»[1]:

Այսպիսով, Թուրքմենչայի և Ադրիանապոլսի դաշնագրերը լիակատար հաղթանակով եյին պսակում այն պատերազմական գործողությունները, վոր ցարիզմը շուրջ մի քառորդ դար մղում եր Իրանի և Թյուրքիայի դեմ: Թյուրքմենչայի և Ադրիանապոլսի դաշնագրերով հիմնականում ավարտվում եր Անդրկովկասի գաղութացման ռազմական նվաճման շրջանը, վորը Պետրոս I-ից սկսած՝ ցարիզմը սիստեմատիկ ու վճռական քայլերով առաջ եր մղում:

Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը միանգամ ընդմիշտ ազատվում եյին շահական ու սուլթանական բռնակալության լծից և դառնում եյին ցարական կառավարության հպատակներ:

Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի պատմության մեջ սա պատմական վճռական դարձակետ եր: Հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքը դրվում եր նոր պայմանների մեջ, սկսում եր զարգանալ բոլորովին նոր ուղիներով:

Այս բնավ չեր նշանակում, թե հայ ժողովուրդն ազատություն կամ անկախություն եր ձեռք բերում ցարական Ռուսաստանի ոգնությամբ: Վո՛չ. ցարերի Ռուսաստանը, կալվածատերերի ու ազնվականների Ռուսաստանը, ինչպես կայսրության մեջ մտնող միլիոնավոր այլ ժողովուրդներին, նույնպես և հայ ժողովրդին գաղութացնում եր շահագործելու և թալանելու նպատակով:

Սակայն, այդպես լինելով հանդերձ, ցարական Ռուսաստանի իշխանության տակ լինելն անհամեմատ ավելի ձեռնտու և պակաս կորուստների հետ եր կապված հայ ժողովրդի համար, քան պարսկական ու թյուրքական դեսպոտիզմի լծի տակ մնալը:

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XXI, стр. 465. Ընդգծումն իմն է. Վ. Պ.:

[2] Договоры России с Востоком, стр. 71—80. СПБ. 1868 г.

[1] История XIX века. Под. ред. проф. Ловисса и Рамбо, т. III, стр. 201, Москва, 1938 г.

Դա իր ժամանակին չարիքներից փոքրագույնն էր հայ ժողովրդի համար, ինչպես վոր՝ կառավարական ժյուրիի միանգամայն ճիշտ գնահատությամբ, չարիքներից փոքրագույնն էր բախտակից վրաց ժողովրդի համար[1]։

Բավական է թեկուզ հեռավոր կերպով ծանոթ լինել պարսիկ խաների, թյուրք փաշաների և քուրդ բեգերի լծի տակ հայ ժողովրդի կրած անլուր տառապանքների ու վայրենի ճնշման փաստերին, վորպեսզի կարելի լինի համոզվել, թե վորքան հեռատեսությամբ և ճիշտ էր տնորինում նա իր պատմական բախտը, այն կապելով ռուս ժողովրդի հետ։

Հայ ժողովուրդն իրերի պատմական բերումով ծանր որեր շատ էր տարել, բայց այնպիսի ծանրություն, ինչպես վերջին դարերի ընթացքում կրում էր խաների, փաշաների ու բեգերի լծի տակ, նա չէր տեսել։ Զուր չէ, վոր հայ ժողովրդի ազատագրության տենչով վառված նրա հարազատ զավակը, XIX դարի առաջին կեսի մեր ամենամեծ բանաստեղծը՝ անմահ Աբովյանն այնքան ատելությամբ ու զզվանքով է խոսում խաների տիրապետության մասին և, ընդհակառակը, գովերգում Ռուսաստանի հաղթանակը։ XIX դարի սկզբների Հայաստանի վոչ միայն տնտեսական կյանքի, այլև քաղաքացիական պատմության ուսումնասիրության համար լավագույն աղբյուր հանդիսացող իր հռչակավոր գործում նկարագրելով հայ ժողովրդի ծանր վիճակը, Աբովյանը գրում է. «Քար չկա մեր յերկրումը, քոլ չկա, վոր հայի արնով ներկած չըլի... Սրանց ամեն մեկի սրտումը հազար թուր կա ցցված»[2]։ Նկարագրելով պարսիկ փառաշների խժդժությունները հայ գյուղերում, Աբովյանն ասում է. «Փառաշները կրակ գցել, խալխին երում են. չես իմանում, թե ուր ես, յերկրո՞ւմը, թե դժողքումը»[3]։ Մի այլ տեղ խոսելով Յերևանի բերդի մասին, սիմվոլացնելով այն վորպես հայ ժողովրդի դարավոր ճնշման զնդան, նրա բոլոր տառապանքների մարմնացում, Աբովյանը գրում է.

[1] Տես Постановление жюри правительственной комиссии по конкурсу на лучший учебник для 3 и 4 классов средней школы по истории СССР. „Правда“ от 22 августа 1937 г.

[2] Խ. Աբովյան — Վերք Հայաստանի, էջ 136. ընդգծումն իմն է. Վ. Գ.։

[3] Նույն տեղ, էջ 70. ընդգծումն իմն է. Վ. Գ.։

«Յերևանու բերդն, Յերևանու բերդն՝ ա՜խ՝ վոր առավոտը բացվելիս՝ նրա էն լաչար գլուխը մարդի աչքով չեր ընկնում, հենց իմանաս՝ թե դժողքն ա իր բերանը բաց անում, ատամները ղրճտացնում ու իր ապականյալ, թունավոր դառը շունչը չորս կողմը փրփրալով փչում, ցրվում, փոնչացնում, վոր կարենա՝ իր հոտած ղղկների կերած, լափած արդար ջանը մարսի, էլի չանգերը դուրարա քցի, էլի հազար անմեղ, արդար հոգի՝ անծամ կուլ տա, իր անկուշտ փորին մատաղ անի...

Յերևանու բերդը՝ Յերևանու բերդը, ա՜խ՝ աչքս դուրս գա, քանի քանի վողորմելի հայի միս ա կերել, քանի քանի անմեղ հոգի՝ տարիներով չարչարվելուց, տանջվելուց, կենդանի նահատակ ըլելուց, կրակի, բոցի, յերկաթի շամփրի, թոխմախի, կրակած քարփնջի տանելուց, համբերելուց եդը, կամ թափի գյուլլի հետ ա թռել, հազար կտոր էլել, կամ տարադաջի (կախաղանի) վրա ա գոռալով յերկինք-յերկիր աղաչելով, իր միսն ատամներովը կրծելով, աչքերը դուրս տրաքելով, փոթոթվելով, հոգին ավանդել, յերկինքը գնացել, վոր պրծնի էս դառն աշխարքիցը, էն կատաղի գազանների ձեռիցը»[1]։

«Դժողքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչպես Յերևանու բերդի առնիլը հայերի համար»[2]։

Աբովյանի ձգտումն այն էր, վոր հայ ժողովուրդն ազատվելով խաների ու փաշաների ծանր լծից, «ռուսաց հզոր, քաջ ձեռի տակին փոքր դինջանա, իր աշխարհին մուղայիթ կենա, իր ազգը պահե»։ Յեվ յեթե այս յերկու ուժերի ընտրության մեջ Աբովյանը հարազատորեն արտահայտում էր հայ ժողովրդի շահը, մերժելով նրան սպառնացող գերագույն չարիքը, ապա Հայաստանի նոր տիրոջ՝ ցարիզմի դերի գնահատման հարցում նա խոտորում էր, հեռանում պատմական ճշմարտությունից, ընկնում չափազանցությունների ու անճշտությունների մեջ։ Հետագայում այդ զգաց Աբովյանը և, հիասթափված՝ յերես դարձրեց ցարական կառավարությունից։

[1] Խ. Աբովյան—Վերք Հայաստանի, էջ 92—93.

[2] Նույն տեղ, էջ 272. ընդգծումն իմն է. Վ. Գ.։

Աբովյանը մենակ չէր. նման մտայնության մենք հանդիպում ենք XIX դարի սկզբի մեր այլ պրոգրեսիվ մտածողների՝ Թաղիադյանի և ուրիշների մոտ։

Յեվրոպացի հեղինակներից մեկն իրավացիորեն նշում է, որ կովկասյան ժողովուրդները հարյուրավոր տարիներ գտնվում եյին իրենց ուժեղ հարևանների՝ պարսիկների ու թյուրքերի ճնշման տակ և զրկված եյին ազատությունից ու անկախությունից։ Ցարական Ռուսաստանը գրավելով Անդրկովկասը, չէր խլում նրա ժողովուրդների ազատությունն ու անկախությունը։ Այն, ինչ նրանք չունեյին, ռուսական կառավարությունը խլել չէր կարող,—ասում է հեղինակը։ Բայց դրա փոխարեն նա Կովկասում մտցնում եր օրենքներ, կարգ ու կանոն, վորոնք, Արևմտյան Յեվրոպայի համեմատությամբ, ի հարկե, պրոգրեսիվ լինել չեյին կարող, բայց Արևելքի համեմատությամբ պրոգրեսիվ եյին[1]։

1851 թ. մայիսի 23-ին Մարքսին գրած իր մի նամակում Էնգելսն ասում է.

> «Չի կարելի նշել և վոչ մի մոմենտ, վոր Լեհաստանը, նույնիսկ Ռուսաստանի համեմատությամբ, պրոգրեսիվ դեր կատարած լիներ, կամ ընդհանրապես պատմական նշանակություն ունեցող վորևե գործ կատարեր։ Ընդհակառակը, Ռուսաստանն Արևելքի նկատմամբ կատարում է իրոք պրոգրեսիվ դեր: Չնայած իր ամբողջ գարշելիության և սլավոնական աղտեղության, ռուսական տիրապետությունը Սև և Կասպից ծովերի, Կենտրոնական Ասիայի, բաշկիրների և թաթարների նկատմամբ քաղաքակրթող դեր է կատարում»[2]:

Ահա այսպիսի հզոր դրդապատճառների շնորհիվ եր, վոր հայերը, ինչպես այդ ընդհանուր գծերով մենք ցույց ենք տվել, դարեր շարունակ գաղտնի և բացահայտ սերտ կապեր հաստատելով Ռուսաստանի հետ, ոգնության ձեռք եյին մեկնում նրան, հրավիրում եյին դեպի Հայաստան, իսկ պայքարի վճռական ժամին, սկսած հայ գյուղացուց, արհեստավորից, առևտրականից մինչև հայ մելիքներն ու հոգևորականները, իրենց զենքով, իրենց հացով, դրամով և պրոպագանդայով ամեն կերպ ոժանդակում եյին ռուսական զորքերին։ Ի՞նչն եր հայ գյուղացուն, առևտրականին, կալվածատիրոջը, հոգևորականին համախմբում մի ընդհանուր ճակատում՝ հոգուտ Ռուսաստանի, ընդդեմ Իրանի և Թյուրքիայի։ Դրա համար մի պատասխան կա—հայության փրկության խնդիրը։

Յեթե խաների ու փաշաների լուծը հիմնականում ծանրացած եր հայ աշխատավորության ուսերին, յեթե այդ նույն աշխատավորությունը կիսաճորտի կամ ճորտի իր վիճակով կրում եր նրա վողջ ծանրությունը, յենթակա յեր խաների ու փաշաների ամեն կարգի կամայականություններին, իրեն ու իր ընտանիքի ֆիզիկական, բարոյական խոշտանգումներին և այլն և այլն, ապա, չի կարելի անտեսել, վոր խանա-փաշայական սիստեմն այս ու այն չափով ծանրացած եր նաև հայ առևտրականների, մելիքների ու հոգևորականության վրա։

Նշված ժամանակաշրջանում, ինչպես Անդրկովկասի մյուս ժողովուրդներին, նույնպես և հայ ժողովրդին, պատմությունը կանգնեցրել եր յերկընտրանքի առաջ՝ կամ կուլ գնալ շահական ու սուլթանական դեսպոտիզմին, կամ մտնել Ռուսաստանի հզոր, յեվրոպական քաղաքակրթության հետ կապված, այսպես թե այնպես օրենք, անձի, գույքի ապահովություն ճանաչող, ֆիզիկական բնաջնջումից ու արտաքին թշնամու վտանգից ապահովություն խոստացող կայսրության պրոտեկտորատի տակ։

Այս ամենից հետո հասկանալի յե, թե ինչու հայ հասարակական տարբեր շերտերը միացյալ ճակատ եյին կազմում գերագույն չարիքի դեմ, հոգուտ Ռուսաստանի։

Սա չէր բղխում առհասարակ նրանց շահերի ընդհանրությունից, ինչպես այդ հրամցնում են հայ բուրժուական պատմաբանները, աղավաղելով ու ֆալսիֆիկացիայի յենթարկելով պատմական փաստերը։ Նման բան գոյություն չի ունեցել և չէր էլ կարող ունենալ։ Հայաստանի նվաճման, գաղութացման կապակցությամբ ցարիզմի և հայ հասարակական տարբեր շերտերի միջև ստեղծված դարերի փոխհարաբերության յուրաքանչյուր կոնկրետ պատմական փաստի հետևում յեղել է այս կամ այն շերտի դասային-դասակարգային շահն ու ձգտումը։ Նրանցից ամեն մեկը,

[1] Տես „Zeitschrift der Deutschen morgenländischen Gesellschaft„. 20 B. II—III H. Leipzig, 1866. (Der Letze Persisch—russische Krieg (1826—1828) Episode aus der Geschichte modernen Persien).

[2] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, том XXI, стр. 211. Ընդգծումն իմն է. Վ. Պ.

ավելի կամ պակաս չափով հարել ե այսպես կոչված ռուսական որիենտացիային, յելնելով իրենց կոնկրետ շահերից ու ձգտումներից։ Ի դեպ, սա չեր խանգարում ցարական կառավարությանը՝ իր գաղութային քաղաքականության համար ոգտագործելու թե մեկին և թե մյուսին, հենակետ ընտրելով հայ առևտրականներին, կալվածատերերին և Եջմիածնի հոգևորականությանը։

Չի կարելի զանց առնել հայ աշխատավորի ու նրան շահագործող հայ կալվածատիրոջ, հայ հոգևորականի միջև յեղած պայքարը, նրանց շահերի հակամարտությունը։ Յեվ յեթե տվյալ կոնկրետ հարցում նրանք ժամանակավորապես միացյալ ճակատ եյին կազմում, այդու հանդերձ, մնում եյին տարբեր շահեր ներկայացնող հակամարտ ուժեր, վորոնց պայքարը նոր պայմաններում ավելի պիտի զարգանար ու սրվեր, դառնալով մեր նոր պատմության առաջմղիչ ուժը։

ԳԼՈՒԽ II

ՊԱՐՍԿԱՀԱՅ ՅԵՎ ԹՅՈՒՐՔԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի նվաճման անմիջական հետևանքը յեղավ մոտ 140 հազար պարսկահայերի և թյուրքահայերի գաղթը Անդրկովկաս։

Դա նշանակալից յերևույթ եր հայ կյանքում և կոչված եր վճռական ազդեցություն ունենալու հայ ժողովրդի պատմական բախտի վրա։

Ոտար բռնակալների լծի տակ հայ ժողովուրդն իր ձեռքից դարեր շարունակ ցած չեր դրել գաղթականական ցուպը։

Հարյուր հազարներով նրանք դուրս եյին քշվել հայրենի հողից և աստանդական կյանք եյին վարում Ասիայի, Յեվրոպայի ու Ամերիկայի յերկրներում։

Մասնավորաբար պարսկական և ոսմանյան բռնակալությունները, ցանկանալով թուլացնել հայ ժողովրդի հավաքական ուժը և իշխել նրա վրա, վերջին մի քանի դարերի ընթացքում ամայացրել ու անմարդաբնակ եյին դարձրել Հայաստանի գյուղերն ու քաղաքները, առևտրական ու արհեստավորական կենտրոնները՝ հայ բնակիչներին գաղթեցնելով իրենց յերկրների խորքերը։

«...Յարուցեալ ի վերայ միմեանց՝ ընդ Պարսս օսմանցիք, և Պարսիկք ընդ օսմանցիս,—կարդում ենք XVIII դարի հայ լուսավորիչների ծրագրային մի փաստաթղթում,—գերեցին և վարեցին յաշխարհս իւրեանց զբազմութիւն յազգէս Հայոց։ Նոյնպէս գերեցին և օսմանցիք զբազմութիւն յազգէ Հայոց՝ որք ընդ Պարսկօք էին և տարեալ վաճառեցին բնակչացն Հայոց՝ որք ընդ իւրեանց իշխանութեամբն։ Առնէին և այլ աշխարհաւերութիւն երկրի մերում, որովք եղև և մեծ վնաս ազգին մերոյ և շահաւէտութիւն նոցա։ Նախ զի զաշխարհս իւրեանց Հայկազնօք լցուցին և թողին թա-

փուր զՀայաստանեայցն տեղիս յոլով։ Եւ ապա զկնի լնանիլոյն աշխարհս իւրեանց Հայկազանցն բնակչօք»[1]։

«Կան ոմանք և մինչև ցայսօր կենդանի՝ որք զամենայն ստացուածս իւրեանց ետուն, և ինքեանք ի տանց և ի հայրենեաց իւրեանց փախստական լեալ անկան ի տար աշխարհ Թափառելով և բնակին այժմ ի պանդխտութեան հառաչելով, Թառանչելով և հոգւոց հանելով հեծեծեն հանապազ»[2]։

Մի ուրիշ տեղ նկարագրելով պարսկական ճնշումը, հեղինակը գրում է.

«...Զմեզ իբրև զանասուն արածեն և իբրև զգրաստ բառնան բեռինս ծանունս՝ այսինքն, զանազան հարկքն՝ զորս զմեզ յար ճաղելով և գանակոծ առնելով յամենայն գործոց մերոց պահանջեն։ Եթէ ի վաճառից վաճառականաց, թէ յարուեստից արուեստաւորաց, թէ յայգեստանեայց պտուղս և թե յերկրագործաց արմտիս արգասեաց. և մինչև անժառանգ ննջեցելոց ժառանգութեանցն տիրեն... Վասն զի ճռաճաղ արարեալ զմեզ մինչ այնճան խստակարծր սրտիւ ճմլեցին՝ մինչ զի փոխան կաթին զարիւն կթեցին»[3]։

Ռուս-պարսկական և ռուս-թյուրքական պատերազմները նոր թափ էյին հաղորդում այս կորստաբեր յերևույթին և ավելի քան վտանգում հայ ժողովրդի հավաքական գոյության խնդիրը։ Այդպիսի մասսայական գաղթեցումների, ինչպես և պատերազմի, սովի ու համաճարակի հետևանքով, Հայաստանի գրավման նախօրեյին ավերվել, ամայացել էյին Արարատյան դաշտի, Շորագյալի, Փամբակի, Ղարաբաղի, Կարսի և այլ վայրերի հայկական կենտրոնները։

Պարսկական և թյուրքական կամպանիաների շրջանում, յերբ ռուսական բանակները մտնում են Հայաստան, շատ տեղեր նրանք գտնում են այդպիսի ամայացած վիճակում։

1828 թ. ապրիլի 3-ին Նիկոլայ I-ին ուղարկած մի զեկուցագրի մեջ Պասկեվիչը գրում է. «Յերևանի և Նախիջևանի գա-

---

[1] Տես «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ», ի Հնդիկս՝ ի քաղաքն Մադրաս, 1772 թ., էջ 192։

[2] Նույն տեղ, էջ 191։

[3] Նույն տեղ, էջ 194—195. ընդգծումն իմն է. Վ. Պ.։

վառներում ամեն քայլափոխին նկատելի յեն պարսկական հարստահարիչ կառավարության ճնշումների հետքերը։ Ամենուրեք պատահում ենք մանր ու մեծ գյուղերի ավերակների և խանգարված ջրանցքների, առանց վորոնց դաշտերը մշտապես կմնան անպտուղ»[1]։ Նույն տարվա հունիսի 19-ին, Կարսին մոտիկ ճամբարից Պասկեվիչը հայտնում է, վոր «հայերով բնակված այս ամբողջ յերկրամասը ներկայումս միանգամայն ամայի յե, վորովհետև թյուրքական կառավարությունը բոլոր բնակիչներին գաղթեցրել է ամենահեռավոր տեղեր»[2]։

Ռուս ժողովրդի մեծ բանաստեղծ Պուշկինը 1829 թ. դեպի Արզրում կատարած իր ճանապարհորդության ժամանակ, ամենուրեք ականատես է լինում ամայացած գյուղերի։ «Յես անցնում էյի մի վայրով,—գրում է Պուշկինը,—ուր ամենուրեք ցորեն էր ցանած։ Չորս կողմը յերևում էյին գյուղեր, բայց նրանք դատարկ էյին»[3]։ Դրությունը Պուշկինի վրա շատ հուսահատեցնող տպավորություն է թողնում։ Նա Հայաստանն անվանում է «անապատ», «ամայի» յերկիր[4]։

Իրանի անգլիական դիվանագիտական ներկայացուցիչ, «Հաջի Բաբայի արկածները» նշանավոր գրքի հեղինակ Ջեյմս Մորիերը, 1808—1809 և 1810—1816 թ. թ. յերկու անգամ ճանապարհորդելով Հայաստանում, իբրև ականատես, Փամբակի շրջանի մասին գրում է.

Մինչև Ղարաքիլիսա (Kara Kliseh), վորը սահմանի վրա ռուսների զինվորական գլխավոր կայանն է, մենք բնակության հետքերը միայն տեսանք, ամեն ինչ կատարյալ ամայության մեջ էր, շնորհիվ վերջին տասնեհինգ տարվա յերկու ազգերի մեջ մղվող քայքայիչ պատերազմին։ Նույնիսկ բուսականությունը հաստատում էր այս. այստեղ սփռված էյին մարդու և ձիու վոսկորներ»[5]։

Շոպենի տվյալներով՝ Հայկական Մարզում յեղած 1111 գյու-

---

[1] Акты, том VII, стр. 8.

[2] Акты, том VII, стр. 749.

[3] Ա. Ս. Պուշկին—Ճանապարհորդություն դեպի Արզրում, էջ 36, 1937 թ., Յերևան։

[4] Նույն տեղ, էջ 34 և 58։

[5] Ուղեգրություններ, հ. Զ, էջ 331։ Ընդգծումն իմն է. Վ. Պ.։

դերից ցարիզմի նվաճման շրջանում բնակչություն կար միայն 752 գյուղում, մնացած 359-ն ավերակ էին[1]: Բնակչության նվազումը տեղի էր ունեցել գերազանցապես հայերի հաշվին:

Այսպիսի պայմաններում ահա, ցարական կառավարության առաջ հրամայական պահանջ էր դրվում՝ բնակեցնել Հայաստանի ամայացած շրջանները: Այդ էր պահանջում ցարական կառավարության տնտեսական-քաղաքական շահը, առանց դրան նա չէր կարող իր նոր ձեռք բերած գաղութից, ինչպես հարկն է, օգտվել, նրա համար դա կմնար վորպես մեռած կապիտալ:

Սակայն հարց էր ծագում՝ ինչպես և ում բնակեցնել հեռավոր ու սահմանամերձ այդ յերկրներում:

Ցարական կառավարության գաղութային քաղաքականության շահերի տեսակետից, ինչ խոսք, ամենից նպատակահարմար կլիներ սահմանամերձ այդ շրջանները ռուսներով բնակեցնելը: Պասկևիչը ձեռնարկում է այդպիսի մի նախագծի իրականացման, ցանկանալով լցնել Արաքսի ամբողջ ռուսական ափը 20 հազար ընտանիք մալոռուսներով—հիմնել այսպես կոչված Արաքսի կազակություն:

«Թյուրքիայի ներկա սահմաններով,—գրում է Պասկեվիչը արտաքին գործերի մինիստր Նեսելրոդեյին,— Կցխա (Խրամ) գետի վերին հոսանքից Սոմխեթիայում, Փամբակում և Շորագյալում մինչև Ալագյոզի լանջերը, այնուհետև Յերևանի խանության հետ ունեցած մեր նախկին սահմանով մինչև Գյոքչայի լիճը, այդ լճի մոտ և հետո մինչև Դարալագյազ, յենթադրվում է բնակեցնել 20.000 ընտանիք մալոռոս կազակներ, այս մասին յեղած հատուկ բարձրագույն բարեհաճ կարգադրության համաձայն»[2]:

Ցարական կառավարությանը չի հաջողվում Պասկևիչի այս նախագիծն իր ժամանակին իրականացնել:

Բայց այս նախագծի իրականացման դեպքում անգամ, Հայաստանի և Անդրկովկասի անբնակ ու նոսր բնակված արգավանդ

1 И. Шопен, Исторический памятник состояния Армянской Области в эпоху ее присоединения к Российской империи, стр. 485—518. СПБ, 1852 г.

2 Акты, том VII, стр 774—775. Отношение гр. Паскевича к гр. Нессельроде от 5-го января 1829 года.

հողերը կմնային մարդկային ձեռքի կարոտ, անմշակ և չօգտագործված: Հենց այդ պատճառով էլ ցարական կառավարությունը Թուրքմենչայի և Ադրիանապոլսի դաշնագրերով, և նույնիսկ դրանից էլ առաջ, պատերազմի տարիներին, համապատասխան քայլերի յե դիմում Իրանի և Թյուրքիայի քրիստոնյա բնակիչներին (և՛ տեղացի, և՛ Անդրկովկասից գաղթեցված) վերաբնակեցնել Անդրկովկասում:

Իրանի և Թյուրքիայի քրիստոնյա բնակիչներին (մեծ մասամբ հայերին) Անդրկովկաս գաղթեցնելով, ցարիզմը յերեք հիմնական նպատակ էր հետապնդում:

Առաջին՝ աշխատասեր այդ տարրի միջոցով վերականգնել ավերված գյուղերի ու քաղաքների կյանքը, կազմակերպել, նրանց ձեռքով մշակել յերկրի տնտեսությունը, և իբրև գաղութ, կլանել յերկրի ու ժողովրդի ընձեռած բարիքները:

Յերկրորդ՝ մետրոպոլիայից հեռու ընկած սահմանամերձ այդ յերկրներն ապահովել արտաքին թշնամուց իբրև անհամեմատ ավելի վստահելի տարր, միացնել ռուսական ուժի հետ և պաշտպանել նոր սահմանները:

Յերրորդ՝ Իրանի ու Թյուրքիայի սահմանամերձ շրջանները, գերազանցապես հայերով բնակված, դատարկել բնակիչներից, ամայացնել և առհասարակ այդ յերկրների տնտեսական կյանքը քայքայել, առևտրական ու արհեստագործական ամենազարգացած տարրերից զրկել և իր տնտեսական-քաղաքական ազդեցության տակ գցել:

Վոր իրոք հայերի գաղթեցման հիմնական նպատակը վոչ թե պարսկական ու թյուրքական բռնակալությունից նրանց ազատագրելն էր, այլ ցարիզմի գաղութային քաղաքականության նպատակների համար օգտագործելը, այդ դեռևս 1806 թվականին պերճախոս կերպով արտահայտել էր Ցիցիանովը, տաս հազար թյուրքահայ ընտանիք Անդրկովկաս գաղթեցնելու վերաբերյալ իր մի գրության մեջ:

«Յես պետք է ասեմ, վոր յեթե անգամ Յերեվանի մարզը մերը լիներ, ապա նրանց (*հայերին. Վ. Պ.*) այնտեղ գաղթեցնելու կարիք չկա: Ինձ հարկավոր է բնակեցնել Վրաստանը և, յեթե նրանք չեն ցանկանում բնակություն հաստատել Վրաստանում, ապա նրանք ինձ գրեթե հարկավոր էլ չեն»[1]:

1 Акты, том II, № 1267: *Ընդգծումն իմն է. Վ. Պ.*

Գաղթականության շուրջը յեղած ցարական պաշտոնական գրագրությունների մեջ ևս պարզ արտահայտված են նրա գաղութարար այդ նկատառումները։ «Մեր սահմաններում ընկած ազատ հողերը հնազանդ, աշխատասեր և հավատով հավատարիմ ժողովրդով բնակեցնելը կարող է մեծ օգուտ բերել մեզ»,—գրում է Պասկևիչը Դիբիչին[1]։ Արտաքին գործերի մինիստր Նեսելրոդեն 1828 թ. դեկտեմբերի 4-ի գրությամբ հայտնում է Պասկևիչին կայսրի և կառավարության ցանկությունը՝ Թյուրքիայի գրաված շրջաններից քրիստոնյա բնակիչներին Անդրկովկաս գաղթեցնելու առթիվ։ Նա խորհուրդ է տալիս գաղթականությամբ լցնել «Բնականից չափազանց հարուստ, բայց աշխատող ձեռքի պակասության հետևանքով դեռևս անմշակ մնացած» Իմերեթիան և Մինգրելիան[2]։

Լինելով պարսկահայերի ու թյուրքահայերի գաղթեցման ջերմ կողմնակիցներից ու կազմակերպիչներից մեկը, Պասկևիչն ամեն կերպ աշխատում է կառավարական շրջաններին բացատրել գաղթականության օգուտները և լիովին կենսագործել Թուրքմենչայի ու Ադրիանապոլսի դաշնագրերի համապատասխան հոդվածները։ 1829 թ. հոկտեմբերի 10-ին Ալեքսանդր I-ին գրած իր զեկուցագրում նա պահանջում է տաս հազար թյուրքահայ ընտանիք գաղթեցնել Անդրկովկաս։ «Թեպետ և այս մարդկանց գաղթեցումն սկզբում կպահանջի բավական մեծ գումար,—գրում է Պասկևիչը,—բայց, անկասկած է, հետագայում առատորեն կվարձատրվենք այն օգուտներով, որ պետք է սպասել այս աշխատասեր և արդյունաբերող դասակարգից»[3]։

Նույն տարվա նոյեմբերի 18-ին գրաֆ Չերնիշովը տեղեկացնելով Պասկևիչին տաս հազար թյուրքահայ ընտանիք գաղթեցնելու առթիվ թագավորի համաձայնության մասին, հայտնում է՝

> «Նորին մեծությունը ձեր զեկուցագրերից նկատելով, որ հիշված հայերից շատերը գործադրվել են պատերազմի մեջ և իրենց քաջությամբ ապացուցել Ռուսաստանի նկատմամբ ունեցած ջանքերն ու ընդունակությունն այդ կարգի ծառայության մեջ, օգտավետ է համարում այդպիսի հայերի մի մասը բնակեցնել Ախալցխայում ու շրջակայքում, որտեղ նրանք գումարտակի կամ այլ զորամասերի կազմում կարող են գործադրվել մեր նոր սահմանի պաշտպանության համար»[1]։

Բերված այս մի քանի օրինակներից անգամ դժվար չէ յեզրակացնել, որ ցարական կառավարությունը պարսկահայերին ու թյուրքահայերին գաղթեցնելով Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի գլխավորապես սահմանամերձ շրջանները, ծրագրում էր նրանց վորպես թնդանոթի միս օգտագործել՝ իր գաղութային քաղաքականության նպատակների համար։ Սակայն, ինչպես միշտ, այս անգամ էլ ցարական կառավարությունը գործին տալիս էր այլ բնույթ, հանդես էր գալիս քրիստոնյա ժողովուրդներին ազատագրողի քողի տակ։ Յեվ վորպեսզի գործը հաջողությամբ կատարվեր, դարձյալ առաջ եյին քաշվում ցարիզմի հայ գործակալները։

Պասկևիչը Պետերբուրգից հրավիրում է հայտնի Լազարյան տոհմից գնդապետ Լազար Լազարյանին և նշանակում Թավրիզի քաղաքապետ ու գաղթականական գործի ղեկավար։ Նրան օգնականներ են նշանակվում փոխ-գնդապետներ՝ իշխան Մովսես Յերկայնաբազուկ Արղությանը, Ղամազյանը, Յենիկոլոպյանը, Տարոյանը. սպաներ՝ Մելիք-Շահնազարյանը, Մելիք-Յուսուփյանը, Դավիթ և Ալեքսանդր Ղորղանյանները, Շահրաթյանը և այլն։ Ներսես արքեպիսկոպոսն իր հերթին Պարսկաստան է ուղարկում Ստեփաննոս յեպիսկոպոսին, Նիկողայոս և Գրիգոր վարդապետներին ու մի քանի ազդեցիկ քահանաներ։ Նա հատուկ գրությամբ դիմելով պարսկահայ բոլոր հոգևոր կենտրոններին, առաջարկում է նրանց կազմակերպել ու առաջնորդել տեղի հայերի գաղթը, սեփական փորձով օրինակ հանդիսանալ նրանց համար, այլապես սպառնում է չենթարկվողներին կարգալույծ անել։ Այդ պատճառով էլ շատ տեղերում հայ հոգևորականներն առաջին գաղթողներն են լինում։

Յեվ այսպես. ցարական կառավարության ու Եջմիածնի գործակալները խմբերով շրջում եյին Պարսկաստանի ու Թյուրքիայի հայաբնակ գավառները, ռուսական վոսկու, քրիստոնեական կրոնի «բարեմասնություններով», յերջանիկ ապագայի հույսերով գայթակղեցնում ժողովրդին, տեղահան անում ու ձանա-

[1] Акты, т. VII, стр. 628.
[2] Акты, т. VII, стр. 772.
[3] Акты, т. VII, стр. 830.

[1] Акты, т. VII, стр. 831.

պարհ գցում Արաքսի ռուսական ափը։ Գաղթեցմանը քիչ չէր նպաստում նաև ռուսական զորքերի միջամտությունը։

Թուրքմենչայի և Ադրիանապոլսի դաշնագրերով կամավոր հայտարարված գաղթի մեջ յերկու կողմերն էլ չէյին խորշում բռնի միջոցների գործադրումից։

Սակայն միակողմանի և սխալ կլիներ պարսկահայերի ու թյուրքահայերի մասսայական գաղթը վերագրել միայն այդ կարգի միջոցառումներին։

Իր տեղում մենք ցույց ենք տվել, որ Թյուրքիայի ու Պարսկաստանի հայերը տնտեսական-քաղաքական-իրավական ծանր պայմանների մեջ գտնվելով, ձգտում եյին ցարական Ռուսաստանի օգնությամբ թեթևացնել իրենց դրությունը։ Այս հույսով էլ թե ռուս-պարսկական և թե ռուս-թյուրքական պատերազմների ընթացքում նրանք օգնում եյին ռուսներին։ Յեվ յերբ Թուրքմենչայի ու Ադրիանապոլսի պայմանագրերով Պարսկահայաստանի ու Թյուրքահայաստանի գրաված շրջանները վերադարձվեցին, այդ վայրերի հայության համար մի յելք մնաց միայն՝ թողնել հայրենի հողն ու ջուրը և գաղթել ռուսական տերիտորիան, գեթ փրկելու իրենց վտանգված ֆիզիկական գոյությունը։ Պարսկահայերի և թյուրքահայերի համար ստեղծված կոնկրետ այս պայմաններով, ինչպես նաև իրենց գոյության հարցը ու պատմական բախտը Ռուսաստանի հզոր ու քրիստոնյա պետության հովանավորության հետ կապելու ցանկությամբ պետք է բացատրել նրանց մասսայական գաղթի պատճառները և ոչ թե Պասկևիչի, Լազարյանի կամ Ներսես արքեպիսկոպոսի անձնավորություններով միայն։

* * *

Պարսկահայերի գաղթն սկսվում է 1828 թ. գարնանից։ Առաջինը դուրս են գալիս Թավրիզի մի քանի հարյուր տուն կազմող հայերը։ Տեղում մնում են միայն վեց տուն։ Թավրիզից հետո, հարյուրավոր ընտանիքներով, ամբողջ գյուղերով մեկը մյուսի հետևից շարժվում են Մակուի, Մարաղայի, Սալմաստի, Ուրմիայի, Խոյի և այլ շրջանների հայ բնակիչները, թողնելով իրենց անշարժ և նույնիսկ շարժական գույքը։

Աբբաս Միրզան և անգլիական գործակալներն իրենց հա-

մար անսպասելի մասսայական գաղթի առաջն առնելու համար արգելում են գաղթականների գույքը գնելը, լուրեր են տարածում, թե Ռուսաստանում սով է, կառավարությունը նրանցից զինվոր է վերցնելու և այլն։ Նրանք հավատացնում եյին գաղթող հայերին և նեստորականներին, թե «Ռուսաստանը լինելու է նոցա երկիր աքսորանաց»[1] և այլն։

1828 թ. ապրիլի 2-ին Ուրմիայից Լազարևը Պասկևիչին գրում է՝ «Վոչ միայն պարսիկները, այլև անգլիական միսիան գործ են դնում բոլոր միջոցները, վորպեսզի դադարեցնեն գաղթը»[2]։

Գաղթի դեմ են դուրս գալիս նաև հայերից։ Իր ակտիվ գործունեությամբ առանձնապես աչքի յե ընկնում Սալմաստի Իսրայել յեպիսկոպոսը, վորը գաղթը համարում եր հայերի համար կործանարար մի յերևույթ։ Նրան հաջողվում է զգալի թվով հայերի հետ պահել գաղթելու մտադրությունից։

Չնայելով այս արգելքներին, կարճ ժամանակում ռուսական տերիտորիան են գաղթում մոտավորապես 45—50 հազար հայեր[3] և մոտ 100 տուն ասորիներ։

Նախորոք մշակված ծրագրի համաձայն, գաղթականներին մեծ մասամբ տեղավորում են սահմանամերձ այն վայրերում, վորոնք պատերազմական գործողություններից տուժել կամ ամբող-

---

1 Տես «Նկարագիր գաղթականութեան հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան», եջ 36, 37, 39, 49, 50 և այլն. Մոսկվա, 1832 թ.։

2 Акты, т. VII, 608. ընդգծումն իմն է. Վ. Պ.։

3 Գաղթականության թվի ճիշտ հաշվառում չլինելու հետևանքով, մենք պահում ենք մոտավոր հավանական թիվը։ Աղբյուրները հակասական թվեր են տալիս գաղթականության թվի մասին։ «Ակտեր»-ում հրատարակված պաշտոնական գրագրությունների հիման վրա մեր կատարած հաշվումներով գաղթողների թիվը չի անցնում 7000 ընտանիքից կամ, միջին հաշվով, 42.000 հոգուց։ Պրոֆ. Լեոն հաշվում է մոտ 45—50 հազար (տես Հայոց պատմություն, մ. Բ., եջ 116)։ Թադեոս վանքի առաջնորդ Բարսեղ յեպիսկոպոսը՝ մոտ 11 հազար տուն (ն. տ., եջ 115), գնդապետ Լազարյանը՝ 8249 ընտանիք քրիստոնյա (տես «Նկարագիր գաղթականութեան Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան», եջ 94), Ա. Յերիցյանը՝ մոտ 45 հազար հոգի (տես «Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում», մ. Ա., եջ 333), յեվրոպացի հեղինակներից Կարլ Ֆրիդրիխ Նոյմանը գաղթականների թիվը հաշվում է մոտ 40 հազար հոգի (տես «Geschichte der Uebersiedlung von vierzig tausend Armeniern, welche in Jahre 1828 aus der Persischen Provinz Aderbaidschan nach Russland auswanderten». Leipzig, 1834).

ջությամբ ամայացել էին։ Մեղրիի, Ղափանի, Որդուբադի, Նախիջևանի, Դարալագյազի, Շարուրի, Գյառնիբասարի, Սուրմալուի, Սարդարաբադի, Վաղարշապատի, Զանգիբասարի և Կարբիբասարի շրջանները լցվում են հայ գաղթականներով։ Նրանց մի մասին տեղավորում են Յերևանում և շրջակայքում, Ապարանում, Դարաչիչակում, ինչպես և Ղարաբաղում։ Արհեստականորեն նվազած կամ անմարդաբնակ դարձած Հայաստանի գյուղերն ու քաղաքներն արհեստականորեն դարձյալ լցվում են հայ բնակիչներով։ Նորից սկսում է ծխալ հայ գեղջուկի մարած օջախը։

* * *

1829—1830 թ. թ. թյուրքահայ գաղթականությունը գալիս էր ավելի քան խտացնելու Հայաստանի բնակչության շարքերը։

Ադրիանապոլսի դաշնագրի համաձայն՝ ցարական կառավարությունը կազմակերպեց Թյուրքիայի քրիստոնյա բնակիչների գաղթը դեպի Հայաստան և Վրաստան, գրեթե նույն մեթոդներով և միևնույն նկատառումներով, ինչ ցույց ենք տվել պարսկահայերի գաղթի կապակցությամբ։ Բայց այստեղ, թյուրքահայերի մոտ, գաղթն ավելի յեր նախապատրաստված և հենց սկզբից վոտքի հանեց բնակչության ավելի լայն մասսաների։ Գաղթեցման գործում խոշոր նշանակություն է ունենում նաև այն, վոր հայերն ակտիվ մասնակցություն էին ունեցել Թյուրքիայի դեմ մղված կռիվներին և իրավացիորեն վախենում ու սպասում էին, վոր ռուս զորքը հետ քաշվելուց հետո Թյուրքիայի կառավարությունը վրեժ կլուծի իրենցից։

Նիկոլայ I-ին ուղղած իր զեկուցագրում Պասկևիչը, խնդրելով թույլատրել 10 հազար քրիստոնյա ընտանիքների գաղթը, հայտնում է՝

«Բայազետում 2 հազար հայեր կռվում էին մեր զինվորների շարքերում։ Արզրումում քրիստոնյա բնակչության մեծ մասը, իր հոգևոր առաջնորդի հետ, դիմավորեց մեր զորքերին։ Կարսում հայերից կազմվեց մի գումարտակ և մինչև 800 հոգուց բաղկացած մի հեծելազոր, վորոնք պահպանում էին մեր սահմանները հարձակումից։ Այդ ընտանիքների թիվը, վորոնց սպառնում է անխուսափելի վտանգ, կարող է

հասնել մինչև 10 հազարի։ Արժանացրեք, ամենավողորմած կայսր, ձեր գթառատ ուշադրությունը դարձնելու այս դժբախտ զոհերի վրա և մի թողեք, վոր ոսմանյան ինքնակալությունը վրեժխնդիր լինի նրանցից այն նվիրվածության համար, վոր նրանք ցույց տվին Ռուսաստանին»[1]։

Սուլթանական բիրտ ու դաժան ռեժիմին ծանոթ բնակիչները սարսափահար թողնում էին իրենց հայրենի հողն ու ջուրը, իրենց յերկար տարիների աշխատանքի վաստակը՝ որ առաջ ազատվելու սպասվող արհավիրքներից։ «Յեթե անգամ քրիստոս իջներ յերկնքից,—ասում էին գաղթականները,—և մեզ թյուրքերի իշխանության տակ մնալու ցանկություն ներշնչեր, մենք նրա խորհրդին էլ չեյինք հետևի»[2]։

1829 թ. ձմեռը Արզրումից, Կարսից, Բայազետից դեպի ռուսական սահմանն են շարժվում առաջին գաղթականական խմբերը։ 1830 թ. գարնանից սկսվում է մասսայական գաղթը։ Դատարկվում են Թյուրքահայաստանի աչքի ընկնող առևտրական և արհեստավորական կենտրոնները՝ Արզրումը, Ղարսը, Բայազետը, Արդահանը և այլն։ «Բայազետը միանգամայն դատարկվեց»,—գրում է Պասկևիչը Նիկոլայ I-ին։ Առևտրականների ու արհեստավորների հետ գաղթում են նաև մեծ թվով գյուղացիներ։ 1829—1831 թ.թ. ընթացքում Թյուրքահայաստանից, ընդհանուր առմամբ՝ գաղթում են մոտ 90 հազար հայեր և վորոշ թվով հույներ։

Անդրկովկասի պատմության մեջ այսպիսի մեծ գաղթականություն, չհաշված հետագայում լեռնականների մեծ գաղթը դեպի Թյուրքիա, բացառիկ յերևույթ էր։ Գաղթականներն Անդրկովկասում տեղավորվում են ըստ հետևյալ յերեք հիմնական հատվածների։ Արզրումի և շրջակայքի հայերը (7298 ընտանիք), վորոշ բացառությամբ, բնակեցվում են Ախալցխա և Ախալքալակ քաղաքներում ու մոտակա գյուղերում, իսկ հույները՝ Ծալկայի շրջանում և մասամբ՝ Գյումրիում։ Կարսեցիք (2467 ընտանիք) բնակեցվում են Գյումրու, Արագածի, Ապարանի և Թալինի շրջաններում։ Բայազետցիք (4215 ընտանիք)՝ Սևանա լճի մոտերքը, Դարաչիչակի և մասամբ Սուրմալուի շրջաններում։

[1] Акты, т. VII, стр. 830.
[2] Акты, т. VII, стр. 842.

* * *

Այսպիսով, ցարական կառավարությունը, Պարսկաստանի և Թյուրքիայի դեմ ուղղված ռազմական հաջող կամպանիաներից հետո, լուծում էր տնտեսական-քաղաքական-ռազմական նշանակություն ունեցող մի խնդիր, որը, թեև Թուրքմենչայի և Ադրիանապոլսի դաշնագրերում համեստ տեղ էր բռնում (ի դեպ՝ դաշնագրերում գաղթականությանը վերաբերող հոդվածներում հայերի անունը չէր էլ հիշատակված), բայց կոչված էր շատ ավելի մեծ դեր խաղալու ցարիզմի գաղութային քաղաքականության սիստեմում, քան այդ դաշնագրերի աղմուկ հանած մի շարք կետերը միասին վերցրած:

Ի դեմս պարսկահայ և թյուրքահայ գաղթականության, ցարիզմն ամրացնում էր իր սահմանամերձ շրջանները, առաջին հերթին Արաքսի սահմանագիծը (մի խնդիր, որի լուծումը, ինչպես տեսանք, Պասկևիչը կապում էր 20 հազար մալոռուս կազակների բնակեցման հետ), ձեռք էր բերում գաղութային շահագործման ու թալանի նոր օբյեկտ:

Ցարիզմի այս հաղթանակն էլ, ինչպես միշտ, ձեռք էր բերվում հայ ժողովրդի մեծ կորուստների գնով:

Ցարական կառավարությունը կազմակերպելով այդպիսի մի խոշոր գաղթ, դրա համար անհրաժեշտ պատրաստություն չէր տեսել, չէր ապահովել գաղթականության գոյության նույնիսկ ամենաանհրաժեշտ պայմանները: Ճիշտ է, կառավարությունը Հայկական Մարզային Վարչության կից կազմել էր հատուկ գաղթական կոմիտե, որն իր ճյուղերն ուներ գավառներում, նրա տրամադրության տակ դրել էր որոշ միջոցներ, գաղթականներից առավել կարիքավորներին տրվում էյին չնչին նպաստներ, նրանք միքանի տարով ազատվում էյին հարկերից, բայց այդ բոլոր միջոցառումները, համեմատած գաղթականության կարիքների հետ, չափազանց անբավարար էյին: Ցարական բյուրոկրատիայի ու նրա գործակալների խոստումների և ռեալ միջոցառումների միջև տարբերությունը շատ մեծ էր: Պարսկական և թյուրքական լծի տակ անցկացրած իրենց թշվառ կյանքի փոխարեն նոր բնակավայրում կյանքի տանելի պայմաններ որոնող գաղթականները, ցարական չինովնիկների անտարբեր, անհոգի վերաբերմունքի հետևանքով, մնում էյին հաճախ բաց յերկնքի տակ,

մատնվում սովի ու մահվան: Պարսկահայ գաղթականության ղեկավար գնդապետ Լազարյանը, որը տակավին 1828 թ. մարտի 30-ի իր կոչով հրավիրում է պարսկահայերին գաղթել Ռուսաստան, խաբելով նրանց թե՝ «Անդ (Ռուսահայաստանում. Վ. Պ.) մոռասջիք զամենայն նեղութիւնս զորս կրեցիք... վիճակ ձեր բարեգոյն լիցի և փոխանակ սակաւուն զոր կորուսջիք, անդ տացի ձեզ հարիւրապատիկ»[1] և այլն, մեկ և կես ամիս հետո հարկադրված է լինում Պասկևիչին հայտնել, որ

«Նախիջևանի ու Յերևանի գավառներում հացի մեծ պակասություն կա և տեղական իշխանությունն ի վիճակի չէ օգնության հասնելու նույնիսկ Մարաղայից գաղթած հայերին, որոնց թիվը 700 ընտանիքից չի անցնում: Այս մարդիկ թողեցին ամեն ինչ և ամենից շուտ գաղթելով, անհրաժեշտ քանակությամբ հաց անգամ չկարողացան վերցնել իրենց հետ:

... Յեթե յես դադարեցնեմ գաղթը, — շարունակում է Լազարյանը, — դրանով կատարած չեմ լինի ձեր ցանկությունը, որն այնքան օգտակար է նոր ձեռք բերած յերկրի համար, իսկ յեթե հաջողեցնեմ այն, սարսափելի կլինի, որովհետև այս թշվառները, որ ջերմեռանդությունից ամեն ինչ թողեցին, կարող են դաժան սովի զոհ դառնալ»[2]:

Լազարարյանն անձամբ ծանոթանալով Նախիջևանում տեղավորված գաղթականության դրությանը, մայիսի 21-ին Պասկևիչին հայտնում է.

«Այստեղի իշխանությունը գաղթականներին գյուղ չի հատկացնում բնակության համար, ասելով, թե նրանք պատկանում են Եհսան խանին, նրա բարեկամներին, կամ ուրիշ կալվածատերերի և որ ամբողջ գավառում միայն յերեք գյուղ է պատկանում պետությանը: Ձերդ պայծառափայլության կողմից ինձ հայտնված կառավարության կամքը՝ քրիստոնյա գաղթականներին վեց տարով ամեն տեսակ հարկերից ու պարհակներից ազատելու մասին, այստեղ չի գոր-

[1] Собрание Актов, т. II, стр. 164—165, Москва 1838 г. Ընդգծումն է. Վ. Պ.:

[2] Акты, т. VII, стр. 611.

ծաղրվում և ամեն մորթվող անասունի համար պահանջվում է մեկ արծաթ ռուբլի, մի հարկ, որ ռուսական և ոչ մի գավառում գոյություն չունի»[1]:

Գաղթականների ծանր դրության մասին արժեքավոր վկայություն է տալիս նաև նշանավոր ռուս գրող, «Խելքից պատուհաս» հռչակավոր պիեսի հեղինակ Գրիբոյեդովը: 1828 թ. սեպտեմբերին Գրիբոյեդովը Հայաստանի վրայով գնում է Թեհրան՝ որպես դիվանագիտական ներկայացուցիչ: Յերևանում, Ղամարլվում, Նախիջևանում նա ականատես է լինում գաղթականների անապահով ու թշվառ դրությանը: Պասկևիչին ուղարկած մի գրության մեջ Գրիբոյեդովը նշում է, որ ոչ միայն գաղթականները, այլև տեղացիները, գաղթականների անկազմակերպ և ոչ ճիշտ տեղավորման հետևանքով, խիստ տուժում են: «Նախիջևանի մարզում յես գտա է՛լ ավելի անկարգություն և ճնշումներ»,—ասում է Գրիբոյեդովը: Նա աննորմալ է համարում Նախիջևանի մարզում և քաղաքում մեծ թվով հայ գաղթականներ բնակեցնելը: «Ձերդ գերազանցությանը հայտնի չէ, թե տեղացիները ո՛րքան խեղճ են և ինչքա՛ն աղքատ է այս գավառը... համարձակ կարելի չէ ասել, որ այսուհետև ոչ պետությունը տեղացիներից և ոչ էլ տեղացիներն իրենց ունեցածից ոչինչ չեն ստանա, իսկ յեկվորներից պետությունը պարտավորվել է վեց տարի ոչինչ չվերցնել»[2]:

Գաղթականական կոմիտեյի անդամ իշխան Մովսես Յե՛րկայնաբազուկ Արղությանի վկայությամբ՝ գաղթականներից մոտ 2500 ընտանիք ուտելու բացարձակապես ոչինչ չեն ունեցել: «Յեթե դրությունն այսպես շարունակվի,—գրում է Արղությանը,—անշուշտ, գաղթականների մի մասը յետ կդառնա իր նախկին հայրենիքը, մյուս մասը, որի հավատն ու սերը դեպի թագավորն ավելի հաստատուն է, անպատճառ զոհ կգնա իր այս ազնիվ զգացմունքին»[3]:

Արղությանը մտածում էր, որ մի անգամ ռուսական սահ-

[1] Акты, т. VII, стр. 627—628.

[2] Акты, т. VII, стр. 647. Отношение с. с. Грибоедова к гр. Паскевичу от 1-го октября 1828 г.—переправа на Араксе против Джульфы.

[3] Յե. ա. ք. Գ ե ղ ա մ յ ա ն—Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում, էջ 145:

մանը մտնողներն այլևս զրկվում էյին հետ դառնալու իրավունքից: Այս մասին Արաքսի ռուսական ափում արդեն իսկ հայտնված էր գաղթականներին. ուստի մնում էր այլ միջոցներ որոնել գաղթականների կյանքը փրկելու համար:

«Գիտենալով, թե ո՛րքան դժվար է մեծ թվով գաղթականներ մի տեղից մյուս տեղ փոխադրելը,—գրում է Պասկևիչը,—մանավանդ առանց նախապատրաստության ու միջոցների և այն էլ այնպիսի մի յերկիր, որն աղքատ է սեփական միջոցներից, ամայացել է պատերազմի պատճառով, յես չէյի կարող չնախատեսել այն բոլոր զրկանքները, որոնց կարող էյին յենթարկվել Ադրբեջանից մեր կողմը գաղթող միքանի հազար ընտանիքներ»[1]: Պասկևիչը միջնորդում է կառավարության առաջ՝ պետական գանձարանից նպաստ բաց թողնել գաղթականությանը: Կառավարությունը բաց է թողնում 90 հազար ռուբլի նպաստ, 10 տարուց հետո վերադարձնելու պայմանով: Բայց այս էլ չի փրկում գաղթականներին ծանր դրությունից:

Ավելի վատթար էր Ղարաբաղ գաղթածների վիճակը: Ռուս վիճակագիր Զուբարյովի վկայությամբ՝ «այս ոգտակար ժողովուրդը (խոսքը հայերի մասին է. Վ. Պ.) չափից դուրս ճնշվում էր Ղարաբաղում... Առանց ջրի, առանց կերակրի, բաց յերկնքի ու արևի կիզիչ ճառագայթների տակ տարաբախտ հայերը մահվան ճարակ էյին դառնում: Յերեք ամսվա ընթացքում նրանցից մեռան 1012 հոգի»[2]:

1829—1832 թվականներին կառավարության կատարած մարդահամարի տվյալներով՝ 8249 ընտանիք պարսկահայ գաղթականներից մնացել էր 6946 ընտանիք կամ 35560 հոգի[3]: Այդքան կարճ ժամանակամիջոցում սովի և այդ ժամանակ Հայաստանում սաստիկ տարածված ժանտախտի բաժին էյին դարձել 1303 ընտանիք կամ մոտ 10.000 մարդ: Զարմանալու ոչինչ չկա. սովն ու համաճարակը բոլոր կախյալ և գաղութային ժողովուրդների անբաժան ուղեկիցներն են: Անգլիայի հնդկական գաղութներում

[1] Акты, т. VII, стр. 628.

[2] Акты, т. VII, стр. 461.

[3] И. Шопен, Исторический памятник состояния Армянской Области в эпоху ее присоединения к Российской империи, стр. 539. СПБ, 1852 г.

1802—1879 թ. թ. սովից ու համաճարակից կոտորվել են մոտ 18 միլիոն մարդ։ Առհասարակ ժողովուրդների մեծ կորուստների գնով են հաստատում իրենց գաղութային տիրապետությունը բոլոր իմպերիալիստական պետությունները։

Թյուրքահայերի գաղթն ավելի քան ծանրացնում էր պարսկահայերի և առհասարակ Հայաստանի վողջ բնակչության դրությունը։ Հայաստանում, ինչպես և Պարսկաստանի ու Թյուրքիայի մոտակա գավառներում, յերկարատև պատերազմները ծայր աստիճան քայքայել եյին տնտեսական կյանքը, գրեթե սպառել սննդի պաշարները։ Ձեռք բերվող հացը, ինչպես Պասկևիչն է ասում, հատկացվում էր զորքին—նրա ուշադրության ամենագլխավոր առարկային։ Ժողովրդի համար, հատկապես պարսկահայ և թյուրքահայ գաղթականների համար, ստեղծվել էր դժոխային մի կացություն, վորի ծանրության տակից, ինչպես կտեսնենք, տարիներ շարունակ նրանք չպիտի կարողանային դուրս գալ։

Սակայն հայ ժողովրդի կրած յերկարատև տառապանքների ու ծանր կորուստների գնով, մի նոր, խոշոր փոփոխություն էր առաջանում նրա կյանքում։ Պարսկական ու ոսմանյան բռնակալության ձեռքով արհեստականորեն դատարկված Հայաստանի տերիտորիան կրկին լցվում էր հայ բնակիչներով, միանգամից փոխվում էր նրա ազգային դեմքը։

1829—1832 թ. թ. վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայկական Մարզում գաղթից առաջ յեղած մոտ 25 հազար հայերի փոխարեն կար մոտ 82,5 հազար հայ[1]։

Առանձին տեղերում գաղթականների թիվը հետևյալ հարաբերությունն էր ներկայացնում.

	Տեղացի հայեր (շունչ)	Պարսկահայեր (շունչ)	Թյուրքահայեր (շունչ)
Յերևան քաղաքում	2369	1715	48
Նախիջևան »	719	1110	—
Որդուբադ »	—	182	—
Ընդամենը . .	3088	3007	48

1 Ամբողջ Անդրկովկասում հայերի թիվը հասնում էր մոտ 300 հազարի։

Յերևանի 10 մահալներում	17704	21853	21591
Նախիջևանի 4 »	1971	9542	27
Որդուբադի »	2388	1158	—
Ընդամենը . .	22063	32553	21618

Այսպիսով, յերեք քաղաքներում և մահալներում յեղած 25.145 շունչ տեղացիներին ավելանում էր 57.226 շունչ գաղթական։ Կազմվում եյին յերկու նոր հայաբնակ գավառներ՝ Ալեքսանդրոպոլի և Ախալքալակի գավառները։

Մահմեդական բնակիչների համեմատությամբ հայերի թիվը հետևյալ փոփոխությունն է կրում.

	Մահմեդականներ (շունչ)	Հայեր (շունչ)
Յերևան քաղաքում	7731	4132
Յերևանի մահալներում	42544	61148
Նախիջևան քաղաքում	3641	1829
Նախիջևանի մահալներում	17842	11540
Որդուբադ քաղաքում	3262	182
Որդուբադի մահալներում	3985	3546
Ընդամենը	79.005	82.377[1]

Այսպիսով, հայերը կենտրոնանում և ամրանում եյին վորոշ տերիտորիայում և, չնայած իրենց հետ բերած տարբեր կուլտուրաների ազդեցության, քաղաքական-տնտեսական-կուլտուրական սերտ կապեր եյին հաստատում միմյանց հետ, հող պատրաստում պատմական նոր պրոցեսների—հայ ժողովրդի ազգային համախմբման ու ազգային-ազատագրական շարժումների համար։

1 Տես Ա. Յերիցյան—Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում. մասն Ա., էջ 337—38 և И. Шопен—Исторический памятник состояния Армянской Области в эпоху ее присоединения к Российской империи, стр. 463—630. СПБ, 1852 г.

ԳԼՈՒԽ III

ՑԱՐԻԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի նվաճումից հետո ցարիզմի գաղութային քաղաքականությունը մտնում ե իր նոր փուլի մեջ: Միայն ռազմականապես նվաճված յերկրի տնտեսական, քաղաքական, կուլտուրական նվաճումն ու յուրացումը, նրա լիակատար գաղութացումը դառնում ե ցարական կառավարության հիմնական խնդիրը:

Յեվրոպական պետությունների գաղութային տիրապետության օրինակով, մի շարք յերկրների գաղութացման մոտ յերկու հարյուր տարվա իր սեփական փորձով, ցարիզմը ձգտում եր ինչպես Անդրկովկասի մյուս յերկրներում, նույնպես և Հայաստանում, ստեղծել այնպիսի կարգեր, վորոնք կկարողանային ապահովել ու հարատև դարձնել նրա գաղութային տիրապետությունը, հնարավորություն կտային ինչպես կառավարությանը, այնպես ել ռուս կալվածատեր-ազնվականներին ու առևտրա-արդյունաբերողներին առավելագույն օգուտը քաղել այս նոր գաղութից:

Ցարիզմի այս ձգտումների հաջող իրականացման համար ամենից նպատակահարմարը, իհարկե, այն կլիներ, վոր նվաճված յերկրում անմիջապես մտցվեին ցարական բյուրոկրատիկ վարչաձև ու օրենքներ, յերկրի կառավարման ամբողջ գործը միանգամից կենտրոնացվեր ռուս չինովնիկության ձեռքում:

Բայց բանն ել հենց այն եր, վոր յեթե ցարական կառավարությունն իր գաղութներից առավել հետամնաց վայրերում տեղ-տեղ դիմում եր այդպիսի քայլերի, ապա հայ ժողովրդի նկատմամբ, վորի համար ամենից թանկարժեքը միշտ ել յեղել եր իր ազատությունն ու անկախությունը և վորը դարեր շարունակ հերոսաբար պայքարել եր իր ազատության ու անկախության համար, չգործադրեց և չեր ել կարող միանգամից գործադրել այդպիսի պրակտիկա: Ցարական բյուրոկրատիան, չնայած իր «ամենազորությանը» հայ ժողովրդի նկատմամբ, Հայաստանի նվաճումից հետո ել մտրակի քաղաքականության հետ մեկտեղ շարունակում եր կիրառել նաև շաքարահացի խորամանկ ու խարդախ քաղաքականությունը: Պատահական չե, վոր ցարական դիվանագիտությունը, Պետրոս I-ից սկսած, հայ ժողովրդի գլխին այնքան առատ խոստումներ եր տեղում՝ նրան ազատություն ու անկախություն տալու մասին, իսկ ճիզվիտական օրդենի յերկրպագու Յեկատերինա II-ը նրան խաբում եր հայկական թագավորությունը վերականգնելու սին խոստումներով: Յեվ այժմ, յերբ արդեն փաստ եր դարձել Հայաստանի նվաճումը, ցարական կառավարությունը չեր կարող միանգամից ղանց առնել բազմիցս արած իր խոստումները և, հասարակական կարծիքը մոլորեցնելու նպատակով, թեկուզ առերևույթ, ձևական տեսակետից վորոշ գոհացում չտար նրա սպասումներին: Հայկական Մարզի (Армянская Область) կազմակերպումը, հայ հոգևորականությանը, ազնվականներին ու առևտրականներին շնորհած արտոնությունները ըստինքյան այդպիսի քաղաքականության արդյունք եյին, նրանց հպատակեցնելու և օգտագործելու միջոց:

Խաների ու փաշաների լծի տակ դարերով տառապած հայերը թերևս իրավունք ունեյին ուրախանալու «Հայկական Մարզ» կամ, ինչպես իր ժամանակին ընդունված ե յեղել ասելու՝ «Հայոց Աշխարհ» հորջորջումով: Բայց դա ռեալ արժեքից զուրկ, քաղաքական նկատառումներով թելադրված մի ակտ եր, դրանով հայ ժողովուրդն ինքնուրույնություն ձեռք չեր բերում և, ինչպես կտեսնենք, «Հայոց Աշխարհ» մեծադղորդ հորջորջումն ել շուտով կորցնելու յեր իր դերը և, իբրև օգտագործված, մաշված լաթի կտոր, դեն եր շպրտվելու: Ցարիզմի այդօրինակ գաղութային-ադմինիստրատիվ քաղաքականության տեսակետից բնորոշ մանյովր եր նաև տեղացիների մասնակցությամբ ժամանակավոր Մարզային վարչություններ կազմակերպելը, ինչպես այդ անում եր Պասկևիչը, օրինակ՝ Յերևանի, Կարսի, Ախալցխայի մարզերում և այլն:

Մեր ասածներից չպետք ե յեզրակացնել, թե սա բացառիկ մի յերևույթ եր, ցարական առանձին կառավարիչների անձնական վերաբերմունք հայ ժողովրդի նկատմամբ: Վոչ. ժողովուրդներին ստրկացնելու, նրանց կենսատու հյութերը քամելու քաղաքականությունը ցարիզմի և առհասարակ բոլոր գաղութարար

պետությունների գիշատիչ սկզբունքն է, փոքր ու թույլ ժողովուրդների կործանման հիմնական պատճառը: Հազար անգամ իրավացի յե Ենգելսը, յերբ ասում է, թե ցարիզմն իր տերիտորիալ գրավումները և ժողովուրդների ճնշումը, XIX դարում, կատարում եր ժողովուրդների «ազատագրության» նշանաբանի տակ: Անդրկովկասի քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում և հայերի նկատմամբ, յերբ նրանք գտնվում եյին խաների ու փաշաների լծի տակ, ցարիզմն այդ լոզունգը գործադրում եր ամենալայն չափերով, այն դարձրել եր իր նվաճումների դրոշակ: Սակայն, Հայաստանի նվաճումից հետո, բավական յեղավ մի կարճատև շրջան, վորպեսզի ցարական բյուրոկրատիան իր հագած «ժողովուրդների ազատության» քղամիդի տակից հետզհետե դուրս ցցի իր գաղութային քաղաքականության ժանիքը:

Հայ ժողովուրդը դեռևս շունչ չքաշած խանա-փաշայական հեղձուցիչ մթնոլորտից, ընկնում եր ցարիզմի գաղութային քաղաքականության ջրապտույտի մեջ և առաջինը, վոր պատերազմական ավերիչ գործողություններից հետո ծանրանում եր նրա ուսերին, դա ցարական բյուրոկրատիկ վարչաձևն եր, նրա չինովնիկությունը, վոստիկանական, դատական որգանները:

Ուստի հետևենք ցարիզմի վարչական քաղաքականությանը:

Յերևանը գրավելուց հինգ որ հետո, 1827 թ. նոյեմբերի 6-ին, Պասկեվիչի հրամանով կազմվում է Յերևանի Մարզի Ժամանակավոր Վարչություն, տեղի զորքերի հրամանատար գեներալ Կրասովսկու նախագահությամբ, Յերևանի բերդի պարետ Բորոդինի և Ներսես արքեպիսկոպոսի անդամակցությամբ:

Ժամանակավոր Վարչությունը, Պասկեվիչի առաջադրանքի համաձայն, պարտավոր եր՝

1. իր ձեռքը վերցնել յերկրի ամբողջ իշխանությունը.
2. միջոցներ ձեռք առնել յերկրում անդորրություն և կարգ պահպանելու.
3. հաշվի առնել նախկին կառավարության բոլոր յեկամուտներն ու գույքերը և այդպիսիք պետականացնել.
4. տեղական միջոցներով ապահովել զորքի մատակարարումը.

5. յերկրի պաշտպանության համար տեղացիներից կազմել զինված խմբեր.
6. հավաստի տեղեկություններ ձեռք բերել թյուրքական կառավարության զինված ուժերի ու մտադրությունների մասին.
7. վերականգնել առևտրական հարաբերությունները հատկապես Վրաստանի հետ.
8. լիովին ապահովել հաղորդակցությունը Վրաստանի հետ—Ապարանի և Դիլիջանի վրայով.
9. ոգտակար գներով վաճառել Յերևանում և Սարդարաբադում ձեռք բերած բամբակի պաշարները ու զարկ տալ Կողբի աղահանքի մշակմանը.
10. հոգ տանել Յերևանի, Սարդարաբադի և Աբբասաբադի բերդերի ու կայազորի մասին և այլն[1]:

Յերևանի Ժամանակավոր Վարչության հիմնումն առաջին փորձն եր Հայաստանում քաղաքացիական իշխանություն հաստատելու ուղղությամբ: Նա կոչված եր, թեկուզ ժամանակավորապես, փոխարինելու տապալված խանական իշխանությանը: Սակայն, թե իր կազմակերպչական սկզբունքներով և թե իր գործունեյությամբ Յերևանի Ժամանակավոր Վարչությունն ավելի շուտ զինվորական մի մարմին եր, քան քաղաքացիական իշխանություն: Յերկրի ճնշող մեծամասնությունը կազմող մահմեդական բնակիչներից վոչ վոք չկար այդ վարչության կազմում: Ինչ վերաբերում է Ներսես արքեպիսկոպոսին, ապա նա այդ որերին կատարյալ զինվորական գործիչ եր, հայկական զինված խմբերի հրամանատար, վոր ցարական զորքերի հետ միասին կռվել եր Հայաստանի նվաճման համար:

Ներսես արքեպիսկոպոսին Ժամանակավոր Վարչության անդամ նշանակելով, Պասկեվիչը հետապնդում եր յերկու նպատակ՝ մի կողմից՝ ցուցադրել այդ փաստը հայության առաջ, իսկ մյուս կողմից, վոր գլխավորն է, ոգտվել Հայաստանում ու Հայաստանից դուրս նրա ունեցած կապերից և ազդեցությունից, Ժամանակավոր Վարչության առաջ ծառայած ռազմական, տնտեսա-

[1] Акты, т. VII, стр. 480—481.

կան, քաղաքական խնդիրները հաջողությամբ իրագործելու համար։ Վճռականապես պետք է հերքել այն սխալ կարծիքը, թե Ներսես արքեպիսկոպոսի մասնակցությունը կառավարական կենտրոնական օրգանում, ներկայացնում և պաշտպանում էր հայ ժողովրդի շահերը։ Ցարական միապետական կարգերում, առավել ևս նրա մի գաղութում, այդպիսի բան լինել չէր կարող։ Այսպես կոչված տեղական ներկայացուցիչները ըստ մեծի մասին ցարական չինովնիկների կցորդներ էին, միայն ազգությամբ տարբեր, բայց ըստ էության նույն ցարական չինովնիկները։ Յեվ ցարական բյուրոկրատիայի սահմանած շրջանակներից դուրս գալու, ինքնուրույն քայլերի դիմելու ուղղությամբ նրանց կատարած յուրաքանչյուր աննշան փորձն անգամ յենթարկվում է կառավարության ամենախիստ դիմադրության ու հալածանքին։ Ներսես արքեպիսկոպոսի օրինակն այս տեսակետից շատ բնորոշ էր։ Օգտագործելով Ժամանակավոր Վարչության անդամի իր իրավունքները և Կրասովսկու հետ ունեցած կապերը, Ներսեսն իր յեռանդը մեծ մասամբ գործ է դնում Էջմիածնի վանքի կալվածատիրական իրավունքներն ընդարձակելու, նրա պաշտպանության համար վարձու զորաբաժին կազմակերպելու վրա և այլն։ Ներսեսի փառասիրությունը ևս հանգիստ չի տալիս նրան։ Ժամանակավոր Վարչության կազմում յեղած ռուս չինովնիկների թուլությունից և տեղական պայմաններին ու լեզվին նրանց անծանոթ լինելու հանգամանքից օգտվելով, Ներսեսն սկսում է ինքնուրույն կերպով տնօրինել վոչ միայն հոգևոր, այլև քաղաքացիական գործերը։ Նրա այդօրինակ գործելակերպը պատճառ է դառնում, վոր Պասկևիչը վոչ միայն նրան հեռացնի Ժամանակավոր Վարչության կազմից, այլև «գաղտնի դավադրություն լարելու» մեջ մեղադրելով, արտաքսի Հայաստանի սահմաններից։ «Ներսեսին մասնակից դարձնելով յերկրի վարչության մեջ,— գրում է Պասկևիչը,— յես յերբեք չէյի կարծում, վոր նա պետական շահերից ավելի կգերադասի հայ հոգևորականության և մանավանդ Էջմիածնի վանքի շահերը»։ Նույն գրության մեջ Պասկևիչն ասում է. «Ներսեսի վերաբերմամբ յես մեծ դժվարության մեջ եմ գտնվում։ Քաղաքականությունն արգելում է ինձ նրան բոլորովին հեռացնել գործից, բայց յեթե թողնենք նրան իր ունե-

ցած ազդեցությամբ, այն ժամանակ վանքի պահանջներն այլևս վերջ չեն ունենա»[1]։

Ներսես արքեպիսկոպոսի օրինակով Պասկևիչը ցույց էր տալիս, վոր ցարական կառավարության շահերից դուրս, նրա կամքին հակառակ, այլևս վոչինչ տեղի ունենալ չէր կարող։ Ամեն ինչ, ներառյալ և բարձր հոգևորականության ու իշխող դասակարգերի (վորոնց վրա այս ու այն չափով հենվում էր ցարիզմը) շահերն ու իրավունքները, պետք է յենթարկվեր նոր տիրոջը, նրանք պետք է շարժվեյին ցարական բյուրոկրատիայի ցուցումներով։

Յերևանի Ժամանակավոր Վարչությունը չկարողացավ իրականացնել ցարիզմի գաղութային տիրապետության այդ պահանջները, և Պասկևիչը, դժգոհ լինելով նրա գործունեությունից, 1828 թ. փետրվարին արձակեց այն, Ներսեսի հետ Հայաստանից հեռացնելով նաև գեներալ Կրասովսկուն։

* * *

1828 թ. մարտի 21-ին, Նիկոլայ I-ի հրովարտակով, Յերևանի ու Նախիջևանի նախկին խանություններից և Օրդուբադի շրջանից կազմվում է Հայկական Մարզը (Армянская Область)։ Յերևանի Ժամանակավոր Վարչության փոխարեն գործի յե անցնում Հայկական Մարզի նոր վարչությունը, գեներալ Ջավչավաձեյի նախագահությամբ։

Նոր վարչությունը կազմված էր Պետերբուրգյան հայտնի մի նախագծի հիման վրա, վորը, թագավորի հանձնարարությամբ, 1827 թ. վերջերին մշակել էյին Դիբիչը, Կանկրինը, Նեսելրոդեն, Զակրևսկին (կոմիտեյի անդամներ), Վելյամինովի մասնակցությամբ։

Այս նախագիծը Հայաստանը գաղութացնելու առաջին ծրագրային փաստաթուղթն էր, վորով և, Պասկևիչի մտցրած փոփոխություններով մեկտեղ, առաջնորդվում էր Հայկական Մարզի Վարչությունը։

Յելնելով այդ նախագծի պահանջներից, Պասկևիչը վճռական քայլերի յե դիմում նախ և առաջ ցարական բյուրոկրատիկ

[1] Акты, т. VII, стр. 486. Отношение гр. Паскевича к гр. Дибичу от 3-го марта 1828 года, № 339. Тавриз. Ընդգծումն իմն է. Վ. Գ.։

վարչաձևը Հայաստան մտցնելու և ամրացնելու համար: 1828 թ. մարտին Մարզային Վարչությանն ուղղած իր գրության մեջ Պասկևիչը մեղադրելով նախկին վարչությանը, վոր նա չի կարողացել տեղում իշխանություն, «կարգ ու կանոն» հաստատել, վոր մահալներում ռուս պրիստավներ չեն նշանակվել, բացառությամբ Շարուրի մահալի, իսկ այդտեղ ել, ինչպես ինքն է գրում, «նրան ոգնական է նշանակված աստիճան (չին) չունեցող մի հայ, վորը, լեզուն գիտենալով, մահալի կառավարման վրա ավելի ազդեցություն ունի, վոր ստորացուցիչ է ռուս սպայի համար», վոր մի շարք տեղերում փաստորեն ռուսական իշխանություն չի հաստատված և «բնակիչները չգիտեն՝ իրենց բողոքներով ու խնդիրներով ո՛ւմ դիմեն»[1] և այլն, առաջարկում է փոփոխություններ կատարել և ապահովել գավառների ադմինիստրատիվ որգաններն ռուս չինովնիկներով:

Հայկական Մարզի Վարչությունը Պետերբուրգի կոմիտեյի կազմած նախագծի և Պասկևիչի անմիջական ցուցումների համաձայն, ձեռնամուխ է լինում նոր ադմինիստրացիայի կազմակերպմանը:

Մարզային Վարչության 1828 թ. մարտի 20-ի առաջին նիստում, վորտեղ մասնակցում են գեն. Ջավչավաձեն (վարչության նախագահ), Յերևանի պարետ Կաշկարովը, մայոր Մեդոկսը, Սահակ Մելիք-Աղամալյանը և Սարտիպ Մահմադ խանը (վարչության անդամներ) Հայկական Մարզը յենթարկվում է վարչական բաժանման:

1829 թ. մայիսին հաստատվում է Հայկական Մարզի վարչական բաժանումը:

Ըստ նոր բաժանման՝ Հայկական Մարզի ամբողջ իշխանությունն անցնում է մարզային վարչությանը, վորի գլուխ կանգնած եր տեղի զորքերի հրամանատարը և անմիջականորեն յենթարկվում եր Կովկասի կառավարչապետի ու կովկասյան բանակի գլխավոր հրամանատարին: Մարզային Վարչության յերեք խորհրդական անդամները, վորոնք սկզբում զինվորական շտաբ-ոֆիցերներից եյին, գլխավորում են հետևյալ ֆունկցիաները՝ ա) գործադիր, բ) ֆինանսա-տնտեսական և գ) դատական:

---

[1] Հայկական ԽՍՀ Պետական Կենտրոնական Արխիվ, ֆոնդ 12, գործ № 1, եջ 3. ընդգծումն իմն է. Վ. Պ.:

Յերևանի ու Նախիջևանի գավառներում և Որդուբադի շրջանում հիմնվում են վոստիկանական վարչություններ: Յերևանում վոստիկանության գլուխ կանգնում է ռուս վոստիկանապետը, իսկ վորպես ոգնականներ գործում են մի հայ և մի թուրք՝ արտոնյալ դասի ներկայացուցիչներից: Նախիջևանում և Որդուբադում այդ պարտականությունները Պասկևիչը դրել եր տեղի նախկին նայիբների՝ Եքսան խանի և նրա յեղբայր Շիխ-Ալի բեգի վրա, պատերազմի տարիներում նրանց կատարած հատուկ ծառայությունների համար: Նրանց վորպես ոգնականներ նշանակված եյին ռուս սպաներ:

Յերևանում և Նախիջևանում հիմնվում են պրովինցիալ դատարաններ, Յերևանում՝ վոստիկանապետի նախագահությամբ, իսկ Նախիջևանում՝ Եքսան խանի: Տեղական բնակչությանն իրավունք է տրվում քաղաքացիական գործերի քննության համար դիմել, ըստ հին սովորության, մոլլաների, կադիների և իրենց ավագների միջնորդությանը, վորոնք ղեկավարվում եյին բացառապես շարիաթի և սովորութական իրավունքներով:

Մահալների ու գյուղերի կառավարչությունն անփոփոխ կերպով թողնվում է նախկին միրբոլուքների, քեդխուդաների, մելիքների և աղալարների ձեռքում:

Այսպես ահա, 1828—1829 թ. թ. ընթացքում, յերկրի նոր տերերն առաջին հիմնավոր քայլերն են անում՝ տապալված խանական իշխանության փոխարեն իրենց իշխանությունը հաստատելու: Այդ ժամանակաշրջանից ել Հայաստանում դրվում են ցարական բյուրոկրատիկ վարչաձևի հիմքերը:

Ցարական կառավարությունը, ինչպես Անդրկովկասի մյուս խանություններում, այնպես ել Հայաստանում, առաջին վճռական հարվածը հասցնելով խանական կիսաֆեոդալական անարխային, միանգամից չվերացրեց և չեր ել կարող վերացնել խանական սիստեմն ամբողջությամբ: Յելնելով Վրաստանի ու Ադրբեջանի փորձից, հաշվի առնելով Հայաստանի՝ Իրանին և Թյուրքիային սահմանամերձ լինելը, ինչպես նաև տեղական բնակչության դասերի սովորությունները միանգամից փոխելու վտանգավորությունը և տեղական պայմաններին, լեզվին ծանոթ կադրերի ոգտագործման անհրաժեշտությունը, ցարական կառավարությունը Հայաստանում, Վրաստանի ու Ադրբեջանի համեմատությամբ,

ավելի քան զգուշավոր գիծ բռնեց, «տեղական տարրի» ոգտագործման գաղութային իր քաղաքականությանն ավելի լայն տեղ հատկացրեց: Յեթե Վրաստանը միացնելուց անմիջապես հետո ցարիզմը փորձեց իր բյուրոկրատական վարչական ռեժիմի տակ դնել վրաց ժողովրդին և նահանջեց այդ ժողովրդի հերոսական դիմադրության շնորհիվ, ապա, այդպիսի անհաջող փորձեր նա չկրկնեց Հայաստանում: Ցարական կառավարությունն այստեղ վախենում էր վոչ միայն ժողովրդի դիմադրությունից, իր վոստիկանական ու դատական օրգանները մասսայորեն բոյկոտի յենթարկելուց, վորը մանավանդ մահմեդական բնակչության մոտ հաճախ արտահայտվում էր մի քանի քայլ հեռավորության վրա գտնվող Իրանի ու Թյուրքիայի սահմանները փախչելով, այլև յելնում էր նույն ժամանակներում Թյուրքիայի դեմ մղվող պատերազմում հայերին և տեղական թուրքերին վորպես թնդանոթի միս ոգտագործելու քաղաքականությունից:

Հայկական Մարզում գաղութային ուժեղ ադմինիստրացիա հաստատելու ուղղությամբ 1828—29 թ. թ. կատարված փորձերը մեծ արդյունք չեն տալիս և, մեր կարծիքով, չափազանցության մեջ է ընկնում Շոպենը (իսկ նրան կրկնում են հետագա ուսումնասիրողների մեծ մասը), յերբ գրում է, թե՝ «Հայկական Մարզի գրավման ժամանակից արմատական փոփոխության յենթարկվեց նրա կառավարման ձևը»[1]: Համոզվելու համար, վոր Շոպենը ճիշտ չէ, բավական է միայն ծանոթանալ խանական վարչաձևին և այն փոփոխություններին, վոր մտցվեցին Հայաստանի նվաճումից հետո:

Մինչև նվաճումը Հայաստանը բաժանված էր առանձին խանությունների և կառավարվում էր շահի կողմից նշանակված պարսիկ խաների ձեռքով: Ինչպես շահը ամբողջ յերկրում, այնպես էլ խանը իրեն յենթակա տերիտորիայում միահեծան, ինքնիշխան տեր ու տնորեն էր: XVIII դարում և XIX դարի սկզբին Իրանի կենտրոնական իշխանության թուլացման ու քայքայման հետևանքով, Անդրկովկասի կենտրոնախույս խանությունները կիսանկախ դիրք եյին ձեռք բերել և հաճախ գործում

[1] И. Шопен, Исторический памятник состояния Армянской Области в эпоху ее присоединения к Российской Империи, стр. 459, СПБ, 1852 г.

եյին առանց կենտրոնական իշխանության համաձայնության: Ոգտվելով ստեղծված դրությունից, Անդրկովկասի խաների մեծ մասը փաստորեն ձեռք եյին բերել ժառանգաբար իշխելու իրավունք. որինակ՝ Յերևանի սարդարները, Ղարաբաղի մելիքները, Փանախանը, Գանձակի, Շաքիի, Շիրվանի խաները և այլն:

Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայկական շրջանները՝ Յերևանի սարդարությունը, Նախիջևանի խանությունը, Որդուբադի շրջանի հետ միասին, և Ղարաբաղը բաժանված եյին առանձին մահալների: Մահալների բաժանման հիմքը ջուրն էր, վորը, ինչպես Արևելքի մյուս յերկրներում, այնպես էլ Հայաստանում, վճռական դեր էր խաղում, և այդ ջրերի-գետերի անուններով էլ հենց, մեծ մասամբ, կոչվում եյին մահալները. (որինակ՝ Գյառնի-Բասար, Վեդի-Բասար, Զանգի-Բասար և այլն):

Մահալների կառավարչությունը հանձնված էր հայ մելիքներին (հայաբնակ շրջաններում) և թուրք բեգերին (թուրքաբնակ շրջաններում): Դատական ֆունկցիան խանության մեջ կատարում էր գլխավորապես հոգևորականությունը: Թե հոգևոր և թե աշխարհիկ դատավարության հիմքում ընկած էր շարիաթի որենքը: Պահպանվել և գործադրվում էր նաև սովորութական իրավունքը—ադաթը:

Խանություններում պետական պաշտոնեյությունը կազմված էր բացառապես արտոնյալ դասերից: Բեգերի, աղալարների, մելիքների և բարձր հոգևորականության ձեռքում էր գտնվում թե վարչական և թե դատական գործը: Կառավարությունը և պաշտոնեյությունը, ինչպես Ենգելսն է ասում Արևելքի յերկրների նկատմամբ, այստեղ ևս կատարում եյին յերեք հիմնական ֆունկցիա.

ա) ֆինանսական (կողոպուտ սեփական բնակչության),
բ) ռազմական (թալան յերկրի ներսում և ոտար յերկրներում),
գ) հանրային աշխատանքների (հոգացողություն վերարտադրության մասին)[1]:

Ընդհանուր գծերով նշված խանական վարչական այդ սիստեմի մեջ ցարական կառավարության կողմից սկզբնական շրջա-

[1] К. Маркс и Ф. Энгельс—Сочинения, т. XXI, стр. 494.

նում մտցված փոփոխությունները կարողացել եյին ընդգրկել միայն յերկրի վարչական սիստեմի մակերեսային վոլորտը: Խանական վարչաձևի ու օրենքների մնացորդներն ըստ հնույն շարունակում եյին իրենց գործը ամբողջ յերկրի ադմինիստրացիայի ստորին օղակներում, իսկ Նախիջևանի և Օրդուբադի շրջաններում՝ գրեթե վողջ վարչական սիստեմում:

Քոչվոր ցեղերը (քուրդեր, յեզիդիներ և այլն) ամբողջապես շարունակում եյին մնալ իրենց ցեղապետների իշխանության տակ: Նույնիսկ փախած ցեղապետների փոխարեն ցարական կառավարությունը նշանակում եր նոր ցեղապետներ:

Ցարական և խանական սիստեմների պայքարը, այդպիսով, թնդանոթների վորոտից հետո, ընդունել եր «լուռ» պայքարի ձև և կասկած չկար, վոր հաղթանակն այստեղ ևս, պատմության պրոգրեսի ձայնին եր ունկնդրելու և վոչ թե իր դարն ապրած մեռնող խանականության:

Մեր ասածներից չպետք է հետևցնել, վոր ցարական չինովնիկությունը, այն ել մեծ մասամբ ռուս ժողովրդի հոյակապ գրականության մեջ սքանչելիորեն պատկերված՝ այլասերված, քայքայված ու բարոյալքված չինովնիկության տականքներն իրենց հետ մեղր ու կարագ եյին բերում հայ ժողովրդի համար: Այստեղ և ամենուրեք մեր խոսքն Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի, պատմական պրոգրեսի, նրանց հեռանկարի, ռուս մեծ ժողովրդի ու նրա կուլտուրայի հետ կապվելու պատմական մեծագույն փաստի մասին է, իրանական ու ոսմանյան դեսպոտիզմին կուլ գնալուց փրկություն գտնելու մասին:

Ցարական ադմինիստրացիան, նրա չինովնիկությունը, ինչպես բուն յերկրում, առավել ևս գաղութներում, վորտեղ տեղացիների վրա նայում եյին վորպես «ստոր ռասսայի» վրա, նրանց պաշտոնապես անվանում եյին «այլազգիներ», «արհամարհանք և ատելություն դաստիարակում նրանց հանդեպ»[1], ամբողջապես հարստահարող եյին և ճնշող: Սակայն, այստեղից բնավ չի կարելի հետևցնել, ինչպես այդ անում է Իլյա Պավլովիչ Պետրուշևսկին իր խմբագրությամբ, ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի հրատարակած վերին աստիճանի արժե-

[1] Տես Համամիութենական Կոմունիստական (Բոլշևիկների) Կուսակցության պատմություն, համառոտ դասընթաց, եջ 7, Յերևան, 1938 թ.:

քավոր ժողովածուի առաջաբանում, թե ցարական Ռուսաստանն Անդրկովկասում պահպանելով խանական ադմինիստրատիվ ու հարկային սիստեմը, դարձրեց այն ավելի անարխիկ և միևնույն ժամանակ ավելի դեսպոտիկ ու ծանր[1]:

Չի կարելի անտեսել այն փաստը, վոր իշխանության փոխանցման շրջանում, ինչպես Հայաստանում, այնպես ել Ադրբեջանում ու Վրաստանում, ժողովուրդը ճնշվում եր վոչ միայն ցարական ադմինիստրացիայի ու օրենքների ծանրությունից, այլև խանա-փաշայական ադմինիստրացիայի ու օրենքների մնացուկներից, իսկ հաճախ ել՝ միաժամանակ թե մեկից և թե մյուսից: Ասել, թե Անդրկովկասում ցարիզմն անխախտ պահեց խանական դեսպոտիզմն ու ավելի խստացրեց այն, նշանակում է չըմբռնել ցարական կառավարության Անդրկովկասում վարած գաղութային վարչական քաղաքականության վոգին, անտես առնել մարքս-լենինյան կոնցեպցիան արևելյան դեսպոտիզմի և ցարիզմի սոցիալական, դասակարգային եյության մասին:

Հայաստանում, ինչպես արդեն ասել ենք, ցարիզմի նվաճումով վճռական, անբուժելի հարված ստացավ խանական դեսպոտիզմը և տեղի տվեց ավելի բարձր պետական սիստեմի՝ ցարիզմի առաջ: Բայց սա գործի սկիզբն եր միայն: Ցարական կառավարությունը ձգտում եր քայլ առ քայլ ամրապնդել իր գաղութային ռեժիմը, ընդհուպ մինչև յերկրի լիակատար ռուսիֆիկացիան: Այս գործի ծանրությունն ընկնում եր ռուս զինվորական ու քաղաքացիական չինովնիկության վրա: 1828—1830 թ. թ. Հայկական Մարզ են ուղարկվում զգալի թվով ռուս չինովնիկներ: Սակայն, այդ նույն տարիներում Հայաստանում ծայր առած սարսափելի ժանտախտը և տենդախտն առաջին հերթին շարքից դուրս են գցում տեղական կլիմային անսովոր յեկվոր այդ տարրին և գրեթե անգործության դատապարտում նրան: «Ժանտախտը տարածվել է Հայկական Մարզի ամբողջ բնակչության մեջ և սկսել է ուժեղ ավերածություններ անել»,—գրում է Պասկևիչը: Համաճարակի հետևանքով իշխանության կենտրոնական օրգանները, դատարանը ամիսներով փակվում և չեն գործում: Բնակիչներին արգելվում է Մարզային Վարչության բակը մտնել,

[1] Տես Колониальная политика российского царизма в Азербайджане в 20—60-х г. г. XIX в. Часть I, стр. 14, Москва, 1936 г.

նրանց դիմումներն ու բողոքներն ընդունվում են մի պատուհանից, կաշվե ձեռնոց հագած ծառայի կողմից, յերկաթե ունելիքի միջոցով: 1829 թ. աշնանը Մարզային Վարչության հսկայական շտատից մնում են միայն մի խորհրդական և մի գրագիր[1]:

Նոր իշխանության կազմակերպման ամենապատասխանատու այս շրջանում ահա, ռուս չինովնիկներն ի վիճակի չեն լինում կատարելու իրենց վրա դրված պարտականությունները: Գավառներում և գյուղերում գրեթե անխախտ մնացած խանական պաշտոնեյությունը ծանոթ չլինելով վոչ ռուսաց լեզվին և վոչ էլ օրենքներին, կենտրոնական իշխանությունից կտրված մնալով, շարունակում եր «կառավարել» հին ձևով:

Այսպիսով, նոր իշխանության ներքին ողակը չեր գործում, կամ գրեթե չեր գործում հօգուտ ցարական բյուրոկրատիայի ամրապնդման, իսկ տեղ-տեղ էլ ուղղակի դեմ եր գնում նրան: Կենտրոնական ապարատը, վորը գերազանցապես ռուս չինովնիկների ձեռքում եր գտնվում, նշված ժամանակաշրջանում դատապարտվել եր անգործության: Յերկրի կառավարչության մեջ ստեղծված այսօրինակ քաոսային դրությունից օգուտ քաղելով, ամենուրեք գլուխ են բարձրացնում անարխիան, բռնությունը, թալանը, հարստահարումները, վորոնց մեծ զոհեր են տալիս ամենից առաջ ու ամենից ավելի Հայաստանի աշխատավորները:

Ռուս նշանավոր գրող Ա. Ս. Գրիբոյեդովը, վոր Իրանի կառավարության հետ դիվանագիտական բանակցություններ վարելու նպատակով 1828 թ. գարնանն ու աշնանը յեղել է Հայկական Մարզում և մոտիկից ծանոթացել ժողովրդի դրությանը, այս մասին հետևյալ արժեքավոր տեղեկություններն է հաղորդում.

«Հուզմունքը և դժգոհությունը թուրքերի մոտ *(խոսքը Նախիջևանի գավառի թուրքերի մասին է. Վ. Պ.)* ծայր աստիճանի յե հասնում... *Շատ հեշտությամբ կարող է պատահել, վոր նրանք հուսահատված թողնեն իրենց տնտեսությունն ու գույքը և այն ժամանակ մենք այդ խույր կվերագրենք պարսկական ներշնչումներին, ինչպես նորերս այդ պատահեց սադարակցիների փախուստի ժամանակ:*

[1] Акты, т. VII, стр. 451.

Նրանց փախուստը վերագրվել է յեկվոր Միրզա-Ջաֆարին, վորը, հենց իրեն՝ վոստիկանությունից իմ հավաքած տեղեկությունների համաձայն, վոչնչով այստեղ մասնակից չէ: Յեվ այժմ, յերբ յես Մարզային Վարչությանը բացատրեցի, վոր նրանց չպետք է թողներ, նրանք իմ թարգմանին հայտնեցին փախուստի իսկական պատճառը — անկարգ կառավարչություն և ծանր պարհակներ,—այսինքն նույնը, ինչ վոր Վրաստանում է»[1]:

Շարունակության մեջ Գրիբոյեդովն ասում է.

«Խաներից ու բեգերից իշխանությունը մենք վերցնում ենք, իսկ փոխարենը ժողովրդին տալիս ենք օտար օրենքների խճճվածություն... *Այս գարնանը Յերևանով անցնելիս՝ յես գրել եմ պրապորշչիկներին ղազի դարձնելու գին. Կրասովսկու ծիծաղելի արարքների մասին: Այժմ էլ նույն կարգն է: Մեր մարզային և քաղաքային դատարանները փոքր չափով անգամ չեն մտահոգվում հարմարվել* (принаравиться) *տեղական սովորություններին և չհամարձակվելով այդ անել ռեկլամենտի ուժով,* դատում են ձգձգումով, ծանր, և ստորագրում են այնպիսի վորոշումներ ու վճիռներ, վորոնք բնակիչները ընդունում են վոչ թե համոզվելով, այլ կարծես թե բռնությամբ: Մեզանից վոչ վոք գոհ» չէ,—*յեզրափակում է Գրիբոյեդովը*[2]:

Կապիտան Կուդաշևը 1828 թ. հոկտեմբերին Նախիջևանից Պասկևիչին զեկուցում է. «Յերևանում, Նախիջևանում և Օրդուբադում ընդհանրապես բոլոր թուրքերի մեջ յես նկատեցի ինչ վոր քողարկված, բայց վոչնչի չհանգող թշնամանք»[3]*: Ներքին գործերի մինիստր Բլուդովին գրած իր մի գաղտնի զեկուցագրի մեջ, Պասկևիչը մեղադրելով Յերևանի Մարզի Վարչությանը և հատկապես Ներսես արքեպիսկոպոսին, հարկադրված է խոստովանել, վոր մարզի բնակչության յերկու յերրորդը կազմող թուրքերը, արհամարհանք և իրենց բոլոր խնդիրները մերժված տեսնելով, սկսել եյին բացահայտ կերպով տրտնջալ և խնդրել՝ թույլ տալ գաղթելու Պարսկաստան*[4]:

[1] Акты, т. VII, стр. 647. *ընդգծումն իմն է. Վ. Պ.:*
[2] Акты, т. VII, стр. 648—649. *ընդգծումն իմն է. Վ. Պ.:*
[3] Акты, т. VII, стр. 649.
[4] Акты, т. VII, стр. 259.

Ցարական բյուրոկրատիայի ձեռքից 1828—1829 թ. թ. Արաքսի մյուս ափն են փախչում բազմաթիվ թուրքեր և հայեր։ Այսպես օրինակ՝ 1828 թ. սեպտեմբերի 27-ին Նախիջևանից կապիտան Ասեյևը Զավչավաձեյին զեկուցում է.

«Սադարակ գյուղի բնակիչները կողոպտելով կազաչի պոստը, բոլորը դիմեցին փախուստի դեպի արտասահման, Պարսկաստան։ Փախուստի պատճառը Հասան սուլթանը և Մահմեդ սուլթանն են, ինչպես և պարսկական լրտեսները»[1]։

1828 թ. վերջերին Նախիջևանի օկրուգից իրենց նախկին բնակավայրն են փախչում 66 հայ գաղթական ընտանիքներ։ 1829 թ. սկզբներին փախչում են նաև յայջեցիները։ Պարսկահայ և թյուրքահայ գաղթականներից, ընդհանուր առմամբ, վերադառնում են մոտ 500 տուն։ Այս և նման փախուստի դեպքերին ծանոթանալով, Պասկևիչը Հայկական Մարզի Վարչությանը գրում է. «Միայն ճնշումը կամ նպաստների մերժումը կարող են դրդել իրենց ամբողջ ունեցվածքը կատարյալ քայքայման գնով թողած մարդկանց վերադառնալ նախկին բնակավայրը, հարստահարող կառավարության լծի տակ»[2]։

Ռուս չինովնիկների և մասնավորապես պետական ծառայության մեջ յեղած տեղացի պաշտոնյաների կողմից աշխատավորության ճնշելու, հարստահարելու մասին ուշագրավ վկայություն է տալիս նաև 1829—1830 թ. թ. Ղարաբաղն ուսումնասիրելու գործուղված Զուբարյովը։

«Հայերն այս յերկրում,—գրում է նա,—ամենից հավատարիմն են մեր կառավարությանը և, կարելի յե ասել, ամենաազնիվը, ծայրահեղ դեպքում, հասարակ ժողովրդի մեջ... Ղարաբաղի տեղական իշխանությունը, հայերի դեմ ինչ վոր նախապաշարմունք ունենալով, ճնշում է նրանց շատ աններելի կերպով... Իզուր հայերը դիմում են արդարադատության. այնտեղ նրանց բավարարում են միայն թակելով»[3]:

«Մահալների նայիբներն ընդհանրապես Ղարաբաղում ճնշում են բնակիչներին և մեծ անկարգություններ անում,— ասում է Զուբարյովը, բայց Վարանդայի մահալի նայիբ, պրապորշչիկ մելիք Խուդադադը[1], գերազանցել է բոլոր մյուսներին։ Լինելով անբարոյական վարքի տեր և հարբեցող, նա իր հարբած և անզուսպ ծառայողների խմբով անցնում է գյուղերը, հարբում և հարբած վիճակում, առանց վորևե պատճառի, խիստ պատիժների յե յենթարկում բնակիչներին։ Նույնն անում են նրա միրզան և մյուս ծառայողները... Վարանդայի մահալն իմ կողմից շրջահայելու ժամանակ, ինձ մոտ, պետական Կաղարցի գյուղը յեկավ մելիք Խուդադադը, սովորականի պես հարբած վիճակում։ Այդտեղ մի հայ մարդ ուներ օրինական ճանապարհով ամուսնանալ մի այրի կնոջ հետ. մելիք Խուդադադն իմանալով այդ մասին, արգելում է քահանային ամուսնություն կատարելը, իմ ներկայությամբ պահանջելով փեսայից 20 չերվ. և, բացի այդ, հակառակ ժողովրդի սովորության, հարսնացուին իր մոտ է կանչում և սկսում զազրելի առաջարկներ անել... Մելիք Խուդադադը պատվավոր քաղաքացիներից մեկից պահանջելով իրեն զենք նվիրել և չստանալով այդպիսին, սկսում է նրան փայտով ծեծել։ Հաջորդ օրը յես այդ գյուղից գնացի, իսկ մելիք Խուդադադը, յերկու օր Կաղարցիում հարբելուց հետո, անցնում է մյուս գյուղերը և ամեն տեղ դաժանորեն պատժում է անմեղ բնակիչներին, իսկ Ալիշան գյուղում, ինչպես ինձ ասացին, բռնաբարում է մի հայի կնոջ։ Մելիք Խուդադադի մոլեգնությունը և անկարգությունն ամեն հավանականությունից անցնում են... Վարանդայի մահալի բնակիչները տեղի կառավարչին բազմաթիվ խնդիրներ են գրել, բայց դրանք մնացել են չբավարարված. բնակիչները միաբերան ասում են՝ յեթե իշխանությունն իրենց չազատի այս նայիբից, նրանք հարկադրված կլինեն թողնել իրենց բնակավայրը» [2]:

Շուշու վոստիկանապետի ոգնական Կազիմ բեկը բացահայտ կերպով բնակիչներին կողոպտում է, նրանցից կաշառք վերցնում,

[1] Հայկական ԽՍՀ Պետական Կենտր. Արխիվ. ֆոնդ 12, գործ № 2, եջ 269։

[2] Հայկական ԽՍՀ Պետական Կենտր. Արխիվ, ֆոնդ 12, գործ № 2, եջ 710։

[3] Акты, т. VII, стр. 461. ընդգծումն իմն է. Վ. Պ.։

[1] Մելիք Խուդադադը ցարական պաշտոնյա յեր, հայ մելիք Շահնազարի վորդին։

[2] Акты, т. VII, стр, 465. Ընդգծումն իմն է.Վ. Պ.։

ծեծում և այլն: Քաղաքի բնակիչներն ընդհանուր բողոք և դժգոհություն են հայտնում, բայց շնորհիվ կնյազ Աբխազովի հովանավորության, Կազիմ բեկը մնում է իր պաշտոնում և շարունակում է թալանել ու ճնշել շուշեցիներին: «Թալանը և գողությունը մեծապես իշխում են Ղարաբաղում»,—գրում է Զուբարյովը: Թալանողները միշտ էլ հովանավորություն են գտնում իրենց նայիբների կողմից: Ցարական բյուրոկրատիկ օրենքը, որը ձևականորեն պատիժ էր նախատեսում նման դեպքերի համար, իր դասակարգային էության համապատասխան, պատժելու փոխարեն հովանավորում էր պետական պաշտոնյաների և տեղական բարձր դասերի ներկայացուցիչների անկարգությունները, ժողովրդին հարստահարելը, կաշառակերությունը: Իզուր չէ, որ յերբ մի անգամ Սամադ սուլթանին իր կատարած ապօրինությունների համար հիշեցնում են ցարական օրենքի մասին, ձեռքը խփում է գրպանին, ասելով՝ «ահա այն, փառք աստծու, ինձ մոտ բավական կա»:

Զուբարյովի ներկայացրած այս գրությունը բացառիկ մի բան չէր Ղարաբաղի հայ աշխատավորության համար: Ցարական վարչական օրգաններում տիրող քաոսային դրությունը, պաշտոնեության ապօրինությունները, բռնությունը, կաշառքը, ծեծը, առավել կամ պակաս չափով գոյություն ունեյին ողջ Անդրկովկասում: Ինչպես հայ, այնպես էլ վրացի ու ադրբեջանցի աշխատավորները յենթակա էին ցարական չինովնիկության ճնշումներին:

Հայկական Մարզի ադմինիստրատիվ օրգաններում տիրող քաոսը, պաշտոնեության ճնշումների ու հարստահարումների դեմ բարձրացող հայ և թուրք բնակչության մասսայական դժգոհությունններն ու բողոքները, սահմանն անցնելու դեպքերը հարկադրում են Պասկևիչին միջամտելու մարզային վարչության գործերին: Նա Հայաստան է ուղարկում աչքի ընկնող մի շարք զինվորական չինովնիկներ, իսկ 1830 թ. փետրվարին Հայկական Մարզի կառավարիչ է նշանակվում մոլեռանդ միապետական, գեներալ-մայոր իշխան Վասիլ Բեհբուտովը:

«Իշխան Բեհբուտովների տոհմը միշտ հավատարիմ է յեղել մեր կառավարությանը»,—գրում է Պասկևիչը Բլուդովին:

Վասիլ Բեհբուտովը հայ ազնվական տոհմից էր, Ռուսաստանում ստացել էր զինվորական կրթություն և 1809 թվականից սկսած՝ Կովկասում ու այլ վայրերում ծառայել ցարական բանակում: 1828 թ., Ախալցխան գրավելուց հետո, Պասկևիչը նրան նշանակում է Ախալցխայի փաշալիքի ժամանակավոր Վարչության պետ: Իր նվիրված ծառայությունների համար ցարական կառավարությունը միքանի անգամ նրան պարգևատրում է:

Բեհբուտովին Պասկևիչը Հայկական Մարզ է ուղարկում ցարական գաղութային ռեժիմն ուժեղացնելու նպատակով և, պետք է ասել, որ այդ գործում նա գերազանցում է իր բոլոր նախորդներին: Ստանձնելով Մարզային Վարչության պետի պաշտոնը, Բեհբուտովը վճռական քայլերի յե դիմում տեղի ադմինիստրացիան կազմակերպելու և գործի գցելու համար: Նրա օրով «պետական մեքենան գործի յե ընկնում»,—ասում է Իվանենկոն[1]: Բեհբուտովն ամենից առաջ դիմում է պետական ապարատի ռուսացման՝ տեղացի պաշտոնյաներին փոխարինելով ռուս զինվորական և քաղաքացիական չինովնիկներով: 1831 թ. ապրիլի 18-ին Պասկևիչին ուղղած իր զեկուցագրի մեջ, խոսելով Մարզային Վարչության, մահալների կառավարիչների և դատական ատյանների անբավարար գործունեության, բնակիչների բողոքները տարիներ շարունակ ձգձգելու, նրանց ընթացք չտալու մասին, ամբողջ մեղքը նա բարդում է ռուսական օրենքը և լեզուն չիմացող «տեղական էլեմենտի» վրա, իր հովանավորության տակ վերցնելով ռուս չինովնիկների քաշքշուկը, նրանց ապօրինություններն ու ճնշումները: «Այս անկարգությունների առաջն առնելու համար,—գրում է Բեհբուտովը,—յես այլ միջոց չեմ գտնում, բացի տեղացի միրբոլուքների փոխարեն զինվորական սպաներ կամ քաղաքացիական չինովնիկներ նշանակելը»[2]:

Բեհբուտովը ձգտում էր ոչ միայն կենտրոնական, այլև մահալների իշխանությունը կենտրոնացնել ռուս զինվորական ու քաղաքացիական պաշտոնեության ձեռքում, սահմանափակելով «տեղական էլեմենտի» վարչական իրավունքները: Սակայն Բեհբուտովը չէր անտեսում այն փաստը, որ տեղական պայմաններին ու լեզվին անծանոթ ռուս չինովնիկներն առանց «տեղական

[1] В. Н. Иваненко, Гражданское управление Закавказьем, стр. 248. Тифлис, 1901 г.

[2] Акты, т. VII. стр. 499. Ընդգծումն իմն է. Վ. Պ.:

էլեմենտի» մասնակցության անկարող կլինեյին իրագործել իրենց վրա դրված պարտականությունները։ Ուստի նա առաջարկում է նրանց օգտագործել, վորպես ռուս պաշտոնյաների օգնականներ։

Բեհբուտովը փորձում է վերակազմել նաև դատական օրգանները, դրանք դարձնել ավելի ճկուն ու գործունյա։ «Քաղաքային դատարանների ձգձգումներից խուսափելու համար է,—ասում է նա,—որ տեղացիները մինչև օրս էլ դերադասում են դիմել շարիաթին։ Բեհբուտովը կարողանում է մասամբ գործի գցել դատարանը—ցարական բյուրոկրատիայի ճնշման ապարատը։ Առհասարակ իշխան Բեհբուտովի բոլոր ձեռնարկումները Հայկական Մարզի վարչական-դատական սիստեմում փոփոխություններ մտցնելու ուղղությամբ, ձեռնարկումներ, վորոնք անմիջականորեն թելադրվում էյին Պասկևիչի կողմից, նպատակ ունեյին ուժեղացնել ցարական ադմինիստրացիան, նրա վոստիկանական պատժական օրգանները։ Տակավին 1831 թ. ապրիլի 28-ի զեկուցագրում Պասկևիչը գրում էր, վոր Հայկական Մարզի վոստիկանական իշխանությունն ավելի քան ուժեղացնելու և ամրապնդելու համար, հարկ յեղած դեպքում նույնիսկ զինվորական ուժ գործադրելով, անհրաժեշտ է, վորպեսզի մահմեդականներով բնակված յերկրորդ նահանգի նահանգապետը և Հայկական Մարզի պետը նշանակվեն զինվորական գեներալներից[1]։

Բեհբուտովը ցանկանում էր Հայաստանում կիրարկության դնել «մտրակի քաղաքականությունը»։ Տուգանքներն ու նկատողությունները տեղացիների վրա վորևէ ազդեցություն չեն ունենում, ցինիկաբար գրում է նա Պասկևիչին, վորովհետև պարսկական իշխանության ժամանակ նրանք սովորել են, բացի ահավոր մահակի իշխանությունից, չվախենալ ուրիշ և վոչ մի իշխանությունից[2]։

Բեհբուտովի կառավարչության շրջանում, ինչպես և հետագայում, պատժի այդ վայրենի ձևը լայն կիրարկություն է գտնում։ 1831 թ. Նախիջևանի գավառի կառավարիչ գնդապետ Եքսան խանի կինը՝ Բենդր-Նասի-խանումը գողության համար ծեծել է տալիս վոմն Ծատուրյանի, վորից և սա մեռնում է։ Բենդր-Նասի-խանումի բարբարոսական այդ արարքների դեմ բողոքում են Հայկական Մարզի Վարչությանը, բայց բողոքները թողնվում են անհետևանք։ Գեներալ Պանկրատևը 1831 թվի հունիսի 11-ին Եքսան խանին ուղղած իր նամակում հիշեցնելով նրան ռուսական ծառայության մեջ գտնվելը և սպանության համար օրենքով նախատեսված պատիժը, գրում է, թե՝ «Ձեր ծառայությունները և հավատարմությունը նկատի ունենալով, գործը կարճվում է»․ միայն խորհուրդ է տալիս վորոշ նպաստ բաց թողնել Ծատուրյանի վորբերին, «վորով,— ասում է Պանկրատևը,—կծածկեք այս գործի տպավորությունը և իսկական բարեգործություն արած կլինեք» (sic!)[1]։

Այս դեպքը յեզակի չէր։ Կարելի յե բազմաթիվ օրինակներ հիշել, թե ինչպես աննշան հանցանքների համար ցարական վոստիկանների ձեռքով գանակոծության (ռոզգի) էյին յենթարկվում և սպանվում բնակիչներից շատ շատերը։ Սակայն, ցարիզմի գաղութային ռեժիմի խստացումը չէր սահմանափակվում միայն պատիժներով։ Կովկասի կառավարչապետ Ռոզենի օրով, Բեհբուտովի և Հայկական Մարզը գործուղված վրացական նահանգապետ Պալավանդովի ակտիվ մասնակցությամբ հիմնական վերակառուցման է յենթարկվում Հայկական Մարզի կառավարման ձևը՝ ցարիզմի գաղութային քաղաքականության պահանջների համապատասխան։ 1833 թվի հունիսի 23-ին Նիկոլայ I-ը հաստատում է Հայկական Մարզի նոր վարչակազմը։

1833 թ. օրենքի համաձայն՝

1. Դադարեցվում է մարզային վարչության կոլեգիալ ձևը, ավելի լայն իրավունքներ վերապահելով վարչության պետին։

2. Վոստիկանական, դատական ու ֆինանսական գործը գլխավորող նախկին խորհրդականների փոխարեն հիմնվում են հատուկ բաժիններ, ընդվորում կազմվում է հարկերի և տուրքերի գանձման հատուկ վարչություն՝ իր առանձին նախագահով, խորհրդականներով, թարգմաններով և այլն։ Հարկերն ու տուրքերը լրիվ գանձելու և պետական յեկամտի նոր աղբյուրներ հայտաբերելու գործը հանձնվում է հատուկ կոմիսարների։

3. Յերևանի գավառը բաժանվում է չորս ոկրուգների (Յերևանի, Շարուրի, Սարդարաբադի և Սուրմալուի), վորոնց կա-

---

[1] Акты, т. VII, стр. 54.

[2] Акты, т. VII, стр. 499.

[1] Акты, т. VII, стр. 503.

ռավարիչներ են նշանակվում ռուս զինվորական և քաղաքացիական չինովնիկներ։ Նախիջևանը և Որդուբադը շարունակում են մնալ նախկին նայիբների ձեռքում։

4. Յերևանում և Նախիջևանում հիմնվում են գավառական դատարաններ՝ ռուս չինովնիկների ղեկավարությամբ։

5. Հայկական Մարզի բնակիչներին իրավունք է վերապահվում, բացի գավառական դատարանից, դիմելու նաև մեդիատորական (միջնորդ) դատարանին ու շարիաթին։

6. Յերևանի վոստիկանապետին վորպես ոգնական նշանակվում է ռուս պրիստավ[1]։

1833 թ. հունիսի 23-ի որենքը, չնայած վոր այն ժամանակավորապես եր կիրարկության դրվում, այնուամենայնիվ մի նկատելի քայլ եր Հայկական Մարզի ադմինիստրացիայի ռուսականացման ուղղությամբ։ Ցարական կառավարությունը մինչև Անդրկովկասի վերջնական վարչական վերակազմումը, այդպիսով, սահմանափակվում եր միայն ոկրուգների կառավարչությունը ռուս չինովնիկներին հանձնելով (մահալներինը թողնելով անփոփոխ), ուժեղացնում եր վոստիկանական, դատական որգանները, պետական կողոպուտի՝ հարկերի ու տուրքերի գանձման ապարատը և այլն։

Հայաստանի վարչական կյանքում մտցված այս փոփոխությունները, սակայն, ինչպես տեսցինք, ժամանակավոր բնույթ եյին կրում, իսկ նրանց վերջնական լուծումը կապվում եր վողջ Անդրկովկասի վարչական ռեֆորմների հետ, վորոնց վրա, 1830 թվականից սկսած, աշխատում եյին կառավարական մի քանի հանձնաժողովներ։

Վրաստանում և Ադրբեջանում նույնպես շատ քիչ բան եր կատարված ցարական ադմինիստրացիայի կազմակերպման ուղղությամբ։ Ցարիզմը չեր կարողացել 25—30 տարվա ընթացքում ամուր վոտքերի վրա կանգնել նաև Վրաստանում ու Ադրբեջանում։ Անվերջ պատերազմներն արտաքին թշնամիների դեմ մի կողմից, տեղական ֆեոդալական կենտրոնախույս ուժերի անհնազանդություններն ու դիմադրությունները մյուս կողմից, Անդրկովկասի ժողովուրդների, գլխավորապես վրաց ժողովրդի մեջ ծա-

1 Տես Полное Собрание Законов Российской империи, собр. второе, т. VIII, стр. 374—375.

գած ապստամբական շարժումները յերրորդ կողմից, հնարավորություն չեյին տալիս ցարական բյուրոկրատիային գաղութային ուժեղ ռեժիմ հաստատելու Անդրկովկասում։

Ճիշտ ե, հատկապես Յերմոլովի ժամանակ ու նրա ջանքերով, ցարիզմն իր բյուրոկրատիկ կարգերի հիմքերն արդեն իսկ դցել եր Վրաստանում և Ադրբեջանում։ Մասնավորապես Վրաստանում նա զգալի չափով բարձրացրել եր այդ բյուրոկրատիայի խարխուլ շենքը, սակայն դեռևս չեր կարողացել արմատական փոփոխություն առաջ բերել ամբողջ յերկրի կառավարման սիստեմում, ընդգրկել այն թե ըստ ծավալի և թե ըստ խորության։ Վրաստանում ցարական որենքների հետ միասին շարունակում եյին գործադրվել վրաց Թագավոր Վախթանգի որենքները, վորոնք հաճախ միանգամայն հակասում եյին ցարական որենքներին։ Այսպես անվանված մուսուլմանական գավառներում և նախկին խանություններում, բացի այն, ինչ ցարական կառավարությունը պահպանել ու որինականացրել եր շատ տեղերում, բնակիչներն ավանդաբար շարունակում եյին ղեկավարվել խանական որենքներով, շարիաթի ու սովորութական իրավունքով։

«Ռուսական վարչաձևի տարորինակ խառնուրդ է ստեղծվել վրացականի և մուսուլմանականի հետ,—1830 թ. ապրիլի 24-ին գրում ե Պասկևիչը Նիկոլայ I-ին,—միասնականություն չկա վո՛չ կառավարչության ձևի, վո՛չ օրենքների և վո՛չ էլ ֆինանսական սիստեմի մեջ: Այժմ միայն Վրաստանում գոյություն ունեն կառավարման գրեթե նույնքան տարբեր ձևեր, հավասարապես անհարմար, վորքան և գավառներ»[1]:

«Մուսուլմանական գավառներում կարգերն ավելի վատ են։ Պարետները, վորոնց տրված ե շատ քիչ սահմանափակ իշխանություն, վարվում են կամայականորեն։ Նախկին խանական իրավունքը, վորը մեզ գրեթե անհայտ ե, թողնելով նվաճումից հետո ել, շատ չարարկությունների տեղիք ե տալիս»[2]։

Նիկոլայ I-ին ուղղած զեկուցագրերում Պասկևիչը մեղա-

1 Акты, т. VII, стр. 36—37. Ընդգծումն իմն ե. Վ. Պ.։

2 Акты, т. VII, стр. 18.

դրում է իր նախորդներին, վոր նրանք չեն կարողացել ռուսական վարչաձևն Անդրկովկաս մտցնել, ստեղծել են «բազմազանություն կառավարման ձևի մեջ», վորտեղ էլ հենց, ըստ նրա, թագնված են չարիքի արմատները։

«Զարիֆի արմատը գտնվում է հենց քաղաքացիական մասի կառավարչության մեջ»,—*գրում է նա։*

«Բարեկարգման արտաքին տեսքն է միայն ծածկել շատ կարևոր անկարգություններն ու կեղծիքները, վորոնք վաղուց արդեն արմատացել են»[1]*։ «Չինովնիկները գիտենալով, վոր իրենց հակաօրինական գործողությունները մնում են առանց խիստ պատժի, դարձել են անտարբեր նրանց մասին կառավարության ունեցած կարծիքի նկատմամբ և յուրաքանչյուրը տեղ ձեռք բերելով, իրեն իրավունք է համարել ամեն տեսակ ճնշումներ գործել, չենթարկվելով դրա համար որինական պատասխանատվության։* Իսկ ժողովուրդը յերկար տարիներ տառապելով, տեղական պետերի բոլոր ճնշումները կրելով և վոչ միշտ բարձրագույն իշխանության կողմից արդարադատություն ու պաշտպանություն տեսնելով, ընդհակառակը, յերբեմն տեսնելով դեպի բացահայտ ճընշումները յեղած անուշադրությունը, ավելի ու ավելի կորցրել է ռուսական կառավարության հանդեպ կապի զգացումը, և, վերջապես, թշնամանքը նրա նկատմամբ հազիվ թե չի դարձել ընդհանուր»[2]։

Բարձրագույն իշխանությանը ներկայացնելով Անդրկովկասի քաղաքացիական իշխանության գործերի քաոսային վիճակը, Պասկեվիչը պահանջում է վերստուգում կատարել Անդրկովկասում։ Նա ջանում է ցույց տալ, վոր վոչ թե բուն ցարական վարչաձևի և որենքների մեջ է չարիքը, այլ ցարական և տեղական նախկին վարչաձևի ու որենքների մնացուկների խառնուրդի մեջ։ Նա ճիգ է գործադրում այդ ճանապարհով վերականգնել ցարական կառավարության հեղինակությունը, վորը, իրեն իսկ Պասկեվիչի վկայությամբ՝ «Կովկասի այս կողմերում վերջին ժամանակները ծայրահեղորեն խախտվել էր», *փորձում է հանգստացնել պաշտոնյաների ճնշումների հետևանքով* «համբերությունից դուրս յեկած» *(Պասկեվիչի արտահայտությունն ե. Վ. Պ.) ժողովրդի ցասումը և չարիքը վերացնելու դեմագոգիական պատրվակի տակ, միանգամից Անդրկովկաս մտցնել ցարական վարչաձևն ու որենքները։*

1829 թվականին Անդրկովկաս են ուղարկվում սենատորներ Կուտայիսովը և Մեչնիկովը։ Նրանք կոչված էյին իրենց վերըստուգումով հիմնավորելու Անդրկովկասում ցարական վարչաձև ու որենքներ մտցնելու անհրաժեշտությունը։ Այստեղից էլ անսպասելի չէ, վոր նրանք պետք է հարձակվեյին գոյություն ունեցող վարչաձևի վրա, այս ու այն չափով ցույց տային նրա աննպատակահարմարությունը։ Ահա թե ինչ են գրում նրանք թագավորին ներկայացրած իրենց զեկուցագրերի մեջ։

«Ամենուրեք բազմազանություն կառավարման մեջ, ամեն տեղ անորոշություն ղեկավար անձերի իրավունքների ու պարտականությունների, ռուսական որենքների խառնուրդ՝ վրացականի և սովորույթների հետ, իսկ ուրիշ տեղերում՝ վոչ այս և վոչ այն, լիակատար կամայականություն է իշխում գործերի վճիռների մեջ... Անդրկովկասի և վոչ մի ատյանում գործերի ձևի ու կատարման մեջ հետք անգամ չկա այն կարգի, վոր սահմանված է որենքով... *Չլուծված գործերի թիվն անընդգրկելի յե և նրանք կուտակվել են վոչ թե նրա համար, վոր շատ է ստացվել, այլ նրա համար, վոր իր ժամանակին չեն աշխատել վերջացնել այդպիսիք»*[1]*։*

Սենատորները յերևան են հանում չինովնիկների բազմաթիվ զեղծարարության փաստեր, վորոնք անուշադրության են մատնված յեղել կամ հովանավորվել են բարձր իշխանության կողմից.

«Մուսուլմանական գավառներում կատարվել են նույնիսկ մահվան պատիժներ,—*գրում են սենատորները։* 1826 թ. համաժողովրդական խռովության ժամանակ, պարսիկների ներխուժման շրջանում, կովկասյան առանձին կորպուսի հրամանատար Յերմոլովի, Դաղստանի զինվորական շրջանի

1 Акты, т. VII, стр. 18.

2 Акты, т. VII, стр. 32. Рапорт с. с. Завилейского гр. Паскевичу от 2-го февраля 1830 г. *Ընդգծումն իմն ե. Վ. Պ.։*

1 Акты, т. VIII, стр. 4—5. *Ընդգծումն իմն ե. Վ. Պ.։*

պետ գեն. Կրաբբիի, Ապշերոնի հետևակ գնդի գնդապետ Միշչենկոյի և Կասպիական ծովի գումարտակի մայոր Իլինսկու կարգադրությամբ, կախել են, կտրտել և ծովում խեղդել մոտ 88 մարդ, առանց նրանց հանցանքների մասին քննություն կատարելու, առանց դատարանի ու դատական վճռի»[1]:

«Անդրկովկասի տեղական իշխանության պետերը, ավելի քան իրենց վերակացուները, որենքների խախտման որինակ են յեղել: Գողերին բռնելուց՝ նրանք վերցրել են գողացված իրերն ու դրամը և ծախսել իրենց ոգտին, իսկ հափշտակողներին թաքցրել որենքի հետապնդումից ու պատժից, վորպեսզի կրկին նրանցից ոգտվեն... Ներկա կառավարչությունը չի կարելի թողնել արդի վիճակում, իսկ դժբախտ ժողովրդին՝ նեղման մեջ: Յեղել են արդեն դեպքեր, վոր ժողովուրդը համբերությունը կորցնելով՝ փախել ե, բայց կարելի յե սպասել ավելի վատ հետևանքներ»[2]:

Դժվար չե նկատել, վոր Պասկևիչի և սենատորների հարձակումները գործող վարչաձևի ու որենքների վրա, առանձին չինովնիկների մերկացումները նրանց կողմից, վոչ թե իրոք ժողովրդի դրությունը բարելավելու նպատակով եր արվում, ինչպես այդ դեմագոգիաբար հրամցնում են նրանք և նրանց պատմաբան ապոլոգետները, այլ միայն և միայն յերկրի հետագա գաղութացման, ռուսիֆիկացման ու կառավարության խախտված հեղինակությունը վերականգնելու նպատակով: Այդ կոնկրետ դրդապատճառներից յելնելով ել ցարիզմը դիմում եր Անդրկովկասում վարչական ռեֆորմներ անցկացնելուն:

Յեթե մինչև XIX դարի 30-ական թվականները ցարիզմը զրկված եր Անդրկովկասում վարչական արմատական փոփոխություններ մտցնելու հնարավորությունից, նրա ամբողջ ուշադրությունը բևեռված եր պատերազմական գործողությունների վրա, ապա լիակատար հաղթությամբ պսակելով ինչպես Պարսկաստանի, այնպես ել ոսմանյան կայսրության դեմ սկսած իր խոշոր կամպանիաները, ջախջախելով ու թուլացնելով այդ յերկու յերբեմ-

[1] Акты, т. VIII, стр. 8. *ընդգծումն իմն ե. Վ. Պ.:*

[2] *Նույն տեղ, եջ 11, 43. ընդգծումն իմն ե. Վ. Պ.:*

նի հզոր պետությունների ռազմական ու տնտեսական ուժը, ամրացնելով ու ապահովելով Անդրկովկասի արտաքին ճակատը, նա առանց ժամանակ կորցնելու ձեռնարկեց Անդրկովկասի ներքին ճակատի չլուծված հարցերի կարգավորմանը:

XIX *դարի 30-ական թվականներից ցարական նվաճողականության ուշադրությունը ռազմական գործողություններից փոխադրվում ե Անդրկովկասում գաղութային կայուն ադմինիստրացիա ստեղծելու հարցի շուրջը:*

Պատերազմի տարիներին ամենուրեք ստեղծված «ժամանակավոր վարչությունները» այլևս չեյին կարող ապահովել ցարական գաղութարարների պահանջը: Ավելին. Պասկևիչի իսկ վկայությամբ, Ադրբեջանում և այլուր, ի դեմս ժամանակավոր վարչությունների, նրանց վրա նայում եյին վորպես ժամանակավոր ոկուպանտների, յեկվորների վրա: Տեղացիների այդորինակ մտայնությանը վերջ տալու համար պետք եր վերջ տալ նաև ժամանակավոր վարչություններին:

Անդրկովկասի վարչական ռեֆորմները պայմանավորված եյին նաև ցարական կառավարության, ռուս կալվածատեր-ազնվականների ու առևտրա-արդյունաբերողների տնտեսական շահերով, XIX *դարի 30-ական թվականներից սկսած իր վերելքն ապրող ռուսական առևտրի ու ֆեոդալական մանուֆակտուրայի շահերով և հրամայական պահանջ եյին դնում՝ Անդրկովկասյան հարուստ յերկրները ի սպաս դնել մետրոպոլիային, կամ, ինչպես ֆինանսների մինիստր գրաֆ Կանկրինն ե ասել՝* Անդրկովկասը դարձնել ցարական Ռուսաստանի գաղութ[1]:

Բայց, հարց եր ծագում՝ ինչ ձևերով ու մեթոդներով և ինչպիսի վարչաձև մտցնելով հասնել առաջադրված այդ նպատակին:

Պասկևիչը, ինչպես արդեն նշել ենք, պահանջում եր Անդրկովկասը միանգամից ռուսականացման յենթարկել, նրա վրա տարածելով Ռուսաստանի ներքին նահանգներում գոյություն ունեցող վարչաձևն ու որենքները: 1830 թ. ապրիլի 24-ին Նիկոլայ I-ին ուղղած զեկուցագրում նա նկարագրելով Անդրկովկասի ադմինիստրացիայի «անբարեկարգ» վիճակը, ասում ե. «Գործերի

[1] *Տես* Обозрение Российских владений за Кавказом, ч. I, стр. 12, СПБ, 1836 г.

այդպիսի դրությունն անկարելի յե կամաց-կամաց ուղղել։ Լավագույն և իրական միջոցը յես համարում եմ ամբողջ Անդրկովկասյան գավառներում ռուսական վարչաձև և օրենքներ մտցնելը»[1]։

Պասկևիչն անմիջականորեն թագավորին է ներկայացնում Անդրկովկասը նոր վարչական բաժանման յենթարկելու իր նախագիծը, վորտեղ, Ռուսաստանի օրինակով, Անդրկովկասը բաժանվելու յեր նահանգների ու գավառների, բոլոր պետական ատյանները կազմվելու եյին Ռուսաստանի նման և բոլոր նահանգական ու գավառական ատյանները ղեկավարվելու եյին ռուսական օրենքով, վոչ մի դեպքում չհիմնվելով վրացական օրենքների կամ նախկին սովորությունների վրա։

Անդրկովկաս ուղարկված սենատորները միանալով Պասկևիչի նախագծին, վարչական օրենքներն ուժեղացնելու և առանձնապես վոստիկանական, գործադիր ապարատը ճկուն ու գործունյա դարձնելու նպատակով, առաջադրում են Թիֆլիսում հիմնել «Անդրկովկասյան Գերագույն Կառավարություն» (Верховное Закавказское Правительство), նրան իրավունք վերապահելով տեղում վճռելու բոլոր տեսակի գործերը, բացի օրենսդրականից։

1831 թ. ամառը Նիկոլայ I-ը Պասկևիչին փոխադրում է Լեհաստան, այնտեղ բռնկված ապստամբությունը ճնշելու համար։ Պասկևիչի փոխարեն Կովկասի կառավարչապետ է նշանակվում բարոն Ռոզենը։ Յերբ օրենքների դեպարտամենտը՝ Սպերանսկու, Վասիլչիկովի, Ենգելի և Կուշնիկովի մասնակցությամբ քննում է Պասկևիչի նախագիծը, անհրաժեշտ է համարում հարցնել Ռոզենի կարծիքը։ Սակայն պետական խորհուրդը հենվելով Պասկևիչի և սենատորների կարծիքների վրա, մերժում է այդ պահանջը, իսկ նախագծին ընթացք տալու համար, 1833 թ. հուլիսին, զինվորական մինիստր Չերնիշևի նախագահությամբ հիմնվում է «Անդրկովկասի բարեկարգման հատուկ կոմիտե»[2] (Особый комитет об устройстве Закавказского края)։ Կոմիտեն, Պասկևիչի ու սենատորների նախագծի հիման վրա, կազմում և պե-

¹ Акты, т. VII, стр. 37. ընդգծումն իմն է. Վ. Պ.։

² Կոմիտեյի կազմի մեջ մտնում եյին՝ Չերնիշևը (զինվորական մինիստր), Կանկրինը (ֆինանսների մինիստր), Բլուդովը (ներքին գործերի մինիստր) և Դաշկովը (արդարադատության մինիստր)։ Կոմիտեյի աշխատանքներին մասնակցում եյին սենատորներ Կուտայիսովը և Մեչնիկովը։

տական խորհուրդ է մտցնում նոր նախագիծ, ըստ վորի Անդրկովկասում հիմնվելու յեր փոխարքայություն, Անդրկովկասը բաժանվելու յեր յերկու նահանգի (Սեծովյան և Կասպիական), իսկ նահանգները՝ գավառների և այլն։

Այսպիսով, քիչ եր մնում, վոր օրենքի ուժ ստանա և կիրարկության դրվի այդ նախագիծը, յեթե Կովկասի կառավարչապետ Ռոզենը և նրա հետ միասին կառավարական շրջաններից վորոշ մարդիկ նախագծի առանձին կետերի դեմ առարկություններ չանեյին ու նրանց նպատակահարմարությունը կասկածի տակ չդնեյին։

Համաձայն լինելով Անդրկովկասը գաղութացնելու հարցում կառավարության վարած քաղաքականության հետ, լինելով այդ քաղաքականության ակտիվ իրագործողներից մեկը, Ռոզենը, սակայն, ռուսական օրենքներն ու վարչաձևը միանգամից Անդրկովկաս մտցնելը, տեղական արտոնյալ դասերի ներկայացուցիչներին «ճաղաճական ենկատառումներով» տրված «չնչին իշխանությունից» զրկելը և, առհասարակ, մինչև նրանց քաղաքական-տնտեսական իրավունքների վերջնական կարգավորումը նման փոփոխություն կատարելը համարում եր վաղաժամ։

Ռոզենի կարծիքով, դա վոչ միայն օգուտ չեր բերի կառավարությանը, այլև քաղաքական տեսակետից կլիներ վնասակար, ասիականությանը ընտելացած ժողովրդի մեջ միայն անվստահություն ու դժգոհություն առաջ կբերեր և այլն։ Հետևելով Յերմոլովին, Ռոզենը հնարավոր եր համարում դարերով արմատացած տեղական կարգերն ու սովորությունները փոփոխել աստիճանաբար և գրեթե աննկատելի կերպով, այն էլ Անդրկովկասի վոչ բոլոր պրովինցիաներում միօրինակ ձևով։ Պասկևիչի ու սենատորների հարձակումներից նա իր պաշտպանության տակ է վերցնում տեղական արտոնյալ դասերի ներկայացուցիչներին, սրում է նրանց ավելի լայն չափերով օգտագործելու խնդիրը։ Քաղաքական մեծ կարևորություն ունեցող այդ հանգամանքն ամբողջությամբ չեր բացառվում նաև Պասկևիչի ու սենատորների նախագծերում։

Այս և նման տարաձայնությունները բավական են լինում, վորպեսզի հարկադրեն Կովկասյան Կոմիտեյին ու Նիկոլայ I-ին առաջարկելու՝ նորից ուսումնասիրելու Անդրկովկասը և նոր նախագիծ կազմելու։

1837 թ. մարտի 17-ի ուկազով, գաղտնի խորհրդական սենատոր Գանի նախագահությամբ կազմվում է հատուկ հանձնաժողով[1], վորը և նույն տարվա հունիսից Թիֆլիսում սկսում է իր աշխատանքները:

«Գալով Անդրկովկաս,—ասում է ցարական մեծապետական պատմաբան Իվանենկոն,—Գանը անմիջապես համոզվեց, վոր խայտաբղետ, իրենց պատմական անցյալով իրարից խիստ տարբեր վայրերի ու ցեղերի առանձնահատկությունների, կարիքների, տեղական սովորությունների ու բարքերի ուսումնասիրությունն իրեն գործը չէ և վորոշում է անհապաղ անցնել նախագիծը կազմելուն, իր պորտֆելում պատրաստի յեղածի որինակով»[2]:

Իրոք, Գանը, ցարական բյուրոկրատին հատուկ «փութկոտությամբ» մի քանի տեղեկություններ հավաքելով Անդրկովկասի տարբեր շրջաններից, դրանք ոգտագործեց Ռոզենի դեմ, յերբ 1837 թ. աշնանը Նիկոլայ I-ն այցելում եր Անդրկովկաս, տապալեց Ռոզենին ու Պասկեվիչի և մյուսների՝ իր պորտֆելում ունեցած նախագծերի հիման վրա, անարգել կերպով կազմեց և 1838 թ. փետրվարին ներկայացրեց իր նախագիծը:

Կովկասյան Կոմիտեն բավականին յերկար ձգձգումներից հետո քննության է առնում Գանի նախագիծը: Անդրկովկասի նոր կառավարչապետ Գոլովինի հետ միասին Գանը կարողանում է Կոմիտեյում պաշտպանել և անցկացնել իր նախագիծը[3]:

Իվանենկոյի վկայությամբ՝ Կոմիտեն լվանում է իր ձեռքերը, մի քանի անգամ վկայակոչելով սենատոր Գանի, գեն. Գոլովինի կատեգորիկ հայտարարությունները և հիշելով բոլոր այն անձնավորություններին, վորոնք առաջարկել եյին յերկրում ռուսական

[1] Հանձնաժողովի մեջ մտնում են գնդապետ Վրոնչենկոն (գլխավոր շտաբից); չինովնիկներ Կվիտոը (ներք. գործ. մինիստրությունից), Կալինովսկին (ֆին. մինիստրությունից) և Նեֆեդևը (արդարադատության մինիստրությունից):

[2] В. Н. Иваненко, Гражданское управление Закавказьем, стр. 291.

[3] Իվանենկոյի ասելով, Գանը, ոգտվելով այն հանգամանքից, վոր Կովկասյան Կոմիտեյի անդամները ծանոթ չեն Կովկասին, ուղղակի խաբում է նրանց: Կոմիտեյի քննությունների ժամանակ առարկված հարցերի մասին նրա տված բացատրությունների մեջ, ասում է Իվանենկոն, «ճշմարիտ վոչ մի խոսք չկար» (տես նույն տեղ, եջ 294):

որենքներ մտցնել—Կուտայիսովին, Մեչնիկովին ու ֆելդմարշալ իշխան Վարշավսկուն—հավանություն է տալիս նախագծին:

1840 թ. ապրիլի 10-ին այն դառնում է որենք[1]:

Ապրիլի 10-ի որենքը ցարական բյուրոկրատիան Անդրկովկասում ամրացնելու վճռական քայլերից մեկն եր:

Իզուր չէ, վոր Նիկոլայ I-ը հրահանգում եր Կովկասի կառավարչապետ Գոլովինին՝ «ամենայն ճշտությամբ ու արագությամբ իրագործել այդ որենքը, Ռուսաստանի համար շատ կողմերով այնքան կարևոր Անդրկովկասյան յերկրներում ներքին նահանգների սկզբունքով ամուր իշխանություն հաստատելու համար»[2]:

[1] 1840 թ. ապրիլի 10-ի որենքով Անդրկովկասը, վորի մեջ մտնում եյին Վրաստանը, Իմերեթիան—Գուրիայի, Մինգրելիայի, Սվանեթիայի և Աբխազիայի հետ միասին—Հայկական Մարզը, Ջարո-Բելոկանի մարզը, Շիրվանի պրովինցիան, Ղարաբաղի պրովինցիան, Շաքիի պրովինցիան, Թալիշի խանությունը, Բաքվի պրովինցիան, Դերբենդի պրովինցիան, Կուբայի պրովինցիան, Սամուրի ոկրուգը, Տարկի շամխալությունը, Ավարիայի, Կյուրակդի-Կյամիկի և Մեխտուլինի խանություններն ու Լեզգինների յերկիրը, բացառությամբ Մինգրելիայի, Աբխազիայի և Սվանեթիայի (վորոնք դեռևս իրենց իշխանների ձեռքում եյին գտնվում), բաժանվում է յերկու մասի՝ Վրացա-իմերեթական նահանգ (11 գավառներով) և Կասպիական մարզ (7 գավառներով):

Վրացա-իմերեթական նահանգի (կենտրոնը՝ Թիֆլիս) մեջ մտնում եյին հետևյալ գավառները՝ Թիֆլիսի, Գորիի, Թելավի, Բելոկանի (կենտրոնը՝ Զաքաթալա), Քութայիսի, Յելիզավետպոլի, Ալեքսանդրոպոլի, Յերևանի, Նախիջևանի, Ախալցխայի և Գուրիայի (կենտրոնը՝ Ոզուրգեթի):

Կասպիական մարզի (կենտրոնը՝ Շամախի) մեջ մտնում եյին՝ Շիրվանի (կենտրոնը՝ Շամախի), Ղարաբաղի (կենտրոնը՝ Շուշի), Շաքիի (կենտրոնը՝ Նուխի), Թալիշի (կենտրոնը՝ Լենքորան), Բաքվի (կենտրոնը՝ Բաքու) գավառները և Դերբենդի ու Կուբայի գավառները, վորոնք մտնում եյին հատուկ զինվորական շրջանի մեջ:

Բոլոր 18 գավառները բաժանվում են 72 շրջանի:

Հայկական Մարզը, վորպես ինքնուրույն միավոր, դադարում է գոյություն ունենալուց: Յերևանի պրովինցիան և Նախիջևանի պրովինցիան Որդուբադի ոկրուգի հետ միասին կազմում են Վրացա-իմերեթական նահանգի առանձին գավառներ, Յերևան և Նախիջևան գավառական կենտրոններով, իսկ Բորչալուի դիստանցիայի մի մասից և ամբողջ Փամբակ-Շորագյալի դիստանցիայից կազմվում է Ալեքսանդրոպոլի գավառը (կենտրոնը՝ Ալեքսանդրոպոլ), վորը նույնպես մտնում եր Վրացա-իմերեթական նահանգի մեջ.

[2] Акты, т. IX, стр. 25. Ընդգծումը իմն է. Վ. Պ.:

Ցարական կառավարությունը հաշվի չառնելով տեղական սոցիալական, իրավական, կուլտուրական և կրոնական առանձնահատկությունները, վորոնք գոյություն ունեյին վոչ միայն Ռուսաստանի ու Անդրկովկասի, այլև Անդրկովկասի տարբեր մարզերի միջև, վերջ դնելով տեղացիների մասնակցությամբ գործող ժամանակավոր վարչություններին, ապրիլի 10-ի որենքով ամբողջ իշխանությունը կենտրոնացրեց ցարական չինովնիկության ձեռքում: Ըստ այդ որենքի՝ Անդրկովկասի գլխավոր վարչությունը թողնվում եր կառավարչապետին (կայսրության ներքին նահանգների գեներալ-նահանգապետի իրավունքով), վորը միաժամանակ Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարն եր և առանձին լիազորություններ ուներ դատական գործերին միջամտելու, պաշտոնյաներ ընդունելու և հեռացնելու: Անդրկովկասի կառավարչապետին իբրև ոգնական գործում եր Թիֆլիսի զինվորական նահանգապետը: Հիմնվում ե «Գլխավոր Կառավարչության Խորհուրդ» (Созет Главного Управления)՝ կառավարչապետի նախագահությամբ, նահանգական հիմնարկների գործերի ընթացքին, որենքների կիրառմանը հետևելու, դասերի իրավունքները կարգավորելու համար և այլն:

Ինչպես նահանգական և մարզային, նույնպես ել գավառական ատյանները կազմվում են Ռուսաստանի ներքին նահանգների որինակով, նրանք սկսում են գործել կայսրության համար ընդհանուր որենքներով[1]: Տեղացի պաշտոնյաները՝ աղալարներ, բեգեր, մելիքներ և այլն, մասսայորեն փոխարինվում են ռուս չինովնիկներով: Ռուս չինովնիկների թիվը Անդրկովկասում միանգամից կրկնապատկվում ե՝ 704-ից հասնելով 1311-ի: 1839 թ. յեղած դատական գործերի թիվը 2461-ից 1841 թ. բարձրանում ե 4846-ի[2]:

Այս տեսակետից բնորոշ պատկեր ե տալիս Ալեքսանդրապոլի գավառը:

Գավառային Վարչության գրասենյակում մինչև 1841 թ.

---

[1] Շարիաթի որենքից միայն պահվում ե ընտանեկան-ամուսնական գործերին վերաբերող մասը, իսկ վրացական որենքներից՝ տուների և ջրաղացներին ջուր բաց թողնելու վերաբերյալ յերկու հոդվածներ (sic!):

[2] Տես «Русская старина», 1900 г., т. 101, стр. 43. Из записок барона М. А. Корфа.

յեղած 278 գործի փոխարեն, ռեֆորմից հետո, 1841 թ. ընթացքում կուտակվում ե 1601 գործ, վորից 267-ը մնում են անկատար:

